



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱԿՄԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՒ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ
ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ**

Լորի Ման եւ Լուսինե Սարգսյան

Երեւան
2018

Բովանդակություն

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ԲԱԺԻՆ I: ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ	9
I.I. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության սահմանումները	9
I.II. Ընտանեկան բռնություն. իշխանություն և հսկողություն	11
I.III. Գենդերային անհավասարություն, կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան բռնություն	12
I.IV. Բռնությունից տուժած կանանց համար ծառայությունների և արդարադատության մատչելիության խոչընդոտները	14
I.V. Կանանց խոցելի խմբերի առջև ծառայած մարտահրավերները	14
I.VI. Ընտանեկան բռնության հետևանքները	14
I.VII. Ընտանեկան բռնությունը Հայաստանում	15
I.VIII. Տուժողին մեղադրելը և կրկնակի վիկտիմիզացիան	19
I.IX. Սխալ դատողություններ տուժողի մասին	20
I.X. Ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները	22
III. Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը	
3.1 ԱՐԳԵԼՈՂ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՄԻԶԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (ԱՄՈ), ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ	
3.2 ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՄԻԶԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ. ԿԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ ԿԱՐՈՒՅԹՆԵՐԸ	24
1) Ընդհանուր դիտարկումներ	24
2) Շտապ հեռախոսակառնչի համակարգը	25
3) Առաջնային արձագանքի աշխատակցի, ծայնագրող աշխատակցի և քննիչի հիմնական խնդիրները	25

Բովանդակություն

1. Ներածություն	3
2. Վերապատրաստման հիմնական բաղադրիչները	6
3. Վերապատրաստման դասընթացի բովանդակությունը	9
4. Գնահատումը	29
Գրականություն	30

ՆԱԽԱԲԱՆ

Կանանց նկատմամբ բռնությունը եւ ընտանեկան բռնությունը համընդհանուր խնդիր է, ինչն անխպտելիորեն առաջ է բերում ֆիզիկական, հոգեբանական, ֆինանսական եւ սոցիալական լուրջ հետեւանքներ, ոչ միայն ապրում է բռնության հետեւանքով տուժող դարձած անձանց վրա, այլեւ խոչընդոտում բոլորի համար համապարփակ անվտանգության ապահովման առաջընթացը: Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարը ներկայիս առաջադեմ մարդկության գերխնդիրն է եւ արդի հրամայականը:

Անժխտելի է, որ երեւույթի դեմ պայքարի գործում իրենց ուրույն դերով եւ նշանակությամբ առանձնանում են արդարադատության եւ իրավապահ մարմինները: Վերջիններիս գործառույթների իրականացման, նրանց լիազորություններով պայմանավորված անհրաժեշտ գործիքակազմի արդյունավետ կիրառման պարտադիր նախապայման է նշյալ մարմինների ներկայացուցիչների տեսական գիտելիքների եւ պրակտիկ հմտությունների ձեւավորումը, կատարելագործումը եւ շարունակական վարձագումը, որի իրականացման առաքելությունը վերապահված է Արդարադատության ակադեմիային:

Կարելորելով խնդրի առանցքային նշանակությունը՝ Արդարադատության ակադեմիան եւ Եվրոպայի խորհուրդը «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ» ծրագրի շրջանակներում հանձն առան մշակել «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ» դասընթացը եւ վերջինիս ուսումնամեթոդական ապահովումն իրականացնելու համար նախատեսված սույն ձեռնարկը:

«Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ» դասընթացը 2019 թվականից դասավանդվելու է Արդարադատության ակադեմիայում:

Այդ առումով Արդարադատության ակադեմիան, ունենալով հստակ տեսլական, ուսուցման ծրագրերի շրջանակներում իր առջեւ խնդիր է դրել ի կատար ածելու հետեւյալ նպատակները՝ կատարելագործել կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով քննության ընթացքում իրականացվող միջոցառումների, գործով քննության եւ քրեական հետապնդման նկատմամբ պատշաճ քանասիրության չափանիշի արդյունավետ կիրառումը, ինչպես նաեւ ընտանեկան եւ սեռական բռնության վերաբերյալ գործերով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրառման դատական պրակտիկայի մասին արդարադատության եւ իրավապահ մարմինների ներկայացուցիչների գիտելիքները, ապահովել այնպիսի գործիքակազմ, որի առկայության պայմաններում քննարկվող հանցագործություններից տուժած անձինք կհայտնվեն այդ մարմինների ուշադրության կենտրոնում ընդգծելով քրեական արդարադատության գործընթացում տուժողների եւ վկաների հատուկ կարիքներն ու իրավունքները, իրավեկել արդարադատության եւ իրավապահ մարմիններին Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրական նոր վարձագումների մասին, բարձրացնել Եվրոպայի խորհրդի՝ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» ստամբուլյան կոնվենցիայի չափանիշների, դրանց հասնելու քայլերի վերաբերյալ արդարադատության մարմինների ներկայացուցիչների իրազեկվածությունն ու գիտելիքները:

Սույն ձեռնարկը նախատեսված է Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար: Այն կարող է օգտակար լինել նաեւ այլ իրավապահ մարմինների աշխատակիցների, փաստաբանների, իրավաբանական բուհերի եւ ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, ասպիրանտների, քննարկվող հիմնախնդրով հետաքրքրվող անձանց եւ կազմակերպությունների համար:

ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) պարունակում է գենդերային հիմքով բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի եւ տուժողների համար արդարադատության մատչելիության ապահովման ամենաառաջադեմ չափանիշները: 2011 թվականից ստորագրելու համար բաց լինելու պահից սկսած 2018 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ Եվրոպայի խորհրդի 33 անդամ պետություններ վավերացրել են Ստամբուլի կոնվենցիան: Հայաստանը ստորագրել է Ստամբուլի կոնվենցիան 2018 թվականի հունվարին: Հայաստանը նաեւ ընդունել է ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ իր առաջին օրենքը՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (Ընտանեկան բռնության մասին օրենք) 2017 թվականի դեկտեմբերին:

Արդարադատության ոլորտի դերակատարների կողմից նոր ընդունված ազգային օրենսդրության կիրարկման հարցում ամենաբարձր չափանիշներն ապահովելու նպատակով Եվրոպայի խորհուրդը՝ որպես «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ» իր ծրագրի մաս, Հայաստանի արդարադատության ակադեմիայի համար մշակել է վերապատրաստման դասընթաց եւ նյութեր՝ ընտանեկան բռնության հետ կապված գործերի քննության, քրեական հետապնդման իրականացման եւ դրանցով որոշում կայացնելու վերաբերյալ: Վերապատրաստման այս նյութերը, որոնք մշակված են Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկի ու Արեւելյան գործընկերության հինգ երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտների, իրավական պաշտպանության միջոցների եւ լավագույն փորձի վերաբերյալ հաշվետվության հիման վրա, կազմվել են «Արեւելյան գործընկերության երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության բարելավում» ծրագրի շրջանակներում:

Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման նյութերի բովանդակությունը սկսվում է հետեւյալ եզրույթների շուրջ ընդհանուր պատկերացման ապահովմամբ. գենդեր, գենդերային կարծրատիպեր եւ տղամարդկանց գերիշխանություն, գենդերային խտրականություն եւ գենդերային հիմքով բռնություն՝ դրա ձեւերի ու բռնության շրջապտույտի մատնանշմամբ: Այն ընդգրկում է մարդու իրավունքների վերաբերյալ առկա միջազգային իրավական համակարգը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Ստամբուլի կոնվենցիայում, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում (ԿԽՎԿ) սահմանված չափանիշներին եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով դատական պրակտիկային և դատարանի կողմից սահմանած չափանիշներին:

Վերապատրաստման շրջանակներում անդրադարձ է կատարվում ընտանեկան բռնության գենդերային բնույթին, դրա տարբեր ձեւերին, բռնության շրջապտույտին, սեռական զուգընկերոջ կողմից բռնության եւ սեռական բռնության տարածվածությանը եւ դրանց նկատմամբ վերաբերմունքին, տուժողների պաշտպանության վերաբերյալ միջազգային չափանիշներին, այդ թվում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներին, ինչպես նաեւ վարույթի բոլոր փուլերում տուժողների եւ վկաների համար պաշտպանության միջոցներին: Դրանում մանրամասն ներկայացվում են Հայաստանի ընտանեկան բռնության մասին օրենքով եւ Քրեական օրենսգրքով սահմանված՝ գործով քննության, քրեական հետապնդման իրականացման եւ բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկելու փուլերի նկատմամբ կիրառելի որոշակի դրույթներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով համապատասխան գործընթացում տուժողների իրավունքներին: Առանձին բաժնում անդրադարձ է կատարվում ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով հաշտարարությանն առնչվող հարցերին: Եզրափակիչ բաժնում դիտարկվում է միջգերատեսչական համագործակցության կարեւորությունը՝ ուղղորդման մեխանիզմների, պաշտպանական որոշումների եւ տվյալների հավաքագրման գործուն ու արդյունավետ իրականացումն ապահովելու հարցում:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Անվանումը	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելում ու դրանց դեմ պայքար
Շահառուները	Նյութերը մշակված են քննիչների, դատախապաների եւ դատավորների վերապատրաստման նպատակով Արդարադատության ակադեմիայի կողմից օգտագործման համար:
Նպատակը (կամ դասընթացի հիմնական նպատակը)	<p>Տվյալ դասընթացով նախատեսվում է ապահովել, որ մասնակիցները խոր պատկերացում կազմեն արդարադատության շղթայում գենդերային հիմքով բռնության դեմ պայքարին վերաբերող որոշակի խնդիրների մասին:</p> <p>Դրա միջոցով ապահովվում է գենդերի, գենդերային կարծրատիպերի եւ գենդերային հիմքով բռնության, Հայաստանում բռնության տարածվածության եւ դրա նկատմամբ վերաբերմունքի մասին հիմնավոր պատկերացում եւ համապատասխան միջազգային փաստաթղթերի ու կիրառելի չափանիշների ընդհանուր նկարագրություն:</p> <p>Որոշիչ է նաեւ այն, որ դրանում դիտարկվում է անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների իրականացումը՝ տուժողների անվտանգությունն ապահովելու համար, եւ օրենքով նախատեսված վարույթի՝ բռնության փուլից մինչեւ պատասխանատվության ենթարկելու փուլը հանդիպող իրավատեխնիկական մի շարք հարցեր:</p> <p>Դրանում անդրադարձ է կատարվում ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով հաշտարարությանը ներհատուկ դժվարություններին եւ միջգերատեսչական համագործակցությանը վերաբերող չափանիշներին:</p>

Դասընթացի բովանդակությունը

► Դասընթացի արդյունքում մասնակիցները հիմնավոր պատկերացում կկապեն «զենդեր», «զենդերային կարծրատիպեր» եւ «զենդերային հիմքով բռնություն» եպրոյթների մասին: Դրանում կդիտարկվեն բռնության ձեւերը եւ շրջապտոյտը: Դրանում անդրադարձ կկատարվի Հայաստանում սեռական զուգընկերոջ կողմից բռնության եւ սեռական բռնության տարածվածության վերաբերյալ ազգային վերջին տվյալներին եւ արդարադատության ոլորտի դերակատարների համար դրանց նշանակությանը: Դրա միջոցով կապահովվի արդարադատության մատչելիության խոչընդոտների մասին գիտելիքների փոխանցումը:

► Դասընթացում կդիտարկվեն Ստամբուլի կոնվենցիայով եւ ԿԽՎԿ-ով սահմանված չափանիշները: Դրա միջոցով կփոխանցվեն համապարփակ գիտելիքներ՝ ՄԻԵԴ-ի կողմից սահմանված՝ գործով քննության եւ քրեական հետապնդման նկատմամբ պատշաճ քանասիրության չափանիշի արդյունավետ կիրառման վերաբերյալ դատական պրակտիկայի, ինչպես նաեւ ընտանեկան եւ սեռական բռնության գործերով ՄԻԵԴ-ի կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 8-րդ եւ 14-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ դատական պրակտիկայի մասին:

► Դասընթացը կներառի համապատասխան ամբողջ ազգային օրենսդրությունը, այդ թվում՝ Ընտանեկան բռնության մասին նոր օրենքը, Քրեական եւ Քրեական դատավարության օրենսգրքերը, համապատասխան վարչական եւ քաղաքացիական դատավարական առանձնահատկությունները, ինչպես նաեւ ոստիկանության ու դատախազության կողմից ընդունված ակտերը: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի ազգային օրենսդրության եւ միջազգային չափանիշների միջեւ առկա բացերը ներկայացնելուն:

► Ուսումնասիրելով եւ համեմատելով միջազգային չափանիշներն ու ազգային օրենսդրությունը՝ դասընթացի միջոցով կփոխանցվեն պաշտպանական որոշումների կիրառման, գործով քննության, քրեական հետապնդման իրականացման, որոշում կայացնելու եւ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ:

► Կքննարկվեն ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով հաշտարարությանը եւ դրան առնչվող չափանիշներն ու երաշխիքները, ինչպես նաեւ պաշտպանական որոշումների տրամադրման եւ իրականացման, ուղղորդման մեխանիզմների եւ տվյալների հավաքագրման մասով միջգերատեսչական համակարգման կարեւորությունն ու գործառնական հայեցակետերը:

<p>Վերապատրաստման մեթոդաբանությունը</p>	<p>Նախընտրելի է, որ մասնակիցների խումբը կազմված լինի ոչ ավելի, քան 20 անձից: Դասընթացի բոլոր փուլերը կանցկացվեն ինտերակտիվ եղանակով՝ ակտիվ կերպով ներգրավելով մասնակիցներին՝ հարցեր տալու համար, եւ նրանց մասնակից դարձնելով քննարկումներին՝ իրենց ունեցած գործնական աշխատանքային փորձի հիման վրա:</p> <p>Մեթոդաբանությունը համատեղում է դասախոսությունները՝ գործնական դեպքերի ուսումնասիրությամբ, վարժություններով, տեսանյութերով եւ դերախաղերով:</p> <p>Դասընթացավարների վերապատրաստման (ԴՎ) շրջանակներում դասընթացավարների եւ մասնակիցների համար կնախապատրաստվեն «Power Point» ձեւաչափով ցուցադրման նյութեր, ինչպես նաև վերջիններիս համար կպատրաստվի դասընթացի ձեռնարկ:</p> <p>Դասընթացի յուրաքանչյուր փուլի վերջում ժամանակ կտրամադրվի հարցերի եւ պատասխանների, ինչպես նաեւ ցանկացած հետադարձ կարծիքի համար:</p>
<p>Գնահատումը</p>	<p>Չնայած դասընթացը չի նախատեսում մասնակիցների գնահատում՝ այնուամենայնիվ, դասընթացի մասնակիցներին կտրվի հնարավորություն՝ գնահատելու վերապատրաստման բովանդակությունը եւ դասընթացավարի կողմից դրա ներկայացումը նախադասընթացային եւ հետդասընթացային թեստերի, ինչպես նաեւ դասընթացի վերջում մասնակիցներին բաժանվող գնահատման թերթիկի միջոցով:</p>
<p>Մոդուլի առաջարկվող տեւողությունը</p>	<p>Դասընթացը կներառվի Արդարադատության ակադեմիայի համակարգ որպես դրա՝ տիպային 10 ակադեմիական ժամից կազմված վերապատրաստումների մաս՝ 40-րոպե տեւողությամբ դասաժամերով:</p> <p>Ուստի այն կարող է առաջարկվել 1, 1/2 օրվա համար՝ Երեւանում կամ Երեւանից դուրս:</p>

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասընթացային փուլ 1	Ներածություն		
	Թեմա 1.1	Հայեցակարգային շրջանակը. Գենդերը	1 ժամ (40 րոպե)
	Թեմա 1.2	Բռնության ձևերը եւ շրջապտույտը	1/2 ժամ (20 րոպե)
	Վարժություններ	<p>1. Սեռի եւ գենդերի տարբերակումը՝ խմբային վարժություն:</p> <p>2. Գենդերային խտրականությունը եւ կարծրատիպերը պարզելը:</p> <p>3. Մասնակիցներին բաժանվող նյութեր կամ մտազրոհ՝ ընտանեկան բռնության մասին մտացածին պատկերացումներ եւ փաստեր:</p> <p>4. Կարճ տեսանյութ:</p>	Յուրաքանչյուրը 10 րոպե տեւողությամբ

Նպատակը: Դասընթացի տվյալ փուլի նպատակն է՝ ապահովել, որ մասնակիցները խոր պատկերացում կազմեն գենդերին, գենդերային կարծրատիպերին, տղամարդկանց գերիշխանությանը եւ գենդերային հիմքով բռնությանը վերաբերող եզրույթների վերաբերյալ, քանի որ դրանք ծառայում են որպես հիմք՝ վերապատրաստման մնացած մասն անցկացնելու համար: Այն կներառի ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը ու բռնության շրջապտույտը՝ ընդգծելով դրա նշանակությունը՝ քրեական արդարադատության շղթայի համար: Այն կներառի տեղեկություններ՝ իշխանություն-հսկողություն մեխանիզմի, ինչպես նաեւ «կրկնակի վիկտիմիզացիա» հասկացության վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

Դասաժամի ավարտին մասնակիցները՝

- ▶ պատկերացում կկազմեն գենդերին վերաբերող եզրույթների մասին,
- ▶ պատկերացում կկազմեն սեռական զուգընկերոջ կողմից բռնության ձեւերի եւ դրանց շրջապատույտի մասին,
- ▶ պատկերացում կկազմեն իշխանություն-հսկողություն մեխանիզմի եւ ընտանեկան բռնության դինամիկայի մասին,
- ▶ կկարողանան ճանաչողություն ձեռք բերել գենդերային կարծրատիպերի վերաբերյալ,
- ▶ ճանաչողություն ձեռք կբերեն կրկնակի վիկտիմիզացիայի ձեւերի մասին:

Թեմա 1.1. Հայեցակարգային շրջանակը. Գենդերը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Վերապատրաստումը կսկսվի դասընթացավարների և մասնակիցների ներկայացմամբ, դասընթացի ընդհանուր նկարագրությամբ (նպատակները, բովանդակությունը) եւ դասընթացի կանոնների վերաբերյալ պայմանավորվածությամբ (բջջային հեռախոսների օգտագործման, դասաժամի ընթացքում այլ աշխատանքների կատարման արգելք եւ այլն): Առաջին թեման սկսելու համար կօգտագործվի վարժություն. մասնակիցները կբաժանվեն չորս խմբի, յուրաքանչյուրին կտրամադրվի գրասենյակային պատկերակալ՝ բաժանված երկու կատեգորիայի՝ տղամարդիկ եւ կանայք: Նրանցից կպահանջվի մի շարք բառեր տեղադրել կատեգորիաներից յուրաքանչյուրում: Կանցկացվի կարճ քննարկում սեռի եւ գենդերի միջեւ տարբերության եւ այն գենդերային կարծրատիպերի վերաբերյալ, որոնք հանգեցրել են բառերն այս կամ այն կատեգորիայում տեղադրելուն: Դասախոսությունը կներառի գենդերի, գենդերային խտրականության, գենդերային կարծրատիպերի եւ գենդերային հիմքով բռնության նշանակությունը: Դասընթացի մասնակիցներին կտրամադրվեն նյութեր՝ ընտանեկան բռնության հետ կապված մտացածին պատկերացումների վերաբերյալ:

Թեմա 1.2. Բռնության ձևերը եւ շրջապտույտը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Կանցկացվի «Power Point» ձևաչափով ներկայացում՝ բռնության ձևերի եւ շրջապտույտի վերաբերյալ: Կցուցադրվի տեսանյութ՝ ընտանեկան բռնության դինամիկայի վերաբերյալ: Դրան կհետեւի հանրային ներկայացում՝ իշխանություն-հսկողություն մեխանիզմի եւ «կրկնակի վիկտիմիզացիա» հասկացության ու դրա պատճառների վերաբերյալ:

Դասընթացային փուլ 2	Մարդու իրավունքների միջազգային չափանիշները եւ ազգային իրավական համակարգը		
	Թեմա 2.1	Չոհակենտրոն, մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում եւ կիրառելի մարդու իրավունքներ	1/2 ժամ
	Թեմա 2.2	Սեռական զուգընկերոջ կողմից բռնության եւ սեռական բռնության տարածվածության վերաբերյալ ազգային տվյալները եւ այդ երևույթների նկատմամբ վերաբերմունքը Հայաստանում	1/2 ժամ
	Թեմա 2.3	Արդարադատության մատչելիության խոչընդոտները	1/4 ժամ
Վարժություններ		Կառաջարկվի գործնական դեպքերի ուսումնասիրություն՝ ՄԻԵԴ-ի եւ ԿԽՎԿ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում:	3/4 ժամ

Նպատակը: Դասընթացի տվյալ փուլի նպատակն է՝ մասնակիցներին ներկայացնել կիրառելի միջազգային իրավական համակարգը՝ շեշտը դնելով ԿԽՎԿ-ով եւ Ստամբուլի կոնվենցիայով սահմանված չափանիշների վրա: Դասընթացի տվյալ փուլում կընդգծվի մարդու իրավունքների վրա հիմնված, զոհակենտրոն մոտեցման անհրաժեշտությունը, եւ այն կներառի գենդերային հիմքով բռնությանն առնչվող մարդու իրավունքների մի շարք խախտումների ներկայացում, որոնց համար պատճառ է հանդիսացել ինչպես բռնությունը (կյանքի իրավունք, խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի արգելք եւ այլն), այնպես էլ պետության կողմից արդյունավետ արձագանքի բացակայությունը (պաշտպանության իրավունք, գործով քննություն իրականացնելու պարտավորություն, արդար դատաքննություն, իրավական

պաշտպանության արդյունավետ միջոց): Դրանում հակիրճ կներկայացվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԿ) սահմանված համապատասխան իրավունքները, որոնք ընկած են ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի հիմքում, որն ավելի ուշ կնկարագրվի վերապատրաստման ժամանակ եւ կօգտագործվի նախադեպերի ուսումնասիրության մեջ: Կներկայացվի Հայաստանում սեռական բռնության եւ սեռական զուգընկերոջ կողմից բռնության տարածվածության վերաբերյալ ազգային տվյալները եւ դրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաեւ կքննարկվեն Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները:

Ուսումնառության նպատակները

Դասընթացի տվյալ փուլի ավարտին մասնակիցները՝

- ▶ բավարար գիտելիքներ ձեռք կբերեն միջազգային չափանիշների գործնական կիրառության համար,
- ▶ պատկերացում կկազմեն զոհակենտրոն, մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը գեղեցրային հիմքով բռնության դեպքերով գործերում կիրառելու վերաբերյալ,
- ▶ ճանաչողություն ձեռք կբերեն Հայաստանում սեռական զուգընկերոջ կողմից բռնության եւ սեռական բռնության տարածվածության ու բռնության այս ձեւերի նկատմամբ վերաբերմունքի մասին,
- ▶ կպարզեն ընտանեկան եւ սեռական բռնության մասով ՄԻԵԴ-ի եւ ԿԽՎԿ-ի դատական պրակտիկայի շրջանակներում պաշտպանված իրավունքները,
- ▶ կպարզեն Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները:

Թեմա 2.1. Մարդու իրավունքների միջազգային իրավական համակարգի ընդհանուր նկարագրություն

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Սկսելով քննարկում՝ զոհակենտրոն, մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում եզրույթների վերաբերյալ՝ կներկայացվեն մարդու իրավունքների վերաբերյալ կիրառելի փաստաթղթերը եւ մարդու այն իրավունքները, որոնք դիտարկվում են գենդերային հիմքով բռնությունից տուժողների համար արդարադատության մատչելիության ապահովման գործերում: Իրավունքների ամբողջական ցանկն ամփոփելու համար կարող են օգտագործվել նախապատրաստված սահիկներ: Հիմնական սահմանումների տեքստը եւ հատուկ լեզվի օգտագործման նշանակությունն ընդգծելու համար կօգտագործվի «Power Point» ձեւաչափով ցուցադրման նյութ:

Թեմա 2.2. Սեռական զուգընկերոջ կողմից բռնության եւ սեռական բռնության տարածվածության վերաբերյալ ազգային տվյալները եւ այդ երևույթների նկատմամբ վերաբերմունքը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Կանցկացվի կարճ դասախոսություն՝ գենդերային հիմքով բռնության բնորոշման ու դրա ձեւերի, Հայաստանում դրա տարածվածության եւ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի /ՄԱԲՀ/՝ գենդերային հիմքով բռնության նկատմամբ վերաբերմունքի մասին վերջերս կատարված ուսումնասիրության եզրակացությունների վերաբերյալ:

Դրան կհաջորդի քննարկում՝ արդարադատության բնագավառում գենդերային հիմքով բռնությանն անդրադառնալու հարցում համապատասխան տվյալների կիրառման վերաբերյալ:

Թեմա 2.3. Արդարադատության մատչելիության խոչընդոտները

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Կներկայացվի կարճ «PowerPoint» ձեւաչափով ներկայացում՝ Եվրոպայի խորհրդի կողմից կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտներն արձանագրող՝ վերջերս ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ՝ արդարադատության ոլորտի դերակատարների եզրահանգումներով եւ մեկնաբանություններով հանդերձ:

Դասընթացային փուլ 3	Պաշտպանությունը		
	Թեմա 3.1	Անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների եւ ռիսկի գնահատում	1 ժամ
	Թեմա 3.2	Անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների բողոքարկման մեխանիզմներ եւ այդ որոշումների խախտումներ	1 ժամ
	Վարժություններ	Ռիսկի գնահատման վերաբերյալ քննարկում: Մասնակիցներին կտրամադրվեն նյութեր՝ ռիսկի գնահատման ստուգացանկի վերաբերյալ:	15 րոպե

Նպատակը: Դասընթացի այդ փուլի նպատակն է՝ ներկայացնել անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների վերաբերյալ միջազգային իրավական չափանիշներն ու ազգային օրենսդրական համակարգը: Այն կներառի ռիսկի գնահատում անցկացնելու չափանիշները, ներառյալ՝ ՄԻԵԴ-ի համապատասխան դատական պրակտիկան: Դասընթացի այս փուլը կներառի նաեւ պաշտպանական որոշումները բողոքարկելու եւ երկարաձգելու վերաբերյալ կիրառելի քրեական, քաղաքացիական ու վարչական ընթացակարգերը, ինչպես նաեւ այդպիսի որոշումները խախտելու հետեւանքները: Կքննարկվի երեխաների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ որպես պաշտպանական որոշումների կայացման գործընթացի մաս: Կներկայացվեն նաև ազգային օրենսդրական համակարգում առկա բացերը:

Ուսումնառության նպատակները

Դասընթացային փուլի ավարտին մասնակիցները՝

- ▶ պատկերացում կկազմեն անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների նկատմամբ կիրառելի միջազգային իրավական չափանիշների մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով Ստամբուլի կոնվենցիային եւ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկային,
- ▶ պատկերացում կկազմեն անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների վերաբերյալ ազգային իրավական համակարգի, այդ թվում՝ հիմնական բացերի մասին,
- ▶ պատկերացում կկազմեն ռիսկի գնահատում անցկացնելու համար կիրառելի չափանիշների մասին,

- ▶ կպարզեն երեխաների պաշտպանությունը եւ խնամակալությունը անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների հետ փոխկապակցելու անհրաժեշտությունը,
- ▶ պատկերացում կկազմեն անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումները բողոքարկելու եւ դրանց գործողությունը երկարաձգելու ընթացակարգերի մասին,
- ▶ պատկերացում կկազմեն ազգային օրենսդրությամբ սահմանված՝ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների խախտման հետեւանքների, այդ թվում՝ տուժողների պաշտպանության մասով առկա բացերի մասին:

Թեմա 3.1. Անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումները

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Դասընթացի այդ փուլը կներառի դասախոսություններ՝ Ստամբուլի կոնվենցիայով եւ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայով նախատեսված՝ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների միջազգային չափանիշների մասին: Այնուհետեւ կքննարկվի ազգային իրավական համակարգի կիրառությունը՝ ներկայացնելով նաեւ առկա բացերը: Նույն մոտեցումը կկիրառվի ռիսկերի գնահատման նկատմամբ՝ նշելով ՄԻԵԴ-ի կողմից ճանաչված գործոնները եւ Եվրոպայի խորհրդի մյուս անդամ պետությունների լավագույն փորձը: Մասնակիցներին կտրամադրվեն նյութեր ռիսկերի գնահատման տարբեր չափանիշների թվարկմամբ: «PowerPoint» ձեւաչափով ներկայացման միջոցով կներկայացվեն իրավատեխնիկական չափանիշները:

Թեմա 3.2. Անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների բողոքարկումները եւ դրանց խախտումները

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Դասընթացի այս փուլը կսկսվի «Power Point» ձևաչափով ներկայացմամբ՝ անդրադառնալով քաղաքացիական եւ վարչական օրենսդրությանը, որոնցով կարգավորվում են անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաեւ անդրադարձ կկատարվի այդ որոշումների խախտման հետեւանքներին ազգային օրենսդրության շրջանակներում: Կքննարկվեն ոստիկանության ընդունած համապատասխան իրավական ակտերը: Երեխաների պաշտպանության եւ խնամակալության խնդիրները փոխկապակցելու անհրաժեշտությանը նույնպես անդրադարձ կկատարվի:

<i>Դասընթացային փուլ 4</i>	<i>Քրեական արդարադատության արձագանքը. Գործով քննությունը եւ դատավարական առանձնահատկությունները</i>		
	<i>Թեմա 4.1</i>	<i>Մինչդատական վարույթ</i>	<i>3/4 ժամ</i>
	<i>Թեմա 4.2</i>	<i>Դատական վարույթ</i>	<i>3/4 ժամ</i>
	<i>Թեմա 4.3</i>	<i>Ընտանեկան բռնությունից տուժածների եւ վկաների հետ աշխատանքը</i>	<i>1/2 ժամ</i>
	<i>Վարժություններ</i>	<ol style="list-style-type: none"> <i>1. Մասնակիցներին կտրամադրվեն համապատասխան նյութեր:</i> <i>2. Հանրային շահի վերաբերյալ օրինակելի հարցեր՝ գործի քննությունը հանրային մեղադրանքի կարգով իրականացնելու համար:</i> <i>3. Տուժողների հարցաքննության առնչությամբ դերախաղեր:</i> <i>4. Գործերի վերաբերյալ քննարկումներ (մասնակիցներին բաժանվող նյութեր)՝ արդյունավետ քննության եւ պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաեւ տուժողների հետ հաղորդակցվելու մասին:</i> 	<i>1/2 ժամ</i>

Նպատակը: Դասընթացի այդ փուլի նպատակն է՝ մասնակիցներին ծանոթացնել մինչդատական (քննության) եւ դատական քննության փուլերի ընթացքում կիրառելի համապատասխան միջազգային չափանիշներին եւ ազգային իրավական համակարգին՝ հատուկ ուշադրություն դարձնելով տուժողների՝ դատարանում եւ դատարանից դուրս պաշտպանություն ստանալու իրավունքին: Այն կներառի միջազգային չափանիշների եւ ազգային օրենսդրության համաձայն ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության հետ կապված հանցագործությունների ամբողջ շարքի ուսումնասիրությունը՝ ներկայացնելով պաշտպանության առնչությամբ առկա բացերը:

Ուսումնասիրության նպատակները

Դասընթացի ավարտին մասնակիցները՝

- ▶ պատկերացում կկազմեն պատշաճ ջանասիրության չափանիշի եւ ՄԻԵԴ-ի (2-րդ, 3-րդ եւ 8-րդ հոդվածներ) կողմից ընտանեկան բռնության գործերում դրա կիրառության մասին, ինչը պահանջում է իրականացնել ի պաշտոնե գործով քննություն եւ քրեական հետապնդում ու ընթացիկ ռիսկերի գնահատում,
- ▶ ճանաչողություն ձեռք կբերեն ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով անհրաժեշտ ապացույցների հավաքագրման ընդհանուր մարտահրավերների մասին, ինչպես նաեւ հավանական ապացույցների լայն շրջանակի մասին,
- ▶ խոր պատկերացում կկազմեն ազգային օրենսդրական համակարգի, այդ թվում՝ Ընտանեկան բռնության մասին օրենքի, քրեական եւ քրեադատավարական օրենսդրությանն ու քրեական հետապնդման մասով ընդունված ակտերի մասին,
- ▶ գիտելիք ձեռք կբերեն այն բացերի մասին, որոնց արդյունքում ազգային օրենսդրությունը հակասում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին,
- ▶ պատկերացում կկազմեն տուժողների եւ վկաների դատավարական, այդ թվում՝ դատարանում տրամադրվող պաշտպանության իրավունքի, ինչպես նաեւ ընտանեկան բռնության տուժողների համար այս միջոցների կարելիության մասին:

Թեմա 4.1. Մինչդատական վարույթը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Դասընթացի այս փուլը կսկսվի դասախոսությամբ, որը կներկայացնի պատշաճ ջանասիրության չափանիշը եւ դրա նշանակությունը պետության այն պարտավորությունների մասով, որոնք վերաբերում են կանանց նկատմամբ բռնարարքները եւ ընտանեկան բռնությունը կանխարգելելուն, դրանց մասով քննություն, քրեական հետապնդում իրականացնելուն ու պատիժ սահմանելուն, ինչպես նաեւ տուժողներին փոխհատուցում տրամադրելուն: Այն կներառի նաեւ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը՝ ապահովելու համար, որ մասնակիցները պատկերացում կազմեն որոշակի չափանիշների եւ ընտանեկան բռնության վերաբերյալ այնպիսի գերծիքների կիրառման մասին, ինչպես օրինակ՝ գործով ի պաշտոնե քննությունն է եւ հանրային մեղադրանքի կարգով քրեական հետապնդումը: Կներկայացվի նախադեպերի ուսումնասիրություն՝ հնարավորություն տալու համար մասնակիցներին աշխատել գործնական իրավիճակներում եւ կիրառել ՄԻԵԴ-ի կողմից նշված չափանիշները: Կքննարկվեն մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի բնույթը եւ տուժողների կողմից բողոքները հետ վերցնելու կապակցությամբ ապացույցների հավաքագրման հարցում առկա մարտահրավերները, ինչպես նաեւ նախկինում դրսևորած սեռական վարքագծի վերաբերյալ ապացույցների օգտագործումը՝ այդ մարտահրավերը հաղթահարելու համար առաջարկություններով հանդերձ: Դասընթացային փուլը կավարտվի ի պաշտոնե քրեական հետապնդման հետ կապված նախադեպի ուսումնասիրությամբ:

Թեմա 4.2. Դատական վարույթը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Դասընթացի այս փուլում կներկայացվի դասախոսություն՝ Քրեական օրենսգրքի շրջանակներում այն հիմնական հանցագործությունների մասին, որոնք կիրառելի են ընտանեկան բռնության դեպքերի մասով. սպանություն, ծեծ, սեռական բռնություն եւ այլն: Կանցկացվեն համեմատություններ այս հանցագործությունների առնչությամբ միջազգային չափանիշների հետ, եւ կներկայացվեն ազգային օրենսդրության մեջ առկա հիմնական այն բացերը, որոնք հանգեցնում են տուժողների համար արդարադատության մատչելիության խոչընդոտներին: Դասախոսությունը կներառի նաեւ Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված՝ կանանց նկատմամբ բռնության հետ կապված հանցագործությունները եւ դրանց արտացոլումն ազգային օրենսդրության շրջանակներում:

Թեմա 4.3. Ընտանեկան բռնությանից տուժածների եւ վկաների հետ աշխատանքը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Դասընթացի այս փուլում կմատուցվի տուժողների դատավարական իրավունքների մասին հակիրճ ներկայացում, զոհակենտրոն մոտեցման մասին քննարկման հակիրճ կրկնություն՝ ընդգծելով քրեական արդարադատության գործընթացում տուժողների եւ վկաների հատուկ կարիքներն ու իրավունքները: Դրանում նաեւ անդրադարձ կկատարվի դատարանում տրամադրվող պաշտպանությանը: Մասնակիցների համար կնախաձեռնվեն խմբակային վարժություններ, ներառյալ՝ նախադեպերի շուրջ քննարկումներ եւ ընտանեկան բռնության տուժողների հետ աշխատելու վերաբերյալ դերախաղեր:

<i>Դասընթացային փուլ 5</i>	<i>Պատասխանատվության ենթարկելը եւ իրավական պաշտպանության միջոցները</i>		
	<i>Թեմա 5.1</i>	<i>Համաչափ եւ տարհամույիչ պատասխանատվության միջոցները</i>	<i>1 ժամ</i>
	<i>Թեմա 5.2</i>	<i>Մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները, դատական համակարգում կարծրատիպավորումը</i>	<i>1/2 ժամ</i>
	<i>Թեմա 5.3</i>	<i>Փոխհատուցումը</i>	<i>1/2 ժամ</i>
	<i>Վարժություններ</i>	<i>1. ՀԿ-ի կողմից ներկայացում՝ տուժողների նկատմամբ բռնության թողած հետևանքների մասին: 2. Խմբակային քննարկումներ՝ գենդերային կարծրատիպերի մասին, որոնք ներհատուկ են «բարոյականության» եւ «պատվի» վրա հիմնված մեղմացնող հանգամանքներին:</i>	<i>3/4 ժամ</i>

Նպատակը. Դասընթացի այս փուլի նպատակն է՝ մասնակիցներին ծանոթացնել ընտանեկան բռնության դեպքերի նկատմամբ կիրառվող՝ համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության միջոցների վերաբերյալ միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների, տուգանքների եւ ծնողական իրավունքներից զրկելու առնչությամբ: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի եւ ազգային օրինակների քննարկման միջոցով կպարզաբանվեն այս չափանիշների խախտումները: Կքննարկվեն նաեւ մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները՝ ուշադրություն դարձնելով ազգային օրենսդրության դրույթներին, որոնցում մշակույթը, դավանանքը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը»

օգտագործվում են գենդերային հիմքով բռնություն ներառող հանցագործություններն արդարացնելու համար: Անդրադարձ կկատարվի ոչ համարժեք պատասխանատվության միջոցների սահմանման մասով դատական համակարգում կարծրատիպավորման դերին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքին ու փոխհատուցման մատչելիությանը:

Ուսումնասիրության նպատակները

Դասընթացի ավարտին մասնակիցները՝

- ▶ պատկերացում կկազմեն ընտանեկան բռնություն ներառող գործերի մասով համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության միջոցների ապահովման անհրաժեշտության մասին,
- ▶ ճանաչողություն ձեռք կբերեն այն ազգային իրավական դրույթների մասին, որոնք հակասում են ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով նախատեսված չափանիշներին՝ նախատեսելով պատիժը մեղմացնելու հնարավորություն,
- ▶ գիտելիքներ ձեռք կբերեն տուժողների համար իրավական պաշտպանության միջոցի մատչելիությունը խոչընդոտելու հարցում դատական կանխակալության դերի մասին,
- ▶ իրազեկ կլինեն միջազգային չափանիշների համաձայն իրավական պաշտպանության միջոցի մասը կազմող փոխհատուցման իրավունքի մասին:

Թեմա 5.1. Համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության միջոցները

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Կարճ դասախոսությունը կներառի ընտանեկան բռնության գործերում համաչափ եւ տարհամոզիչ պատասխանատվության միջոցների կարեւորությունը եւ չափանիշները՝ ուշադրություն դարձնելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին եւ այդ չափանիշների խախտման ազգային օրինակներին: Դրան կհաջորդի մասնակիցների հետ քննարկում՝ Հայաստանում այդ չափանիշների կիրառման վերաբերյալ:

Թեմա 5.2. Մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները, դատական համակարգում կարծրատիպավորումը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Կներկայացվի գործող ծանրացնող եւ մեղմացնող հանգամանքների վերաբերյալ դասախոսություն, որի ընթացքում կանցկացվի համեմատություն՝ միջազգային չափանիշների եւ ազգային օրենսդրության միջեւ, եւ կներկայացվեն ներկայումս Հայաստանում առկա բացերն ու դրանց ազդեցությունը տուժողների համար արդարադատության մատչելիության վրա: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի ազգային օրենսդրության շրջանակներում այն մեղմացնող հանգամանքների վրա, որոնցով արդարացվում է բռնությունը՝ «բարոյականության» եւ «պատվի» վրա հիմնված գաղափարների ուժով: Մասնակիցներին կներկայացվի դատական համակարգում կարծրատիպավորման վերաբերյալ նախադեպերի ուսումնասիրություն: Կյնուհետեւ կանցկացվեն խմբակային քննարկումներ՝ «բարոյականություն» եւ «պատիվ» հասկացություններին ներհատուկ գենդերային կարծրատիպերը սահմանելու համար:

Թեմա 5.3. Փոխհատուցումը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Դասընթացավարի կողմից կներկայացվի դասախոսություն՝ իրավախախտից կամ պետությունից փոխհատուցում ստանալու իրավունքի կարեւորության վերաբերյալ՝ որպես միջազգային չափանիշների շրջանակներում նշանակալի իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքի տարր՝ լուսաբանելով ՄԻԵԴ-ի դատական պրակտիկան: Կներկայացվի փոխհատուցման մատչելիությունն ազգային քաղաքացիական իրավունքի շրջանակներում:

<i>Դասընթացային փուլ 6</i>	<i>Ընտանեկան բռնության գործերում հաշտարարությունը</i>		
	<i>Թեմա 6.1</i>	<i>Հաշտարարությունը</i>	
	<i>Վարժություններ</i>	<i>Դերախաղ՝ հաշտարարության մասով օրինակելի իրավիճակներ</i>	<i>1/2 ժամ</i>

Նպատակը. Դասընթացի այս փուլի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել ընտանեկան բռնության գործերում հաշտարարության վերաբերյալ միջազգային չափանիշներին՝ լուսաբանելով ԿԽՎԿ թիվ 33 ընդհանուր հանձնարարականը եւ ընդգծելով այս մոտեցման առանցքային խնդիրները: Այն կներառի նաեւ ազգային դրույթները եւ իրավախախտների ու բռնության տուժողների հաշտեցման ինստիտուցիոնալ շրջանակը:

Ուսումնասիրության նպատակները

Դասընթացի ավարտին մասնակիցները՝

- ▶ պատկերացում կկազմեն ընտանեկան բռնության տուժողների եւ իրավախախտների հաշտեցման դժվարությունների մասին միջազգային այն չափանիշներին համապատասխան, որոնք որոշակի վերապահումներ են ենթադրում այս գործընթացում,
- ▶ կվերանայեն ազգային օրենսդրությունը եւ հաշտարարության վերաբերյալ ձեւավորված պրակտիկան:

Թեմա 6.1. Ընտանեկան բռնության գործերում հաշտարարությունը

Վերապատրաստման մեթոդաբանությունը

Ընտանեկան բռնության, իրավախախտների եւ տուժողների միջեւ հաշտարարության վերաբերյալ միջազգային չափանիշների ամփոփ նկարագիրը համապատասխան դերակատարներին կնախագգուշացնի այս մոտեցումն ընդունելուն ներհատուկ մարտահրավերների մասին: Դասընթացի տվյալ փուլը կներառի ազգային իրավական համակարգը եւ ինստիտուցիոնալ շրջանակը: Այն հնարավորություն կտա անցկացնել դերախաղեր՝ հաշտարարության վերաբերյալ գործերի առնչությամբ:

ԳՆԱՅԱՏՈՒՄԸ

Քանի որ չի նախատեսվում իրականացնել մասնակիցների գնահատում՝ որպես վերապատրաստման այս փաթեթի մաս, ուստի գնահատական կտրվի նյութերի արդյունավետության եւ դրանց ներկայացման մասով: Այն կարող է ներառել նախավերապատրաստման եւ հետվերապատրաստման թեստեր՝ նյութի մատուցման արդյունավետությունը գնահատելու համար:

ՄԻԵԴ-ի դատական պրակտիկա

- ▶ Օփուզն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey], Գանգատ թիվ 33401/02, 2009 թվական:
- ▶ Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [Branko Tomašić and Others v. Croatia], Գանգատ թիվ 46598/06, 2009 թվական:
- ▶ Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի [M.C. v. Bulgaria], Գանգատ թիվ 39272/98, 2004 թվական:
- ▶ Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey], Գանգատ թիվ 23178/94, 1997 թվական:
- ▶ Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia], Գանգատ թիվ 7510/04, 2005 թվական:
- ▶ Իգրեկն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia], Գանգատ թիվ 41107/10, 2015 թվական:
- ▶ Հալիմե Կիլիչն ընդդեմ Թուրքիայի [Halime Kiliç v. Turkey], Գանգատ թիվ 63034/11, 2016 թվական:
- ▶ Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի [A. v. Croatia], Գանգատ թիվ 55164/08, 2010 թվական:
- ▶ Մուդրիկն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [Mudric v. The Republic of Moldova], Գանգատ թիվ 74839/10, 2013 թվական:
- ▶ Բ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [B. v. The Republic of Moldova], Գանգատ թիվ 61382/09, 2013 թվական:

ԿԻՎԿ դատական պրակտիկա

- ▶ Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի [A.T. v. Hungary], Հաղորդագրություն թիվ 2/2003, ԿԻՎԿ/C/36/D/2/2003:
- ▶ Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [V.K. v. Bulgaria], Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿԻՎԿ/C/49/D/20/2008:
- ▶ Կարեն Թայագ Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների [Karen Tayag Vertido v. The Philippines], Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿԻՎԿ/C/46/D/18/2008:
- ▶ Քելն ընդդեմ Կանադայի [Kell v. Canada], Հաղորդագրություն թիվ 19/2008, ԿԻՎԿ/C/51/D/19/2008:

Պաշտոնական փաստաթղթեր

- ▶ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա)
- ▶ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (ԿԽՎԿ)
- ▶ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)
- ▶ «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» հռչակագիր (ԿՆԲՎՅ)
- ▶ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար, Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձեւերի խորը ուսումնասիրություն, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/61/122/Add.1 (2006 թվականի հուլիսի 6)
- ▶ ԿԽՎԿ Ընդհանուր հանձնարարական, թիվ 19
- ▶ ԿԽՎԿ Ընդհանուր հանձնարարական, թիվ 28
- ▶ ԿԽՎԿ Ընդհանուր հանձնարարական, թիվ 33
- ▶ Չատուկ զեկուցողի՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների եւ հետեւանքների վերաբերյալ զեկույցը, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/1995/42 (1994 թվականի նոյեմբերի 22)
- ▶ «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված՝ Եվրոպայի խորհրդի թիվ Rec(2002)5 հանձնարարական
- ▶ Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց

Գրականություն (ձեռնարկներ եւ ուղեցույցներ)

- ▶ ՄԱԿԲՅ, Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Չայաստանում, 2016 թվական:
- ▶ Կանանց համար արդարադատության հավասար մատչելիության երաշխավորման մասին տեղեկատվական թերթիկ (2015 թվականի հունվար):
- ▶ Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչ, «Արդարադատություն, որը չի գործում կանանց համար», «Նոր Եվրոպա», 2015 թվականի հոկտեմբերի 5:
- ▶ Եվրոպայի խորհուրդ, Արեւելյան գործընկերության հինգ երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության

խոչընդոտները, իրավական պաշտպանության միջոցները եւ պատշաճ գործելակերպերը, 2016 թվական:

▶ Եվրոպայի խորհուրդ, Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում եւ դրա դեմ պայքար. Իրավապահ մարմինների եւ արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման առնչությամբ ուսումնառության ռեսուրս, 2016 թվական:

▶ Եվրոպայի խորհուրդ, Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ, 2017 թվական:

Ազգային օրենքներ

- ▶ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
- ▶ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք
- ▶ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք
- ▶ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
- ▶ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք
- ▶ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ▶ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք
- ▶ «Վարչարարության եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
- ▶ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք
- ▶ «Ընտանիքում բռնության դեպքերի կրկնման կամ շարունակման անմիջական վտանգի գնահատման չափորոշիչի հաստատման մասին» Ոստիկանության գեներալ-գնդապետի հրաման
- ▶ «Ընտանիքում բռնություն գործադրած չափահասի կանխարգելիչ հաշվառման մասին» Ոստիկանության գեներալ-գնդապետի հրաման
- ▶ Գլխավոր դատախազի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի կիրարկման ուղեցույց»

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի վերաբերյալ սույն ձեռնարկը պարունակում է բոլոր միջազգային չափանիշները, նախադեպային իրավունքը, ինչպես նաեւ ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի վերաբերյալ համապատասխան ներպետական օրենսդրությունն ու գործելակերպերը: Հիմնվելով մասնավորապես «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա), ԿՆԽՎԿ-ի, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ), ինչպես նաեւ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատական պրակտիկայի վրա՝ այն ընդգծում է լավագույն գործելակերպը եւ Հայաստանի օրենսդրական զգալի բացերը, որոնց հետեւանքով օրենքները եւ դրանց վրա հիմնված ցանկացած գործելակերպ համարվում են ՄԻԵԿ-ի եւ Ստամբուլի կոնվենցիայի խախտումներ:

Չնայած «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» վերջերս ընդունված օրենքը (Ընտանեկան բռնության մասին օրենք) կարելուք քայլ է համարվում ազգային օրենսդրությունն ու գործելակերպերը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու գործում, սակայն դեռեւս առկա են զգալի բացեր: Օրինակ, Հայաստանի որդեգրած «գենդերային չեզոքության» մոտեցումը ոչ միայն խոչընդոտում է պատշաճ ձեւով զոհակենտրոն մոտեցում ցուցաբերելուն, այլեւ արտացոլում է արտոնյալ կենտրոնացվածությունը կատարողների վրա, որոնք մեծ մասամբ տղամարդիկ են:

Սույն ձեռնարկը կենտրոնանում է ընտանեկան բռնության դեմ պայքարի համար անհրաժեշտ առանցքային հետեւյալ իրավական բաղադրիչների վրա՝ պաշտպանության միջոցառումներ, հետաքննություն եւ ապացույցների հավաքում, հետապնդման եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի վերաբերյալ չափանիշներ, այդ թվում՝ նյութական եւ ոչ նյութական վնասի փոխհատուցում: Ինչ վերաբերում է Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված՝ կանանց նկատմամբ բռնության մյուս ձեւերին՝ հարկադիր եւ վաղ ամուսնություն, հղիության արհեստական ընդհատում, ամլացում, սեռական հետապնդում, կանանց սեռական օրգանների խեղում, հետամտում, Հայաստանի իրավական դաշտում դրանք չեն քրեականացվում:

Բացի իրավատեխնիկական դաշտից՝ սույն ձեռնարկը ներառում է կարելուքագույն հասկացություններ, որոնք անհրաժեշտ են գործող միջազգային չափանիշների նպատակն ու աղբյուրը հասկանալու համար: Ձեռնարկի սկզբում ներկայացվում են գենդեր, գենդերային դերեր, գենդերային կարծրատիպավորում եւ գենդերային հիմքով բռնություն եւ գենդերային խտրականություն հասկացությունների սահմանումները՝ դրանց ընկալումն ապահովելու նպատակով: Ձեռնարկում հղում է կատարվում ՄԱԲՀ-ի՝ «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում»

հետազոտությանը, մասնավորապես՝ զուգընկերոջ կողմից սեռական բռնության տարածվածությանը ազգային մակարդակով եւ դրանց նկատմամբ մոտեցումներին՝ իրավական ոլորտի գործող մասնագետների շրջանում տարածված գեղեցիկ կարծրատիպերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, ինչը կազդի տուժողների, բռնություն գործադրած անձանց, նրանց ընտանիքի անդամների եւ քրեական արդարադատության մարմինների՝ ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության մասով որոշումների կայացման վրա: Իսկապես, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության հանդեպ հասարակության շրջանում տիրող համընդհանուր հանդուրժողակա- նությունը, ինչպես նաեւ տուժողներին մեղադրելու արմատացած գործելակերպը հաճախ խոչընդոտում են կանանց համար արդարադատության մատչելիությանը: Բացի այդ, ՄԻԵԴ-ը որեւէ կոնկրետ գործին առնչվող ազգային օրենսդրությունն ու գործելակերպը գնահատելու արդյունքում որոշումներ կայացնելիս հաշվի է առնում նաեւ նմանատիպ զեկույցները:

Ուսումնական պլաններով նախատեսվում է մասնագիտացված հասարակական կազմակերպությունների կամ փորձագետների կողմից պրեզենտացիաներ կատարելու հնարավորությունը, այդ թվում՝ հոգեբանների կողմից տուժողների հետ տարվող աշխատանքները՝ տուժողների վրա ընտանեկան բռնության հոգեբանական ազդեցությունը, ինչպես նաեւ տուժողի՝ քրեական արդարադատության գործընթացներում կառուցողական ձեռով ընդգրկվելու ունակության վրա ունեցած հետեւանքները խորությամբ ուսումնասիրելու նպատակով: Տուժողի հոգեբանական վիճակն ու բռնության ցիկլի տարբեր փուլերը հաշվի առնելն էական նշանակություն ունի քրեական արդարադատության դերակատարների կողմից այդ գործերով արդյունավետ քննություն վարելու եւ հետապնդում իրականացնելու համար: Դրանից բացի, զոհակենտրոն, մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ միջազգային չափանիշները մշակվել են ընտանեկան բռնության նշված առանձնահատկությունների հիման վրա:

Սույն ձեռնարկը համակողմանի է իր մոտեցմամբ, եւ քրեական արդարադատության յուրաքանչյուր օղակ կարող է կենտրոնանալ ձեռնարկի՝ հատկապես իր իրավասությանն առնչվող գլուխների վրա: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր փուլին առնչվող չափանիշների հստակ ընկալումը հնարավորություն է ընձեռում ամբողջա- կան պատկերացում ունենալու այն մասին, թե ինչպես պետք է այդ բաղադրիչներից յուրաքանչյուրը համատեղել՝ տուժողների համար արդարադատության մատչելիու- թյունն ապահովելու նպատակով:

1.1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ. ԳԵՆԴԵՐ

ԱՃԽՈՒԺԱՑՆՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՍԵՌ, թե՛ գենդեր

Մասնակիցները պետք է բաժանվեն խմբերի, ֆիյաչ չարթի՝ երկու մասի (տղամարդիկ/կանայք) բաժանված էջի վրա գրեն բառերի ցանկ: Ցանկը կարող է ներառել հետևյալ բառերը՝ դատավոր, երեխայի դաստիարակություն, տիկնիկ, բեռնատար ավտոմեքենա, լաց, տան գլուխ, մաքրություն, կրծքով կերակրում, կերակրող, հնազանդ, իր կարծիքը համարձակ արտահայտող, ուժեղ, բռնկվող, հղիություն, առաջնորդ, խոհարարություն, փորձառու, զգայուն, հրշեջ, ոստիկանություն, անկախ, բնուշ, փոքր, նուրբ, կոպիտ, դիմացկուն, զգացմունքային, փնթփնթան, շատախոս, մարդամոտ, սակավախոս, կարեկցող, աշխատասեր, բարձր վարձատրվող եւ այլն:

Ընտանեկան բռնության խնդիրն արդյունավետորեն լուծելու համար չափազանց կարևոր է խորությամբ ընկալել «գենդեր» եզրույթին առնչվող հասկացությունները: «Սեռ» հասկացությունն արտահայտում է տղամարդկանց եւ կանանց միջեւ կենսաբանական տարբերությունները, մինչդեռ «գենդերը» սահմանվում է որպես կանանց եւ տղամարդկանց վերագրվող՝ սոցիալական կամ մշակութային գործոնների ազդեցությամբ ձեւավորված տարբեր դերեր: Այլ կերպ ասած՝ սեռն անփոփոխ հատկանիշ է (կամ էր), իսկ գենդերը՝ վերագրվող: «Գենդերը», այսպիսով, վերաբերում է կանանց եւ տղամարդկանց միջեւ գոյություն ունեցող բոլոր այն տարբերություններին, որոնք խիստ կենսաբանական չեն: Կարելի է նշել, որ «գենդեր» եզրույթը վերաբերում է եւ՛ կանանց, եւ՛ տղամարդկանց:

Գենդերային դերերը, այսպիսով, տվյալ հասարակությունում ձեռքբերովի վարքագծեր են, որոնցով պայմանավորված՝ մենք որոշակի գործունեությունը, պարտականությունները եւ պարտավորությունները ընկալում ենք որպես արական կամ իգական սեռին բնորոշ: Շատ մշակույթներում գենդերը դիտարկվում է որպես բնական երեւույթ, որը պայմանավորված է կանանց եւ տղամարդկանց միջեւ գոյություն ունեցող կենսաբանական տարբերություններով: Այնուամենայնիվ, արական կամ իգական սեռի ընկալումները տարբերվում են՝ մշակույթով կամ աշխարհագրական տեղանքով պայմանավորված: Այլ գործոններ, որոնցից է սոցիալ-տնտեսական դասակարգը, նույնպես կարող են մեծ ազդեցություն ունենալ գենդերի նկատմամբ ձեւավորվող վերաբերմունքի վրա: Գենդերային դերերը եւ ինքնությունները՝ որպես սոցիալական եւ մշակութային գործոնների ազդեցությամբ ձեւավորված դերեր եւ ինքնություններ, կարող են փոփոխվել եւ փոփոխվում են ժամանակի ընթացքում:

1 Տե՛ս, ԿՆԽԿԿ թիվ 28 ընդհանուր հանձնարարականի 5-րդ կետը, որտեղ նշվում է, որ սոցիալապես ձեւավորվող գենդերային ինքնությունները, հատկանիշները եւ դերերը հանգեցնում են «կանանց եւ տղամարդկանց հիերարխիկ փոխհարաբերությունների ձեւավորմանը, ինչպես նաեւ իշխանության եւ իրավունքների բաշխմանը՝ հօգուտ տղամարդկանց եւ ի վնաս կանանց: Կանանց եւ տղամարդկանց այդ սոցիալական դիրքի վրա ազդեցություն են ունենում քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական, կրոնական, գաղափարախոսական եւ արտաքին միջավայրի հետ կապված գործոնները, եւ դրանք կարող են փոփոխվել մշակույթի, հասարակության եւ համայնքի կողմից:»:

- Սեռային դերեր՝ հղիություն, կրծքով կերակրում
- Գենդերային դերեր՝ երեխայի խնամք

Գենդերային կարծրատիպերը կարող են սահմանվել որպես համոզմունք այն մասին, որ բոլոր տղամարդիկ եւ կանայք օժտված են որոշակի հոգեբանական եւ վարքագծային հատկանիշներով, ինչպես նաեւ կարող են հանգեցնել անձի՝ զուտ իր գենդերով պայմանավորված հատկանիշների վերաբերյալ խիստ ընդհանրացված համոզմունքի:

Կանանց առնչվող գենդերային կարծրատիպերի օրինակներն՝

- ▶ Կանայք պետք է մայր լինեն, եւ հետեւաբար, նրանք եւ ոչ թե տղամարդիկ պետք է զբաղվեն երեխաների ծննդի եւ խնամքի հետ կապված հարցերով:
- ▶ Կանայք սեռական առումով պասիվ են եւ, հետեւաբար, նրանք հակված են հնազանդորեն ենթարկվելու տղամարդկանց սեռական ոտնձգություններին:
- ▶ Կանայք պետք է համեստ հագնվեն, եւ հետեւաբար, անհամեստ հագնված կինն ինքն է պատասխանատվություն կրում իր նկատմամբ կատարված սեքսուալ բնույթի բռնի գործողության համար:

ԿԼԽՎԿ կոմիտեն Հայաստանին ուղղված՝ 2016 թվականի իր վերջին ամփոփիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել՝

«Գենդեր» հասկացության բացասական ընկալման, ինչպես նաեւ ընտանիքում եւ հասարակությունում կանանց ու տղամարդկանց դերերի ու պարտականությունների վերաբերյալ կայուն կարծրատիպերի մասին, որոնցով նսեմացվում են կանանց սոցիալական կարգավիճակը եւ նրանց կրթական ու մասնագիտական հեռանկարները: ... Բացի դրանից՝ Կոմիտեն մտահոգված է հայ հասարակության կողմից գենդերային հավասարության միջազգային եւ ազգային իրավական դաշտն ապահովող դրույթների սահմանափակ ընդունմամբ:²

«Առնականություն» եզրույթը նկարագրում է տղամարդկանց վերաբերող՝ սոցիալական գործոնների ազդեցությամբ ձեւավորված հատկանիշներ, վարքագծեր եւ դերեր: Որոշ դեպքերում առնականությունը հիմնված է այնպիսի հեգեմոնիկ (գերիշխող) սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ առաջնորդ լինելը, իշխանությունը եւ ղեկավար դիրքը: Այլ դեպքերում առնականությունը տղամարդկանց հնարավորություն է տալիս լինելու զգացմունքային, սերտ կապերի մեջ լինելու իրենց ընտանիքների եւ երեխաների հետ, ինչպես նաեւ ընդունելու, որ երբեմն անինքնավստահ լինելը բնական է:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) կողմից վերջերս իրականացված՝ **«Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում»** հետազոտության արդյունքում գրանցվել է «հեգեմոնիկ տեսակի առնականության բավականին բարձր տոկոս», ըստ որի՝ հետազոտության մասնակիցներն արտահայտել են իրենց համաձայնությունը հետեւյալ հարցում՝ «կնոջ վարքագծի վերահսկողություն» սկսած նրան թելադրելուց, թե ինչ կրի, ընդհուպ մինչեւ զուգընկերոջ գտնվելու վայրի մշտական ստուգում:³

2 CEDAW/C/ARM/CO/5-6, 14-րդ կետ:

3 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 168, 169. հետազոտությանը մասնակցած տղամարդկանց 18.1%-ը իրենց են վերապահում արտամոսնական կապերի իրավունքը:

Առնականության մեկ այլ կարեւոր ասպեկտ վերաբերում է հայրերի ներգրավվածությանը ծնողավարման գործում: Հայրությանը նվիրված պատմական եւ սոցիոլոգիական ուսումնասիրությունները եւ «Ժամանակի բյուջեի» ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին հարյուրամյակի ընթացքում հայրերի դերերը փոխվել են: Հայրերն ավելի ու ավելի են ներգրավվում երեխայի խնամքի մեջ: Ընդհանուր առմամբ, հետազոտության մասնակից տղամարդիկ կարծում են, որ իրենց շփումը երեխաների հետ կայուն է եւ կախված չէ ամուսնության շրջանակներում իրենց զուգընկերների հետ հարաբերություններից: Այսպես՝ հարցվածների 76%-ը համաձայն չէ հետեւյալ պնդմանը. «Վախենում եմ, որ կկորցնեմ կապը երեխաներիս հետ, եթե բաժանվեմ»: Չնայած վերոնշյալին՝ արական սեռի հարցվածների 85%-ն ընդունում է, որ իրենց դերակատարումը երեխայի խնամքի հարցում ընդամենը օժանդակ է («Ես երեխաներիս հոգածության մեջ օգնականի դեր եմ կատարում») եւ սահմանափակվում է մատակարարողի պարտականությամբ (89.9%): Արական սեռի հարցվածների մոտավորապես կեսը (54.8%) չափազանց քիչ ժամանակ է տրամադրում երեխաներին՝ աշխատանքային գերծանրաբեռնվածության պատճառով:

Տղամարդկանց պատասխանները վերահսկողական վարքի վերաբերյալ հարցերին՝ ըստ տոկոսների

Տղամարդկանց թիվը՝ 689

Վերահսկողական վարք		<i>Կողմ</i>	<i>Խիստ կողմ</i>
<i>Հարց 142</i>	<i>Ես թույլ չեմ տա զուգընկերուհուս որոշ տեսակի հազուստ կրել:</i>	<i>23.0</i>	<i>33.8</i>
<i>Հարց 143</i>	<i>Մեզ առնչվող կարեւոր որոշումների վերաբերյալ ես իմ կարծիքն ավելի հաճախ եմ արտահայտում, քան նա:</i>	<i>24.2</i>	<i>59.6</i>
<i>Հարց 144</i>	<i>Ես եմ ասում զուգընկերուհուս, թե նա ում հետ կարող է շփվել:</i>	<i>19.2</i>	<i>29.2</i>
<i>Հարց 145</i>	<i>Երբ զուգընկերուհիս իրեն սապող հազուստ է կրում, ես ենթադրում եմ, որ նա ուզում է դուր գալ ուրիշ տղամարդկանց:</i>	<i>4.2</i>	<i>4.1</i>
<i>Հարց 146</i>	<i>Ես ուզում եմ մշտապես տեղեկացված լինել իմ զուգընկերուհու գտնվելու վայրի մասին:</i>	<i>18.1</i>	<i>67.0</i>
<i>Հարց 147</i>	<i>Սիրում եմ նրան զգացնել տալ, որ ինքը միակը չէ, ով կարող է լինել իմ զուգընկերը:</i>	<i>7.1</i>	<i>11.0</i>

Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ «նորմատիվ ուժային դիսամիկան» ստիպում է որոշ տղամարդկանց ֆիզիկական բռնություն գործադրել իրենց զուգընկերոջ նկատմամբ՝ իրենց առնականությունը ցույց տալու համար: Այսպիսով, հետազոտողները պնդում են, որ «տղամարդկանց վարքագիծը, ներառյալ՝ բռնության գործադրումը, օգնում է նրանց կանանց հանդեպ թվացյալ գերիշխանության հասնել, ինչը համընկնում է հասարակության մեջ գործող առնականության պատկերացումներին»:⁴ Այսպիսով, ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության հարցին անդրադառնալիս պետք է հասկանալ առնականության տարբեր դրսևորումները, որոնք նույնպես հիմնված են գենդերային կարծրատիպերի վրա:

4 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 83:

Ընտանեկան բռնությանն առնչվող գենդերային կարծրատիպերը եւ «առասպելները», ի թիվս այլնի, ներառում են՝

- ▶ Կանանց նկատմամբ բռնությունն անձնական հարց է:
- ▶ Կանայք արժանի են ծեծի. դա ցույց է տալիս, որ տղամարդն է գլխավորը:
- ▶ Կանայք պետք է սակավախոս լինեն:
- ▶ Տղամարդիկ կենսաբանական պահանջմունքներ ունեն, ինչը նրանց բնական ագրեսիվություն է հաղորդում:

ՄԱԲՀ-ի կողմից իրականացված «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» զեկույցից պարզ է դառնում, որ հայ տղամարդկանց զգալի տոկոսը դեռ հետեւում է, ինչպես իրենց է թվում, ավանդական եւ մշակութային նորմերին, որոնք իրականում ժամանակավրեպ կարծրատիպեր են:⁵

Ինքնության, դերերի եւ վարքագծերի՝ սոցիալական գործոնների ազդեցությամբ ձեւավորված այդ մոդելները հանգեցնում են խտրականության եւ՝ տղամարդկանց, եւ՝ կանանց նկատմամբ, ինչպես նաեւ այն անձանց նկատմամբ, որոնք չեն համապատասխանում գենդերի վերաբերյալ խստորեն սահմանված գաղափարներին, «առասպելներին» եւ կարծրատիպերին, ինչպիսիք են տրանսգենդեր անձինք:

Գենդերային խտրականությունը ամենատարրական մակարդակում կարող է սահմանվել որպես անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունք՝ գենդերային հիմքով: «Տարբերակված մոտեցումը» հաճախ կանխակալ է եւ հիմնված է գենդերային որեւէ կարծրատիպի վրա: Գոյություն ունեն խտրականության բազմաթիվ ձեւեր՝ ուղղակի, անուղղակի կամ համակարգային: Համակարգային խտրականության օրինակներից են շատ հասարակություններում կանանց համար ռեսուրսներից օգտվելու անհավասար հնարավորությունները, ինչպես նաեւ որոշումների կայացման հարցում նրանց մասնակցության սահմանափակումը:

Այստեղ մեր ուշադրության կենտրոնում կանանց առնչվող գենդերային խտրականությունն է, որովհետեւ կանանց նկատմամբ խտրականությունն ու բռնությունը սերտորեն փոխկապակցված են: **Կանանց նկատմամբ խտրականությունը** սահմանվում է որպես՝

սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը կանանց համար խաթարում կամ վերացնում է կամ էլ նպատակ ունի խաթարելու կամ վերացնելու քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, անկախ ամուսնական կարգավիճակից, տղամարդկանց եւ կանանց հավասարության հիմքով մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը, ինչպես նաեւ՝ կանանց կողմից այդ իրավունքների ու հիմնարար ազատությունների իրացումը կամ դրանցից օգտվելը:⁶

Այս սահմանումը ներկայացված է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածում (ԿՆԽՎԿ), որն ընկած է

5 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 215:

6 «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի (ԿՆԽՎԿ) 1-ին հոդված:

կանանց հավասարության եւ բռնությունից ազատ ապրելու իրավունքի վերաբերյալ միջազգային չափանիշների մեծամասնության հիմքում: ԿՆԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր հանձնարարականի համաձայն՝

Կանանց նկատմամբ ուղղակի խտրականությունը ենթադրում է ակնհայտորեն սեռային եւ գենդերային տարբերությունների հիմքով տարբերակված մոտեցում: Կանանց նկատմամբ անուղղակի խտրականությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ օրենքը, քաղաքականությունը, ծրագիրը կամ գործելակերպը թվում են չեզոք՝ այնքանով, որքանով վերաբերում են տղամարդկանց եւ կանանց, սակայն գործնականում խտրական ազդեցություն են ունենում կանանց վրա, որովհետեւ առերեսույթ չեզոք միջոցը չի լուծում մինչ այդ գոյություն ունեցող անհավասարության խնդիրը: Բացի դրանից, անուղղակի խտրականության արդյունքում կարող է սրվել գոյություն ունեցող անհավասարությունը՝ խտրականության համակարգային ու պատմականորեն ձեւավորված օրինակները, ինչպես նաեւ կանանց եւ տղամարդկանց անհավասար ազդեցությունը չճանաչելու հետեւանքով:⁷

ՄԱԲՀ-ի կողմից իրականացված «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ Հայաստանում գենդերային խտրականության հետ կապված իրավիճակը վերջին մի քանի տարվա ընթացքում վատթարացել է: Հետազոտությունը պարզել է, որ «տվյալները հստակորեն ամրագրում են կանանց անհավասար դիրքը հասարակական, քաղաքական եւ տնտեսական կյանքի շատ ոլորտներում, եւ որ նրանց ներուժը լիարժեք չի օգտագործվում, եւ որ Հայաստանում նրանք երբեմն անհաղորդ են որոշումների կայացման գործընթացին»:՝⁸ Չեկույցում նաեւ նշվում է, որ գենդերային հավասարության հասնելուն «խոչընդոտում են լայնորեն տարածված գենդերային բացասական կարծրատիպերը եւ կանանց նկատմամբ վիրավորական/ նվաստացուցիչ ավանդական բռնությունները (առաջին հերթին՝ գենդերային հիմքով բռնությունը, սեռի հատկանիշով՝ տղայի նախընտրությամբ, հղիության ընդհատումները), որոնք դեռ գերիշխում են [հասարակության մեջ]:⁹

Հայաստանը դեռեւս խտրականության դեմ պայքարի վերաբերյալ օրենք չի ընդունել՝ չնայած խտրականությունն արգելվում է, եւ տղամարդկանց ու կանանց միջեւ հավասարության խթանումը պաշտոնապես ամրագրված է Սահմանադրությամբ:¹⁰ Ըստ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ միջազգային եւ եվրոպական օրենսդրության՝ խտրականության մի քանի ձեւ գոյություն ունի, որոնցից երկուսը ուղղակի եւ անուղղակի խտրականությունն են: Ուղղակի խտրականության սահմանումն է.

Անձի նկատմամբ դրսևորվում է նվազ բարենպաստ վերաբերմունք՝ այնպիսի հիմքերով, ինչպիսիք են սեռը եւ գենդերը, տարիքը, ազգությունը, ռասան, էթնիկ պատկանելությունը, կրոնը կամ հավատքը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ համեմատած այն վերաբերմունքի հետ, որը դրսևորվում, դրսևորվել կամ դրսևորվելու է այլ անձանց նկատմամբ՝ համանման իրավիճակներում:¹¹

7 ԿՆԽՎԿ թիվ 28 ընդհանուր հանձնարարականի 16-րդ կետ:

8 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 6:

9 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 5:

10 Հայաստանի Հանրապետության սահմանադրության 29-րդ եւ 86-րդ հոդվածներ:

11 Տե՛ս Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (ԳՅԵԻ), հասանելի է հետեւյալ հղումով՝ <http://eige.europa.eu/rdc/thesaurus/terms/1081>:

Սեռի/գենդերի հիմքով անուղղակի խտրականությունը սահմանվում է հետևյալ կերպ.

խտրականություն, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ակնհայտ չեզոք դրույթը, չափորոշիչը կամ գործելակերպը կարող է մի սեռի ներկայացուցիչների համար, մյուս սեռի ներկայացուցիչների համեմատ, ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ դրույթը, չափորոշիչը կամ գործելակերպն օբյեկտիվորեն արդարացված է որևէ իրավաչափ նպատակով, եւ եթե այդ նպատակին հասնելու միջոցները նպատակահարմար են ու անհրաժեշտ:¹²

Ուղղակի խտրականությունը միտումնավոր բնույթ ունի, իսկ անուղղակի խտրականությունը ներառում է անհամաչափ ազդեցություն: Վերջինս հատկապես բնորոշ է գենդերային հիմքով բռնությանը:

Մասնավորապես, խտրականությունից պաշտպանություն առաջարկվում է հատուկ կատեգորիաների անձանց: Կարելու է հիշել, որ խտրականությունը կարող է լինել բազմակի կամ հատվող հիմքերով: Հաշմանդամություն ունեցող կանայք, գնչու կանայք կամ ցածր խավի պատկանող կանայք իրենց գենդերի, ինչպես նաև եթնիկ պատկանելության, խավի կամ հաշմանդամության պատճառով բախվում են խտրականության բազմակի եւ հատվող ձեւերին:

ԿԼԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր հանձնարարականով սահմանվում է, որ կանանց նկատմամբ խտրականությունը, որը պայմանավորված է՝

սեռով եւ գենդերով, անբակտելիորեն կապված է այլ գործոնների հետ, որոնք ազդեցություն են գործում կանանց վրա, ինչպիսիք են ռասան, եթնիկ պատկանելությունը, կրոնը կամ հավատքը, առողջական վիճակը, կարգավիճակը, տարիքը, խավը, կաստան, սեռական կողմնորոշումը, ինչպես նաև գենդերային ինքնությունը: Սեռի կամ գենդերային հիմքով խտրականությունը կարող է, տղամարդկանց հետ համեմատած, տարբեր աստիճանի կամ տարբեր եղանակով ազդեցություն գործել այդպիսի խմբերի ներկայացուցիչ համարվող կանանց վրա: Կողմ պետությունները պետք է իրավաբանորեն ճանաչեն խտրականության այդպիսի հատվող ձեւերը եւ դրանց՝ վերոնշյալ կանանց վրա ունեցած բարդ ու բացասական ազդեցությունը, ինչպես նաև արգելեն դրանք:¹³

Սա հանգեցնում է մեր կողմից **գենդերային հիմքով բռնություն** (ԳՀԲ) հասկացությունը սահմանելուն: Քանի որ ԳՀԲ-ը պայմանավորված է գենդերով, այն ազդեցություն է ունենում բոլոր տարիքի կանանց եւ տղամարդկանց վրա: Այնուամենայնիվ, կանայք ենթարկվում են գենդերային հիմքով բռնության անհամաչափ ազդեցությանը, եւ հետեւաբար **«կանանց նկատմամբ բռնություն»** եզրույթը հաճախ օգտագործվում է փոխարինաբար: Կանանց նկատմամբ բռնությունը սահմանվում է որպես խտրականության ձեւ՝ այն իմաստով, որ այն ազդում է կանանց՝ տղամարդկանց հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից օգտվելու հնարավորության վրա: Թեեւ այն ազդում է բոլոր դասերի եւ խավերի անձանց վրա, հաճախ այն անհամաչափ ազդեցություն է ունենում խոցելի անձանց վրա:

12 Տե՛ս Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (ԳՀԵԻ), հասանելի է հետևյալ հղումով՝ <http://eige.europa.eu/rdc/thesaurus/terms/1253>:

13 ԿԼԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր հանձնարարականի 18-րդ կետ:

Ստամբուլի կոնվենցիայով կանանց նկատմամբ բռնությունը սահմանվում է հետևյալ կերպ՝

«Կանանց նկատմամբ բռնություն»-ը՝ որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձեւ, նշանակում է գենդերային հիմքով այն բոլոր բռնարարները եւ դրանց սպառնալիքները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս կամ տառապանք պատճառելուն, այդ թվում՝ այդպիսի բռնարարների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկումը՝ թե՛ հրապարակայնորեն , թե՛ անձնական կյանքի մակարդակով:¹⁴

Ստամբուլի կոնվենցիայի նախաբանով սահմանվում է, որ

կանանց նկատմամբ բռնությունը կանանց եւ տղամարդկանց միջեւ պատմականորեն անհավասար ուժային հարաբերությունների դրսեւորում է, որը հանգեցրել է տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ գերիշխանության ու խտրականության եւ կանխել է կանանց լիարժեք առաջադիմությունը. [Գիտակցելով] կանանց նկատմամբ բռնության՝ որպես գենդերային հիմքով բռնության կառուցվածքային բնույթը, եւ որ կանանց նկատմամբ բռնությունն այն առանցքային սոցիալական մեխանիզմներից մեկն է, որոնց միջոցով կանայք հարկադրաբար ենթակա դիրք են զբաղեցնում տղամարդկանց նկատմամբ:¹⁵

ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականով ընդգծվում է գենդերային հիմքով բռնության եւ ավանդական գենդերային կարծրատիպերի ու բռնության միջեւ կապը: Այն ունի հետևյալ բովանդակությունը.

ավանդական մոտեցումները, որոնցով կանայք ստորադաս են համարվում տղամարդկանց կամ ունեն կարծրատիպային դերեր, արմատավորում են լայն տարածված գործելակերպերը, որոնք ներառում են բռնություն կամ հարկադրանք, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը կամ ոտնձգությունը ... Նման նախապաշարմունքներն ու գործելակերպերն արդարացնում են գենդերային հիմքով բռնությունը՝ որպես կանանց պաշտպանելու կամ վերահսկելու միջոց:¹⁶

Այսպիսով, ինչպես պահանջվում է Ստամբուլի կոնվենցիայով, պետությունները՝

ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ կանանց եւ տղամարդկանց վարքագծի սոցիալական եւ մշակութային մոդելներում փոփոխությունները խթանելու համար՝ նպատակով, որ արմատախիլ արվեն այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթներն ու մյուս բոլոր գործելակերպերը, որոնք հիմնված են կանանց ստորադասության կամ կանանց եւ տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա:¹⁷

14 Ստամբուլի կոնվենցիայի 3-րդ հոդվածի «ա» կետ: ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականով ներկայացվում է գենդերային հիմքով բռնության բավականին համանման սահմանում: Տե՛ս ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականը. Կանանց նկատմամբ բռնությունը, 1992 թվական, 6-րդ կետ:

15 Կանանց ստորադասելու հարցում բռնության դերի համանման սահմանումը եւ դրա կառուցվածքային բնույթը ներկայացվել են «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» ՄԱԿ-ի հռչակագրում (ԿՆԲՎՅ), 1993 թվական:

16 ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարական. Կանանց նկատմամբ բռնությունը, 1992 թվական, 11-րդ կետ:

17 Ստամբուլի կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետ:

Կանանց նկատմամբ բռնությունը սերտորեն ամնչվում է ամնականության՝ որպես սոցիալական կերտվածքի որոշ ասպեկտներին, որոնք վերը քննարկվել են: Այն «հեգեմոնիկ ամնականությանը» բնորոշ վարվելածե է, որն ասպահովում է տղամարդկանց գերակա դիրքը՝ ստորադասելով կանանց:¹⁸

Կանանց նկատմամբ բռնության հարցին անդրադամնալիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոցելի եւ մարգինալացված խմբերին: «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» ՄԱԿ-ի հռչակագրում (ԿՆԲՎՀ) ուշադրություն է դարձվում այն փաստին, որ՝

կանանց որոշ խմբեր, ինչպիսիք են՝ փոքրամասնությունները, տեղաբնիկ, փախստական, գաղթյալ, հեռավոր կամ գյուղական համայնքներում բնակվող, աղքատության մեջ հայտնված, հաստատություններում կամ անազատության մեջ գտնվող կանայք, իգական սեռի երեխաները, հաշմանդամություն ունեցող, տարեց եւ զինված հակամարտություններում հայտնված կանայք հատկապես խոցելի են բռնության նկատմամբ:¹⁹

Կանանց նկատմամբ բռնությանն ամնչվող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերը

- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (ԿՆԽՎԿ)
- Ընդհանուր հանձնարարական թիվ 19
- «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» հռչակագիր (ԿՆԲՎՀ)
- «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա)

Հայաստանը ԿՆԽՎԿ-ն վավերացրել է 1993 թվականին, իսկ դրա Կամընտիր արձանագրությունը՝ 2006 թվականին, Պեկինի գործողությունների ծրագրի ստորագրող կողմ է (1995 թվական), եւ վերջերս՝ 2018 թվականի հունվարին, ստորագրել է Ստամբուլի կոնվենցիան:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ օրենքների նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է վավերացված միջազգային պայմանագրերի անմիջական կիրառումը: Օրենքում նշվում է հետեւյալը. «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ Հայաստանի Հանրապետության օրենքների նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են վավերացված միջազգային պայմանագրերի նորմերը»: Դատավարական օրենսգրքերում նույնպես ընդգծվում է, որ վավերացված միջազգային պայմանագրերը դատավարական օրենսդրության մասն են կազմում:

18 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 41:

19 «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» ՄԱԿ-ի հռչակագիր (ԿՆԲՎՀ), 1993 թվական:

1.2. ԲՈՒՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Ինչպես նշվել է Ստամբուլի կոնվենցիայի բացատրական գեկույցում, ընտանեկան բռնությունը հիմնականում վերաբերում է բռնության երկու տեսակներին՝ զուգընկերոջ բռնությունն ներկայիս կամ նախկին ամուսինների կամ զուգընկերների միջև եւ միջսերնդային բռնություն, որը սովորաբար տեղի է ունենում ծնողների եւ երեխաների միջև: Ընտանեկան բռնությունը, այսպիսով, ունի գենդերային առումով չեզոք սահմանում եւ ընդգրկում է երկու սեռերի տուժողներին ու կատարողներին: Միեւնույն ժամանակ, ընտանեկան բռնությունը համարվում է կանանց նկատմամբ բռնության տեսակ կամ գենդերային հիմքով բռնություն: Ընտանեկան բռնության հինգ հիմնական տեսակները ներառում են՝

- ▶ ֆիզիկական բռնությունը,
- ▶ սեռական բռնությունը,
- ▶ տնտեսական բռնությունը,
- ▶ հոգեբանական բռնությունը,
- ▶ հետամտելը:

Ֆիզիկական բռնությունը սահմանվում է Ստամբուլի կոնվենցիայի 35-րդ հոդվածով: Այն վերաբերում է «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ ֆիզիկական բռնության գործադրմանը՝ անկախ այն հանգամանքներից, որոնցում այն տեղի է ունենում», այդ թվում՝ մեկ ապտակը: ²⁰

Ստամբուլի կոնվենցիայում, **սեռական բռնությունը** ներառում է երեք տեսակի արարքներ՝

- մեկ այլ անձի մարմին, առանց այդ անձի համաձայնության, վագինալ, անալ կամ օրալ ճանապարհով սեքսուալ բնույթի ներթափանցումը՝ մարմնի որեւէ մասի կամ որեւէ առարկայի միջոցով.
- մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության, սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը.
- մեկ այլ անձի, առանց այդ անձի համաձայնության, երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն հարկադրելը:²¹

Ստամբուլի կոնվենցիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ), միջազգային քրեական դատարանների եւ ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների իրավական պրակտիկայի համաձայն՝ այս երեք արարքներն ընդգրկող հանցագործությունների գործուն բաղկացուցիչ տարրը համաձայնությունն է: Ստամբուլի կոնվենցիայով սահմանվում է՝ «Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնությամբ, որը պետք է գնահատվի հարակից հանգամանքների համատեքստում:»²² Միջազգային չափանիշներով նաեւ պահանջվում է, որ այդ արարքներն ազգային օրենսդրությամբ քրեականացվեն, երբ դրանք կատարվում են ամուսինների կամ նախկին ամուսինների կողմից (օրինակ՝ ամուսնական բռնաբարություն):

Հոգեբանական բռնությունը ներառում է այնպիսի գործողություններ, որոնք խախտում են մարդու հոգեբանական անձեռնմխելիությունը: Այդպիսի գործողությունները կարող են ներառել՝

20 Բացատրական գեկույց, 187-րդ կետ:

21 Ստամբուլի կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետ:

22 Ստամբուլի կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ կետ:

- ▶ որեւէ անձի կամ վերջինիս մտերիմ անձի դեմ ուղղված՝ բռնություն գործադրելու սպառնալիքներ (հետամտելը, զենքեր ցուցադրելը),
- ▶ նվաստացուցիչ, վիրավորական մեկնաբանություններ (խոսքեր),
- ▶ մեկուսացում, հաղորդակցության սահմանափակումներ,
- ▶ կանանց վերահսկելու կամ վնասելու նպատակով երեխաներին օգտագործելը (երեխաներին վնասելը, առեւանգելը եւ այլն):

Տնտեսական բռնությունը ենթադրում է ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը մերժելը եւ այն վերահսկելը, այդ թվում՝ ժամանակը, դրամական միջոցները, տեղաշարժը, սնունդը կամ հագուստը: Տնտեսական բռնության օրինակներն են՝

- ▶ կանանց աշխատելն արգելելը,
- ▶ ընտանիքին վերաբերող՝ ֆինանսական բնույթի որոշումների կայացման հարցում կանանց չընդգրկելը,
- ▶ դրամական միջոցներ չտրամադրելը կամ ֆինանսական տեղեկատվություն թաքցնելը,
- ▶ կնոջ եւ (կամ) երեխաների հաշիվները չվճարելը ու վերջիններիս ծախսերը չհոգալը,
- ▶ համատեղ սեփականություն հանդիսացող գույքը ոչնչացնելը:

Եվ տնտեսական, եւ՝ հոգեբանական բռնությունը իրավական համակարգի համար իրական մարտահրավեր են՝ պայմանավորված ապացուցողական խնդիրներով, որոնք ավելի մանրամասն քննարկվում են ստորեւ: Մասնավորապես, ԵԱՀԿ-ի հանձնարարությամբ՝ «Պրոակտիվ հասարակություն» հասարակական կազմակերպության անցկացրած հետազոտությունը վկայում է, որ Հայաստանում ընտանեկան բռնության տարատեսակներից առավել տարածվածը հոգեբանական եւ տնտեսական բռնությունն է:²³ Ինչպես քննարկվում է ստորեւ, բռնության այս տեսակները քրեաիրավական միջոցներով արդյունավետորեն չեն պատժվում:

Հետամտելը սահմանվում է որպես «մեկ այլ անձի նկատմամբ դիտավորությամբ շարունակաբար սպառնալից վարքագիծ դրսեւորելը, որն այդ անձի մոտ վախ է առաջացնում սեփական անվտանգության համար»: ²⁴ Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում անձին հետամտելու համար պատասխանատվություն նախատեսված չէ:


Ֆիզիկական եւ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները կամ դրանք կատարելու սպառնալիքները ընտանեկան բռնության ամենաակնհայտ տեսակներն են. դրանք սովորաբար այնպիսի գործողություններ են, որոնք այլ անձանց տվյալ խնդրի մասին տեղյակ լինելու հնարավորություն են տալիս: Այնուամենայնիվ, բռնարարք կատարողի կողմից պարբերաբար այլ բռնություն պարունակող վարքագիծ դրսեւորելը, երբ այն ամրապնդվում է ֆիզիկական բռնության մեկ կամ ավելի արարքներով, հանգեցնում է ոտնձգությունների ավելի մեծ համակարգի: Չնայած ֆիզիկական բնույթի բռնի գործողություններ կարող են տեղի ունենալ միայն մեկ անգամ կամ պարբերաբար, դրանք ապագա բռնի հարձակումների սպառնալիք են առաջացնում եւ թույլ են տալիս ոտնձգություն կատարողին վերահսկելու կնոջ կյանքը կամ հանգամանքները:

Իշխանություն-վերահսկողություն մեխանիզմը հատկապես օգտակար գործիք կարող

23 ԵԱՀԿ/Պրոակտիվ հասարակություն «Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ», 2012թ., էջ 36:

24 Ստամբուլի կոնվենցիայի 34-րդ հոդված:

Է լինել չարաշահում եւ բռնություն պարունակող այնպիսի վարքագծերի ամբողջական պատկերը հասկանալու հարցում, որոնք դրսևորվում են ծեծի ենթարկողի կողմից՝ իր զուգընկերոջ նկատմամբ վերահսկողություն հաստատելու եւ այն պահպանելու նպատակով: Շատ հաճախ բռնության մեկ կամ ավելի դեպքերը զուգակցվում են ոտնձգության մի շարք այլ տեսակներով: Դրանք բացահայտելն ավելի դժվար է, սակայն դրանցով հարաբերություններում հստակորեն ամրագրվում է ահաբեկման եւ վերահսկողության մոդելը:



Կարճամետրաժ ֆիլմ «Շտապագույն բռնության իրական պատկերը. Իշխանություն եւ վերահսկողություն» (20 րոպե, 59 վայրկյան)²⁶

25 Շտապագույն բռնության դեպքերին միջամտելու վերաբերյալ ծրագրեր, Դուլոթ, Մինեսոտա, www.theduluthmodel.org

26 Հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=2WnZCLqL8TA>:

Ընտանեկան բռնությունը համարվում է կանանց նկատմամբ բռնության տեսակ, որովհետեւ այն անհամաչափ ազդեցություն է ունենում կանանց վրա:

Կանանց նկատմամբ բռնության այլ տեսակներ ներառում են՝

- ▶ հետամտելը,
- ▶ հարկադիր, վաղ ամուսնությունները,
- ▶ կանանց սեռական օրգանների խեղումը,
- ▶ հղիության հարկադիր արհեստական ընդհատումը/սեռի նախաձննդային ընտրությունը,
- ▶ սեռական հետապնդումը,
- ▶ մարդկանց թրաֆիքինգը,
- ▶ սեռական շահագործումը,
- ▶ կուսության ստուգումը:


Բռնության ցիկլը ընտանեկան բռնության կարելուր առանձնահատկություններից մեկն է: Կնոջ նկատմամբ բռնություն դրսևորելու վարքագիծը հաճախ ցուցաբերվում է երեք հստակ եւ կրկնվող փուլերով, որոնք, ներգրավված անհատների անձով պայմանավորված, տարբերվում են եւ՝ տևողությամբ, եւ՝ ինտենսիվությամբ:

Առաջին փուլը կոչվում է *լարվածության աճի փուլ*, որի ընթացքում բռնարարը կատարող տղամարդը կատարում է թեթեւ բռնարարք եւ խոսքային (վերբայ) բռնություն ներառող գործողություններ, իսկ կինը, վախից եւ լարվածությունից ճնշված լինելով, փորձում է լինել հնարավորինս հանգիստ եւ պասիվ՝ ավելի լուրջ բռնությունը կանխելու նպատակով:

Բռնության ցիկլի **երկրորդ փուլը** լուրջ բռնարարք ներառող միջադեպն է: Առաջին փուլի որոշակի հատվածում բռնարարքի ենթարկվող կնոջ եւ բռնարարք կատարողի միջեւ լարվածությունն անտանելի է դառնում, իսկ ավելի լուրջ բռնությունը՝ անխուսափելի:

Երրորդ փուլը բնութագրվում է ծեծի ենթարկող տղամարդու կողմից արտահայտված *խիստ պղծմամբ* եւ *սիրայիր վարքագծով*: Այդ ժամանակահատվածում տղամարդու կողմից հաճախ ներում հայցելը եւ նվիրվածության վերաբերյալ հայտարարությունները զուգակցվում են մասնագետի օգնությանը դիմելու, խմելը դադարեցնելու եւ հետագա բռնությունից ձեռնպահ մնալու խոստումներով:²⁷

27 Բռնության ցիկլը մշակվել է 1979 թվականին Լինոր Է. Ուոքերի կողմից՝ բռնություն պարունակող հարաբերություններում դրսևորվող վարքի մոդելները բացատրելու նպատակով:



Որոշ զույգերի դեպքում հարաբերական հանգստի այս ժամանակահատվածը կարող է տևել մինչև մի քանի ամիս, սակայն բռնարարը պարունակող հարաբերություններում տղամարդու քնքշանքն ու զղջումն ի վերջո մարում են, եւ վերսկսվում է ցիկլի առաջին փուլը: Բռնարարը պարունակող վարքագծի ցիկլային բնույթն օգնում է բացատրել, թե ինչու շատ կանայք չեն հեռանում իրենց նկատմամբ ոտնձգություն կատարող անձից: Երրորդ փուլի ընթացքում բռնարարը կատարողի ցուցաբերած սիրալիք վարքագիծն ամրապնդում է այդ կանանց՝ իրենց զուգընկերոջ՝ դեպի լավը փոխվելու հետ կապված հույսերը, եւ վերջիններս հավատարիմ են մնում իրենց հարաբերություններին:

Որոշ կանայք կարող են բռնության ցիկլը ընկալել որպես նորմալ երեւույթ, հատկապես այն դեպքում, երբ նրանք մեծացել են այնպիսի ընտանիքում, որտեղ տեղի է ունեցել բռնություն: Կամ նրանք կարող են պարզապես չցանկանալ ընդունել այն իրականությունը, որում հայտնվել են: Որոշ կանայք բռնությունը կանխատեսել կամ վերահսկել չկարողանալու պատճառով այնքան անօգնական եւ ստորացված են իրենց զգում, որ ընկնում են հոգեբանական ճգնաժամի մեջ եւ ի վիճակի չեն լինում իրավիճակը բարելավելուն կամ փոփոխելուն ուղղված որևէ գործողություն կատարել: Տուժողները հակված են մտածելու, որ կատարողին դիմադրելու ցանկացած փորձ անիմաստ է:

Հոգեբանական ազդեցությունից բացի՝ որոշ կանայք արտաքին սոցիալական եւ տնտեսական գործոնների պատճառով հաճախ դժվարանում են ազատվել բռնություն պարունակող հարաբերությունից: Անկախ ֆինանսական ռեսուրսներ չունեցող կինը, որը ցանկանում է հեռանալ ամուսնուց, հաճախ դժվարանում է դա անել՝ կյուրական եւ սոցիալական ռեսուրսների բացակայության պատճառով: Աշխատող կանայք սովորաբար ավելի քիչ գումար են վաստակում եւ կատարում են պակաս հեղինակավոր աշխատանքներ եւ երեխայի խնամքի հարցում ավելի մեծ պատասխանատվություն են ստանձնում, քան տղամարդիկ: Այսպիսով, բռնություն պարունակող բախման

ժամանակ, որի դեպքում առաջին արձագանքը փախուստի դիմելն է, կանայք շուտով գիտակցում են, որ գնալու որեւէ տեղ չունեն: Ավելին, ընտանիքն առանց իր երեխաների լքած կնոջ վրա դրվող խարան, անկասկած, հեռանալը կանխող եւս մեկ գործոն է: Բացի դրանից, բռնարարքի ենթարկված կանայք, որոնք ցանկանում են ավարտել հարաբերությունները, սովորաբար ցանկություն չեն ունենում ընկերներին, ընտանիքի անդամներին կամ ոստիկանությանը դիմել եւ իրենց գաղտնիքները վերջիններիս վստահել՝ ամոթի եւ նվաստացման զգացումից, իրենց ամուսինների կողմից ճնշամիջոցների ենթարկվելու վախից կամ այն զգացումից ելնելով, որ իրենց չեն հավատա:

Կարելու է հասկանալ բռնության ցիկլը, որովհետեւ ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու հարցում իրավապահ մարմինների ամենամեծ մարտահրավերներից մեկը տուժողի՝ **բողոքը հետ վերցնելու** որոշումն է: Բռնության ցիկլի արդյունքում տուժողները կարող են ոստիկանություն զանգահարել բռնության լուրջ փուլում, ապա հետ վերցնել բողոքը հանգիստ փուլի ընթացքում հաշվի առնելով նաեւ կանանց հեռանալը կանխող բազմաթիվ հոգեբանական եւ սոցիալական խոչընդոտները: Տուժողների կողմից իրենց բողոքները հետ վերցնելու փաստը, որին վերապատրաստման շրջանակներում քիչ ուշ ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ստիպել է *Օփուլս ընդդեմ Թուրքիայի* [Opuz v. Turkey] գործով դատախազներից պահանջել, որ վերջիններս գործեն *ex officio* (ի պաշտոնե):

Գոյություն ունեն բազմաթիվ **արգելքներ**, ինչպես նաեւ հոգեբանական, սոցիալ-տնտեսական պատճառներ, որոնք խոչընդոտում են տուժողների կողմից ունձգություն պարունակող հարաբերություններն ավարտելը: Հոգեբանական արգելքները ներառում են այն փաստը, որ բռնություն պարունակող ընտանիքում մեծացած տուժողների համար բռնությունը նորմալ երեւույթ է, որոշ տուժողներ ժխտում են այն, իրենց նկատմամբ ցուցաբերված ստորացուցիչ եւ նվաստացուցիչ վերաբերմունքը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել հոգեբանական ճգնաժամի եւ ընկճախտի: Սոցիալական եւ տնտեսական արգելքները, որոնք կանխում են տուժողների՝ բռնություն պարունակող հարաբերություններից ազատվելը, ներառում են՝

- ▶ սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ,
- ▶ սահմանափակ սոցիալական աջակցություն,
- ▶ սոցիալական խարան,
- ▶ երեխաների հետ կապված մտահոգություններ,
- ▶ գնալու որեւէ տեղ չունենալը,
- ▶ ճնշամիջոցներից վախ,
- ▶ ընտանիքի ամոթ,
- ▶ իրավապահ մարմինների նկատմամբ վստահության բացակայություն:

Ինչ վերաբերում է վերջին կետին, ապա բավականին կարելու է հասկանալ, թե ինչպես է քրեական արդարադատության համակարգն արգելքներ ստեղծում այն կանանց համար, որոնք ձգտում են ազատվել բռնությունից, հետագա բռնությունից խուսափելու նպատակով օգտվել պաշտպանությունից եւ իրավական պաշտպանության միջոցներից՝ այն հանցագործությունների մասով, որոնք կատարվել են իրենց նկատմամբ: Իրավապահ մարմինների կողմից գենդերային

զգայունության բացակայությունը, ընտանեկան բռնություն երեւոյթի ըմբռնման բացակայությունը եւ տուժողների նկատմամբ խտրական վերաբերմունքը կարող են հանգեցնել եւ հաճախ հանգեցնում են տուժողների երկրորդային վիկտիմիզացիայի: Կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկելը կարող է լինել ոչ միտումնավոր: **Երկրորդային վիկտիմիզացիան** նշանակում է հանցագործության տուժողներին կրկին վիկտիմիզացիայի ենթարկելը՝ ոստիկանության ծառայողների, քրեական արդարադատության ոլորտի մասնագետների, բժշկական անձնակազմի, հոգեբանների անձնակազմի եւ տուժողների փաստաբանների հետ նրանց փոխգործակցության ընթացքում:

Քրեական արդարադատության գործընթացում կան որոշակի պահեր՝ սկսած արձագանքելուց մինչեւ գործով վերջնական դատական ակտ կայացնելը, որոնք կարող են հանգեցնել տուժողի կրկնավնասման: Դրանք են՝

- ▶ հարցազրույցները եւ բազմաթիվ հարցազրույցների մասնակցելու անհրաժեշտությունը,
- ▶ դատաբժշկական փորձաքննությունը,
- ▶ ցուցմունք տալն ու կրկին ցուցմունք տալու անհրաժեշտությունը,
- ▶ դատարանում տրամադրվող պաշտպանության բացակայությունը, մեղադրյալի հետ առերեսումը,
- ▶ հետաձգումներն ու ձգձգումները,
- ▶ դատական ոլորտում առկա կարծրատիպերի վրա հիմնված որոշումները:

Վերջին վարժությունը

Մասնակիցներին ընտանեկան բռնության վերաբերյալ տարածված «առասպելները» բացահայտելու եւ դրանց առերեսվելու հարցում օգնելու նպատակով վերապատրաստողները կարող են կատարել հետեւյալ վարժությունը.

— **Տարբերակ 1.** Խնդրել մասնակիցներին, որ անհատապես լրացնեն «Մասնակիցներին բաժանվող 1-ին նյութը. Ընտանեկան բռնության վերաբերյալ «առասպելներ» եւ փաստեր. Զարգեր»: Դրանից հետո ամբողջ խումբը քննարկում է այդ «առասպելների» հիմքում ընկած պատճառները: Վերապատրաստողներն ուղղորդում են քննարկումը՝ բացահայտելով, թե դրանցից որոնք են հիմնված գենդերային կարծրատիպերի վրա:

— **Տարբերակ 2.** Վերապատրաստողները նախաձեռնում են խմբային մտազրոհ ընտանեկան բռնության շուրջ առկա գերիշխող «առասպելների» վերաբերյալ՝ տալով հետեւյալ հարցերը. Դրանք տարածված «առասպելներ» գիտե՞ք ընտանեկան բռնության մասին, ինչ ենթադրություններ կարելի է անել այդ «առասպելներից» ընտանեկան բռնության պատճառների մասով, ինչ ազդեցություն են ունենում այդ «առասպելները» իրավական ոլորտի մասնագետների (ոստիկանության ծառայողների) աշխատանքի վրա: Խմբային քննարկումից հետո մասնակիցներին տրվում է «Մասնակիցներին բաժանվող 2-րդ նյութը. Ընտանեկան բռնության վերաբերյալ «առասպելներ» եւ փաստեր. Պատասխաններ»:

Մասնակիցներին բաժանվող երկու նյութերը կցվում են վերապատրաստման նյութերին:

II. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՏՎՅԱԼՆԵՐԸ

2.1 ՉՈՋԱԿԵՆՏՐՈՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՒ ԿԻՐԱՌԵԼԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Չոհակենտրոն մոտեցումը սահմանվում է որպես տուժողի կարիքների և մտահոգությունների վրա համակարգված կենտրոնացում՝ տուժողի համար անկանխակալ, կարեկցական և զգայուն ձեռով ծառայությունների մատուցում ապահովելու նպատակով: **Տուժողի ցանկությունները, անվտանգությունը և բարօրությունն առաջնահերթ նշանակություն ունեն բոլոր դեպքերում և գործընթացներում:** Չոհակենտրոն մոտեցումը միտված է քրեական արդարադատության գործընթացին առնչվող կրկնավնասումը նվազագույնի հասցնելուն՝ տուժողների փաստաբաններին և նրանց ծառայություններ մատուցողներին աջակցություն տրամադրելով և տուժողներին, որպես գործընթացում ներգրավված մասնակիցների, սատարելով: **Ծառայություններ մատուցողների և իրավապահ մարմինների համագործակցությունը մեծ կարևորություն ունեն համապարփակ և զոհակենտրոն արձագանք տալու հարցում:**

Հաշվի առնելով քրեական արդարադատության համակարգի պատմական անարդյունավետությունը՝ ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու, տուժողներին պաշտպանելու և ամբողջ գործընթացի ժամանակ նրանց իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու հարցում՝ տուժողների իրավունքների իրացումն ապահովելը Ստամբուլի կոնվենցիայի էական առանձնահատկություններից է: Այն, ի թիվս տուժողների այլ իրավունքների, ապահովում է՝

- ▶ Իրենց համար հասկանալի լեզվով **ժամանակին պատշաճ տեղեկատվության ստացում հասանելի օժանդակություն տրամադրելուն ուղղված ծառայությունների** և իրավական պաշտպանության միջոցների մասին (19-րդ հոդված):
- ▶ Վերականգնումը ոլորացնող **ծառայությունների հասանելիությունը**, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն, կացարանով ապահովում, կրթություն, վերապատրաստումներ (20-րդ հոդված):
- ▶ **Քաղաքացիաիրավական պաշտպանության պատշաճ միջոցներ**, այդ թվում փոխհատուցում (29-րդ, 30-րդ հոդվածներ):
- ▶ **Առանց անհարկի ձգձգումների** քննություն և վարույթ (49-րդ, 50-րդ հոդվածներ):
- ▶ Տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին անաբեկումներից, վրեժխնդրությունից **պաշտպանելուն ուղղված միջոցառումներ**, տուժողների և կատարողների միջև շփումը բացառելը (հնարավորության դեպքում), լսված լինելու, վարույթի մասին տեղեկացվելու, թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունքը (56-րդ հոդված):

Վերապատրաստման ընթացքում այդ իրավունքներից յուրաքանչյուրին ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում: Ինչ վերաբերում է ծառայությունների հասանելիությանը, ապա պետք է լինի աջակցության մասնագիտացված ծառայությունների պատշաճ աշխարհագրական բաշխում: Ծառայությունների մատուցումը կախված չէ տուժողի՝ մեղադրանք ներկայացնելու կամ ցուցմունք տալու ցանկությունից, իսկ ծառայությունները պետք է ուղղված լինեն խոցելի անձանց, այդ թվում՝ երեխա տուժողների կարիքներին:

Ինչ վերաբերում է տուժողի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքին, ապա տեղեկատվություն ստանալու լրացուցիչ իրավունքներ են ծագում գործի նախնական եւ դատական քննության փուլերի ընթացքում: Այն ներառում է՝

- ▶ իրենց իրավունքների, բողոք ներկայացնելու տարածաշրջանային (միջազգային) մեխանիզմների մասին,
- ▶ իրենց բողոքի ընթացքի մասին,
- ▶ քննության կամ վարույթի ընթացքի մասին,
- ▶ վարույթում իրենց ունեցած դերի մասին,
- ▶ գործի ելքի մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Տուժողներին բոլոր փուլերում տեղեկատվությունը պետք է գրավոր եւ ոչ թե բանավոր տրամադրվի:

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը պահանջում է, որ տուժողների իրավունքները պաշտպանվեն քրեական արդարադատության գործընթացի ողջ ընթացքում տուժողի համար ապահովվելով աջակցության միջարք ծառայությունների հասանելիությունը: Դրանով պահանջվում է ամբողջ ժամանակահատվածում ապահովել տուժողի անվտանգությունը, գաղտնիությունը եւ անանոնությունը: Ընտանեկան բռնությունը եւ պետության ոչ արդյունավետ արձագանքը հաճախ հանգեցնում են տուժողների հետեւյալ իրավունքների խախտմանը՝

- ▶ **կյանքի** իրավունք,
- ▶ **խոշտանգումներից եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ** լինելու իրավունք,
- ▶ **ազատության եւ անձնական անձեռնմխելիության** իրավունք,
- ▶ **օրենքի առջև հավասար պաշտպանության** իրավունք,
- ▶ **խտրականության** արգելում,
- ▶ **անձնական եւ ընտանեկան կյանքի** իրավունք,
- ▶ **արդար դատաքննության** իրավունք,
- ▶ **իրավական պաշտպանության միջոցի** իրավունք,
- ▶ հնարավոր լավագույն չափանիշներին համապատասխան՝ **ֆիզիկական եւ հոգեկան առողջության իրավունք:**

Մասնավորապես, ինչ վերաբերում է ՄԻԵԴ-ի իրավական պրակտիկային, ապա դատարանը ընտանեկան եւ սեռական բռնության գործերով գտել է պետությունների կողմից Կոնվենցիայի հետեւյալ հոդվածների խախտումները.

- ▶ Զոդված 2. Կյանքի իրավունք
- ▶ Զոդված 3. Անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի արգելում

- ▶ Յոդված 8. Անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունք
- ▶ Յոդված 13. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք
- ▶ Յոդված 14. Խտրականության արգելում

Դատարանը գտել է պետությունների՝ 2-րդ, 3-րդ եւ 8-րդ հոդվածներով նախատեսվող պոզիտիվ պարտականությունների խախտումներ, ինչն ավելի մանրամասն քննարկվում է վերապատրաստման հետագա փուլերում: Դատարանը նաեւ արձանագրել է 14-րդ հոդվածի խախտում, քանի որ բռնությունը, որին անձը ենթարկվել է, եղել է գենդերային հիմքով, քանի որ ընտանեկան բռնության հիմնականում ենթարկվում են կանայք, իսկ նշվող գործերից մեկում մի կին բախվել էր խտրական դատական պահվելությանը: Մինչ օրս քննված՝ համապատասխան գործերի ցանկը ներկայացված է հավելվածներում:

Յոդված 2 եւ հոդված 3

Ընտանեկան բռնության վերաբերյալ մի քանի գործերով Դատարանը գտել է, որ 2-րդ հոդվածով նախատեսվող պոզիտիվ պարտականությունը՝

ներառում է պետության՝ կյանքի իրավունքը պաշտպանելու առաջնային պարտականությունը՝ անձի նկատմամբ հանցանքի կատարումը զսպելու համար մշակելով քրեաիրավական արդյունավետ դրույթներ, որոնց գործողությունն ամրապնդվում է այդ դրույթների խախտումների նախականիման, զսպման եւ պատժման համար նախատեսված իրավապահ համակարգով: Դա համապատասխան հանգամանքներում նաեւ տարածվում է իշխանությունների՝ կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականության վրա, որի նպատակն է պաշտպանել այն անհատին, որի կյանքը վտանգված է մեկ այլ անհատի հանցավոր արարքների հետեւանքով:²⁸

Յոդված 3

Դատարանը վճռել է, որ «Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրվում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը եւ, որպես այդպիսին, դրանով բացարձակապես արգելվում են խոշտանգումները կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: 3-րդ հոդվածով այդ հիմնարար արժեքի մասով բացառություններ չեն նախատեսվում, եւ դրանից որեւէ շեղում չի թույլատրվում»:²⁹ Պետությունը պետք է «միջոցներ ձեռնարկի, որոնցով նախատեսվում է ապահովել իրենց իրավական համակարգի շրջանակներում անհատների խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, այդ թվում՝ մասնավոր անհատների կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի չենթարկվելը»:³⁰

Ինչ վերաբերում է 3-րդ հոդվածով նախատեսվող պոզիտիվ պարտականություններին՝ համապատասխան գործը քննելու պարտականությանը, ապա Դատարանը *Յ-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*] գործով վճռել է հետեւյալը.

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի՝ քննության արդյունավետությանը վերաբերող պահանջներին, ապա Դատարանը վճռել է, որ այն, ըստ էության, պետք է հանգեցնի գործի փաստերը բացահայտելուն եւ պատասխանատու

28 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 128-րդ պարբերություն:

29 *Այդինն ընդդեմ Թուրքիայի* [*Aydin v. Turkey*], 57/1996/676/866, 1997 թվական, 81-րդ պարբերություն:

30 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 159-րդ պարբերություն:

անձանց հայտնաբերելուն ու պատժելուն: Սա ոչ թե արդյունքի հասնելու, այլ համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարտականություն է: Իշխանությունները պետք է ձեռնարկեին իրենց հասանելի բոլոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հետ կապված այնպիսի ապացույցներ ձեռք բերելու համար, ինչպիսիք են վկաների ցուցմունքները եւ դատաբժշկական փորձաքննության արդյունքները, իսկ անհապաղ եւ ողջամիտ ժամկետում գործելու պահանջն այս համատեքստում ինքնին ենթադրվում է:³¹

Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով Դատարանը նշել է, որ «Հատկապես երեխաները եւ խոցելի համարվող այլ անձինք պետության պաշտպանության իրավունք ունեն՝ անձնական անձեռնմխելիության իրավունքի նման կոպիտ խախտումների դեմ արդյունավետ զսպող գործողությունների իրականացման ձեռով»՝ գտնելով, որ տուժողը՝ Հարավային Թուրքիայում բնակվող եւ ընտանեկան բռնության ենթարկվող կինը, խոցելի անձ է:³² Դատարանը նշել է նաեւ, որ «Ֆիզիկական վնասվածքների եւ հոգեբանական ճշման տեսքով բռնությունը, որին ենթարկվել է դիմումատու, բավականին լուրջ են եղել՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով վատ վերաբերմունք համարվելու համար»:³³

Հոդված 8

Ա-ն ընդդեմ Խորվաթիայի [*A. v. Croatia*] գործով, որը վերաբերում է դիմումատուի նկատմամբ ամուսնու կողմից շարունակական բռնությանը, Դատարանն ուսումնասիրել է գործը 8-րդ հոդվածով սահմանվող դրական պարտականության ներքո:³⁴ Դատարանը «որեւէ կասկած» չի արտահայտել, որ ֆիզիկական հարձակումները եւ մահվան սպառնալիքները «8-րդ հոդվածի իմաստով առնչվում են անձնական կյանքի ոլորտին»՝ գտնելով, որ անհատի ֆիզիկական եւ բարոյական անձեռնմխելիությունը ներառվում է «անձնական կյանք» հասկացության մեջ, որը չի «բացառում որեւէ մեկի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ ոտնձգությունները»:³⁵ Այսպիսով, դատարանը վճռել է, որ.

8-րդ հոդվածով սահմանվում է պետությունների՝ անհատի ֆիզիկական եւ բարոյական անձեռնմխելիությունն այլ անձանցից պաշտպանելու պարտականությունը: Այդ նպատակով նրանք պետք է գործնականում ապահովեն եւ կիրառեն համապատասխան իրավական դաշտ, որով պաշտպանություն կտրամադրվի մասնավոր անձանց բռնության գործողություններից:³⁶

Դատարանը նաեւ նշել է, որ պետության՝ 8-րդ հոդվածով սահմանվող պարտականությունը բռնության դեպքեր ներառող գործերով սովորաբար պահանջում է «քրեաիրավական պաշպանության ոլորտում համապատասխան պոզիտիվ միջոցների» ընդունում:

Կարելու է նշել, որ ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության մասով ՄԻԵԴ-ը մերժել է պետության այնպիսի գործելակերպը, որով միջամտություն չի արվում ընտանեկան բռնության դեպքերին՝ այն հիմքով, որ դրանք տեղի են ունենում անձնական ոլորտում: Օրինակ, *Օփուզն ընդդեմ Թուրքիայի* գործով Դատարանը նշել է, որ «որոշ դեպքերում պետական իշխանությունների միջամտությունն անհատների անձնական կամ

31 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի*, Գանգատ թիվ 41 107/10, 2015 թվական, 96-րդ պարբերություն:

32 *Օփուզն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 159-րդ, 160-րդ պարբերություններ:

33 *Օփուզն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 161-րդ պարբերություն:

34 *Ա-ն ընդդեմ Խորվաթիայի*, Գանգատ թիվ 55 164/08, 2010 թվական:

35 *Ա-ն ընդդեմ Խորվաթիայի*, Գանգատ թիվ 55 164/08, 2010 թվական, 58-րդ պարբերություն:

36 *Ա-ն ընդդեմ Խորվաթիայի*, Գանգատ թիվ 55 164/08, 2010 թվական, 60-րդ պարբերություն:

ընտանեկան կյանքին կարող է անհրաժեշտ լինել այլ անձանց առողջությունն ու իրավունքները պաշտպանելու կամ հանցավոր արարքների կատարումը կանխելու նպատակով»:³⁷

Հոդված 13

Դատարանի իրավական պրակտիկայի համաձայն՝

13-րդ հոդվածով երաշխավորվում է ներպետական մակարդակով իրավական պաշտպանության միջոցի հասանելիությունը՝ Կոնվենցիայով նախատեսվող նյութական իրավունքներն ու ազատություններն ապահովելու նպատակով՝ անկախ այն բանից, թե ինչ ձեւով են դրանք ամրագրված ազգային իրավակարգում: Այսպիսով, այդ հոդվածի նպատակն է՝ պահանջել իրավական պաշտպանության ներպետական միջոցի տրամադրումը, որը հնարավորություն կտա իրավասու պետական մարմին, ըստ էության, քննության առնելու համապատասխան Կոնվենցիայի համաձայն ներկայացված բողոքը եւ տրամադրելու համապատասխան դատական պաշտպանություն՝ չնայած այն բանին, որ պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի շրջանակ՝ որոշելու, թե ինչպես պետք է կատարեն սույն դրույթով նախատեսված իրենց պարտականությունները: 13-րդ հոդվածով նախատեսվող պարտականության շրջանակը տարբերվում է՝ ըստ դիմումատուի կողմից Կոնվենցիայի համաձայն ներկայացված բողոքի բնույթի: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ» եւ՝ գործնականում, եւ՝ իրավական տեսանկյունից՝ մասնավորապես այն իմաստով, որ դրա իրացումը չպետք է անհիմն խոչընդոտվի պատասխանող Պետության մարմինների գործողությունների կամ անգործության պատճառով:³⁸

Բացի դրանից, Դատարանը վճռել է, որ 13-րդ հոդվածն ընդգրկում է քննություն կատարելու պահանջը, ինչպես նաեւ հատուցման հասանելիությունը, այդ թվում՝ ոչ նյութական վնասի դիմաց:

Օրինակ, *Այդինս ընդդեմ Թուրքիայի* գործով, որը ներառում է կալանքի տակ գտնվող անչափահասի բռնաբարություն եւ խոշտանգում ոստիկանության կողմից, Դատարանը նշել է, որ.

Կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի էությունն ազդեցություն է ունենում 13-րդ հոդվածի վրա: Հաշվի առնելով խոշտանգման արգելքի սկզբունքային կարեւորությունը եւ հատկապես խոշտանգման ենթարկված անձանց խոցելիությունը, 13-րդ հոդվածը, չհակասելով ներպետական համակարգով հասանելի որեւէ այլ իրավական պաշտպանության միջոցի, պետություններին պարտավորեցնում է իրականացնել խոշտանգման դեպքերի մանրամասն եւ արդյունավետ քննություն:

Համապատասխանաբար, եթե անհատը ներկայացրել է վիճարկելի պնդում այն մասին, որ ինքը ենթարկվել է խոշտանգման պետության

37 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 144-րդ պարբերություն:

38 *Այդինս ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 571/1996/676/866, 1997 թվական, 103-րդ պարբերություն. *Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia]*, Գանգատ թիվ 75 10/04, 2005 թվական, 62-րդ պարբերություն:

Ներկայացուցիչների կողմից, ապա «իրավական պաշտպանության արդյունավետ միջոց» հասկացությունն անհրաժեշտության դեպքում, հատուցում վճարելուց բացի, ենթադրում է մանրամասն եւ արդյունավետ քննության իրականացում, ինչը կարող է հանգեցնել պատասխանատու անձանց հայտնաբերելուն ու պատժելուն, ինչպես նաեւ գանգատարկուի համար քննության ընթացքի արդյունավետ հասանելիությանը:³⁹

Կոնտրոլան ընդդեմ Սլովակիայի գործով, որի դեպքում տուժողի համար հասանելի չի եղել ոչ նյութական վնասի դիմաց հատուցում ստանալու հնարավորությունը ոստիկանության ծառայողների կողմից հարուցված քրեական վարույթի միջոցով, քանի որ վերջիններս, նախքան տուժողի ամուսնու կողմից իրեն եւ երեխաներին ատրճանակով կրակելը, նրա մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպերին արձագանքելու մասով իրենց ծառայողական պարտականությունները պատշաճ կերպով չեն կատարել, Դատարանը նշել է՝

Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների խախտման դեպքում, որոնք Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներն են, ոչ նյութական վնասի դիմաց՝ խախտումից բխող հատուցումը, ըստ էության, պետք է հասանելի լինի որպես հնարավոր մի շարք իրավական պաշտպանության միջոցների մի մաս:⁴⁰

Հոդված 14

Դատարանը նշել է, որ կառավարության կողմից գենդերային հիմքով բռնության մասով անարդյունավետ արձագանքը համարվում է խտրականություն եւ օրենքի առջեւ հավասար պաշտպանությունն ապահովելու պահանջի չկատարում:⁴¹ *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործով Դատարանն ուսումնասիրել է հասարակական կազմակերպությունների՝ Թուրքիայում ընտանեկան բռնության վերաբերյալ զեկույցները, որոնցում ներկայացված է կանանց վրա անհամաչափ ազդեցությունը վկայող վիճակագրություն: Այսպիսով, Դատարանը գտել է, որ տուժողը *prima facie* (առերեւոյթ) ապացուցել է, որ, հաշվի առնելով անվիճարկելի վիճակագրությունը, «ընտանեկան բռնությունը հիմնականում ազդում է կանանց վրա», եւ որ «դատական համակարգի ընդհանուր եւ խտրական պասիվությունը Թուրքիայում ստեղծել է այնպիսի մթնոլորտ, որը նպաստել է ընտանեկան բռնությանը»:⁴² Դատարանը վճռել է, որ տուժողի եւ նրա մոր նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որը «ընտանեկան բռնության խնդիրը լուծելու նպատակով համապատասխան գործողություններ ձեռնարկելու իրենց պարտականությունը ոչ պատշաճ կատարելու» հետեւանքով իշխանությունները չեն ապահովել օրենքի առջեւ հավասար պաշտպանությունը:⁴³

39 *Այդինս ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 57/1996/676/866, 1997 թվական, 103-րդ պարբերություն:

40 *Կոնտրոլան ընդդեմ Սլովակիայի*, Գանգատ թիվ 7510/04, 2005 թվական, 64-րդ պարբերություն:

41 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 200-րդ պարբերություն:

42 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 198-րդ պարբերություն:

43 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 200-րդ պարբերություն:

2.1.1. ՄԻԵԴ-ի ԵՎ ԿՆԽՎԿ-ի ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Գործերի ուսումնասիրություն. ՄԻԵԴ-ից եւ ԿՆԽՎԿ-ի կամընտիր արձանագրությունից վերցված գործերը համառոտ ներկայացված են ստորեւ: Վերապատրաստողները կարող են մասնակիցների հետ միասին ծանոթանալ գործի փաստերին եւ դրա վերաբերյալ կայացված որոշմանը: Խորհուրդ է տրվում ծանոթանալ *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործի փաստերին եւ պատճառաբանմանը՝ որպես Դատարանի կողմից ձեւակերպված եւ վերեւում մանրամասն ներկայացված չափանիշների քննարկման մաս:

Հավելվածներում տեղ գտած՝ «Մասնակիցներին բաժանվող 5-րդ նյութում» ներկայացված է խնդիր, որը ներառում է Բալսանն ընդդեմ Ռումինիայի գործի հիման վրա փաստերի ամփոփում մասնակիցների համար նախատեսված հարցերով: Մասնակիցները կարող են բաժանվել խմբերի եւ միասին աշխատել տրամադրված փաստացի սցենարների համար հիմնական եզրահանգումների հիման վրա որոշում մշակելու վրա: Խմբային քննարկման ժամանակ առաջադրման ենթակա լրացուցիչ հարցեր եւս ներառված են:

Ա. ՄԻԵԴ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

- Օփուլն ընդդեմ Թուրքիայի

Օփուլն ընդդեմ Թուրքիայի նախադեպային գործում Դատարանը կիրառել է 2-րդ, 3-րդ եւ 14-րդ հոդվածները՝ պաշտպանելով կյանքի իրավունքը, խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի արգելումը, ինչպես նաեւ ընտանեկան բռնության գործով խտրականության արգելումը:⁴⁴ *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործն առնչվել է տուժողներին՝ հանցանք կատարողի կնոջը եւ վերջինիս մորը, լուրջ մարմնական վնասվածքների հանգեցնող ծեծի կապակցությամբ բազմաթիվ անգամներ ոստիկանություն ներկայացրած բողոքներին եւ մահվան սպառնալիքներին, իսկ հետագայում հանցանք կատարողի՝ բռնություն գործադրելու սպառնալիքների պատճառով դրանք հետ վերցնելուն (Հ.Օ): Հետեւաբար, դա հանգեցրել է դատախազի կողմից մեղադրանքներ առաջադրելուն եւ հետագայում դրանցից «ապացույցների բացակայության» պատճառով հրաժարվելուն: Հանցանք կատարողը մեղադրվել է մեղավոր է ճանաչվել բռնություն կատարելու եւ մի քանի անգամ մահվան սպառնալիքներ հնչեցնելու համար եւ դատապարտվել է տարբեր ժամկետներով ազատազրկման ու տարբեր չափերի տուգանքների: Ի վերջո, կատարողը ատրճանակով կրակել է սպանել է իր կնոջ մորը:

Հանցանք կատարողը դատապարտվել է ցմահ ազատազրկման, սակայն ազգային դատարանը մեղմացրել է պատիժը՝ պայմանավորված մեղմացնող հանգամանքով, այն է՝ իր կնոջ մոր կողմից հրահրվելը, ինչպես նաեւ դատարանում դրսևորած պատշաճ վարքագծով: Դատարանը նրան ազատ արձակելու որոշում է կայացրել՝ հաշվի առնելով, որ վճռի դեմ պետք է վերաքննիչ բողոք ներկայացվի: Ազատ արձակվելուց հետո կատարողը փնտրել է գտել է դիմումատուին ու սպառնացել է սպանել դիմումատուին եւ վերջինիս նոր ընկերոջը: Չնայած տուժողի ներկայացրած պահանջին՝ որեւէ պաշտպանության միջոց չի ձեռնարկվել:

Դատարանը նշել է, որ տուժողը՝ Հարավային Թուրքիայում բնակվող եւ ընտանեկան բռնության ենթարկված կինը, խոցելի անձ է, եւ որ «Ֆիզիկական վնասվածքների

44 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009:

եւ հոգեբանական ճնշման տեսքով բռնությունը, որին ենթարկվել է դիմումատուն, բավականին լուրջ են եղել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով վատ վերաբերմունք համարվելու համար»:⁴⁵

Դատարանն ուսումնասիրել է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ընդունված պրակտիկան՝ ընտանեկան բռնության գործերին առնչվող՝ *ex officio* (ի պաշտոնե) քրեական հետապնդման մասով՝ նշելով, որ՝

տվյալ դեպքում կարելու հարցն այն է, թե արդյոք ներպետական մարմինները ցուցաբերել են պատշաճ ջանասիրություն՝ դիմումատուի եւ նրա մոր նկատմամբ բռնությունը կանխելու նպատակով, մասնավորապես՝ Զ.Օ.-ի նկատմամբ հանցանքը կանխող կամ այլ համապատասխան խափանման միջոց ընտրելու միջոցով՝ չնայած տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու փաստին:⁴⁶

Այլ պետությունների փորձից դատարանը եզրակացրել է, որ «որքան ծանր է հանցանքը եւ որքան մեծ է հետագա հանցանքների վտանգը, այնքան ավելի նպատակահարմար է, որ քրեական հետապնդումը շարունակվի՝ հանրության շահերից ելնելով, նույնիսկ եթե տուժողները հետ են վերցնում իրենց բողոքները»⁴⁷: Այս առումով դատարանը նշել է գործի մի քանի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ընտանեկան բռնությանն առնչվող գործերին: Դատարանն ընդգծել է, որ՝

դիմումատուի եւ նրա մոր նկատմամբ նկատվում էր Զ.Օ.-ի կողմից բռնության սրացում: Զ.Օ.-ի կողմից կատարված հանցագործությունները բավականաչափ լուրջ էին՝ խափանման միջոցների նշանակումը հիմնավորելու համար, եւ տուժողների առողջությանն ու անվտանգությանը շարունակաբար վտանգ էր սպառնում: Հարաբերությունների պատմության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կատարողը բազմիցս ընտանեկան բռնություն է գործադրել, եւ հետեւաբար եղել է հետագա բռնության զգալի վտանգ: (Ընդգծումն ավելացված է):⁴⁸

Այլ պետությունների փորձից դատարանը եզրակացրել է, որ «որքան ծանր է հանցանքը կամ որքան մեծ է հետագա հանցանքների վտանգը, այնքան ավելի հավանական է, որ քրեական հետապնդումը պետք է շարունակվել՝ ելնելով հանրային շահերից, նույնիսկ եթե տուժողները հետ են վերցնում իրենց բողոքները»:⁴⁹ Այս առումով դատարանը նշել է գործի մի քանի հատկանիշ, որոնք բնորոշ են ընտանեկան բռնության վերաբերյալ գործերին: Դատարանն ընդգծել է, որ՝

դիմումատուի եւ նրա մոր նկատմամբ նկատվում էր Զ.Օ.-ի կողմից դրսեւորվող բռնության սրացում: Զ.Օ.-ի կողմից կատարված հանցանքները բավականաչափ ծանր էին՝ կանխարգելիչ միջոցների կիրառումը հիմնավորելու համար, եւ առկա էր տուժողների առողջությանն ու անվտանգությանը շարունակաբար սպառնացող վտանգ: Հարաբերությունների նախապատմության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ հանցանք կատարողը նախկինում եւս ընտանեկան բռնություն է գործադրել, եւ, հետեւաբար, առկա է եղել հետագա բռնության զգալի վտանգ: (Ընդգծումն ավելացված է):⁵⁰

45 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 159-րդ, 160-րդ, 161-րդ պարբերություններ:

46 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 131-րդ պարբերություն:

47 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 139-րդ պարբերություն:

48 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, Գանգատ թիվ 33401/02 2009, 134-րդ պարբերություն:

49 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 139-րդ պարբերություն:

50 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 134-րդ պարբերություն:

Դատարանը եզրակացրել է, որ այս գործով շարունակական բռնությունը ոչ միայն հնարավոր էր, այլև՝ կանխատեսելի: Այն նաև ընդունելի չի համարել իշխանությունների կողմից միջամտություն կատարելուց հրաժարվելու հիմքերը: Դատարանը նշել է.

Թերևս տեղական իշխանությունները բավարար կերպով հաշվի չեն առել վերոնշյալ գործոնները՝ Հ.Օ.-ի նկատմամբ քրեական վարույթը դադարեցնելու մասին բազմիցս որոշում կայացնելիս: Փոխարենը, նրանք թերևս առանձնակի կարեւորել են այն իրավիճակին միջամտելուց ձեռնպահ մնալը, որն իրենք համարել են «ընտանեկան հարց»: Ավելին, ոչինչ չի վկայում այն մասին, որ իշխանությունները հաշվի են առել բողոքները հետ վերցնելու հիմքում ընկած դրդապատճառները: Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ դիմումատուի մայրը Դիարբեքի հանրային դատախազի մոտ նշել է, որ ինքը եւ իր դուստրը հետ են վերցրել իրենց բողոքները՝ Հ.Օ.-ի կողմից հնչեցված մահվան սպառնալիքների եւ իրենց վրա գործադրված ճշման պատճառով: Հատկանշական է նաև, որ տուժողներն իրենց բողոքները հետ են վերցրել Հ.Օ.-ի ազատության մեջ լինելու ժամանակ կամ նրան արգելանքից ազատ արձակելուց հետո:⁵¹

Դատարանը եզրակացրել է, որ ներպետական իշխանությունները չեն կատարել պատշաճ բարեխղճություն ցուցաբերելու իրենց պարտականությունները, եւ, հետևաբար, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, դիմումատուի մոր, ով սպանվել է հանցանք կատարողի կողմից, կյանքի իրավունքը պաշտպանելու իրենց պոզիտիվ պարտականությունը:

«Դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ բռնի հարձակումների կրկնությունը կանխելու համար ներպետական իշխանությունների կողմից բոլոր ողջամիտ միջոցները ձեռնարկված լինելու կամ չլինելու» հանգամանքը գնահատելիս Դատարանը հաշվի է առել եվրոպական պետությունների գործելակերպի արդյունքում ձեւավորվող ընդհանուր չափանիշները եւ այնպիսի մասնագիտացված փաստաթղթեր, ինչպիսին ԿԻՎԿ-ն է:⁵² Չնայած նշվում է, որ իշխանությունները բացարձակ անգործություն չեն դրսևորել, սակայն «այս միջոցներից եւ ոչ մեկը բավարար չի եղել» կատարողի կողմից հետագա բռնության գործադրումը կանխելու համար:⁵³ Այս առումով, դատարանը գտել է, որ՝

օրենսդրական դաշտը պետք է հնարավորություն տար քրեական հետապնդում իրականացնող մարմիններին շարունակելու Հ.Օ.-ի նկատմամբ հարուցված քրեական գործերի քննությունը՝ անկախ տուժողի կողմից բողոքները հետ վերցնելու հանգամանքից, քանի որ Հ.Օ.-ի կողմից գործադրված բռնությունը բավականաչափ լուրջ էր՝ քրեական հետապնդումը հիմնավորելու համար, եւ առկա էր դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող շարունակական վտանգ:⁵⁴

Դատարանը նշել է, որ «բռնի հարձակումների կրկնվելը կանխելու համար» իշխանությունները չեն դրսևորել պահանջվող պատշաճ բարեխղճությունը, քանի որ նա [դիմումատուի ամուսինը] գործել է «առանց խոչընդոտների» եւ «առանց պատժի

51 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 143-րդ պարբերություն:

52 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 162-164-րդ պարբերություններ:

53 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 167-րդ պարբերություն:

54 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 168-րդ պարբերություն:

ենթարկվելու», եւ որ նրանց արձագանքը եղել է «ակնհայտորեն անհամաչափ»:⁵⁵

Ինչ վերաբերում է տուժողի՝ խտրականության վերաբերյալ պնդումներին, ապա Դատարանը հղում է կատարել ԿԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր առաջարկությանը, որով գենդերային հիմքով բռնությունը սահմանվում է որպէս խտրականության ձեւ: Դատարանը նաեւ ուսումնասիրել է ԶԿ-ների կողմից կազմված՝ Թուրքիայում ընտանեկան բռնության վերաբերյալ մի քանի զեկույց, որոնցում առկա է վիճակագրություն: Չեկույցներում նշվել է, որ՝

ընտանեկան բռնության՝ տուժողների ամենաբարձր ցուցանիշը Դիարբեքիում է, որտեղ ապրում էր [տուժողը] քննարկվող ժամանակահատվածում, եւ որ բոլոր տուժողները կանայք են, ովքեր հիմնականում ենթարկվել են ֆիզիկական բռնության: Այս կանանց մեծ մասն ունեցել է քրդական ծագում, եղել են անգրաճանաչ կամ ունեցել են կրթության ցածր մակարդակ եւ հիմնականում չեն ունեցել եկամտի ինքնուրույն աղբյուր:⁵⁶

Չեկույցներում նաև նշվել է՝

երբ տուժողները ոստիկանության բաժիններ հաղորդում են տալիս ընտանեկան բռնության դեպքերի մասին, ոստիկանության աշխատակիցները ոչ թե քննում են նրանց բողոքները, այլ ձգտում են ստանձնել հաշտարարի դերը՝ փորձելով համոզել տուժողներին տուն վերադառնալ եւ հետ վերցնել իրենց բողոքները: Այսպիսով, ոստիկանության աշխատակիցները խնդիրը համարում են «ընտանեկան հարց, որին իրենք չեն կարող միջամտել»: ⁵⁷

ԶԿ-ների զեկույցը նաեւ նշել է պաշտպանիչ կարգադրություններ ձեռք բերելիս բազմաթիվ ձգձգումների մասին, քանի որ ոստիկանությունը դրանք դիտարկել է որպէս ամուսնալուծության գործընթացներ, ինչպէս նաեւ ոստիկանության «բացասական վերաբերմունքի» պատճառով հանցանք կատարողի նկատմամբ կարգադրությունների [պահանջների] կիրառման հարցում ձգձգումները: Ավելին, «ընտանեկան բռնություն գործադրողների նկատմամբ թերեւս չեն կիրառվում զսպող պատիժներ, քանի որ դատարանները մեղմացնում են պատիժները՝ հիմք ընդունելով սովորույթները, ավանդույթները կամ բարոյականությունը»: ⁵⁸ Այսպիսով, Դատարանը գտել է, որ դիմումատուի գործն առերեւոյթ ցույց է տալիս, որ, հաշվի առնելով անհերքելի վիճակագրությունը, «ընտանեկան բռնությունը հիմնականում գործադրվում է կանանց նկատմամբ», եւ որ դատական համակարգի ընդհանուր եւ խտրական պասիվությունը Թուրքիայում ստեղծել էր այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր էր ընտանեկան բռնության համար»: ⁵⁹ Դատարանը եզրակացրել է, որ տուժողի եւ նրա մոր նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսեւորվել այն պատճառով, որ «ընտանեկան բռնության խնդիրը լուծելու համար համապատասխան գործողություններ ձեռնարկելու իրենց պարտականությունը ոչ պատշաճ կատարելու» հետեւանքով իշխանությունները չեն

55 *Օփուկն ընդդէմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 168-170-րդ պարբերություններ, նշելով, որ «Դատարանին առանձնակի զարմացրել է Դիարբեքիի հաշտարար դատարանի որոշումը, որով դիմումատուին դանակի յոթ հարված հասցնելու համար Զ.Օ.-ի նկատմամբ որպէս պատիժ է սահմանվել միայն փոքր տուգանք, որը կարող էր վճարվել մաս առ մաս:»

56 *Օփուկն ընդդէմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 194-րդ պարբերություն:

57 *Օփուկն ընդդէմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 195-րդ պարբերություն:

58 *Օփուկն ընդդէմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 196-րդ պարբերություն:

59 *Օփուկն ընդդէմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 198-րդ պարբերություն:

ապահովել օրենքի առջև հավասար պաշտպանությունը:⁶⁰

- Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia]

Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի գործով տուժողը բռնության դեպքի մասին հաղորդում է տվել ոստիկանություն՝ ներկայացնելով բժշկական տեղեկանք, որը փաստում է, որ ստացված վնասվածքների հետեւանքով ինքը 6 օր շարունակ չի կարողացել գնալ աշխատանքի: Ավելի ուշ նա ամուսնու հետ վերադարձել է ոստիկանության բաժին՝ բողոքը հետ վերցնելու նպատակով: Ոստիկանությունը մեղմացրել է քրեական մեղադրանքը՝ որակելով այն որպես ոչ մեծ ծանրության հանցանք: Հաջորդ ամիս տուժողի հարազատներից մեկը զանգահարել է ոստիկանություն եւ հայտնել, որ ամուսինը ատրճանակով փակվել է բնակարանում եւ սպառնում է, որ կսպանի իրեն եւ երկու երեխաներին: Տուժողը նույնպես զանգահարել է ոստիկանություն: Երբ ոստիկանությունը ժամանել է, հանցանք կատարողն արդեն լքած է եղել դեպքի վայրը: Հաջորդ օրը դիմումատուն բողոք է ներկայացրել: Մի քանի օր անց ամուսինը կրակել է իր եւ իրենց երկու երեխաների վրա:

Դրանից կարճ ժամանակ անց ոստիկանության տեսչական ծառայությունը հանցանք կատարողի նկատմամբ անմիջապես քրեական գործ չհարուցելու, արտակարգ իրավիճակին պատշաճորեն չարձագանքելու եւ դեպքի քննություն չիրականացնելու համար երկրորդ դեպքը քննող ոստիկանության երկու աշխատակիցների նկատմամբ բողոք է ներկայացրել՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ: Ոստիկանության տեսչական ծառայությունն առաջին բողոքին արձագանքած ոստիկանի նկատմամբ եւս պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ բողոք է ներկայացրել՝ այն հիմքով, որ նա փոփոխել է փաստերը եւ դեպքը ներկայացրել է որպես ոչ մեծ ծանրության հանցանք: Այս գործերին կամ ընթացք չի տրվել, կամ դրանք կարճվել են: Դատախազը բողոքարկել է Գերագույն դատարան, որը բեկանել է ստորին ատյանների որոշումները՝ գտնելով, որ ոստիկանները թերացել են իրենց պարտականությունների կատարման հարցում: Վարչական շրջանի դատարանը գործով մեղադրյալ ոստիկանության աշխատակիցներին ճանաչել է մեղավոր եւ պայմանական պատիժներ է նշանակել: Վերաքննության փուլում շրջանային դատարանն այն թողել է անփոփոխ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական վարույթի ընթացքում չէր կարող պահանջել ոչ նյութական վնասների փոխհատուցում, տուժողը երկու պահանջ է ներկայացրել Սահմանադրական դատարան, որոնք ճանաչվել են անընդունելի:

Հաշվի առնելով տուժողի՝ 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի հետ կապված պահանջների մասով պետության պատասխանատվությունը, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «[իրավունքի] խախտման հետեւանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցումը, որպես կանոն, պետք է ներկայացվի իրավունքի պաշտպանության հնարավոր միջոցների շարքում»՝ համաձայն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի:⁶¹ Այսպիսով, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում, քանի որ տուժողը պետք է հնարավորություն ունենար պահանջելու իր եւ իր երեխաների՝ վերջիններիս մահվան հետեւանքով կրած ոչ նյութական վնասի տուցում:⁶²

60 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 200-րդ պարբերություն:

61 *Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia]*, գանգատ թիվ 7510/04, 2005 թվական, 64-րդ պարբերություն:

62 *Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia]*, գանգատ թիվ 7510/04, 2005 թվական, 65-րդ պարբերություն:

– Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի
[Branko Tomašić and Others v. Croatia]

Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի գործով՝ Դատարանը համանման ձեւով գտել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածով նախատեսված՝ պետության պոզիտիվ պարտականության խախտում: Այս գործով դիմումատուի փեսան (Մ.Մ.) բազմիցս սպառնացել է, որ կսպանի նրանց դստերը (Մ.Թ.) եւ իրենց երեխային (Վ.Թ.), ընդ որում՝ վերջինիս կպայթեցնի նրա առաջին ծննդյան օրը: Հանցանք կատարողն (Մ.Մ.) այս սպառնալիքները հնչեցրել է թե՛ ոստիկանության եւ թե՛ սոցիալական ապաստանի աշխատակիցների ներկայությամբ: Մ.Թ.-ն նրա վերաբերյալ հանցագործության հաղորդում է ներկայացրել, եւ Մ.Թ.-ի նկատմամբ հնչեցված բազմաթիվ սպառնալիքների համար, Մ.Մ.-ն դատապարտվել է պատժվել է ազատազրկմամբ՝ հինգ ամիս ժամկետով: Հոգեբուժական զննության արդյունքները ցույց են տվել, որ նա պետք է հոգեբույժի կողմից ստանա ստացիոնար բուժում՝ թե՛ բանտում գտնվելու ընթացքում, թե՛ դրանից հետո: Ազատ արձակվելուն պես Մ.Մ.-ն կրակել է սպանել է Մ.Թ.-ին, Վ.Թ.-ին եւ իրեն: Որեւէ տվյալ չի եղել այն մասին, որ Մ.Մ.-ն բանտում գտնվելու ընթացքում հոգեբույժի կողմից բուժում է ստացել:

Դիմումատուները 2-րդ հոդվածի առնչությամբ ներկայացրել են երկու մասից բաղկացած բողոք առ այն, որ

պետությունը չի կատարել իր պոզիտիվ պարտականությունները՝ Մ.Թ.-ի եւ Վ.Թ.-ի մահվան դեպքերը կանխելու համար, եւ երկրորդ՝ պետությունը ամբողջությամբ չի քննել Մ.Թ.-ի ու Վ.Թ.-ի մահվան համար իր գործակալների (ծառայողների) հնարավոր պատասխանատվության հարցը:⁶³

Դատարանը վերահաստատել է, որ 2-րդ հոդվածով.

պետությունը պարտավոր է ձեռնարկել համապատասխան քայլեր՝ իր իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար: Սա առաջին հերթին ներառում է պետության՝ քրեաիրավական արդյունավետ դրույթներ մշակելու միջոցով կյանքի իրավունքը պաշտպանելու պարտականությունը՝ զսպելու համար անձի նկատմամբ հանցանքի կատարումը՝ այդ դրույթների գործողությունն ամրապնդելով դրանց խախտումների կանխարգելման, զսպման եւ պատժման համար նախատեսված իրավակիրառ համակարգով:⁶⁴

Ինչ վերաբերում է վերոնշյալ մոդելին, այն է՝ արդյոք իշխանությունները այդ ժամանակ գիտե՞ին կամ պարտավոր էին իմանալ երրորդ կողմի հանցավոր արարքների հետեւանքով կոնկրետ անձի կյանքին սպառնացող իրական եւ անմիջական վտանգի մասին եւ որ իրենց լիազորությունների շրջանակում չեն ձեռնարկել միջոցներ, որոնք, եթե խելամիտ դատենք, կարող էին նախատեսվել այդ վտանգից խուսափելու համար, ապա Դատարանը գտել է, որ «ներպետական իշխանությունները տեղյակ են եղել, որ Մ.Թ.-ի եւ Վ.Թ.-ի կյանքը խլելու վերաբերյալ հնչեցված սպառնալիքները լուրջ էին, եւ պետք է ձեռնարկվեին բոլոր ողջամիտ միջոցները՝ նրանց այդ սպառնալիքներից պաշտպանելու համար»:⁶⁵ Այսպիսով, Դատարանն ուսումնասիրել է այն հանգամանքը, թե «արդյոք համապատասխան իշխանությունները ձեռնարկե՞լ են սույն գործի

63 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *գանգաւ թիվ. 46598/06*, 2009 թվական, 29-րդ պարբերություն:

64 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *գանգաւ թիվ. 46598/06*, 2009 թվական, 49-րդ պարբերություն:

65 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *գանգաւ թիվ. 46598/06*, 2009 թվական, 51-րդ, 53-րդ պարբերություններ:

հանգամանքներով պայմանավորված՝ բոլոր ողջամիտ միջոցները՝ Մ.Թ.-ի եւ Վ.Թ.-ի կյանքը պաշտպանելու համար»:⁶⁶

Գտնելով, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտում Դատարանը նախեւառաջ նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ Մ.Մ.-ն բազմիցս սպառնալիքներ է հնչեցրել ռումբի վերաբերյալ՝ իշխանությունները երբեք չեն խուզարկել նրա տունը կամ տրանսպորտային միջոցը՝ ռումբ կամ որեւէ այլ զենք հայտնաբերելու համար: Դատարանը նաեւ նշել է, որ Կառավարությունը չի կարողացել ապացուցել այն, որ «բանտում գտնվելու ընթացքում Մ.Մ.-ի նկատմամբ նշանակված հոգեբույժի կողմից հարկադիր բուժումը փաստացի եւ պատշաճորեն իրականացվել է»:⁶⁷ Այս առումով Դատարանն ընդգծել է, որ հոգեբույժի կողմից հարկադիր բուժման վերաբերյալ կարգավորումը շատ ընդհանրական է, եւ, «ըստ էության, հոգեբույժի կողմից հարկադիր բուժում իրականացնելու հարցը դրանում չի դիտարկվում որպես անվտանգության միջոց՝ այսպիսով այն իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ որոշման կայացումը լիովին թողնելով բանտի վարչակազմի հայեցողությանը»:⁶⁸ Դատարանը նշել է, որ՝

այսպիսի կարգավորումները պետք է լինեն արդյունավետ՝ ապահովելու համար, որ քրեական պատժամիջոցների նպատակները պատշաճորեն իրագործվեն: Սույն գործով ոչ՝ այս հարցի վերաբերյալ կարգավորմամբ, ոչ՝ էլ դատարանի՝ Մ.Մ.-ին հոգեբույժի կողմից հարկադիր բուժման ենթարկելու մասին որոշմամբ չեն ներկայացվել այս բուժման կազմակերպման վերաբերյալ բավարար մանրամասներ:⁶⁹

Այս առումով, Դատարանը նաեւ նշել է, որ կատարողին ազատ արձակելիս չի իրականացվել ռիսկի որեւէ պատշաճ գնահատում: Այս վրիպումը այն [Դատարանը] համարել է «հատկապես զարմանալի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա սպառնալիքները դատարանների կողմից համարվել են լուրջ եւ նախկինում հոգեբույժի ցանկացած տեղեկանքում հստակ նշված է եղել, որ մեծ է հավանականությունը, որ նա կարող է կրկնել միեւնոյն հանցանքները կամ կատարել համանման հանցանքներ»:⁷⁰ Ինչպես ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է ստորեւ, ընտանեկան բռնության դեպքերում, մասնավորապես՝ բարձր ռիսկայնության դեպքերում, ինչպիսիք են՝ բաժանումը, ամուսնալուծությունը կամ հանցանք կատարողի ազատ արձակումը, միջազգային չափանիշներով նախատեսվում են ռիսկի շարունակական գնահատումներ: Ի վերջո, Դատարանը նշել է, որ վերաբնիչ դատարանը նվազեցրել է հոգեբույժի կողմից հարկադիր բուժում ստանալու ժամկետը՝ այն սահմանելով միայն այն ժամանակահատվածի համար, որը Մ.Մ.-ն անցկացնելու էր բանտում: Այս բոլոր գործոնների հիման վրա՝ Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի նյութաիրավական խախտում, քանի որ ներպետական իշխանությունները «չեն ձեռնարկել գործի հանգամանքներով պայմանավորված բոլոր ողջամիտ միջոցները»՝ պաշտպանելու համար Մ.Թ.-ի եւ Վ.Թ.-ի կյանքը:

66 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *զանգառ թիվ. 46598/06*, 2009 թվական, 53-րդ պարբերություն:

67 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *զանգառ թիվ. 46598/06*, 2009 թվական, 55-րդ, 56-րդ պարբերություններ:

68 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *զանգառ թիվ. 46598/06*, 2009 թվական, 57-րդ պարբերություն:

69 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *զանգառ թիվ. 46598/06*, 2009 թվական, 57-րդ պարբերություն:

70 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], *զանգառ թիվ. 46598/06*, 2009 թվական, 58-րդ պարբերություն:

- Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey]

Դիմումատուն 17-ամյա քրդուհի էր, ում աչքերը կապել էին եւ իր ընտանիքի մյուս անդամների հետ տեղափոխել ժանդարմերիա, որտեղ նրան մերկացրել եւ խոշտանգել են, հարցաքննել, բռնաբարել, ապա՝ ծեծել: Նրանք ազատ են արձակվել միեւնույն օրը՝ առանձին-առանձին: Ազատ արձակվելու օրվան հաջորդող օրը տուժողը, նրա հայրը եւ քույրը գնացել են դատախազություն, որտեղ ներկայացրել են բողոք: Դատաբժշկական փորձաքննության ենթարկելու նպատակով նրանց ուղարկել են պետական հիվանդանոց, եւ տուժողը ենթարկվել է կուսության ստուգման: Բժիշկը հաստատել է, որ կուսաթաղանթը պատմված է, եւ տուժողի ազդրի ներքին մակերեւույթին առկա են կապտուկներ: Նրա ընտանիքի անդամների մարմինների վրա նույնպես առկա են եղել վնասվածքներ: Հաջորդ օրը դատախազը տուժողին ուղարկել է երկրորդ հիվանդանոց՝ որոշելու համար, թե երբ է նա կորցրել կուսությունը. բժշկի գնահատմամբ դա տեղի է ունեցել գնությունից մեկ շաբաթ առաջ: Քսուք չի վերցվել: Բժիշկներից եւ ոչ մեկը բավականաչափ որակավորված փորձագետ չի եղել: Մեկ ամիս անց դատախազը տուժողից վերցրել է երկրորդ ցուցմունքը եւ ուղարկել նրան երրորդ գնության՝ կուսությունը ստուգելու համար: Կուսաթաղանթի պատմման օրը հնարավոր չի եղել որոշել: Տուժողը ստացել է գրություն այն մասին, որ քննությամբ բռնաբարության փաստ չի հայտնաբերվել:

Տուժողը եւ նրա ամուսինը ոստիկանության ու պետական մարմինների կողմից ենթարկվել են ոտնձգությունների այն բանից հետո, երբ նա բողոք է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով: Նրա ամուսինն արգելանքի տակ է վերցվել եւ ենթարկվել դաժան ծեծի:

Համարելով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ Դատարանն արձանագրել է, որ՝

գտնվելով անազատության մեջ՝ դիմումատուն բռնաբարվել է մի անձի կողմից, որի ինքնությունը դեռեւս պետք է պարզվի: Պետական պաշտոնատար անձի կողմից անազատության մեջ գտնվող անձի բռնաբարությունը պետք է դիտարկվի որպես վատ վերաբերմունքի առանձնապես ծանր եւ նողկալի ձեւ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որքան հեշտ կարող է լինել հանցանք կատարող անձի համար իր տուժողի խոցելիությունից եւ թույլ դիմակայությունից օգտվելը: Ավելին, բռնաբարությունը խորը հոգեբանական հետքեր է թողնում տուժողի վրա, որոնք ժամանակի ընթացքում չեն անհետանում այնքան շուտ, որքան ֆիզիկական եւ հոգեկան բռնության մյուս ձեւերի թողած հետքերը: Դիմումատուն նաեւ բռնի ներթափանցման հետեւանքով զգացել է ուժեղ ֆիզիկական ցավ, որի հետեւանքով նա պետք է իրեն զգացած լիներ ստորացված եւ ֆիզիկական ու հոգեբանական բռնության ենթարկված:⁷¹

Վճռելով, որ 3-րդ հոդվածով խոշտանգման ենթարկվելու վերաբերյալ պնդումներ ներառող դեպքերում 13-րդ հոդվածով պետություններից պահանջվում է արդյունավետ քննություն իրականացնել, Դատարանը գտել է, որ դատախազը չի իրականացրել տուժողի եւ նրա ընտանիքի անդամների պնդումների անհապաղ, ամբողջական եւ արդյունավետ քննություն: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ՝

ըստ ամենայնի՝ մեկը մյուսի հետեւից երեք բժշկական գնություն նշանակելով՝ [դատախազի] հիմնական մտահոգությունը կարծես եղել է դիմումատուի կուսությունը կորցնելու հանգամանքը պարզելը: Իրականում

71 Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey], գանգատ թիվ 57/1996/676/866, 1997 թվական, 83-րդ պարբերություն:

զննությունների նպատակը պետք է լիներ պարզելը, թե արդյո՞ք դիմումատուն եղել է բռնաբարությունից տուժած անձ, թե՛ ոչ, որն էլ կազմում էր նրա բողոքի էությունը:⁷²

Դատարանը նաեւ անդրադարձել է նշանակված դատաբժշկական ընթացակարգերի թերություններին: Այն եզրակացրել է, որ՝

կալանքի տակ գտնվելու ընթացքում պետական պաշտոնատար անձի կողմից բռնաբարության ենթարկվելու մասին հայտարարության մասով ամբողջական եւ արդյունավետ քննություն իրականացնելու պահանջը նաեւ ենթադրում է, որ տուժողը, հաշվի առնելով համապատասխան բոլոր նրբությունները, պետք է զննության ենթարկվի այս ոլորտում հատուկ փորձ ունեցող որակավորված բուժաշխատողների կողմից, ում անկախությունը սահմանափակված չէ քրեական հետապնդում իրականացնող մարմնի՝ զննության անցկացման շրջանակի վերաբերյալ տված ցուցումներով: Չի կարելի եզրակացնել, որ դատախազի կողմից նշանակված բժշկական զննություններով կատարվել է այս պահանջը:⁷³

- Յ.-ն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia]

Յ.-ն ընդդեմ Սլովենիայի գործը ընտանիքի 55-ամյա ընկերոջ կողմից տասնչորսամյա աղջկա նկատմամբ ենթադրյալ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու մասին է: Տուժողի մոր հետ զրուցած քահանայի կողմից հաղորդում ստանալով՝ ոստիկանությունն առաջին անգամ դիմումատուին հարցաքննել է 2002 թվականի հուլիսին: Նրան ուղարկել են գինեկոլոգիական հետազոտության, որի արդյունքներով պարզվել է, որ կուսաթաղանթն անվնաս է: 2003 թվականի օգոստոսին դատախազը դատական քննություն սկսելու միջնորդություն է ներկայացրել: Կատարողը հրավիրվել է հարցաքննության 2005 թվականի հունվարին: 2005 թվականի մայիսին գործը քննող դատավորը քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում է կայացրել: 2005 թվականի հոկտեմբերին դիմումատուն որպես վկա հարցաքննվել է Լյուբլյանա վարչական շրջանի դատարանում, որտեղ նա մանրամասն ցուցմունք է տվել: 2006 թվականի հունիսին գործը քննող դատավորը ներգրավել է կլինիկական հոգեբանության փորձագետ Ռ.-ին: Վերջինս, կոնսուլտացիա անցկացնելով դիմումատուի հետ, 2006 թվականի հուլիսի 4-ին ներկայացրել է իր եզրակացությունը եւ կատարել հետեւյալ եզրահանգումները. «2001 թվականից սկսած՝ Յ.-ի մոտ առկա են սեռական եւ այլ բնույթի ուսնձգության ենթարկված տուժողին բնորոշ բոլոր ախտանիշները (հուզական, վարքագծային եւ ֆիզիկական ախտանիշներ): ...»⁷⁴ 2006 թվականի սեպտեմբերին հանցանք կատարողին մեղադրանք է առաջադրվել սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար: Դատարանը 2008 թվականի մարտին, ապրիլին եւ մայիսին անցկացրել է երեք դնսփակ դատական նիստ, որոնց ընթացքում կատարողը հարցաքննվել է իր ծախ ձեռքի հաշմության առնչությամբ: Մայիսին կայացած դատական նիստի ընթացքում դիմումատուն հարցաքննվել է առանց կատարողի ներկայության՝ որպես պաշտպանական միջոց:

2008 թվականի սեպտեմբերին դատարանն անցկացրել է չորրորդ դնսփակ դատա-

72 *Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey]*, զանգատ թիվ 57/1996, 1997 թվական, 107-րդ պարբերություն:

73 *Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey]*, զանգատ թիվ 57/1996, 1997 թվական, 107-րդ պարբերություն:

74 *Յ.-ն ընդդեմ Սլովակիայի [Y. v. Slovenia]*, զանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 23-րդ պարբերություն:

կան նիստը, որի ընթացքում հանցանք կատարողը դիմումատուին անձամբ ուղղել է շուրջ հարյուր հարց, որոնցից շատերը հուշող հարցեր են եղել: Իր հարցաքննության ընթացքում հանցանք կատարողը նաև պնդել է, որ բռնաբարության մեղադրանքները դիմումատուի մոր հերյուրանքներն են: Այսպիսով, «նա դիմումատուին ուղղել է բազմաթիվ հարցեր նրա մոր, այդ թվում՝ սլովեներենի իմացության, նրա աշխատանքի եւ անձնական հարաբերությունների մասին»:⁷⁵ Երեք դեպքերում, երբ դիմումատուն սաստիկ հուզվել է սկսել է արտասվել, դատարանը կարճատեւ ընդմիջում է հայտարարել: Ինչպես նշել է Դատարանը.

մի պահ տուժողը դատարանից խնդրել է հետաձգել դատական նիստը, քանի որ հարցերն իր համար չափազանց ճնշող են եղել: Սակայն այն բանից հետո, երբ հանցանք կատարողն ասել է, որ հաջորդ դատական նիստը չի կարող անցկացվել մինչեւ 2008 թվականի նոյեմբերի 19-ը, երբ ինքը կվերադառնա գործուղումից, տուժողն արտասվելով ասել է, որ նա պետք է շարունակի հարցադրումները, քանի որ ինքը ցանկանում է վերջ դնել այս հարցին: Ի վերջո, տուժողի՝ չորս ժամ տեւողությամբ խաչաձեւ հարցաքննությունից հետո նախագահող դատավորը հետաձգել է դատական նիստը՝ մինչեւ 2008 թվականի հոկտեմբերի 13-ը:⁷⁶

Փորձագետների կողմից ցուցմունք տալու համար անցկացված չորս լրացուցիչ դատական նիստերից հետո դատարանն արդարացրել է կատարողին 2009 թվականին:

ՄԻԵԴ-ը քննել է տուժողի՝ 3-րդ եւ 8-րդ հոդվածների առնչությամբ ներկայացրած պնդումները: 3-րդ հոդվածով սահմանված պոզիտիվ պարտականության ուժով գործը քննելու պարտականության առնչությամբ Դատարանը վճռել է, որ՝

ինչ վերաբերում է Կոնվենցիայի՝ քննության արդյունավետությանը վերաբերող պահանջներին, ապա Դատարանը վճռել է, որ դրանով պետք է, որպես կանոն, ստեղծվի գործի հանգամանքները պարզելու եւ պատասխանատու անձանց հայտնաբերելու եւ պատժելու հնարավորություն: Սա ոչ թե արդյունքի, այլ միջոցի պարտականություն է: Իշխանությունները պետք է ձեռնարկեին իրենց հասանելի ողջամիտ քայլերը՝ դեպքի հետ կապված այնպիսի ապացույցների ձեռքբերումն ապահովելու համար, ինչպիսիք են վկաների ցուցմունքները եւ դատաբժշկական փորձաքննության արդյունքները, եւ այս համատեքստում ենթադրվում է անհապաղ եւ ողջամիտ արագությամբ գործելու պահանջ:⁷⁷

Դատարանն ընդունել է այն հանգամանքը, որ «ներպետական դատարանները կանգնել են դժվարին խնդրի առջեւ, այն է՝ հակասական ցուցմունքների հիման վրա եւ որեւէ կողմի տեսանկյունը հիմնավորող իրերեն ապացույցների բացակայության պայմաններում որոշում կայացնել սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու նուրբ հարցի վերաբերյալ»:⁷⁸ Այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել խախտում՝ հիմք ընդունելով «բացարձակ անգործության» անբացատրելի եւ երկարատեւ ժամանակահատվածները:⁷⁹ Այսպիսով, Դատարանն արձանագրել է,

75 Յ.-ն ընդդեմ Սլովակիայի [Y. v. Slovenia], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 35-րդ պարբերություն:
76 Յ.-ն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 38-րդ պարբերություն:
77 Յ.-ն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 96-րդ պարբերություն:
78 Յ.-ն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 97-րդ պարբերություն:
79 Յ.-ն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 99-րդ պարբերություն. նշելով, inter alia (ի թիվս այլնի), որ ոստիկանությունը նախնական քննության

որ «տեղի է ունեցել պատասխանող պետության կողմից՝ 3-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտականությունների խախտում»:⁸⁰

Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածին, ապա Դատարանը հանդես է եկել ի պաշտպանություն դատական ընթացակարգերի: Դատարանը նշել է.

Ինչ վերաբերում է քրեական վարույթներում պաշտպանության կողմի եւ վկաների շահերի բախմանը, ապա Դատարանն իր վճիռներում արդեն բազմիցս նշել է, որ քրեական վարույթները պետք է կազմակերպվեն այնպես, որ անհիմն վտանգի չենթարկվեն վկաների եւ մասնավորապես՝ ցուցմունք տալու համար կանչված տուժողների կյանքը, ազատությունը կամ անվտանգությունը, կամ նրանց շահերը, որոնք սովորաբար բխում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածից: Այսպիսով, պաշտպանության կողմի եւ վկաների կամ ցուցմունք տալու համար կանչված տուժողների շահերի միջև պետք է հավասարակշռություն հաստատվի: Ընդհանրապես սեռական բնույթի հանցանքների վերաբերյալ քրեական ընթացակարգերը տուժողի կողմից ընկալվում են որպես ծանր փորձություն, հատկապես երբ տուժողն ականա առերեսվում է մեղադրյալի հետ: Այս առանձնահատկություններն է՛լ ավելի ցայտուն են արտահայտվում այն դեպքում, երբ գործով ներառված է անչափահաս: Ուստի այսպիսի վարույթներում որոշ միջոցներ կարող են ձեռնարկվել տուժողին պաշտպանելու նպատակով՝ պայմանով, որ այդ միջոցները համատեղվեն պաշտպանության կողմի իրավունքների պատշաճ եւ արդյունավետ իրացման հետ:⁸¹

Դիտարկելով այս շահերի հավասարակշռության հարցը՝ Դատարանը հղում է կատարել ՄԱԿ-ի «Հանցագործությունների եւ իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրին»,⁸² ԵՄ-ի Խորհրդի՝ «Քրեական վարույթի շրջանակներում տուժածների կարգավիճակի մասին» շրջանակային որոշմանը,⁸³ որը փոխարինվել է Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի ուղեցույցով, որով սահմանվում են հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, աջակցության եւ պաշտպանության նվազագույն չափանիշները,⁸⁴ ինչպես նաեւ Ստամբուլի կոնվենցիային: Դատարանն ընդգծել է, որ այս չափանիշներով նախատեսվում է՝

ահաբեկումից եւ կրկնակի վիկտիմիզացիայից պաշտպանություն, տուժողներին լսելի դարձնելու, նրանց կարծիքներ, կարիքներ ու մտահոգություններ ունենալու եւ դրանք ներկայացնելու հնարավորության ընձեռում, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում դրանց հաշվի առնում, գործող ներպետական օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում ենթադրյալ հանցանք կատարողի բացակայությամբ ցուցմունք տալու հնարավորության ընձեռում: Բացի այդ՝ ԵՄ-ի՝ հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, աջակցության եւ պաշտպանության նվազագույն չափանիշները սահմանող ուղեցույցով նախատեսվում է,

ավարտից հետո՝ մեկ տարի շարունակ, դատախազին չի ներկայացրել գործի վերաբերյալ զեկուցում.

գործը քննող դատավորից պահանջվել է 21 ամիս դատախազի՝ դատական քննություն սկսելու միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու համար, իսկ առաջին դատական նիստը տեղի է ունեցել ենթադրյալ հանցանք կատարողին մեղադրանք առաջադրելուց մեկուկես տարի հետո:

80 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 100-րդ պարբերություն:

81 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 103-րդ պարբերություն:

82 ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/34 բանաձեւ:

83 2001/220/ԱՆԳԽ:

84 2012/29/ԵՄ:

inter alia, որ տուժողների հետ հարցուպատասխանը պետք է անցկացվի առանց անհիմն ձգձգումների, իսկ բժշկական գննությունները պետք է նվազագույնի հասցվեն:⁸⁵

ՄԻԵԴ-ը նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ տուժողի ցուցմունքը ենթադրյալ կատարողի դեմ գործով միակ ուղղակի ապացույցն է եղել, որով էլ հիմնավորվել է նրան և տուժողին խաչաձեռն հարցաքննության ենթարկելու անհրաժեշտությունը՝ «անձի՝ իրեն պաշտպանելու իրավունքը չի ենթադրում պաշտպանության ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք»:⁸⁶ Դատարանը վճռել է.

քանի որ «սեռական բռնություն» քրեական իրավախախտման համար մեղադրվող ամբաստանյալների եւ նրանց ենթադրյալ տուժողների ուղղակի առերեսմամբ ենթադրվում է տուժողներին էլ ավելի հոգեբանական ճնշման ենթարկելու վտանգ, Դատարանը գտնում է, որ անձամբ մեղադրյալների կողմից խաչաձեռն հարցաքննությունը պետք է ազգային դատարանների կողմից գնահատվի այնքան հետեւողականորեն, որքան ինտիմ բնույթ ունեն հարցերը:⁸⁷

Դատարանը նաեւ գտել է, որ դատարանի կողմից ցուցմունք տալու համար կանչված փորձագետ վկաների մասնակցությամբ խախտվել են տուժողի՝ 8-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Դատարանը նշել է. «իշխանություններից նաեւ պահանջվում է ապահովել, որ քննությանը կամ որոշում կայացնելու գործընթացին օժանդակելու համար կանչված՝ վարույթի մյուս մասնակիցները տուժողների եւ մյուս վկաների նկատմամբ ցուցաբերեն հարգալից վերաբերմունք եւ նրանց ավելորդ անհարմարություն չպատճառեն»:⁸⁸ Ընդհանրացնելով՝ Դատարանը հայտնել է հետեւյալ կարծիքը.

դիմումատուի եւ ամբաստանյալի միջեւ նախկինում եղած հարաբերությունը, խնդրո առարկայի ինտիմ բնույթը, ինչպես նաեւ դիմումատուի երիտասարդ տարիքը (դիմումատուն անչափահաս էր, երբ կատարվել են ենթադրյալ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), առանձնահատուկ նրբանկատություն պահանջող կետեր են, որոնցով իշխանությունների կողմից տվյալ քրեական վարույթների իրականացման համար պահանջվում էր համապատասխան նրբանկատ մոտեցում:⁸⁹

Դատարանը վճռել է, որ իշխանությունները պատշաճ հավասարակշռություն չեն ապահովել պաշտպանության կողմի արդար դատաքննության իրավունքի եւ 8-րդ հոդվածով սահմանված՝ տուժողի իրավունքների միջեւ, ինչը բացասաբար է ազդել տուժողի անձնական անձեռնմխելիության վրա:

85 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 104-րդ պարբերություն:

86 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 106-րդ պարբերություն:

87 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 107-րդ եւ 106-րդ պարբերություններ. բացարձակապես հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ պաշտպանության կողմի հարցաքննությունն իրականացվել է յոթ ամսվա ընթացքում՝ չորս դատական նիստով, եւ որ ենթադրյալ հանցանք կատարողը երկու նիստի ընթացքում հարցաքննությունն իրականացրել է անձամբ՝ չնայած այն հանգամանքին, որ ունեցել է պաշտպան:

88 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 112-րդ պարբերություն:

89 *Յ.-ն ընդդեմ Սլովենիայի* [*Y. v. Slovenia*], գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 114-րդ պարբերություն:

- Բալսանն ընդդեմ Ռումինիայի [Balsan v. Romania]

23/08/2017

Դիմումատուն 58 տարեկան էր, ապրում էր Պետրոշանի քաղաքում, ամուսնացած էր Ն.Ս.-ի հետ, եւ նրանք ունեին չորս երեխա: 2007-2009 թվականների ընթացքում Ն.Ս.-ն մի քանի անգամ բռնի գործողություններ է կատարել դիմումատուի նկատմամբ, որից հետո դիմումատուն ձեռք է բերել այն վնասվածքների մասին փաստող դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որոնց համար պահանջվել է երկուսից տասնօրյա բուժօգնություն:

Արձագանքող ոստիկանության ծառայողները դեպքի մասին իրենց զեկուցագրերում նշել են, որ Ն.Ս.-ն չի թողնում, որպեսզի դիմումատուն մուտք գործի իրենց համատեղ կացարան, որ վնասվածքները ընտանեկան վեճի հետեւանք են, եւ որ նրանք կնոջը տեղեկացրել են պաշտոնական բողոք ներկայացնելու իր իրավունքի մասին:

Դիմումատուն երկու անգամ էր բողոք է ներկայացրել դատախազություն՝ պնդելով, որ ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել իր երեխաների ներկայությամբ, կցելով բժշկական եզրակացությունների պատճենները: Քննիչները դիմումատուից, նրա քրոջից եւ եղբորից ցուցմունք վերցրել են առաջին դեպքերից ամիսներ անց, եւ նրանք բոլորը հաստատել են ամբողջ տարվա ընթացքում շարունակաբար բռնության ենթարկվելու փաստը, այդ թվում՝ նրա կյանքին ուղղված սպառնալիքները: Քննիչները բռնություն գործադրած անձին՝ Ն.Ս.-ին, հարցաքննել են բռնի գործողությունների մասին առաջին հաղորդումն ստանալուց 5 ամիս հետո: Ն.Ս.-ն հերքել է կնոջ նկատմամբ բռնի գործողություններ կատարելու փաստը եւ նշել, որ նա խմելու խնդիր է ունեցել եւ պատշաճորեն չի մաքրել տունը: Ն.Ս.-ն պնդել է, որ դիմումատուի կողմից ներկայացված բժշկական եզրակացությունները կեղծված են եղել: Նրանց դուստրերը ոստիկանությունում նշել են, որ իրենց հայրը չի հարվածել իրենց մորը, այլ վերջինս խմում էր եւ հարբելուց հետո ագրեսիվ վարք դրսևորում:

Դիմումատուն երկու լրացուցիչ դեպքի առթիվ բողոք է ներկայացրել դատախազին՝ նշելով, որ Ն.Ս.-ն սպառնացել է սպանել իրեն, եւ ինքը վախենում է իր կյանքի համար: Նա նաեւ խնդրել է դատական քննությունն արագացված կարգով անցկացնել եւ պաշտպանել իրեն: Երկրորդ դիմումը ներկայացնելու օրը դատախազությունը որոշել է մեղադրանք չառաջադրել եւ նրա նկատմամբ սահմանել 50 եվրոյին համարժեք գումարի չափով տուգանք՝ հաշվի առնելով այն, որ ավտոմեքենայից հետո դիմումատուն վեճ է սարքել: Դատախազն իր որոշման մեջ հղում է կատարել Ն.Ս.-ի եւ դիմումատուի երկու չափահաս դուստրերի ցուցմունքներին: Ինչ վերաբերում է ենթադրյալ սպառնալիքներին, ապա համարվում է, որ դիմումատուին չի հաջողվել ապացուցել իր կողմից ներկայացվող մեղադրանքները: Դատախազը եզրակացրել է, որ չնայած Ն.Ս.-ն կատարել է հանցագործություն՝ պատճառելով մարմնական վնասվածք, նրա գործողությունները հասարակության համար վտանգ չեն ներկայացրել, քանի որ նրան սարքել է տուժողը, ինչպես նաեւ նախկինում ինքը չի ունեցել դատվածություն եւ թոշակառու է եղել: Այդ որոշման դեմ դիմումատուի բողոքն անհիմն լինելու հիմքով մերժվել է:

Դիմումատուն Պետրոշանի քաղաքի շրջանային դատարան բողոք է ներկայացրել դատախազի կողմից կայացված երկու որոշման դեմ՝ պահանջելով, որ Ն.Ս.-ին մեղադրանք առաջադրվի մարմնական վնասվածք պատճառելու հիմքով, եւ որ նա դատապարտվի ու փոխհատուցում վճարի ոչ նյութական վնասների եւ կրած տառապանքների համար: Նա պնդել է, որ վարչական տուգանքը, որը Ն.Ս.-ն հրաժարվել է վճարել, նրա նկատմամբ կանխարգելիչ ազդեցություն չի ունեցել, քանի որ դատախազի՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումից հետո նա

շարունակել է բռնի գործողությունների ենթարկել կնոջը: Բռնության ենթարկված կինը դատարանին նաեւ խնդրել է քրեական պատժամիջոցներ կիրառել Ն.Ս.-ի նկատմամբ եւ թույլտվություն է խնդրել ներկայացնելու Ն.Ս.-ի հետ երկխոսության ձայնագրությունը, որպեսզի ապացուցի, որ ինքը բռնի գործողությունների է ենթարկվել, ինչպես նաեւ Ն.Ս.-ի կողմից հնչեցվել են սպառնալիքներ: Դիմումատուն իր ցուցմունքի վերջին պարբերության մեջ նշել է, որ վախենում է իր կյանքի համար եւ դատարանին խնդրել է «օրենքով նախատեսված կարգով պատժել Ն.Ս.-ին ... արգելել նրան մտնել բնակարան ... եւ մոտենալ իրեն»:

Պետրոզանի քաղաքի շրջանային դատարանում երկրորդ լսման ժամանակ դիմումատուն պահանջել է դատարանի կողմից նշանակված փաստաբան, քանի որ փաստաբան վարձելու համար ֆինանսական միջոցներ չի ունեցել: Դատարանը մերժել է դիմումը՝ գտնելով, որ գործի էությունն այնպիսին է, որ փաստաբանի կողմից ներկայացվել չի պահանջվում:

Պետրոզանի քաղաքի շրջանային դատարանն իր միջանկյալ վճռով մասամբ վերացրել է դատախազի՝ 2007 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը մարմնական վնասվածք պատճառելու հանցագործության, ինչպես նաեւ դրա համար սահմանված տուգանքի մասով եւ այդ մասով պահանջել է գործի՝ ըստ էության քննություն: Դատախազի՝ սպառնալիքների մասով եզրահանգումները հաստատվել են: Ձայնագրությունը չի ընդունվել որպես ապացույց, քանի որ դատարանը համարել է, որ այն գործին չի վերաբերում:

Դիմումատուն եւ Ն.Ս.-ն ցուցմունք են տվել դատարանում նշելով, որ դիմումատուն հարբած է եղել եւ իրեն դանակով սպառնացել է: Ն.Ս.-ի պնդմամբ՝ իրեն պաշտպանելու համար նա իրել է կնոջը, սակայն ժխտել է, որ երբեւէ հարվածել է նրան: Դատարանը լսել է նրանց դատեր՝ Ս.Բ.-ի հետեւյալ ցուցմունքը՝

«Իմ հայրը սովորություն ուներ հարվածել մորս դիմումատուին եւ մեզ՝ երեխաներին: Նա այդպես վարվելու սովորություն ուներ, երբ գիշերը տուն չէր գալիս եւ մայրս հարցնում էր, թե որտեղ է եղել: Հետո հայրս բարկանում էր եւ հարվածում մորս: Նրա բարկանալու միակ պատճառը գումար չունենալն էր ... երբ ես տեղափոխվեցի ծնողներիս բնակարանից, մայրս շարունակում էր հարվածներ ստանալ հորս կողմից. ես անձամբ ականատես եմ եղել նման դեպքերից մի քանիսին ... Մայրս ակոհով խմելու սովորություն ուներ, սակայն չափավոր, իսկ 2007 թվականին նա դադարեց խմել: Ես հետ եմ վերցնում քրեական վարույթի ընթացքում տված իմ ցուցմունքը, քանի որ այն տվել եմ հորս սպառնալիքներից հետո:»:

Պետրոզանի քաղաքի շրջանային դատարանը Ն.Ս.-ին անմեղ է ճանաչել մարմնական վնասվածք պատճառելու մասով: Դատարանը համարել է, որ Ս.Բ.-ի ցուցմունքը չի կարելի հաշվի առնել առանց այդ որոշման համար որեւէ հիմնավորում նշելու: Դատարանը եզրակացրել է.

Դիմումատուն չի ապացուցել իր այն պնդումները, որ ... ինքը ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել մեղադրյալի կողմից: Դատարանը, հաշվի առնելով նաեւ քրեական գործով քննության ընթացքում հավաքված ապացույցները, համարում է, որ մեղադրյալը հիմնականում այդպիսի բռնություն է գործադրել տուժող կողմի ակոհով օգտագործելու, ինչպես նաեւ այն պատճառով, որ նա պատշաճ կերպով հոգ չէր տանում իր չորս երեխաների մասին: Մեղադրյալի արարքներն այնքան վտանգավոր չեն հասարակության համար, որպեսզի համարվեն հանցագործություն, եւ, հետեւաբար, նա կազատվի մարմնական վնասվածքի մասով երեք դրվագներով առաջադրված մեղադրանքից եւ կվճարի 120 եվրոյին համարժեք գումարի չափով վարչական տուգանք:

Դատարանը այնուհետև առանց հիմնավորումներ ներկայացնելու, անհիմն լինելու հիմքով մերժել է դիմումատուի՝ վնասի փոխհատուցման պահանջը: Վճռում որեւէ հիշատակություն չի եղել դիմումատուի՝ իրեն պաշտպանության միջոցներ տրամադրելու պահանջի վերաբերյալ:

Դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել այդ վճռի դեմ: Նա պնդել է, որ Ն.Ս.-ն բռնության հակված անձ է, որը շարունակել է բռնության ենթարկել իրեն՝ նույնիսկ վարչական տուգանք նշանակելուց հետո:

2009 թվականի փետրվարի 19-ին եւ ապրիլի 21-ին դիմումատուն Ն.Ս.-ի կողմից բռնության եւ սպառնալիքների նոր դեպքերի հետ կապված հինգ բողոք է ներկայացրել Պետրոշանի քաղաքի ոստիկանություն, որոնց նա կցել է բժշկական եզրակացություններ: Սեպտեմբերի 29-ին Պետրոշանի քաղաքի շրջանային դատարանին կից դատախազությունը որոշել է դիմումատուի կողմից նկարագրված հինգ դեպքերի կապակցությամբ մեղադրանք չառաջադրել Ն.Ս.-ի դեմ: Այն Ն.Ս.-ի նկատմամբ սահմանել է մեկ այլ վարչական տուգանք՝ 25 եվրոյի չափով: Դիմումատուն վերը նշված որոշման դեմ հետագայում որեւէ բողոք չի ներկայացրել:

ՄԻԵԴ-ն իր գնահատման մեջ նշել է, որ ֆիզիկական բռնության փաստը արձանագրվել է բազմաթիվ ոստիկանական զեկուցագրերում եւ դատաբժշկական փորձաքննության եզրակացություններում: Վերջինիս մեջ նշված է, որ դիմումատուին անհրաժեշտ էր երկուսից տասն օր տեւողությամբ բուժօգնության տրամադրում:⁹⁰ Այն մերժել է Կառավարության առարկությունն առ այն, որ բռնությունը, որին ենթարկվել է դիմումատուն, չի հասել 3-րդ հոդվածը վկայակոչելու համար անհրաժեշտ նվազագույն շեմին: Այն նշել է.

դիմումատուի նկատմամբ դրսեւորված վատ վերաբերմունքը, որը երեք դեպքերով դարձել է նրա ֆիզիկական վնասվածքների պատճառ, վախի եւ անօգնական լինելու նրա զգացումների զուգակցմամբ, բավականաչափ լուրջ են եղել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ծանրության պահանջվող մակարդակին հասնելու, հետեւաբար՝ սույն դրույթի համաձայն Կառավարության նկատմամբ դրական պարտավորություն սահմանելու համար⁹¹:

Դատարանը այսպիսով ուսումնասիրել է այն, թե «արդյոք ներպետական իշխանությունները ձեռնարկել են բոլոր ողջամիտ միջոցները՝ դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ բռնի գործողությունների կրկին կատարումը կանխելու համար»⁹²: Այս կապակցությամբ դատարանը նշել է, որ նրանք բոլորը քաջատեղյակ են եղել գրեթե մեկ տարի դիմումատուի նկատմամբ գործադրվող բռնությանը, քանի որ նա ահազանգել է ոստիկանություն, քրեական գործով բողոքներ է ներկայացրել եւ խնդրագիր է ներկայացրել ոստիկանության պետին: Նրա բողոքները մշտապես ուղեկցվել են դատաբժշկական փորձաքննության եզրակացություններով, որոնք երբեւէ չեն վիճարկվել: Դատարանն այսպիսով եզրակացրել է, որ Ռումինիայի իշխանությունները պարտավոր էին արձագանքել նրա բողոքներին⁹³: Դատարանը նաեւ նշել է, որ դիմումատուի դեպքում «գործել է իրավական համակարգ, որը նրան հնարավորություն է տվել ընտանեկան բռնության վերաբերյալ բողոք ներկայացնել եւ դիմել իշխանություններին՝ պաշտպանություն տրամադրելու պահանջով»⁹⁴:

Ինչ վերաբերում է իրավական համակարգի կիրառությանը, ապա Դատարանը հիշեցրել է, որ բռնության առաջին դեպքի քննությունը սկսվել է մեկ ամիս անց եւ

90 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 59-րդ պարբ.:

91 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 60-րդ պարբ.:

92 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 61-րդ պարբ.:

93 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 62-րդ պարբ.:

94 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 63-րդ պարբ.:

բռնության այլ դեպքեր տեղի ունենալուց հետո: Չնայած այն հանգամանքին, որ դիմումատուն նշել է, որ իր ամուսինը սպառնացել է սպանել իրեն, ոստիկանությունն առաջին դեպքից հետո գրեթե հինգ ամիս չի հարցաքննել նրան: Ազգային դատարանը եզրակացրել է, որ կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու հետ կապված հանցագործություն, այն եղել է սադրանք եւ վարչական պատժից ավելի ծանր պատիժ սահմանելու համար բավականաչափ լուրջ չի եղել⁹⁵:

Դատարանը նշել է, որ սույն որոշման դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքը մերժվել է եւ շրջանային դատարանը մարմնական վնասվածք պատճառելու մասով անմեղ է ճանաչել կատարողին, քանի որ նրան սադրել են, եւ նա հասարակության համար վտանգ չի ներկայացրել: Դատարանն այնուհետեւ նշել է, որ ազգային դատարանն ուշադրություն չի դարձրել կողմերի դատեր կողմից ցուցմունքը հետ վերցնելու հանգամանքի վրա, իսկ իշխանություններն ուշադրություն չեն դարձրել դիմումատուի՝ պաշտպանության միջոց տրամադրելու պահանջին: Ազգային դատարանը մի փոքր ավելացրել է վարչական տուգանքի չափը՝ չնայած այն հանգամանքին, որ առաջին տուգանքը չի ունեցել կանխարգելիչ ազդեցություն, քանի որ բռնությունը շարունակվում էր⁹⁶:

Ընդհանուր առմամբ քրեական վարույթը գնահատելով՝ Դատարանը մտահոգությամբ եզրակացրել է, «որ թե՛ քննության ժամանակ, թե՛ դատարանում ներպետական իշխանությունները ընտանեկան բռնության դեպքերը դիտարկել են որպես սադրանք եւ համարել են, որ քրեական իրավունքի շրջանակներում քննելու համար դրանք այնքան էլ լուրջ չեն»⁹⁷: Այն գտել է, որ ներպետական իշխանությունների դիրքորոշման հետեւանքով «ներպետական օրենսդրական դաշտը չի ծառայել իր նպատակին, եւ այն չի համապատասխանել կանանց նկատմամբ բռնության եւ մասնավորապես՝ ընտանեկան բռնության մասով սահմանված միջազգային չափանիշներին»⁹⁸:

Ինչ վերաբերում է անվճար հիմունքներով փաստաբան տրամադրելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ որոշմանը, քանի որ նմանատիպ գործերի դեպքում բացակայում է դրա անհրաժեշտությունը, ապա ՄԻԵԴ-ը վերհիշել է նախկինում կայացված վճիռներն առ այն, որ «որոշ հանգամանքներում վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների քննության գործընթացին տուժողի արդյունավետ մասնակցությունն ապահովելու հետ կապված պետության ընթացակարգային պարտավորությունը կարող է դրսեւորվել փաստաբանի՝ անվճար հիմունքներով իրավական ներկայացուցչության արդյունավետ հասանելիություն տրամադրելով»⁹⁹:

Ի վերջո, Դատարանը նշել է, որ 2008 թվականի առաջին կեսին ներկայացվել են վեց լրացուցիչ բողոքներ, որոնք ներպետական իշխանությունները մերժել են՝ ապացույցների բացակայության կամ բավականաչափ ծանր չլինելու հիմքով:¹⁰⁰ ՄԻԵԴ-ն այսպիսով գտել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

ՄԻԵԴ-ը սեփական նախաձեռնությամբ քննել է 14-րդ հոդվածի կիրառության հարցը¹⁰¹: Այն կրկին նշել է իր վճիռն առ այն, որ «պետության կողմից կանանց ընտանեկան բռնությունից չպաշտպանելու հետեւանքով խախտվում է նրանց՝ օրենքով սահմանված հավասար պաշտպանության իրավունքը, եւ պարտադիր չէ, որ այս պարտավորությունը դիտավորությամբ չկատարվի»¹⁰²: Այն ընդգծել է, որ Ստամբուլի կոնվենցիայով կանանց նկատմամբ բռնությունը սահմանվել է որպես

95 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 65-րդ պարբերություն:
96 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 66-րդ պարբերություն:
97 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 67-րդ պարբերություն:
98 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 67-րդ պարբերություն:
99 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 67-րդ պարբերություն:
100 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 69-րդ պարբերություն:
101 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 72-րդ պարբերություն:
102 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 78-րդ պարբերություն:

խտրականության ձեւ¹⁰³:

Դատարանն այնուհետեւ կրկին նշել է գործի փաստական հանգամանքները. որ դիմումատուն իր ամուսնու կողմից ենթարկվել է բռնության, հնչեցվել են մահվան սպառնալիքներ, որոնց մասին իշխանությունները տեղյակ են եղել, եւ իր վճիռը, որ իշխանությունները.

Ներպետական իրավական համակարգը չէն ծառայեցվել իր նպատակին՝ հիմք ընդունելով այն եզրահանգումը, որ դիմումատուն է սադրել իր նկատմամբ ընտանեկան բռնություն, որ բռնությունը հասարակության համար վտանգ չի ներկայացրել, հետեւաբար այնքան էլ ծանր դեպք չի եղել քրեական պատժամիջոցներ նշանակելու համար, ինչպես նաեւ դիմումատուի՝ դատարանի կողմից նշանակված փաստաբանի տրամադրման պահանջը մերժելը¹⁰⁴:

Դատարանը գտել է, որ սույն գործով իշխանությունների անգործության մասին է նաեւ վկայում որեւէ պաշտպանության միջոցի տրամադրման հնարավորություն չդիտարկելու հանգամանքը՝ չնայած ոստիկանությանը, դատախազներին եւ դատարաններին նրա կողմից շարունակաբար ուղղված խնդրանքներին: Այն համարել է, որ հաշվի առնելով ընտանեկան բռնությունից տուժած անձանց խոցելիությունը՝ իշխանությունները պետք է ավելի աչալոջորեն քննեին նրա գործը¹⁰⁵:

Շարունակելով՝ ՄԻԵԴ-ն ուսումնասիրել է Ռումինիայում ընտանեկան բռնության նկատմամբ սոցիալական հանդուրժողականության մակարդակն արտացոլող միջին վիճակագրական տվյալները եւ նշել, որ հաղորդված դեպքերից միայն մի քանիսն են քննվել ոստիկանության կողմից: Այն նշել է, որ հաղորդվող դեպքերի թիվը շարունակում է աճել, որտեղ տուժողների մեծ մասը կանայք են, եւ որ տուժողների համար առկա են քիչ թվով կացարաններ, այդ թվում ութ երկիր չունի կացարան: Այն հղում է կատարել ԿՆԽՎԿ կոմիտեի հետեւյալ ամփոփիչ դիտարկումներին. հասարակության շրջանում իրազեկվածության բացակայությունը՝ հիմնականում գենդերային խտրականության հետ կապված, իրենց իրավունքների մասին կանանց իրազեկվածության բացակայությունը, տուժողների համար պաշտպանության եւ աջակցության ծառայությունների բացակայությունը՝ մասնավորապես գյուղական շրջաններում, ընտանեկան բռնության տարածվածության մակարդակի վերաբերյալ վիճակագրության բացակայությունը եւ գործող օրենսդրության անարդյունավետ կիրարկումը¹⁰⁶: Դատարանն ընդգծել է, որ Կառավարությունը չի իրականացրել այս ոլորտում իր կողմից ձեռնարկված միջոցառումների ազդեցության որեւէ մոնիթորինգ, ինչպես նաեւ օրենքի եւ ազգային ռազմավարության կիրարկման մոնիթորինգ: Դատարանը համարել է, որ՝

վերոնշյալ գործոնների համակցությունը վկայում է այն մասին, որ իշխանությունները լիովին չեն գնահատել Ռումինիայում ընտանեկան բռնության խնդրի լրջությունը եւ ծավալը, ինչպես նաեւ նրանց գործողություններում արտացոլվել է կին դիմումատուի նկատմամբ խտրական մոտեցում¹⁰⁷:

Հաշվի առնելով առերեւոյթ ապացույցն առ այն, որ ընտանեկան բռնությունը մեծապես ազդում է կանանց վրա՝ Դատարանը համարել է, որ «իշխանությունների կողմից դրսեւորված ընդհանուր եւ խտրական անգործության հետեւանքով ստեղծվել

103 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 79-րդ պարբերություն:

104 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 80-րդ եւ 81-րդ պարբերություն:

105 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 82-րդ պարբերություն:

106 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 83-րդ պարբերություն:

107 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 85-րդ պարբերություն:

Ե մի միջավայր, որը նպաստել է ընտանեկան բռնությանը»¹⁰⁸: Այն գտել է, որ քրեական իրավունքի համակարգը չունի «համարժեք կանխարգելիչ ազդեցություն, որով հնարավոր է ապահովել սույն գործով կատարողի կողմից ապօրինի գործողությունների կանխարգելումը», այսպիսով խախտվել են դիմումատուի իրավունքները¹⁰⁹: Այն եզրակացրել է, որ չնայած ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ օրենքի եւ ազգային ռազմավարության ընդունմանը՝ «դատական համակարգի կողմից ընդհանուր առմամբ չարձագանքելը եւ ազդեցությունների անպատժելիությունը ...» վկայում են այն մասին, որ ջանքեր չեն գործադրվում ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ¹¹⁰: Այն այսպիսով գտել է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում 3-րդ հոդվածի զուգակցմամբ:

Բ.ԿԻՎԿ-Ի ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան եւ սեռական բռնություն ներառող դեպքերն ուսումնասիրելու համար օգտագործվել է նաեւ ԿԻՎԿ-ի կամընտիր արձանագրությունը: Սա ներառում է, *inter alia*.

«Ա.Թ.-ն ընդդեմ Հունգարիայի [A.T. v. Hungary]»¹¹¹ գործն Արձանագրության հիման վրա հարուցված ընտանեկան բռնության առաջին գործն էր: Այս գործով տուժողը տարիներ շարունակ ենթարկվել է ընտանեկան բռնության, այդ թվում՝ ծեծի (որի վերաբերյալ կա դաժան բռնության առանձին դեպքերն արձանագրող 10 բժշկական տեղեկանք), լուրջ սպառնալիքների եւ երեք տարի շարունակ երեխայի համար չի ստացել այլմենտ: Դա էլ ստիպել է նրան այդ պահանջով դիմել դատարան եւ ոստիկանություն: Բռնություն գործադրած անձը լքել է բնակարանը՝ վերցնելով կահույքի մեծ մասը, սակայն շարունակել է ներխուժել բնակարան եւ ծեծել տուժողին, ինչի հետեւանքով նա տեղափոխվել է հիվանդանոց:

Քրեական վարույթը տեւել է տարիներ. արդյունքում չի արձակվել պաշտպանիչ կարգադրություն կամ բռնություն գործադրած անձին կալանավորելու որոշում, այլ վերջինս տուգանվել է մոտ 365 ԱՄՆ դոլար՝ լուրջ մարմնական վնասվածք ներառող երկու դեպքի համար: Լինելով գործով տուժող՝ գործի նյութերը նրան հասանելի չեն եղել: Երեխայի պաշտպանության հարցերով զբաղվող մարմինները չեն տրամադրել որեւէ աջակցություն՝ չնայած հեռախոսով, նամակով կամ անձամբ արված նրա խնդրանքներին: Տուժողը եւ նրա երեխաները, որոնցից մեկն ունեցել է լուրջ հաշմանդամություն, պատշաճ կացարանով չեն ապահովվել: Տուժողի կողմից՝ կատարողի մուտքն իրենց բնակարան արգելելու համար հարուցված քաղաքացիական վարույթի ընթացքում դատարանը գտել է, որ բնակարան նրա մուտքն արգելելու համար նրա սեփականության իրավունքները չեն կարող սահմանափակվել՝ իր որոշման համար հիմք ընդունելով հետեւյալը. ա) կանոնավոր ֆիզիկական բռնության փաստի հիմնավորման բացակայություն, բ) նրա սեփականության իրավունքը:

ԿԻՎԿ կոմիտեն գտել է, որ Կողմ պետությունը չի կատարել Կոնվենցիայով սահմանված՝ ընտանեկան բռնությունից դիմումատուին պաշտպանելու իր պարտականությունները՝ այն պատճառով, որ Հունգարիայի իրավական եւ ինստիտուցիոնալ կարգավորումները չեն համապատասխանել միջազգային չափանիշներին, իսկ իրավական պաշտպանության գոյություն ունեցող ներպետական միջոցներն անարդյունավետ են եղել՝ պաշտպանելու նրան իր նախկին բռնարար զուգընկերոջից: Ինչ վերաբերում է քաղաքացիական վարույթներին, ապա այն նշել

108 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 86-րդ պարբերություն:

109 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 87-րդ պարբերություն:

110 *Բալսանն ընդդեմ Ռումինիայի*, Գանգատ թիվ 49645/09, 2017 թվական, 88-րդ պարբերություն:

111 Հաղորդագրություն թիվ 2/2003, CEDAW/C/36/D/2/2003:

Է. «Կանանց կյանքի, ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ չեն կարող գերակայել այլ իրավունքներ, այդ թվում՝ սեփականության ու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը»:¹¹² Այն նաև նշել է՝ «ընտանիքում կանանց եւ տղամարդկանց դերի ու պարտականությունների վերաբերյալ ամկա արմատավորված ավանդական կարծրատիպերի հարատևության մասին»:¹¹³ Այն նաև դատապարտել է ազգային դատարանների կողմից ընտանեկան բռնության գործերը պակաս գերակա համարելու հանգամանքը: Այն գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ա», «բ», «ե» կետերի, 5-րդ եւ 16-րդ հոդվածների խախտում:

- Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [V.K. v. Bulgaria]

Բռնություն գործադրած անձը տուժողին տրամադրել է այնքան զումար, որը բավարար է եղել միայն ընտանիքի նվազագույն կարիքները հոգալու համար: Քանի որ նրա [բռնություն գործադրած անձի] աշխատանքի բերումով նրանք բնակվում էին Լեհաստանում, նա [տուժողը] չէր կարող աշխատել, հետեւաբար տնտեսապես կախյալ վիճակում էր գտնվում: Բռնություն գործադրած անձը նրան վերաբերվում էր ինչպես տնային տնտեսուհու, չէր թույլատրում ազատորեն շփվել իր ընկերների եւ ընտանիքի հետ: Տարիներ շարունակ նա իրեն զգացել է նվաստացած եւ ճնշված: Երբ նա այնդել է իր աշխատանքին վերադառնալու հարցը, ամուսինը դադարեցրել է նրանց ֆինանսական աջակցությունը՝ «փորձելով նրան «կարգի հրավիրել» եւ «ենթարկեցնել»»:¹¹⁴

Բռնության գործադրման բազմաթիվ դեպքերից հետո, այդ թվում կանանց հարցերով կենտրոնի աշխատակցի նկատմամբ, ով փորձում էր օգնել տուժողին, երբ նա փորձում էր կապ հաստատել իր որդու հետ, որին ամուսինը փակել էր տանը, տուժողն իր երեխաների հետ վերադարձել է Բուլղարիա, որտեղ դիմել է՝ պաշտպանիչ միջոց կիրառելու կարգադրություն ստանալու համար: Կիրառվել է անհապաղ կարգադրություն, սակայն լսումից հետո մերժվել է պաշտպանիչ կարգադրության տրամադրումն այն պատճառով, որ դիմումը ներկայացնելուն նախորդող ամսվա ընթացքում բռնության որեւէ դեպք տեղի չի ունեցել:

Կոմիտեի կողմից դիտարկվող հարցն այն էր, թե «արդյոք Պլովդիվի դատարանների կողմից դիմումատուի ամուսնու նկատմամբ երկարաժամկետ պաշտպանիչ կարգադրություն [մեկ տարի ժամկետով] արձակելուց հրաժարվելը, ինչպես նաև կացարաններ չտրամադրելը Կողմ պետության՝ ընտանեկան բռնությունից դիմումատուին արդյունավետորեն պաշտպանելու պարտականության խախտում է»:¹¹⁵ Այն նշել է, որ բողոքարկման փուլում շրջանային դատարանը ստորին աստիճանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ, քանի որ տուժողը չի ապացուցել, որ «2007 թվականի սեպտեմբերի 21-ին ամուսնու կողմից իր վրա հարձակումը պարունակել է բռնության հատկանիշներ՝ դրանով ապացուցման բեռը թողնելով դիմումատուի վրա»:¹¹⁶ Կոմիտեն հիշեցրել է, որ գենդերային հիմքով բռնությունը «չի

112 Հաղորդագրություն թիվ 2/2003, CEDAW/C/36/D/2/2003, 9.3 պարբերություն:

113 Հաղորդագրություն թիվ 2/2003, CEDAW/C/36/D/2/2003, 9.4 պարբերություն:

114 Հաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 2.6 պարբերություն:

115 Հաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.4 պարբերություն:

116 Հաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.7 պարբերություն, նշելով, որ շրջանային դատարանը հայտարարել է. «... ներկայացված ձեռով հարձակվելն ամենաբնական չունի հայցվորի ֆիզիկական [անձեռնմխելիության] խախտման հետ կամ առնվազն այդպես ներկայացված չէ այստեղ եւ ոչ էլ [ապացույց գոյություն ունի]: Հարձակվելով որեւիցե մեկի վրա՝ կարող ես բռնություն գործադրել, սակայն միայն այն բանից հետո, երբ խախտվել են ոսնձգություն կատարելու որոշակի

սահմանափակվում այնպիսի բռնարարքներով, որոնցով պատճառվել է ֆիզիկական վնաս, այլև ներառում է այնպիսի բռնարարքներ, որոնցով պատճառվում է հոգեկան կամ սեռական վնաս կամ տառապանք, ցանկացած այդպիսի գործողություն, հարկադրանք կամ ազատությունից այլ կերպ զրկում» եւ գտել է, որ «երկու դատարաններն էլ ուշադրությունը բացառապես կենտրոնացրել են դիմումատուի կյանքին կամ առողջությանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն սպառնացող վտանգի եւ նրա ֆիզիկական անձեռնմխելիության հարցի վրա՝ անտեսելով նրա հուզական եւ հոգեբանական տառապանքները»:¹¹⁷

Կոմիտեն այնուհետեւ նշել է, որ դատարաններից եւ ոչ մեկը հաշվի չի առել գործով շարունակական բռնության նախապատմությունը եւ տուժողի վրա թողել է ապացուցման «չափազանց մեծ» բեռ՝ կիրառելով ապացուցման՝ «ողջամիտ կասկածից վեր» չափանիշը:¹¹⁸ Կոմիտեն ընդգծել է, որ «կարծրատիպավորումը բացասաբար է անդրադառնում կանանց՝ արդար դատաքննության իրավունքի վրա, եւ դատական իշխանությունը պետք է ցուցաբերի զգուշություն, որպեսզի ընտանեկան կամ գենդերային հիմքով բռնության վերաբերյալ կանխակալ գաղափարների հիման վրա չձեւավորվեն ոչ ճկուն չափանիշներ»:¹¹⁹ Այս առումով այն գտել է, որ.

պաշտպանիչ կարգադրություն ստանալու նպատակով տուժողին մեկամյա ժամկետ տալու այն հիմնավորումը, որ դա դատարանի անհապաղ միջամտությունն ապահովելու, այլ ոչ թե՛ զուգընկերների համատեղ կյանքը վերահսկելու համար է, հաշվի չի առնում գենդերային զգայունությունն այն առումով, որ դրանում արտացոլվում է այն կանխակալ գաղափարը, որ ընտանեկան բռնությունն ավելի շատ անձնական ոլորտին առնչվող մասնավոր հարց է, որը, որպես կանոն, չպետք է լինի պետության վերահսկողության ներքո:¹²⁰

Կոմիտեն նաեւ գտել է, որ որոշման հիմքում ընկած է ընտանեկան բռնության վերաբերյալ խտրական, կարծրատիպային պատկերացումը եւ որ քաղաքացիական գործերով դատարանի՝ ամուսնալուծության առնչությամբ կայացված որոշման մեջ առկա են «ամուսնական կյանքում կանանց դերի մասին ավանդական կարծրատիպեր»:¹²¹

Կոմիտեն այնուհետեւ գտել է, որ կացարանների չտրամադրմամբ խախտվել են 2-րդ հոդվածի «գ» եւ «ե» կետերը, որոնց համաձայն՝ պետությունները պարտավոր են «ապահովել կանանց անհապաղ պաշտպանությունը բռնությունից»:¹²² Ի վերջո, Կոմիտեն ընդունել է, որ տուժողը թողնվել է առանց պետության պաշտպանության եւ «դատական որոշումներով գենդերային հիմքով կարծրատիպերի վրա հիմնվելու հետեւանքով կրկին ենթարկվել է վիկտիմիզացիայի»:¹²³

սահմաններ»:

117 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.8, 9.9 պարբերություններ:

118 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.10 պարբերություն:

119 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.11 պարբերություն:

120 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.12 պարբերություն:

121 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.12 պարբերություն:

122 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.13 պարբերություն:

123 Չաղորդագրություն թիվ 20/2008, CEDAW/C/49/D/20/2008, 9.14 պարբերություն:

- Կարեն Թայագ Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների [Karen Tayag Vertido v. The Philippines]

Կարեն Թայագ Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների գործով¹²⁴ ԿԽՎԿ կոմիտեն կայացրել է որոշում այն մասին, որ Ֆիլիպինները չի կատարել տվյալ Թայագ Վերտիդոյի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցն ապահովելու իր պարտականությունը, ինչը ենթադրվում էր ԿԽՎԿ-ի 2-րդ հոդվածի «գ» կետով: 2-րդ հոդվածի «գ» կետով Կողմ պետություններից պահանջվում է «սահմանել կանանց իրավունքների իրավական պաշտպանություն՝ տղամարդկանց հետ հավասար պայմաններով, եւ իրավասու ներպետական ատյանների ու պետական այլ կառույցների օգնությամբ ապահովել կանանց արդյունավետ պաշտպանությունը խտրականության ցանկացած դրսեւորումից»:

Կոմիտեն գտել է, որ պետությունը հրաժարվել է տուժողին՝ Դավառ քաղաքի Դավառյի առեւտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրենին, ով բռնաբարվել է ավագ գործընկերոջ՝ Պալատի 60-ամյա նախագահի կողմից, տրամադրել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ ընթացակարգի զգալի ձգձգումների հետեւանքով, եւ դատավարության ընթացքում հիմնվելով գենդերային բազմաթիվ կարծրատիպերի ու մտացածին պատկերացումների վրա՝ դատարանը կայացրել է մեղադրյալին արդարացնող որոշում: ԿԽՎԿ կոմիտեն նշել է, որ մեղադրյալին արդարացնող որոշման հիմքում ընկած մի քանի սկզբունքներից մեկը, ըստ որի՝ «հեշտությամբ կարելի է բռնաբարության մեղադրանք ներկայացնել», ինքնին արդեն գենդերային կանխակալություն է»:¹²⁵

Գործով դատավորը արդարացրել է մեղադրյալին՝ գտնելով, որ տուժողը պետք է հետ մղեր մեղադրյալին այն պահին, երբ իր գիտակցությունը վերականգնվել էր, եւ նա բռնաբարում էր իրեն: Նա [դատավորը] նաեւ թերահավատությամբ է վերաբերվել տուժողի ներկայացրած դեպքերի շարադրանքին՝ կասկածի տակ դնելով այն հանգամանքը, որ մեղադրյալը կարող էր ունակ լինել սերմնաժայթքման, քանի որ նա 60-ն անց էր: Տուժողը պնդել է, որ բռնաբարվելուց հետո պետության կողմից կրկին ենթարկվել է վիկտիմիզացիայի: Ընդհանուր առմամբ իր որոշման մեջ Կոմիտեն ընդգծել է հետեւյալը.

կարծրատիպավորումը բացասաբար է անդրադառնում կանանց արդար եւ անկողմնակալ դատաքննության իրավունքի վրա, եւ դատարանները պետք է զգուշություն ցուցաբերեն, որպեսզի, միայն հիմնվելով բռնաբարության տուժողի կամ խտրականության զոհի վերաբերյալ առկա կանխակալ գաղափարների վրա, չստեղծեն ոչ ճկուն չափանիշներ՝ կապված նրա հետ, թե ինչպիսին պետք է լինեն, կամ ինչ պետք է անեն կանայք եւ աղջիկները, երբ բախվում են բռնաբարության իրավիճակի»:¹²⁶

Կոմիտեն գնահատել է «դատարանի կողմից գործը քննելիս գենդերային խնդիրները հաշվի առնելու մակարդակը»:¹²⁷ Այն գտել է, որ տուժողի կողմից ներկայացված դեպքերի շարադրանքի արժանահավատությունը գնահատելիս ազգային դատարանի որոշման վրա ազդեցություն են ունեցել բազմաթիվ կարծրատիպեր. այս իրավիճակում դիմումատուն չի արել այն, ինչն ակնկալվում էր խելամիտ եւ «փղեալական

124 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22):

125 ԿԽՎԿ հաղորդագրություն թիվ 18/2008, 2010 թվական, 8.5 պարբերություն:

126 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.4 պարբերություն:

127 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.4 պարբերություն:

տուժողից» կամ ինչը դատավորը համարում է կնոջ կողմից խելամիտ եւ իդեալական արձագանք բռնաբարության իրավիճակին, ինչն ակնհայտ է դառնում վճռից բերված հետեւյալ հատվածից.

«Այդ դեպքում ինչո՞ւ [տուժողը] չի փորձել դուրս գալ մեքենայից, երբ խլել է ղեկանիվը, իսկ մեղադրյալը փորձել է արգելակել՝ պատին բախվելուց խուսափելու համար: Ինչո՞ւ նա դուրս չի եկել կամ գոնե օգնություն կանչել, երբ մինչեւ մոթելի ավտոկայանատեղի մտնելը դանդաղեցվել է մեքենայի ընթացքը: Ինչո՞ւ չի մնացել լոգասենյակում այն բանից հետո, երբ, սենյակ մտնելով, փակվել է այդտեղ: Ինչո՞ւ օգնություն չի կանչել, երբ լսել է, որ մեղադրյալը զրուցում է ինչ-որ մեկի հետ: Ինչո՞ւ դուրս չի վազել մոթելի ավտոկայանատեղիից, երբ ինքը պնդում է, որ կարող էր փախչել հյուրանոցի սենյակից, քանի դեռ մեղադրյալը դեռեւս ՄԵՐԿ էր եւ մահճակալի վրա զբաղվում էր ՁԵՌՆԱՇՆԱՐԺՈՒԹՅԱՄԲ: Ինչո՞ւ է համաձայնել գնալ մեղադրյալի մեքենայով այն բանից ՅԵՏՈ, երբ¹²⁸ նա ենթադրաբար բռնաբարել է իրեն, այն դեպքում, երբ նա որեւէ կերպ չի սպառնացել կամ ուժ չի գործադրել՝ հարկադրելու համար իրեն այդպես վարվել:¹²⁹

Կոմիտեն գտել է, որ՝

արական եւ իգական սեռականության վերաբերյալ կարծրատիպերին արված մի քանի հղումներն ավելի հիմնավոր են դարձնում ենթադրյալ հանցանք կատարողի, այլ ոչ թե տուժողի արժանահավատությունը: Այս առումով, Կոմիտեն մտահոգություն է հայտնում դատավորի եզրահանգումների առնչությամբ, ըստ որոնց՝ անհավատալի է, որ վաթսուներկու տղամարդն ունակ լինել սեմնաժայթքման այն դեպքում, երբ դիմումատուն դիմադրում էր սեռական հարձակմանը: Վճռում հաշվի առնված մյուս գործոնները, ինչպես օրինակ՝ դիմումատուի եւ մեղադրյալի՝ միմյանց ճանաչելու հանգամանքին տրված նշանակությունը, «գենդերային հիմքով մտացածին պատկերացումների եւ սխալ ընկալումների» մեկ այլ օրինակ են:¹³⁰

Կոմիտեն վճռել է, որ եթե տուժողը ֆիզիկական դիմադրություն չի ցույց տվել անցանկալի սեռական վարքագծին, ապա չպետք է ենթադրել, որ դրան համաձայնություն է տվել՝ «անկախ այն հանգամանքից, թե կատարողը սպառնացել է գործադրել կամ գործադրել է ֆիզիկական բռնություն»:¹³¹ Կոմիտեն գտել է՝ թե՛ իգական, թե՛ արական սեռականության վերաբերյալ այլ «գենդերային հիմքով մտացածին պատկերացումներ եւ սխալ ընկալումներ» ու կարծրատիպեր: Օրինակ՝ գործը քննող դատավորն իր արդարացնող որոշման մեջ մեծ կարեւորություն է տվել այն փաստին, որ մեղադրյալը եւ տուժողը ճանաչել են միմյանց եւ անհավանական է համարել, որ մեղադրյալը կարող է ունակ լինել սեմնաժայթքման այն դեպքում, երբ տուժողը ֆիզիկական դիմադրություն է ցույց տվել:¹³²

128 ԿԽՎԿ հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.5 պարբերություն:

129 ԿԽՎԿ հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.5 պարբերություն:

130 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.6 պարբերություն:

131 ԿԽՎԿ հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.5 պարբերություն:

132 ԿԽՎԿ հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.6 պարբերություն:

Այն [Կոմիտեն] եզրակացրել է, որ տկն Թայագ Վերտիդոն «դատավճռում հիմք ընդունված կարծրատիպերի եւ գենդերային հիմքով մտացածին պատկերացումների հետեւանքով կրկին ենթարկվել է վիկտիմիզացիայի»:¹³³ Այսպիսով, Կոմիտեն վճռել է, որ Ֆիլիպինները թույլ է տվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետի եւ 5-րդ հոդվածի «ա» կետի խախտում, որոնցով երաշխավորվում է հակաիրավական կարծրատիպավորումից ազատ լինելու իրավունքը:

- Կելլն ընդդեմ Կանադայի [Kell v. Canada]

Սեսիլիա Կելլը՝ բնիկ կանադացի, ով Կանադայի Զյուսիսարեւմտյան տարածքներում գտնվող Ռեյ-Էդգո համայնքից էր՝

ամուսնու կողմից ենթարկվել է բռնության, եւ իրավիճակն է՛լ ավելի է վատթարացել, երբ աշխատանքի է անցել եւ դարձել ֆինանսապես անկախ: Նրա զուգընկերը չափազանց խանդոտ է եղել եւ վերահսկել է նրա ֆինանսները, հետեւել, թե որտեղ է նա գտնվում, սպառնացել է նրան, արգելել կապ հաստատել ընտանիքի անդամների հետ, նրա նկատմամբ բազմիցս կատարել է բռնի գործողություններ, փորձել է արգելել նրան աշխատել եւ ձեռնարկել է այնպիսի գործողություններ, որոնց հետեւանքով նա կորցրել է իր աշխատանքը: Նրան մի քանի անգամ ընդունել են Սթեյթի Ռաուս [McAteer House]՝ Յելոուսայֆում գտնվող բռնարարների ենթարկված կանանց համար նախատեսված ապաստան:¹³⁴

Բռնություն գործադրած անձը, առանց նրա գիտության, նրան գրկել է իրենց համատեղ սեփականություն համարվող տան սեփականության իրավունքից, քանի որ այդ ժամանակ նա [բռնություն գործադրած անձը] եղել է բնակարանային տնտեսության վարչության խորհրդի անդամ: Առանց իր թույլտվության աշխատանքի անցնելուց հետո զուգընկերը հարկադրաբար հեռացրել է նրան տանից:

Տուժողը դատական վարույթ է հարուցել 1995 թվականին՝

փոխհատուցում պահանջելով ոտնձգությունների, ծեծի, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ահաբեկման, գույքի նկատմամբ ոտնձգության, իր տունն օգտագործելու իրավունքից զրկելու եւ դրա հետեւանքով վարձավճարի ու այլ ծախսերի վճարման համար: Նա նաեւ ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր զուգընկերը տունը ձեռք է բերել խարդախությամբ, եւ այդ հարցում նրան օգնել ու օժանդակել է Զյուսիսարեւմտյան տարածքների կառավարությունը:¹³⁵

Նրան ներկայացրել են իրավաբանական օգնություն ցույց տվող մի քանի իրավաբաններ: Պատճառը եղել է նրանց փոփոխվող աշխատանքները, բնակության վայրերը, ինչպես նաեւ այն, որ նրանք չէին ներկայացնում իր շահերը: Գործերը կարճվել են «դատավարական գործողությունները հայցվորի կողմից չկատարվելու» հիմքով, եւ դատական ծախսերը կազմել են մոտ 6 000 կանադական դոլար: Նա [տուժողը] բողոքել է, որ չնայած այն հանգամանքին, որ 10 տարի շարունակ իրեն ներկայացրել են

իրավաբանական ծառայությունների խորհրդի մի քանի իրավաբանները չեն գործել իր ցուցումներին համահունչ: Նա պնդում է, որ հաշտության համաձայնության շուրջ բանակցությունները վարվել են առանց իր համաձայնության եւ իր ցուցումներին հակառակ: Նա կարծում է, որ իր կողմից նշված հաշտության համաձայնությունից հրաժարվելու հետեւան-

133 Զաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.8 պարբերություն:

134 Զաղորդագրություն թիվ 19/2008, CEDAW/C/51/D/19/2008, 2.4 պարբերություն:

135 Զաղորդագրություն թիվ 19/2008, CEDAW/C/51/D/19/2008, 2.7 պարբերություն:

քով հրաժարվել են հետագայում իրեն իրավաբանական օգնություն ցույց տալուց, եւ նա ստիպված է եղել ինքնուրույն ներկայացնել իր շահերը:¹³⁶

Կոմիտեն գտել է, որ տարբերակումն այն հիմքով, որ տուժողը «բնիկ է, ընտանեկան բռնությունից տուժած կին», խոցելի անձ, խաչաձեւ խտրականության դրսեւորում է:¹³⁷ Այն նշել է. «Կողմ պետությունները պետք է օրենքով ճանաչեն եւ արգելեն խտրականության այդպիսի խաչաձեւ դրսեւորումները եւ դրանց՝ վերոնշյալ կանանց վրա ունեցած բարդ ու բացասական ազդեցությունը»:¹³⁸ Այն գտել է, որ «այդպիսի խախտումն ունեցել է նրա՝ սեփականության իրավունքների իրականացումը խաթարող ազդեցություն»:¹³⁹ Այն նշել է, որ 2-րդ հոդվածի «ե» կետով պետություններից պահանջվում է ապահովել կանանց նկատմամբ խտրականության դրսեւորումների գործնականում վերացումը, որը ներառում է բողոքները ներկայացնելու հնարավորության ընձեռում եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորում: Կոմիտեն նշել է նաեւ, որ ստիպված լինելով մի քանի անգամ փոխել իրավաբաններին՝ տուժողն ընտանեկան բռնության եւ գույքային պահանջների մասով կրել է «լուրջ վնաս»:

- Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի [Yildirim v. Austria]

Ֆաթիմա Յիլդիրիմը եւ նրա ամուսինը՝ Իրֆան Յիլդիրիմն ամուսնացել են 2001 թվականին: Նախկին ամուսնությունից Ֆաթիման ուներ երեք չափահաս երեխա. Մելիսան ծնվել էր այս ամուսնությունից եւ հինգ տարեկան է եղել, երբ տեղի են ունեցել դեպքերը: 2003 թվականի հուլիսին Թուրքիա կատարած այցից վերադառալով՝ զույգը վիճել է, եւ Իրֆանը սպառնացել է սպանել Ֆաթիմային: Մեկ ամիս անց՝ օգոստոսին, նա կրկին սպառնացել է սպանել Ֆաթիմային: Ֆաթիման եւ Մելիսան տեղափոխվել են ապրելու իր դստեր մոտ: Մտածելով, որ ամուսինը գտնվում է աշխատավայրում, Ֆաթիման վերադարձել է իր բնակարան՝ իրերը վերցնելու նպատակով: Այդ ընթացքում ներս է մտել Իրֆանը, բռնի գործողություններ է կատարել նրա նկատմամբ եւ սպառնացել սպանել նրան: Նա այդ մասին դաշնային ոստիկանություն հաղորդում է ներկայացրել: Ոստիկանությունն արձակել է կարգադրություն, որով արգելվել է նրան վերադառնալ տուն, եւ դիմել է դատախազին՝ նրան կալանավորելու միջնորդությամբ: Դատախազը մերժել է այդ միջնորդությունը: Ոստիկանությունը Ֆաթիմային ուղեգրել է ընտանեկան բռնության դեպքերի միջամտության կենտրոն:

Երկու օր անց միջամտության կենտրոնի աջակցությամբ Ֆաթիման իր եւ դստեր անունից ձեռք է բերել դատական արգելք սահմանող կարգադրություն: Այդ նույն օրը՝ աշխատանքից հետո, Իրֆանը հետապնդել է նրան, երբնադուրս է եկել աշխատավայրից, եւ [Ֆաթիման] զանգել է ոստիկանություն: Ավելի ուշ Իրֆանը սպառնացել է Ֆաթիմայի չափահաս որդուն: Հաջորդ օրը Ֆաթիմայի աշխատավայրում Իրֆանը սպառնացել է սպանել նրան: Մինչ կժամաներ ոստիկանությունը, նա հեռացել է: Ոստիկանությունը դիմել է նրան՝ վերադառնալու պահանջով, եւ նրա հետ անձամբ խոսել են: Այդ երեկո ոստիկանությունը խոսել է նրա հետ՝ զանգահարելով նրա բջջային հեռախոսին այն բանից հետո, երբ նա կրկին սպառնացել է Ֆաթիմային եւ նրա որդուն: Երկու օր անց Իրֆանը եկել է Ֆաթիմայի աշխատավայր եւ սպառնացել է սպանել նրան: Երկու օր անց Ֆաթիման սպառնալիքների վերաբերյալ պաշտոնական հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, եւ ոստիկանությունը դիմել է դատախազին՝ Իրֆանին

136 Հաղորդագրություն թիվ 19/2008, CEDAW/C/51/D/19/2008, 2.13 պարբերություն:

137 Հաղորդագրություն թիվ 19/2008, CEDAW/C/51/D/19/2008, 10.2, հղում կատարելով թիվ 28 ընդհանուր առաջարկությանը:

138 Հաղորդագրություն թիվ 19/2008, CEDAW/C/51/D/19/2008, 10.2 պարբերություն:

139 Հաղորդագրություն թիվ 19/2008, CEDAW/C/51/D/19/2008, 10.2 պարբերություն:

կալանավորելու պահանջով: Դատախազը մերժել է այդ դիմումը: Երկու շաբաթ անց Ֆաթիման ամուսնալուծության հայց է ներկայացրել: Մեկ շաբաթ անց Իրֆանի նկատմամբ արձակվել է ամուսնալուծության վարույթի ընթացքում շփումն արգելելու մասին կարգադրություն, որով նրան երեք ամսով արգելվել է կապ հաստատել իր զավակի՝ Մելիսայի հետ: Տասն օր անց Իրֆանը հետեւել է Ֆաթիմային աշխատավայրից մինչեւ տուն եւ մահացու դանակահարել է նրան: Նա ձերբակալվել է մեկ շաբաթ անց, երբ փորձում էր մուտք գործել Բուլղարիա եւ այժմ ցմահ ազատազրկված է:

ԿԻՎԿ Կոմիտեն ընդգծել է պետությունների՝ պատշաճ բարեխնություն ցուցաբերելու պարտականությունները, որոնցով նրանք «պատասխանատվություն են կրում մասնավոր արարքների համար, եթե նրանք չեն գործել պատշաճ բարեխնությամբ՝ իրավունքների խախտումները կանխելու համար կամ չեն քննում եւ պատժում բռնարարքները, ինչպես նաեւ փոխհատուցում տրամադրելու համար»:¹⁴⁰ Այս առումով այն ընդգծել է, որ թեեւ պետությունը ստեղծել է ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու համապարփակ համակարգ, սակայն առանձին կանանց իրավունքների՝ գործնականում իրականացման համար «քաղաքական կամքը, որն արտահայտված է Ավստրիայի վերոնշյալ համապարփակ համակարգում, պետք է դրսևորվի պետական դերակատարների կողմից»:¹⁴¹ Մասնավորապես այն գտել է.

փաստերով նկարագրվում է մի իրավիճակ, որը չափազանց վտանգավոր է եղել Ֆաթիմա Յիլդիրիմի համար եւ որի մասին գիտեին կամ պետք է իմանային Ավստրիայի իշխանությունները. հաշվի առնելով սա՝ դատախազը չպետք է մերժեր ոստիկանության՝ Իրֆան Յիլդիրիմին ձերբակալելու եւ նրան կալանքի տակ պահելու վերաբերյալ միջնորդությունները»:¹⁴²

Ի պատասխան պետության կողմից բերված այն փաստարկին, որ այդ ժամանակ ձերբակալման մասին որոշումը թվում էր «չափազանց կտրուկ քայլ», Կոմիտեն կրկին նշել է «Ա.Թ.-ն ընդդեմ Յունգարիայի» գործով արած իր ձեւակերպումը, ըստ որի՝ «բռնություն գործադրած անձի իրավունքները չեն կարող գերակայել կանանց կյանքի եւ ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ»:¹⁴³ Կոմիտեն գտել է, որ տեղի է ունեցել ԿԻՎԿ-ի 2-րդ հոդվածի «ա», «գ»-«զ» կետերի եւ 3-րդ հոդվածի խախտում:

140 Չաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, 12.1.1 պարբերություն:

141 Չաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, 12.1.2 պարբերություն:

142 Չաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, 12.1.4 պարբերություն:

143 Չաղորդագրություն թիվ 06/2005, CEDAW/C/39/D/6/2005, 12.1.5 պարբերություն:

2.2. ՉՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այս հատվածում համառոտ անդրադարձ է կատարվում զուգընկերոջ կողմից բռնության¹⁴⁴ եւ սեռական բռնության տարածվածությանը Հայաստանում եւ դրանց նկատմամբ վերաբերմունքին, որը մանրամասն կարելի է գտնել ՄԱԿԲՀ-ի 2016 թվականի «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» գեկոյցում: Այն տեսակի մեջ առաջին անգամն է անցկացվել Հայաստանում՝ նպատակ ունենալով տրամադրել ելակետային տվյալներ:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, կանանց նկատմամբ բռնության տարածվածության վերաբերյալ տվյալներ առկա չեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության մեծ մասը կազմում են զուգընկերների կողմից իրականացվածները եւ սեռական բռնությունը՝ տվյալները դեռեւս մնում են չափազանց կիրառելի:

2.2.1. ՉՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տես ձեռնարկի հավելվածներում "ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ 8 և 9":

Ինչպես բռնության տարածվածության, այնպես էլ դրա նկատմամբ վերաբերմունքի մասին պատկերացում կազմելու համար կարելի է հասկանալ այդպիսի բռնության գենդերային բնույթը, ինչպես նաեւ գենդերային այն կարծրատիպերը, որոնք նպաստում են դրա տարածվածությանը և խոչընդոտում տուժողների համար արդարադատության մատչելիությանը: Տվյալները, ի թիվս այլ գործոնների, տարանջատված են ըստ սեռի, բնակության վայրի եւ կրթության մակարդակի:

Չուզընկերոջ կողմից բռնության (ՉԲ) ձեւերը. Հարցման արդյունքում ստացված տվյալները հստակ ցույց են տվել, որ բռնության տարբեր ձեւերից ամենատարածվածը հոգեբանական բռնությունն է, որին հաջորդում են տնտեսական բռնությունը եւ ֆիզիկական բռնությունը: Ինչ վերաբերում է հոգեբանական բռնությանը, ապա տղամարդկանց հաղորդմամբ՝ դրա հետ կապված ամենատարածված արարքներն են կին զուգընկերոջը վիրավորելը կամ միտումնավոր ստիպելը, որ նա իրեն վատ զգա (49.4%), ինչպես նաեւ դիտավորյալ ահաբեկելը կամ վախեցնելը (10.1%): Ըստ կանանց՝ ամենատարածված արարքների թվին են դասվում վերոնշյալները (համապատասխանաբար՝ 43.6% եւ 9.2%), ինչպես նաեւ զուգընկերոջ կողմից ստորացումն այլ անձանց ներկայությամբ (9.8%):

Ինչ վերաբերում է տնտեսական բռնությանը, ապա դրա տեսակներից միայն մեկն է առավել տարածված, ինչը պարզ էր դառնում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց պատասխաններից (համապատասխանաբար՝ 19.3% եւ 19.5%), այն է՝ զուգընկերն արգելում է կնոջն աշխատել, աշխատանքի գնալ, առեւտուր անել կամ գումար վաստակել: Առավել տարածված է ֆիզիկական բռնության երկու տեսակ, որոնք, սակայն, զիջում են մյուս տեսակներին իրենց հաճախականությամբ: Դրանք են՝

¹⁴⁴ Ինչպես նշվել է վերելում, «զուգընկերոջ կողմից բռնություն» եզրույթով նկարագրվում է ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հետամուտ լինելը եւ հոգեբանական ագրեսիան (այդ թվում՝ հարկադրանքը) ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից:

տղամարդու ապտակելն իր կին զուգընկերոջը կամ նրան վնասելու նպատակով որեւէ բան նետելը (12.9% տղամարդիկ եւ 10.3% կանայք են սա խոստովանում), նաեւ՝ հրելը կամ քաշքշելը (համապատասխանաբար՝ 11.4% եւ 7.5%):¹⁴⁵

Ինչ վերաբերում է սեռական բռնության տարածվածության վերաբերյալ տվյալներին, ապա հարցաշարը տրվել է միայն տղամարդկանց, եւ դրանք հիմնված են նրանց կողմից ինքնուրույն տրված հաղորդումների վրա: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բռնություն գործադրած անձանց կողմից սեռական բռնության մասին լիարժեք չի հաղորդվում մի քանի պատճառներով: Դրանց թվին են դասվում «հարկադրել» բառի ոչ ճիշտ ընկալումը, հատկապես մշտական զուգընկերոջ դեպքում, ինչպես նաեւ նույնիսկ անանուն հանդես գալու պայմանով այս տեսակի բռնության գործադրումն ընդունելու ցանկություն չունենալը: Ուսումնասիրությունն այս առնչությամբ ցույց է տվել, որ «թեւե մի քանի կին զուգընկեր ունենալը կարող է հնարավոր համարվել տղամարդկանց (հատկապես երիտասարդ տղամարդկանց) կողմից, եւ ներկայիս հայ հասարակության լայն շրջանակներում դա կարող է համարվել որպես առնականության դրսեւորում, կնոջը սեռական հարաբերություն ունենալուն հարկադրելը չի ընդունվում ո՛չ լայն հասարակության, ո՛չ հենց իր՝ տղամարդու կողմից՝ որպես տղամարդավարի արարք»: Զետեւաբար, տղամարդիկ չեն ցանկանում նույնիսկ իրենք իրենց խոստովանել, որ սեռական հարաբերությունների ժամանակ դիմում են հարկադրանքի:¹⁴⁶

Մասնակիցներին բաժանվող նյութ՝ ՄԱԲԶ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», էջ 68, 69, 216, 217. աղյուսակներ

Այն տղամարդկանց տոկոսը, որոնք իրենց կին զուգընկերոջը ենթարկել են հոգեբանական բռնության	53.3%	Այն կանանց տոկոսը, որոնք հոգեբանական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ զուգընկերոջ կողմից	45.9%
Այն տղամարդկանց տոկոսը, որոնք տնտեսական բռնության են ենթարկվել իրենց կին զուգընկերոջը	20.8%	Այն կանանց տոկոսը, որոնք տնտեսական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ զուգընկերոջ կողմից	21.3%
Այն տղամարդկանց տոկոսը, որոնք ֆիզիկական բռնության են ենթարկվել իրենց կին զուգընկերոջը	17.4%	Այն կանանց տոկոսը, որոնք ֆիզիկական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ զուգընկերոջ կողմից	12.5%
Սեռական բռնության տոկոսը (տղամարդկանց կողմից կատարված եւ հաղորդված)		14.6%	
Ենթարկվել են ֆիզիկական բռնության առնվազն մեկ տեսակի (այն կանանց տոկոսը, որոնք ինքնուրույն լրացվող հարցաշարի միջոցով հաղորդել են, որ վերջին 3 ամսվա ընթացքում տանից դուրս ենթարկվել են ֆիզիկական բռնության՝ միջին ծանրության եւ ծանրագույն արարքների)		3.7%	
Այն տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք հաղորդել են, որ ցուցաբերել են վերահսկողական վարքագիծ		95.5%	

Ըստ ընտանեկան կարգավիճակի տարբերակված տվյալները ցույց են տվել, որ զուգընկերոջ կողմից բռնության մասին հաղորդողների շրջանում ամենամեծ տոկոսն են կազմում բաժանված եւ ամուսնալուծված կանայք: Միջին հաշվով, այն 2-3

145 ՄԱԲԶ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 43:
 146 ՄԱԲԶ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 67:

անգամով (որոշ դեպքերում՝ նույնիսկ ավելի շատ) գերազանցում է մյուս խմբերի կանանց տոկոսը՝ բռնության բոլոր ձևերի դեպքում եւ համեմատած կանանց մյուս բոլոր խմբերի հետ: Սա անակնկալ չէ, քանի որ կանանց շրջանում զուգընկերոջ կողմից բռնությունը հաճախ բաժանության եւ (կամ) ամուսնալուծության պատճառ է դառնում: Այս տարբերությունը հատկապես զգալի է ֆիզիկական բռնության տարածվածության դեպքում: Այս տվյալները զուգորդվում են այն տվյալների հետ, որոնք ցույց են տալիս, որ բռնության գրեթե բոլոր արարքների կատարման ամենամեծ տոկոսն են կազմում ամուսնալուծված կամ բաժանված տղամարդիկ:¹⁴⁷

Ինչ վերաբերում է բնակության վայրին, ապա հարցման արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս հետեւյալ հստակ պատկերը. զուգընկերոջ կողմից բռնությունից տուժած անձանց կայուն բարձր տոկոսը կազմում են Երևանի բնակիչները, մինչդեռ ամենացածր տոկոսը կազմում են գյուղերի բնակիչները:¹⁴⁸ Ըստ զբաղվածության կարգավիճակի տարբերակված տվյալները ցույց են տվել, որ չգրանցված աշխատող կանայք մշտապես կազմում են տուժողների ամենամեծ տոկոսը՝ ֆիզիկական բռնության բոլոր ձևերի, տնտեսական շահագործման եւ հոգեբանական բռնության դեպքերում:¹⁴⁹

Ոսումնասիրության մեկ այլ կարելուր եզրահանգումն այն է, որ կանայք **լիարժեք չեն հաղորդում** հոգեբանական եւ ֆիզիկական բռնության վերաբերյալ: Տվյալները հստակորեն ցույց են տալիս, որ դեմ առ դեմ հարցազրույցի դեպքում շատ կին հարցվածներ չեն պատմել զուգընկերոջ բռնության մասին՝ չնայած այն հանգամանքին, որ հարցազրույցի ընթացքում որեւէ երրորդ անձ ներկա չի եղել, եւ երաշխավորվել է հարցազրույցի գաղտնիությունը: Անանուն լրացված՝ ինքնուրույն լրացման հարցաշարերի տվյալներով հաստատվում է այս եզրահանգումը, քանի որ ֆիզիկական բռնության ենթարկված լինելու մասին հաղորդող կանանց տոկոսն Եականորեն ավելի բարձր է (գրեթե կրկնակի անգամ), քան դեմ առ դեմ հարցազրույցի հարցաշարերի միջոցով ֆիզիկական բռնության վերաբերյալ հաղորդող կանանց թիվը՝ 22.4%-ն ընդդեմ 12.5%-ի:¹⁵⁰ Այլ կերպ ասած՝ տղամարդ զուգընկերոջ կողմից կատարված ֆիզիկական բռնության տարածվածության վերաբերյալ դեռեւս լիարժեք չի հաղորդվում: Եականորեն, նույն կանանց կողմից միեւնույն բռնարարքի մասին հաղորդման երկու եղանակների արդյունքների միջեւ հակասությունը նույնպես կախված է արարքի վտանգավորությունից: Այս հակասությունը, որը կարող է կոչվել «(տարածվածություն) լիարժեք չհաղորդված դեպքերի բաց», մեծանում է՝ արարքի ծանրությանը եւ վտանգավորությանը զուգահեռ:¹⁵¹

147 ՄԱԲՅ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 58:

148 ՄԱԲՅ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 58:

149 ՄԱԲՅ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 58:

150 ՄԱԲՅ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 48, 59, 60, որտեղ նշվում է, որ այն դեպքում, երբ կին հարցվածները հարցաշարը լրացնում էին անանուն եւ ինքնուրույն, ՍԶԲ-ի մասին հաղորդելու տոկոսը կազմում էր առնվազն 1.5 եւ սովորաբար 2 կամ ավելի անգամ բարձր տոկոս, քան հարցազրույցի դեպքում կախված բռնության ձեւից:

151 ՄԱԲՅ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 60:

Երբեւէ զուգընկեր ունեցած այն կանանց տոկոսը, որոնք հաղորդել են իրենց տղամարդ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության հետեւյալ արարքներին ենթարկվելու մասին

	Հարցազրուցավարի հարցերին տրված պատասխանները	Ինքնուրույն լրացման հարցաշարի հարցերին տրված պատասխանները
	Երբեւէ զուգընկեր ունեցած այն կանանց տոկոսը, որոնք ենթարկվել են ֆիզիկական բռնության	Երբեւէ զուգընկեր ունեցած այն կանանց տոկոսը, որոնք ենթարկվել են ֆիզիկական բռնության
Բռնարարքները		
	N=767	N=634
Չուզընկերն ապտակել է նրան կամ որեւէ իր նետել՝ նրան վնասելու նպատակով	10.3%	14.1%
Չուզընկերը հրել կամ քաշքշել է նրան	7.5%	16.5%
Չուզընկերը բռունցքով կամ վնասող որեւէ իրով հարվածել է նրան	4.6%	9.3%
Չուզընկերը խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ այրել է նրան	2.8%	7.1%
Չուզընկերը սպառնացել է օգտագործել կամ իրականում նրա նկատմամբ գործադրել է հրազեն, դանակ կամ այլ զենք	0.6%	5.9%
Այն կանանց տոկոսը, որոնք ենթարկվել են ֆիզիկական բռնության իրենց տղամարդ զուգընկերոջ կողմից	12.5%	22.4%

Այն տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք ենթարկվել են ֆիզիկական բռնության (տարածվածությունը կյանքի ընթացքում)	49.3%
Այն տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք ֆիզիկական բռնության են ենթարկվել մանկության շրջանում (մինչեւ 18 տարեկանը)	27.2%
Այն տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք մանկության շրջանում հոգեբանական բռնության են ենթարկվել	10.9%
Այն տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք մանկության շրջանում սեռական բռնության են ենթարկվել	3.5%
Այն տղամարդ հարցվածների տոկոսը, որոնք մանկության շրջանում արհամարհված եւ լքված են եղել	0.9%

Տղամարդիկ նույնպես ենթարկվում են բռնության: Բռնության ենթարկվելը բռնությունն արդարացնող առնականության հայրիշխանական մոդելի պահպանման պատճառներից մեկն է: Այս խնդրի վերաբերյալ տվյալները շատ մտահոգիչ են:

Տվյալները հստակ ցույց են տալիս, որ վիկտիմիզացիայի փաստը եւ ֆիզիկական բռնության ենթարկվելը խրախուսում է տղամարդկանց բռնի եւ ոտնձգություն պարունակող վարքը, որն ուղղված է իրենց կին զուգընկերների նկատմամբ: Անմիջական կապ գոյություն ունի տղամարդկանց նկատմամբ գործադրված բռնության եւ նրանց կողմից՝ իրենց կին զուգընկերոջ նկատմամբ գործադրված ֆիզիկական բռնության միջեւ: Փաստորեն, այս կատեգորիային պատկանող՝ իրենց զուգընկերոջը ֆիզիկական բռնության ենթարկած տղամարդկանց տոկոսը 1.5-2 անգամ ավելի բարձր է, քան ֆիզիկական բռնության չենթարկված տղամարդկանց տոկոսը: Ուսումնասիրության արդյունքում եկել են այն եզրահանգման, որ բռնությունը ծնում է բռնություն, եւ որ զուգընկերոջ բռնությունը կտրուկ նվազեցնելու արդյունավետ միջոցներից մեկը տղամարդկանց բռնությունից պաշտպանելն է:¹⁵²

2.2.2. ՉՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌՎԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՉԲ-ի եւ սեռական բռնության նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ տվյալներին անդրադարձը նպատակ ունի ընդգծելու Հայաստանին բնորոշ՝ հասարակական կանխակալ կարծիքը, որը կարող է խոչընդոտել բռնության մասին հաղորդում տալը, ազդեցություն ունենալ այն մեթոդների վրա, որոնցով իրավապահ եւ մյուս մարմինները վարվում են տուժողների հետ, ինչպես նաեւ առանձին գործերում ազդեցություն ունենալ դատարանի հիմնավորումների վրա:

Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ ընտանիքի միասնությունը պահպանելու համար	35.7%
Լինում են դեպքեր, երբ կինն արժանի է, որ իրեն ծեծեն	27.7%
Եթե կինը դավաճանում է տղամարդուն, ապա վերջինս կարող է հարվածել նրան	55.4%
Տղամարդը կարող է հարվածել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեռական հարաբերություն ունենալ	5.1%
Այն հարցվածների տոկոսը, որոնք արդարացնում են զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնությունը	70.3%

Աղյուսակ Ա

Հատկանշական է, որ հարցվածներից առավել մեծ տոկոսը կազմում են նրանք, որոնք կնոջ կողմից տղամարդուն դավաճանելու դեպքում արդարացնում են զուգընկերոջ կողմից բռնությունը՝ 55.4%: Չուգընկերոջ կողմից բռնություն ներառող դեպքերի նկատմամբ այս վիճակագրության կիրառման մասին նշվել է ՄԱԲՀ-ի ուսումնասիրության մեջ, որի համաձայն՝

Սաբուրովի նվազարմանալիչ է, քանի որ երբեկնոջ (ենթադրյալ) դավաճանության պատճառով զուգընկերոջ բռնության մասին սոցիալական ցանցերում դատական գործեր են հանրայնացվում եւ քննարկվում, դեպքերի մեծ մասում քննարկման մասնակիցներն արդարացնում են բռնությունը՝ ասելով, թե կինն ու նրա սիրեկանն ավելի դաժան վերաբերմունքի են արժանի (բառացիորեն պնդելով, որ «մեղավորներն» արժանի են մահվան),

152 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 81, 82, որտեղ առաջարկվում է ջանքերը ուղղել գենդերային հիմքով բռնության դեմ պայքարին՝ լայն իմաստով:

Եւ որ կատարողը, ըստ էության, անմեղ է եւ չպետք է ենթարկվի քրեական հետապնդման:¹⁵³

Հետեւաբար, չնայած բռնարարքների կատարման, այդ թվում՝ անհավատարմության որեւէ արդարացում չկա՝ այդպիսի բռնության ընդհանուր սոցիալական ընկալումը կարող է խոչընդոտել, որ տուժողն այդ մասին խոսելու որոշում կայացնի՝ վախենալով, որ՝ ա) բռնության համար նա կմեղադրվի իր ընտանիքի անդամների եւ հասարակության կողմից. բ) նրա համար արդարադատության մատչելիությունը կմերժվի, քանի որ արդարադատության ոլորտի դերակատարները կհսում են այդ մոտեցումը եւ պատշաճորեն չեն պատժի բռնությունը. կամ գ) ինքը՝ տուժողն էլ կարծում է, որ արժանի է բռնության եւ, հետեւաբար, հանդես չի գա մեղադրանքով:

ՄԱԲՀ-ի ուսումնասիրության մեջ այնուհետեւ նշվել է, որ հարցվածների կողմից զուգընկերոջ կողմից բռնությունն արդարացվում է ընտանիքի հետ կապված մտահոգությունների պատճառով՝ վկայակոչելով, որ 35.7%-ը կարծում է, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ ընտանիքի միասնությունը պահպանելու համար: Հակասական է համարվում այն փաստը, որ մի կողմից Հայաստանում ընտանիքը դիտարկվում է որպես գլխավոր արժեք, իսկ սոցիալական միավորի կենսունակությունը հիմնված է բռնության վրա: Այս առնչությամբ նշվում է, որ «Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ ամուսնություն ավարտվում է ամուսնալուծությամբ, եւ ֆիզիկական բռնությունը (կնոջը ծեծելը) համարվում է ամուսնալուծությունների աճի պատճառներից մեկը», եւ որ ամուսնալուծությունների թիվը 2013-ից 2014 թվականներն ընկած ժամանակահատվածում աճել է 20%-ով:¹⁵⁴

Այլ կերպ՝ Հայաստանում բռնության նկատմամբ վերաբերմունքի համաձայն՝ առավելությունն ավելի շատ տրվում է ընտանիքի միասնությանը, քան առողջությանը, իրավունքներին, ընտանիքի անդամներից որեւէ մեկի՝ առավել հաճախ կանանց բարեկեցությանը: Այս «ընտանիք» հասկացությունը պահպանվում է հիմնականում կանանց հաշվին, որոնցից ակնկալվում է չօգտվել իրենց իրավունքներից եւ հանդուրժել վատ վերաբերմունքը՝ հայրիշխանությունը պաշտպանելու նպատակով: Ինչպես նշվել է ՄԱԲՀ-ի ուսումնասիրության մեջ, ամուսնալուծությունների թվի աճն արտացոլում է այս մոտեցման անկայունությունը:

Հարցեր	Տղամարդիկ	Կանայք
Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ ընտանիքի միասնությունը պահպանելու համար	44.6%	27.8%
Լինում են դեպքեր, երբ կինն արժանի է, որ իրեն ծեծեն	35.2%	21.0%
Եթե կինը դավաճանում է տղամարդուն, ապա վերջինս կարող է հարվածել նրան	60.9%	50.5%
Տղամարդը կարող է հարվածել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեռական հարաբերություն ունենալուց	5.8%	4.5%
Այն հարցվածների տոկոսը, որոնք արդարացնում են զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնությունը	78.6%	62.9%

Աղյուսակ Բ

Աղյուսակ Բ-ի տվյալները, Աղյուսակ Ա-ի տվյալների համեմատ, տարբերակված են ըստ սեռի: Վիճակագրական առումով նշանակալի փոխկապակցվածություն է նկատվում հարցվածների սեռի եւ կանանց նկատմամբ բռնությունն արդարացնելու

153 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 85:

154 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 86:

հետ կապված նրանց վերաբերմունքի միջեւ, որտեղ կանայք այդքան էլ հակված չեն արդարացնելու զուգընկերոջ բռնությունը: Ավելին, յուրաքանչյուր երեք տղամարդ հարցվածներից մեկը (35.2%) համաձայնել է այն պնդման հետ, որ որոշ դեպքերում կինն արժանի է, որ իրեն ծեծեն. յուրաքանչյուր հինգ կին հարցվածներից մեկն է համաձայնել դրա հետ (21.0%): Նմանապես, այդ պնդմանը խստորեն համաձայնող տղամարդ հարցվածների տոկոսը երեք անգամ ավելի էր (15.1%), քան՝ կին հարցվածներինը (5.9%): Ինչպես նշվել է ՄԱԲՀ-ի ուսումնասիրության մեջ՝ «Տղամարդ հարցվածները կին հարցվածներից ավելի շատ են հակված ակնկալելու, որ կանայք համապատասխան են հայրիշխանական նորմերին»:¹⁵⁵

Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

<i>Եթե կինը ենթարկվում է բռնաբարության, ապա սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ այդ իրավիճակում հայտնվելու համար:</i>	32.2%
<i>Բռնաբարության որոշ դեպքերում կանայք իրականում ցանկանում են, որ դա տեղի ունենա:</i>	35.8%
<i>Եթե կինը ֆիզիկապես չի դիմադրում, ապա իրականում չենք կարող պնդել, որ դա բռնաբարություն է եղել:</i>	59.8%
<i>Ցանկացած բռնաբարության դեպքում պետք է պարզել, թե արդյոք տուժողը թեթեւ վարքի տեր չ'է կամ չ'ունի վատ համբավ:</i>	62.7%
<i>Այն հարցվածների տոկոսը, որոնք արդարացնում են բռնաբարությունը՝ համաձայնելով վերոնշյալ պնդումներից առնվազն մեկի հետ</i>	82.4%

Աղյուսակ Գ

ՄԱԲՀ-ի ուսումնասիրության մեջ բռնաբարության վերաբերյալ հարցվածների մոտեցումները որակվել են որպես «ապշեցուցիչ»՝ առանց չափազանցության: Ավելին, հետաքրքիր է նշել, որ մեկ կամ մի քանի պատճառներով բռնաբարությունն արդարացնող հարցվածների տոկոսը (82.4%) շատ ավելի բարձր է եղել, քան այն հարցվածների տոկոսը, որոնք արդարացրել են կանանց նկատմամբ ֆիզիկական բռնությունը (70.3%): Այնտեղ նշվել է.

Փաստորեն, հարցվածների մեկ երրորդից գրեթե երկու երրորդը հակված են տուժողին մեղադրելու առանձին վերցված պատճառներից որեւէ մեկով, իսկ հարցվածների 82.4%-ն իրականում արդարացնում են բռնաբարությունը՝ համաձայնվելով առնվազն մեկ պնդման հետ:¹⁵⁶

Ուսումնասիրության արդյունքում հետազայում պարզ է դարձել, որ ուշադրությունը շեղվում է հանցանք կատարողի մեղավորությունից եւ բռնաբարության անընդունելիությունից դեպի կնոջը մեղադրելուն:¹⁵⁷ Արտահայտված վերաբերմունքով արհամարհվում կամ պարզունակության է հասցվում այն փաստը, որ բռնաբարությունը տուժողի համար տրավմատիկ փորձառություն է: Ուսումնասիրության համաձայն՝

155 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 87:

156 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 109, որի համաձայն՝ «Տվյալները նաեւ հստակ ցույց են տալիս, որ այդ հարցվածների մեծ մասը համաձայն էր երկու կամ ավելի պնդումների հետ»:

157 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 109, 118, որի համաձայն՝ «Հարցման արդյունքում ստացված արդյունքները հստակ ցույց են տալիս, որ յուրաքանչյուր 5 հարցվածներից 4-ը համաձայն են բռնաբարությունն արդարացնող առնվազն մեկ պնդման հետ, մինչդեռ հարցվածների մոտ մեկ երրորդից գրեթե երկու երրորդը հակված են մեղադրելու տուժողին՝ առանձին վերցված պատճառներից մեկի հիման վրա»:

Այդ հարցվածները չգիտեն կամ չեն ցանկանում ընդունել այն պարզ ճշմարտությունը, որ առանց փոխադարձ համաձայնության՝ ցանկացած սեռական գործողություն փաստացի բռնություն է, եւ որ այդպիսի հանգամանքներում սեռական հարաբերությունը համարվում է բռնաբարություն: Այլ կերպ ասած՝ այդ հարցվածների կարծիքով, եթե կինը չի համապատասխանում հայրիշխանական մշակութային նորմերին՝ լինելով «արժանապատիվ» եւ սեռական բնույթի հարձակման ենթարկվելու դեպքում իր «պատիվը» պաշտպանելու համար դաժան պայթար չի մղում, ապա նրան կարող են կասկածել կամ նույնիսկ մեղադրել տղամարդկանց «դրդելու» եւ «թեթեւաբար» լինելու կամ ինքն իրեն փորձանքի մեջ գցելու համար, հատկապես երբ նա չունի արական սեռի «պաշտպան»: ¹⁵⁸

Համաձայնությունը՝ որպես սեռական հարաբերությունների հիմք ընդունելու ցանկություն չունենալն արդարադատության համակարգի դերակատարների կողմից սեռական բռնության հարցը միջազգային չափանիշներին եւ ԵՄ նախադեպային իրավունքին համապատասխան դիտարկելու գլխավոր խոչընդոտն է: Առաջին հերթին, այս սոցիալական մոտեցումները տուժողների համար համարվում են գլխավոր խոչընդոտ՝ սեռական բռնության մասին հաղորդում ներկայացնելու համար, քանի որ նրանց «արժանապատվությունը» ավելի շատ է դատապարտվելու, քան կատարողի արարքները: Երկրորդ, հայացքների հիմնական փոփոխությունը պետք է տեղի ունենա ապացույցների հավաքման գործընթացում եւ քրեական հետապնդման մեթոդներում՝ ավելի շուտ համաձայնության բացակայության, քան ֆիզիկական ուժի եւ տուժողի դիմադրության տեսանկյունից սեռական բռնության դեպքը քննելու համար: Ինչպես ավելի մանրամասն ներկայացված է ստորեւ, այս մոտեցումները նաեւ հստակ արտացոլված են Հայաստանի դատական ակտերում:

Հարցեր	տղամարդիկ	կանայք
Եթե կինը ենթարկվում է բռնաբարության, ապա սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ այդ իրավիճակում հայտնվելու համար:	40.9%	24.2%
Բռնաբարության որոշ դեպքերում կանայք իրականում ցանկանում են, որ դա տեղի ունենա:	44.0%	28.6%
Եթե կինը ֆիզիկապես չի դիմադրում, ապա իրականում չենք կարող պնդել, որ դա բռնաբարություն է եղել:	61.3%	58.4%
Ցանկացած բռնաբարության դեպքում պետք է պարզել, թե արդյոք տուժողը թեթեւ վարքի տեր չէ՞ կամ չունի վատ համբավ:	64.4%	61.0%
Այն հարցվածների տոկոսը, որոնք արդարացնում են բռնաբարությունը՝ համաձայնելով վերոնշյալ պնդումներից առնվազն մեկի հետ	86.2%	78.9%

Աղյուսակ Դ

Ինչ վերաբերում է առաջին երկու պնդումներին, Աղյուսակ 8-ում ներկայացված է այն, որ բռնաբարության տուժողներին մեղադրող տղամարդիկ 1.5-2 անգամ ավելի էին, քան կանայք: Միեւնույն ժամանակ, չորս կին հարցվածներից մեկը մեղադրել է տուժողին: Վերջին երկու պնդումների դեպքում տղամարդ եւ կին հարցվածների

158 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում», 2016 թվական, էջ 109:

միջեւ տարբերությունը չնչին էր, քանի որ «երկու սեռի հարցվածներից կեսից ավելին հիմնականում արդարացնում են բռնաբարոդին, քանի որ մակերեսորեն են քննում բռնաբարության փաստը»:¹⁵⁹

Ընդհանուր առմամբ, չափազանց բարձր է այն տղամարդ էլ կին հարցվածների տոկոսը, որոնք համաձայն են բռնաբարությունն արդարացնող մեկ կամ մի քանի պնդումների հետ (համապատասխանաբար՝ 86.2% եւ 78.9%): Յետաբարձր է, որ, ի թիվս այլ գործոնների, ըստ կրթության մակարդակի եւ բնակության վայրի տվյալները տարբերակելիս կրթության մակարդակը ամենաէական ցուցիչն է եղել: Իմասական կրթություն ունեցողներից 82.6%-ը համաձայնվել են այդ պնդման հետ՝ համեմատած բարձրագույն կրթություն ունեցողների, որոնց տոկոսը կազմել է 57.2%: Տուժողներին մեղադրող գյուղաբնակներն ավելի մեծ տոկոս են կազմում, քան՝ քաղաքի բնակիչները:

Այսպիսով, ՄԱԲՀ-ի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գենդերային կարծրատիպերը համընդհանուր երեւոյթ են, եւ որ

հայրիշխանական եւ «ավանդական» սոցիալական խիստ նորմերը եւ առնականության, կանացիության, գենդերային հավասարության, սեռականության, ընտանիքի անդամների, այդ թվում՝ երեխաների հետ հարաբերությունների, տնային գործերի բաշխման, ինչպես նաեւ կանանց նկատմամբ բռնության, զուգընկերոջ կողմից բռնության եւ հասակակիցների կողմից բռնության վերաբերյալ ընկալումները դեռ բավականին տարածված են հայ հասարակության մեջ:¹⁶⁰

2.3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Եվրոպայի խորհուրդը վերհանել է կանանց համար արդարադատության մատչելիության մի շարք խոչընդոտներ: Դրանց շարքին են դասվում սոցիալ-տնտեսական եւ մշակութային խոչընդոտները, ինչպես նաեւ իրավական եւ ընթացակարգային խոչընդոտները:¹⁶¹ Դրանք ներառում են մի շարք փոխկապակցված գործոններ («արդարադատության փազլ»¹⁶²), որոնցից մի քանիսը հենց իրավական համակարգի առանձնահատկություններն են, իսկ որոշ մասը դրանից դուրս են: Գենդերային առումով չեզոք խոչընդոտները կարող են անհամաչափորեն ազդել կանանց՝ փոխհատուցում ստանալու հնարավորության վրա՝ հասարակության մեջ նրանց անբարենպաստ դիրքի պատճառով (օրինակ՝ իրավական գործընթացների գինը, արդարադատության հաստատությունների գտնվելու վայրը կամ աշխատանքային ժամերը):

Բացի խտրական որոշումների կայացմանը հանգեցնող դատական ակտերում ակնհայտ գենդերային կանխակալությունից՝ գենդերային կարծրատիպերի եւ սեռական բռնության ու զուգընկերոջ կողմից բռնությունից տուժող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի տարածվածությունը կարող է շատ հաճախ սոցիալական խարանի եւ ամոթի պատճառով հանգեցնել բռնության դեպքերի մասին քիչ թվով հաղորդումներ ներկայացնելուն: Իրավապահների կողմից իրադարձությունների վերաբերյալ տուժողների վարկածներին հատուկ ուշադրություն չդարձնելու եւ

159 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Չայաստանում», 2016 թվական, էջ 111:

160 ՄԱԲՀ, «Տղամարդիկ եւ գենդերային հավասարության հիմնախնդիրը Չայաստանում», 2016 թվական, էջ 215:

161 Առավել մանրամասների համար տե՛ս. Կանանց համար արդարադատության հավասար մատչելիության երաշխավորման մասին տեղեկատվական թերթիկ (2015 թվականի հունվար):

162 [Սնեժանա Սամարոֆչ-Մարկովիչ](#), «Արդարադատություն, որը չի գործում կանանց համար», *Նոր Եվրոպա*, 2015 թվականի հոկտեմբերի 5:

չվստահելու պատճառով անարդյունավետ արձագանքելը նույնպես ուժեղ ազդակ է, որը հանգեցնում է քիչ թվով հաղորդումներ ներկայացնելուն: Ընտանեկան բռնության դեպքերում արդարադատության մատչելիության խոչընդոտների թվին են դասվում՝

- ▶ այդ մասին չհայտնելը,
 - ▶ սոցիալական խարան, ամոթ,
 - ▶ խտրական վերաբերմունք, կրկին վիկտիմիզացիայի ենթարկվելը,
 - ▶ գենդերային կարծրատիպեր, տուժողին մեղադրելը,
- ▶ բռնություն գործադրած անձի կողմից բռնության ենթարկվելու վախը,
- ▶ տեղեկատվության բացակայություն,
- ▶ տնտեսական կախվածություն,
- ▶ կոռուպցիա:

Համաձայն «Արեւելյան գործընկերության հինգ երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները, իրավական պաշտպանության միջոցները եւ պատշաճ գործելակերպերը» Եվրոպայի խորհրդի վերջին գեկույցի՝ Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտներն առկա են հետեյալ պատճառներով՝

- ▶ իրավական երաշխիքների բացակայություն,
- ▶ իրավական այնպիսի դրոյթների առկայություն, որոնց հիմքում ընկած չեն հավասարության սկզբունքները կամ գենդերային առանձնահատկությունները,
- ▶ արդարադատության մեխանիզմներից, ինչպես օրինակ՝ դատարաններից, իրավական օգնությունից եւ ծրագրերից օգտվելու սահմանափակ հնարավորություն՝ հետեյալ պատճառներով՝
 - ▶ տնտեսական (գումարի բացակայություն),
 - ▶ սոցիալական եւ հոգեբանական (խարան, տեղաշարժման սահմանափակումներ, ժամանակի սղություն),
 - ▶ կրթական (սահմանափակ կրթություն եւ սոցիալական ցանցեր),
- ▶ տեղեկատվության քիչ մատչելիությունը:¹⁶³

Չեկույցում նշվում է, որ «ավանդական ընտանիքի արժեքների համաձայն՝ կանանց վրա հիմնականում չի տարածվել օրենքի գերակայությունը՝ թե՛ հայեցակարգային, թե՛ գործնական մակարդակներում»:¹⁶⁴

163 Եվրոպայի խորհուրդ, *Արեւելյան գործընկերության հինգ երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները, իրավական պաշտպանության միջոցները եւ պատշաճ գործելակերպերը*, էջ 22, 23:

164 Եվրոպայի խորհուրդ, *Արեւելյան գործընկերության հինգ երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները, իրավական պաշտպանության միջոցները եւ պատշաճ գործելակերպերը*, էջ 24:

Ինչպես նշված է Ստամբուլի կոնվենցիայի 18-րդ հոդվածի 3-րդ կետում, այս խոչընդոտները հաղթահարելու համար պահանջվում է «կանանց նկատմամբ բռնության գեղեցիկ ընկալում»: Հատուկ ռազմավարությունները ներառում են՝

- ▶ միասնական մոտեցում (միջգերատեսչական համագործակցություն),
- ▶ կրկնակի վիկտիմիզացիայից խուսափում,
- ▶ տուժողներին հարթակի տրամադրում՝ իրենց պատմությունը պատմելու համար,
- ▶ անվտանգության ապահովում,
- ▶ տնտեսական անկախության խթանում եւ իրավագործում,
- ▶ խոցելի տուժողների հատուկ կարիքների բավարարում:

Այս ռազմավարություններից յուրաքանչյուրին պետք է հատուկ ուշադրություն դարձվի արդարադատության գործընթացի բոլոր փուլերում՝ սկսած ոստիկանության կողմից առաջին արձագանքից եւ պաշտպանության միջոցներից, նախնական եւ դատաական քննության ամբողջ ընթացքից մինչեւ համաչափ պատիժների եւ փոխհատուցման միջոցով նրանց՝ ողջամիտ իրավական պաշտպանության միջոցից օգտվելը: Վերապատրաստման դասընթացի մնացած մասը կենտրոնացված է քրեական արդարադատության շղթայում այս սկզբունքների եւ գործելակերպերի իրականացման վրա:

Տեսահոլովակ. ԻՄՄԻՈՒ [HELP] դասընթացի՝ Լուիս Յուլիանի եւ Անկա Կուկայի հետ տեսագրությունից հատված

Խմբային քննարկման հարցեր

- Որո՞նք են ընտանեկան բռնությունից տուժած անձանց համար արդարադատության առկա խոչընդոտները Հայաստանում:
 - Որո՞նք են իրավական եւ ընթացակարգային խոչընդոտները:
 - Որո՞նք են սոցիալ-տնտեսական եւ մշակութային խոչընդոտները:
- Որո՞նք են այս խոչընդոտները հաղթահարելու լավագույն ռազմավարությունները:
- Արդյո՞ք տուժողներն ունեն իրավական պաշտպանության միջոցներից, փոխհատուցումից օգտվելու հնարավորություն:

2.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՒ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԻԹ ՏԿՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի («Ընտանեկան բռնության մասին» օրենք) ընդունումը 2017 թվականի դեկտեմբերին կարելու առաջին քայլ է համարվում Հայաստանի համար: Այն սահմանում է պաշտպանիչ կարգադրությունների, ինչպես նաեւ տուժողներին տրամադրվող աջակցության եւ ծառայությունների ընդհանուր շրջանակ: Մյուս կողմից, Հայաստանի ներկայիս օրենսդրական դաշտն ունի էական բացեր, որոնք պետք է լրացվեն՝ մինչեւ համակարգը կարողանա գործել արդյունավետորեն եւ միջազգային չափանիշներին համապատասխան:

Ընդհանուր առմամբ, «Ընտանեկան բռնության մասին» օրենքով չի ընդունվում գենդերազգայուն մոտեցում: Միայն ընտանեկան բռնության շրջանակում, Օրենքի սահմանված նպատակներն են «պաշտպանել ընտանեկան միավորը» եւ «վերականգնել ընտանիքում խաղաղությունը»՝ միաժամանակ ապահովելով «բռնությունից տուժածների անվտանգությունը եւ պաշտպանությունը, ինչպես նաեւ երաշխավորելով նրանց իրավունքները»: Շարունակում է հարց մնալ այն, թե արդյոք ընտանեկան բռնության դեպքերում այս մրցակցային նպատակները պատշաճորեն հավասարակշռված են:

Հայաստանի կողմից ստորագրված՝ Ստամբուլի կոնվենցիայի նախաբանի համաձայն՝

- ▶ գիտակցելով, որ կանայք եւ աղջիկները գտնվում են գենդերային հիմքով բռնության ավելի մեծ ռիսկի տակ, քան տղամարդիկ,
- ▶ գիտակցելով, որ ընտանեկան բռնությունը կանանց նկատմամբ դրսեւորվում է անհամաչափորեն, եւ որ տղամարդիկ նույնպես կարող են ընտանեկան բռնությունից տուժող լինել,

Այնուամենայնիվ, Օրենքում հաշվի չեն առնվում կանանց վրա ընտանեկան բռնության անհամաչափ ազդեցությունը, ինչպես նաեւ գենդերային հիմքով բռնության ռիսկը, որոնց առնչվում են կանայք եւ աղջիկները: Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարը կշարունակի խնդիրներ առաջադրել Հայաստանի համապատասխան մարմիններին, եւ Օրենքը մարդու իրավունքների միջազգային դատական ատյանների կողմից անբարենպաստ որոշումների կայացման համար խոցելի կլինի այնքան ժամանակ, քանի դեռ դրանում չի ներառվել այս չափազանց գենդերացված երեւոյթի վերաբերյալ գենդերային հայեցակարգ:

Ինչպես վերապատրաստման ընթացքում մանրամասն ներկայացվել է, «Ընտանեկան բռնության մասին» օրենքը եւ համապատասխան օրենսդրական դաշտը կիրարկման համար պարունակում են մի շարք բացեր՝ տուժողների պաշտպանության տեսանկյունից զգալի հետեւանքներով: Միջազգային չափանիշները խախտող որոշ հիմնական բացեր ներառում են՝

- ▶ պաշտպանական որոշումների տրամադրման դեպքում ընթացակարգային պաշտպանության միջոցները կենտրոնացված են բռնություն գործադրած անձի իրավունքների վրա՝ ի վնաս տուժողի իրավունքների, ինչպես նաեւ նույն ընթացակարգային պաշտպանության միջոցները նախատեսված չեն տուժողների համար.

- ▶ ընտանեկան բռնության մի քանի ձևեր, այդ թվում՝ նրանք, որոնք նախատեսված են եւ նախատեսված չեն Ընտանեկան բռնության մասին օրենքով, նախատեսված չեն Քրեական օրենսգրքով՝ ներառյալ տնտեսական բռնությունը, հոգեբանական բռնությունը, հետամտելը եւ նվազագույն սահմանաչափին չհասնող ֆիզիկական բռնությունը: Յետեւաբար, բռնության այս ձևերը պաշտպանիչ կարգադրությունների հիմք չեն համարվում խոչընդոտելով տուժողների կողմից պաշտպանության եւ փոխհատուցման նպատակով իրագործելի հայց հարուցելը.
- ▶ կանանց նկատմամբ բռնության մի քանի ձևեր ընդհանրապես չեն քրեականացվում՝ ներառյալ կանանց սեռական օրգանների խեղումը, հարկադիր եւ վաղ ամուսնությունը, հղիության հարկադիր արհեստական ընդհատումը եւ սեռական հետապնդումը,
- ▶ «բարոյականություն» եւ «պատիվ» հասկացությունների վրա հիմնված մեղմացուցիչ հանգամանքներ:

Բացի իրավական բացերից՝ ներկայիս փաստացի (*de facto*) գործելակերպը նույնպես մտահոգության առիթ է տալիս.

- ▶ դատական կանխակալությունը դատապարտման ժամանակ.
- ▶ դատաբժշկական փորձաքննության տվյալներ ձեռք բերելու գործելակերպը խախտում է տուժողների մի շարք իրավունքներ, եւ այն պետք է վերացվի.
- ▶ ընտանեկան բռնությունից տուժած անձանց իրենց նախկին սեռական վարքի վերաբերյալ հարցաքննելը.
- ▶ տուժողին մեղադրելը.
- ▶ տուժողին հարցաքննելը եւ մասնագիտացված, գենդերային զգայունություն ունեցող մոտեցման բացակայությունը.
- ▶ կողմերի հաշտեցումը՝ առանց տուժողների հավասարությունը գործընթացում ապահովելու:

Խմբային քննարկման հարցեր

1. Ինչպե՞ս պետք է խտրականության դեմ օրենքը (միջազգային) եւ գենդերային հավասարության վերաբերյալ օրենքը (ներպետական) գործադրվեն՝ վերոնշյալ խնդիրները լուծելու համար:
2. Ըստ սեռի տարբերակված ինչ վիճակագրական տվյալներ կան իրավապահ մարմիններում, ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների շրջանում զբաղվածության վերաբերյալ:

III. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր առմամբ, պետություններից Ստամբուլի կոնվենցիայով պահանջվում է «ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ բռնությունից տուժած բոլոր անձանց հետագա բռնարարքներից պաշտպանելու նպատակով»:¹⁶⁵ Կարելոր է այն, որ դրանով պահանջվում է՝

համապատասխան այնպիսի մեխանիզմների առկայությունը, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր պետական գերատեսչությունների, այդ թվում՝ դատարանների, դատախազների, իրավապահ մարմինների, տեղական և տարածքային իշխանությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու այլ շահագրգիռ կազմակերպությունների ու մարմինների միջև՝ սույն Կոնվենցիայի գործողության շրջանակում ընդգրկվող բռնության բոլոր ձևերից տուժած անձանց ու վկաներին պաշտպանելու և օժանդակելու գործում, այդ թվում՝ ընդհանուր բնույթի և մասնագիտական օժանդակություն տրամադրող ծառայություններ ուղղորդելու միջոցով:¹⁶⁶

Դրանով օրենսդրական դաշտից պահանջվում է ոչ միայն ապահովել անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներ, այլև միջգերատեսչական մեխանիզմ՝ ապահովելու համար, որ պաշտպանությունը, դատական պաշտպանության միջոցները և օժանդակություն տրամադրող ծառայություններն արդյունավետորեն իրականացվեն միասնական կերպով:

3.1. ԱՐԳԵԼՈՂ ԱՆՐԵՏԱԶԳԵԼԻ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (ԱՄՈ), ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄՆԵՐԸ

3.1.1 ԱՆՐԵՏԱԶԳԵԼԻ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Պաշտպանության առնչությամբ, Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ հոդվածով նախատեսվում է, որ՝

Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմիններին, անմիջական վտանգի իրավիճակներում, լիազորություն վերապահվի ընտանեկան բռնություն գործադրողին կարգադրելու բավարար ժամկետով ազատել տուժողի կամ վտանգի մեջ գտնվող անձի բնակարանը և արգելելու բռնություն գործադրած անձին մտնել տուժողի կամ վտանգի մեջ գտնվող անձի բնակարան կամ շփվել նրա հետ: Սույն հոդվածին համապատասխան միջոցառումներ ձեռնարկելիս պետք է առաջնահերթություն տալ տուժողների և վտանգի մեջ գտնվող անձանց անվտանգությանը:

Ինչպես դիպուկորեն նկարագրել է Եվրոպայի խորհուրդը՝ ԱՄՈ-ների հասկացությամբ պահանջվում է «հարացույցի փոփոխություն»:

165 Ստամբուլի կոնվենցիա, 18-րդ հոդվածի 1-ին կետ:

166 Ստամբուլի կոնվենցիա, 18-րդ հոդվածի 2-րդ կետ:

Փոխարենը տուժողներին խնդրելու, որ բռնությունից անվտանգ վայր փնտրեն՝ այն այդ պարտականությունը դնում է բռնություն գործադրած անձի վրա, որին կարգադրվում է հեռանալ տուժողի կամ վտանգի մեջ գտնվող անձի բնակարանից եւ չչփվել նրա հետ:¹⁶⁷

Թեեւ 52-րդ հոդվածով պահանջվում է այդպիսի միջոցառումների ձեռնարկում, դրանով եղանակները թողնվում են պետության հայեցողությանը: ԱՄՈ-ները նախատեսված չեն որպես մի շարք այլ այնպիսի միջոցների փոխարինում, ինչպիսիք են ձերբակալությունը, կալանքը եւ քրեական հետապնդումը: Միեւնույն ժամանակ, 52-րդ հոդվածը մեկնաբանվում է 50-րդ, 51-րդ եւ 53-րդ հոդվածների հետ մեկտեղ, որոնցով պահանջվում է իրավապահ մարմինների կողմից անհապաղ արձագանք, ռիսկերի գնահատումներ եւ երկարաժամկետ պաշտպանության հասանելիություն: Անհետաձգելի միջամտության որոշումները կարող են բնութագրվել իրենց **անհապաղ կիրառմամբ** եւ **կարճաժամկետ տեղողությամբ**: Ինչպես սահմանված է «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույցում (այսուհետ՝ Բացատրական զեկույց)՝ 52-րդ հոդվածում առկա «**անմիջական վտանգ**» եզրույթը վերաբերում է այն իրավիճակներին, որոնցում **վնասն անխուսափելի է, նյութականացել է եւ հավանական է, որ կառաջանա**:¹⁶⁸ ԱՄՈ-ները պետք է կայացվեն «բավարար ժամկետով», որը տարբեր պետություններում սովորաբար 10 օրվանից մինչեւ 4 շաբաթ է:

ԱՄՈ-ն պաշտպանության միջոց է եւ, հետեւաբար, դրա կայացումը **չպետք է պայմանավորված լինի իրավախախտման կատարմամբ, ոչ էլ կապված լինի քրեական պատասխանատվության ապացուցման հետ**: Ինչպես նշվում է Բացատրական զեկույցում, Ստամբուլի կոնվենցիայով պետությունները պարտավորեցվում են «ապահովել տուժողներին՝ միջամտող կամ պաշտպանական որոշում ստանալու հնարավորությունը՝ անկախ նրանից, թե նրանք որոշում են ընթացք տալ իրավական այլ վարույթի, թե՛ ոչ»:¹⁶⁹

ԱՄՈ-ները կարող են կայացվել ոստիկանության, դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից: ԱՄՈ-ները կարող են նաեւ դասակարգվել՝ ըստ քաղաքացիական, քրեական կամ վարչական իրավունքի: Ստամբուլի կոնվենցիայով չի սահմանվում, թե որ կառույցը պետք է պատասխանատու լինի ԱՄՈ կայացնելու համար, թեեւ երկրներից մեծ մասում այն վերապահվում է ոստիկանությանը՝ հաշվի առնելով նրանց պաշտպանելու մանդատը եւ այն, որ նրանք գործում են շուրջօրյա (24/7) ռեժիմով: ԱՄՈ-ի կայացումը չպետք է *պահանջի* տուժողի կողմից դիմումի ներկայացում: ԱՄՈ-ն պետք է կայացվի՝ առանց տուժողի կողմից որեւէ ծախս կրելու անհրաժեշտության: Բացի դրանից, Ստամբուլի կոնվենցիայի 62-րդ հոդվածով դատարանի կողմից կայացվող պաշտպանական որոշումների միջաահմանային (միջազգային) ճանաչման կոչ է արվում:¹⁷⁰

52-րդ հոդվածով սահմանված պաշտպանության ոլորտը սահմանափակվում է՝ ընդգրկելով՝ ա) տուժողի տունը կամ ժամանակավոր կացարանը (այդ թվում

167 Եվրոպայի խորհուրդ, *Անհետաձգելի միջամտության որոշումներն ընտանեկան բռնության իրավիճակներում*. Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ հոդված, 2017 թվական, էջ 43:

168 Եվրոպայի խորհուրդ, «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց, ԵՊՇ 210, 2011 թվական, 265-րդ պարբերություն:

169 Բացատրական զեկույց, 273-րդ պարբերություն, որում նշվում է, որ շատ տուժողներ կարող են պատրաստ չլինել քրեական մեղադրանք առաջադրելուն:

170 «Եվրոպական պաշտպանական որոշման մասին» ԵՄ թիվ 2011/99/ԵՄ հրահանգը եւ «Քաղաքացիական գործերով պաշտպանության միջոցների փոխադարձ ճանաչման մասին» ԵՄ թիվ 606/2013/ԵՄ կանոնակարգը լրացնում են Ստամբուլի կոնվենցիան:

ապաստարանները) եւ բ) ընդհանուր՝ շփում չունենալու կարգադրությունները: Շատ երկրներում պաշտպանությունը տարածվում է տուժողի երեխաների վրա, եթե առկա են՝ այդպիսով ընդգրկելով դպրոցները կամ երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունները:

3.1.2. ԴԱՇՏԴԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երկարաժամկետ սահմանափակող կամ պաշտպանական որոշումների առնչությամբ, Ստամբուլի կոնվենցիայի 53-րդ հոդվածում նշվում է, որ՝

1▶ Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձեւերից տուժած անձանց համար հասանելի լինի սահմանափակող կամ պաշտպանական համապատասխան որոշումների հնարավորությունը¹⁷¹:

2▶ Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակող կամ պաշտպանական որոշումները՝

- ▶ հնարավոր լինի կայացնել՝ անհապաղ պաշտպանություն տրամադրելու նպատակով, եւ առանց տուժողի համար անհարկի ֆինանսական կամ վարչական բարդություններ ստեղծելու.
- ▶ կայացվեն կոնկրետ ժամկետով՝ կամ մինչեւ դրանց փոփոխումը կամ վերացումը.
- ▶ անհրաժեշտության դեպքում կայացվեն միակողմանի կարգով՝ ուժի մեջ մտնելով անմիջապես.
- ▶ հնարավոր լինի կայացնել այլ իրավական վարույթներից անկախ կամ ի լրումն դրանց.
- ▶ թույլատրելի լինի ներառել հետագա իրավական վարույթներում:

ԱՄՈ-ները եւ ՊՈ-ները պետք է հսկվեն՝ ոստիկանության պարեկների կողմից՝ տուժողի հետ կապ հաստատելու միջոցով եւ էլեկտրոնային մոնիթորինգի միջոցով՝ որոշման պայմանները խախտելուն հակված բռնություն գործադրած անձանց կամ բարձր ռիսկայնության տուժողների պարագայում: Կոնվենցիայով պահանջվում է, որ պետություններն «ապահովեն, որ սահմանափակող կամ պաշտպանական որոշումների առկայության փաստը հնարավոր լինի ընդգրկել բռնություն գործադրած նույն անձի դեմ հարուցված ցանկացած այլ իրավական վարույթում: Այդ դրույթի նպատակն է թույլ տալ, որ այն փաստը, որ բռնություն գործադրած անձի նկատմամբ այդպիսի որոշում է կայացվել, հայտնի դառնա ցանկացած այլ դատավորի, որը նույն անձի դեմ հարուցված գործի դատական քննության նախագահն է:»¹⁷²

171 Ստամբուլի կոնվենցիայով կարգավորվում են կանանց նկատմամբ բռնության բոլոր ձեւերը, այդ թվում՝ ընտանեկան բռնությունը, ֆիզիկական եւ սեռական բռնությունը, հարկադիր ամուսնությունը, կանանց սեռական օրգանների խեղումը, հետամտելը, սեռական հետապնդումը, հղիության հարկադիր արհեստական ընդհատումը եւ հարկադիր ամլացումը: Ստամբուլի կոնվենցիայի 3-րդ, 33-40-րդ հոդվածներ:

172 Բացատրական գեկույց, 274-րդ պարբերություն:

Վերջապես, բռնություն գործադրած անձի իրավունքների առնչությամբ, պետք է հասկանալ, որ նրա՝ իր սեփականության իրավունքին ժամանակավորապես հասանելիություն չունենալը եւ անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքը չեն կարող գերակայել տուժողի կյանքի եւ ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ:¹⁷³ Առաջնահերթությունը պետք է տալ տուժողի եւ նրա երեխաների անվտանգությանը: Կոնկրետ գործով կայացված ԱՄՆ-ն պետք է համաչափ լինի, ինչպես արտացոլում է ռիսկի գնահատումը: Այն նաեւ պետք է լինի պատշաճ ընթացակարգի եւ դատական վերանայման առարկա: Այսինքն՝ որոշումը պետք է կայացվի գրավոր եւ պարունակի եւ՛ բովանդակություն, եւ՛ գործողության ժամկետ: Եթե ոստիկանությունը բռնություն գործադրած անձին տեղում չի լսում, ապա նա պետք է անհապաղ լավելու իրավունք ունենա: Բռնություն գործադրած անձինք նաեւ պետք է իրավունք ունենան բողոքարկելու միջամտության մասին որոշումը՝ չկասեցնելով դրանց գործողությունը:

ԱՄՆ-ների կամ պաշտպանական որոշումների խախտումները չպետք է հանգեցնեն քրեական կամ վարչական պատժամիջոցների: Տուգանքներն անարդյունավետ են համարվում, քանի որ դրանք կարող են վճարվել ընտանեկան բյուջեից եւ արդյունավետ կանխարգելիչ չեն:¹⁷⁴ Պաշտպանական որոշումների խախտումների մասով Ստամբուլի կոնվենցիայի 53-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվում է, որ պաշտպանական որոշումների խախտումների համար «սահմանվեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ քրեական կամ այլ իրավական պատժամիջոցներ»: ԱՄՆ-ի խախտումը «պետք է հանգեցնի բռնություն գործադրած անձի նկատմամբ պաշտոնական միջոցի կիրառման»: ¹⁷⁵ Եվրոպայի խորհրդի անդամ այլ պետություններում ԱՄՆ-ի խախտումների համար նախատեսվում են վարչական կամ քրեական պատժամիջոցներ՝ տուգանքից մինչեւ ձերբակալություն:

ԱՄՆ-ով կամ ՊՈ-ով տուժողի համար սահմանափակում չի նախատեսվում: Կան տարբեր պատճառներ, թե ինչու տուժողը կարող է ունենալ բռնություն գործադրած անձի հետ կապ հաստատելու ցանկություն կամ չխոչընդոտել նրա մուտքը տուն, այդ թվում՝ վախը: Տուժողները չպետք է պատժվեն ԱՄՆ-ի խախտումների համար, այդ թվում պաշտպանական որոշումների կասեցմամբ:

173 Տե՛ս *Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի* [Yildirim v. Austria], Հաղորդագրություն թիվ 06/2005, ԿՆԽՎԿ/Կ/39/D/6/2005, 12:1:5-րդ պարբերություն, 2005 թվական, որում նշվում է, որ «բռնություն գործադրած անձի իրավունքները չեն կարող գերակայել կանանց կյանքի եւ ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ»:

174 Տե՛ս, օրինակ՝ *Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի* [A.T. v. Hungary], Հաղորդագրություն թիվ 2/2003, ԿՆԽՎԿ/Կ/36/D/2/2003, որտեղ բռնություն գործադրած անձը տուժողին ծանր մարմնական վնասվածք հասցնելու հետ կապված երկու դեպքի համար տուգանվել էր 365 ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

175 Եվրոպայի խորհուրդ, *Անհետաձգելի միջամտության որոշումներն ընտանեկան բռնության իրավիճակներում. Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ հոդված*, 2017 թվական, էջ 21:

3.1.3. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Խնամակալության վերաբերյալ հայցերը ուսնձգություն կատարած անձանց կողմից երբեմն օգտագործվում են որպես պատրվակ՝ տուժողի եւ (կամ) նրանց երեխաների հետ շփման մեջ մտնելու նպատակով: Դա կարող է երկուսի համար էլ ծանր հետեւանքներ ունենալ: Այդ պատճառով երեխաների խնամքի եւ տեսակցության իրավունքների վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել ընտանեկան բռնության հետ կապված ռեպերը: Ի հակադրություն դրա՝ ԱՄՆ-ի կամ պաշտպանական որոշման կայացումը պետք է ինքնաբերաբար հանգեցնի երեխաների խնամակալության եւ տեսակցության իրավունքների վերաբերյալ ժամանակավոր որոշում կայացնելուն: Այլ կերպ ասած՝ պաշտպանական որոշման կայացմամբ բռնություն գործադրած անձի խնամակալության եւ (կամ) տեսակցության իրավունքները պետք է ինքնաբերաբար կասեցվեն: Դա այն պատճառով է, որ կատարողի խնամակալության եւ տեսակցության իրավունքների գոյությունը չի կարող վտանգել տուժողի եւ երեխաների իրավունքներն ու անվտանգությունը:

3.1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1.4.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով (Ընտանեկան բռնության մասին օրենք) նախատեսվում են եւ՝ անհետաձգելի միջամտության որոշումներ (7-րդ հոդված), եւ՝ երկարաժամկետ պաշտպանական որոշումներ 8-րդ հոդված)՝ Ստամբուլի կոնվենցիայով սահմանված կարգով: Տուժողների պաշտպանության մասով Ընտանեկան բռնության մասին օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվում է երկու գործողություն, որոնք ձեռնարկում է ոստիկանությունը՝ i) նախազգուշացում. ii) անհետաձգելի միջամտության որոշում. եւ գործողություն, որը կատարվում է դատարանի որոշման հիման վրա՝ iii) պաշտպանական որոշում: Դրանով նախատեսվում է, որ այդ երեք միջոցներից մեկի կիրառումը չի խոչընդոտում քրեական գործ հարուցելը եւ քրեական հետապնդում իրականացնելը:

Համաձայն 6-րդ հոդվածի՝ **նախազգուշացումները** տրվում են ոստիկանության կողմից առաջին անգամ արձագանքելիս, եթե հանցակազմի հատկանիշներ եւ անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Ինչպես բացատրված է վերը, դա Ստամբուլի կոնվենցիայի խախտում է, որով պահանջվում է, որ պաշտպանական որոշում կայացվի՝ առանց հղում կատարելու իրավախախտման կատարմանը: Ի հակադրություն դրա՝ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կայացումը չի պահանջում, որ հանցանք կատարված լինի:

Կարելի է նշել, որ շատ արարքներ, որոնք Կոնվենցիայի համաձայն՝ ընտանեկան բռնություն են համարվում, Հայաստանում չեն համարվում քրեական կամ վարչական իրավախախտում՝ այդպիսով հակասելով միջազգային չափանիշներին: Դրանք ներառում են՝ ֆիզիկական բռնարարքները, որոնք չեն համապատասխանում

ծեծի իրավական հատկանիշներին¹⁷⁶ (օրինակ՝ մեկ ապտակը եւ մազերից քաշելը), տնտեսական բռնության տարբեր ձեւերն ու անտեսումը:

Վ.Կ.-ն ընդդեմ *Բուլղարիայի* գործով պետական մարմինները մերժել են տուժողի՝ պաշտպանական որոշման պահանջը, քանի որ տվյալ բռնությունը՝ «հարվածելը», չէր բավարարում ազգային օրենսդրությամբ պահանջվող շեմը: Ազգային դատարանը նշել էր. «հարվածելը, ինչպես նկարագրված է, կապված չէ հայցվորի ֆիզիկական [անձեռնմխելիության] խախտման հետ: ...Որեւէ մեկին հարվածելով՝ կարող ես բռնություն գործադրել, սակայն միայն այն բանից հետո, երբ խախտվել են ունձգություն կատարելու որոշակի սահմաններ:»: ԿՆԽՎ կոմիտեն հիշեցրել է, որ գենդերային հիմքով բռնությունը «չի սահմանափակվում այնպիսի արարքներով, որոնցով պատճառվում է ֆիզիկական վնաս, այլեւ ներառում է այնպիսի արարքներ, որոնցով պատճառվում է մտավոր կամ սեռական վնաս կամ տառապանք, այդպիսի արարքներ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից այլ կերպ զրկելը», եւ գտել է, որ ազգային «դատարաններն ուշադրությունը կենտրոնացրել են բացառապես դիմումատուի կյանքին կամ առողջությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն սպառնացող վտանգի եւ նրա ֆիզիկական անձեռնմխելիության հարցի վրա՝ անտեսելով նրա հուզական եւ հոգեբանական տառապանքները»:¹⁷⁷

Ընտանեկան բռնության մասին օրենքի 6-րդ հոդվածով այնուհետեւ պահանջվում է, որ կատարողին ծանուցեն եւ տրամադրեն բողոքարկման իրավունք: Չի նշվում այն մասին, որ ապահովվի, որ տուժողն ունենա նախազգուշացման մասին պաշտոնական ծանուցում, ոչ էլ հստակորեն նշվում է տուժողի բողոքարկման իրավունքի մասին, որը կարող է ներկայացվել վարչական վարույթի կամ վարչական դատավարության ընդհանուր կանոնների համաձայն: Այդ առնչությամբ, գործող դրույթը բավականաչափ զոհակենտրոն չէ:¹⁷⁸

Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է ոստիկանության կողմից արձակվող **անհետաձգելի միջամտության որոշումը**, եթե գործադրվել է բռնություն, եւ «առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման՝ անմիջականորեն սպառնացող վտանգի մասին»: Այն կարող է կայացվել նաեւ քրեական իրավախախտում չհամարվող բռնարարների դեպքում՝ նախազգուշացում տալուց հետո 1 տարվա ընթացքում: Միջոցները կիրառվում են՝ տուժողին եւ տուժողի ինսամբին գտնվող ցանկացած անձի պաշտպանելու համար:

Անհետաձգելի միջամտության որոշումը կարող է ուժի մեջ մնալ **մինչեւ 20 օր**: Ի հակադրություն Ստամբուլի կոնվենցիայի, որով նախատեսվում է անհետաձգելի արգելող որոշման կայացում միակողմանի կարգով՝ անմիջապես ուժի մեջ մտնելով, Հայաստանում դրանք ուժի մեջ են մտնում բռնություն գործադրած անձին հեռախոսով ծանուցելուց, նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց եւ հանձնման մասին վերջինիս ստորագրությունն ստանալուց հետո: Կարելի է, որ գրանցման հասցեն կարող է լինել այն տունը, որտեղ գտնվելը բռնություն գործադրող անձին պետք է արգելվի: Արդյունքում բռնություն գործադրած անձի՝ այնտեղ պահանջվող ներկայությունը (ծանուցում ստանալու համար) կարող է վտանգել տուժողի անվտանգությունը: Այլ կերպ ասած՝ Հայաստանում այս որոշման ուժի մեջ մտնելու ժամկետն անորոշ է, այլ ոչ թե՛ անմիջապես:

176 Հայաստանի օրենսդրությունը եւ (կամ) նախադեպային իրավունքը ֆիզիկական բռնության մասին:

177 Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿՆԽՎԿ/C/49/D/20/2008, 9.8-րդ, 9.9-րդ պարբերություններ:

178 *Տես, օրինակ՝ Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի*, Հաղորդագրություն թիվ 2/2003, ԿՆԽՎԿ/C/36/D/2/2003, որով տուժողը, որպես տուժող, բռնություն գործադրած անձի դեմ քրեական գործի վերաբերյալ դատական փաստաթղթերին հասանելիություն չունի:

Վերոնշյալ ընթացակարգը կարող է ժամանակատար լինել, եւ դրանով, ինչն ավելի խնդրահարույց է, բռնություն գործադրած անձի դատավարական իրավունքները գերադասվում են տուժողի կյանքի եւ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ՝ խախտելով միջազգային չափանիշները: Տուժողի հետ կապ հաստատելու շարունակական ֆայլերը չեն համարվի անհետաձգելի միջամտության որոշումների խախտում, քանի որ այն ուժի մեջ մտած չի լինի՝ ընթացակարգային ձգձգումների պատճառով: Վերջապէս, անհետաձգելի միջամտության որոշումների կատարման ուշացումները կարող են հիմք հանդիսանալ այդ որոշումների խախտումների համար:

Ինչպէս ԿՆԽՎԿ կոմիտեն վճռել է *Ա.Տ.-ն ընդդէմ Հունգարիայի* գործով՝ «Կանանց կյանքի եւ ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ չեն կարող գերակայել այլ իրավունքներ, այդ թվում՝ սեփականության իրավունքը եւ անձնական անձեռնմխելիության իրավունքը:»¹⁷⁹ *Յիդիիիմն ընդդէմ Ավստրիայի* գործով ԿՆԽՎԿ կոմիտեն նաեւ գտել է, որ բազմիցս տուժողին սպանել սպառնացող բռնություն գործադրած անձին չկալանավորելու մասին դատախազի որոշումն այն պատճառով, որ այդ պահին այն «չափազանց միջամտող» է թվացել, խախտել է պետության պատշաճ զգուշավորության իրավունքները:¹⁸⁰

Համաձայն 7-րդ հոդվածի՝ անհետաձգելի միջամտության որոշման շրջանակով նախատեսվում է հետեւյալը՝

- ▶ ընտանեկան բնակարանից հեռացնելը,
- ▶ տուժողի բնակարան, աշխատավայր, երեխաների դպրոց, հանգստավայրեր, տուժողի կողմից հաճախ այցելվող վայրեր այցելելն արգելելը,
- ▶ շփումն արգելելու մասին կարգադրությունը՝ նշելով հեռավորությունը, չհաղորդակցվելը (հեռախոսով, էլեկտրոնային փոստով եւ այլն),
- ▶ հրազենի անհապաղ բռնագրավումը,
- ▶ բռնություն գործադրած անձը կարող է ոստիկանության ուղեկցությամբ անձնական իրերը հավաքել բնակության վայրից:

Կարող է կիրառվել այդ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ յուրաքանչյուրը տարբեր ժամկետներով: Օրենքում որեւէ կարգավորում նախատեսված չէ խնամակալության եւ տեսակցության իրավունքների մասով ժամանակավոր միջոցների անհրաժեշտության մասին, թեւէ շփումն արգելելու մասին կարգադրությունը տարածվում է տուժողի խնամքին գտնվող անձանց վրա¹⁸¹:

Տվյալ պարագայում բռնություն գործադրած անձը ծանուցվում է անհետաձգելի միջամտության որոշման մասին անձամբ կամ պատվիրված նամակի, էլեկտրոնային փոստի կամ հեռախոսի միջոցով: Մինչդէռ տուժողին ծանուցում են նամակով (ոչ պատվիրված)՝ նրա բնակարանում կամ ժամանակավոր ապաստարանում: Դեռեւս անորոշ է, թե ինչու օրենքով տուժողի համար չի նախատեսվում ստանալ պաշտոնական ծանուցում անձամբ՝ որոշումը կայացնելու պահին, կամ պատվիրված նամակով: Բռնություն գործադրած անձը բողոքարկման համար ունի 5 օր: Բողոքարկումը չունի կասեցնող ուժ:

179 Հաղորդագրություն թիվ 2/2003, ԿՆԽՎԿ/C/36/D/2/2003, 9.3-րդ պարբերություն:
180 Հաղորդագրություն թիվ 06/2005, ԿՆԽՎԿ/C/39/D/6/2005, 12.1.5-րդ պարբերություն:
181 Տե՛ս, օրինակ՝ *Վ.Կ.-ն ընդդէմ Բուլղարիայի*, Հաղորդագրություն թիվ 2/2003, ԿՆԽՎԿ/C/36/D/2/2003, որում բռնություն գործադրած անձն իր երեխաներին կողպել էր Վարշավայում գտնվող բնակարանում եւ այնուհետեւ մերժել էր վճարել ապրուստը հոգալու համար՝ իր կնոջը «ենթարկվել» հարկադրելու նպատակով:

Համաձայն 8-րդ հոդվածի՝ **պաշտպանական կարգադրությունը** կարող է կայացվել դատարանի կողմից՝ տուժողի կամ ենթադրաբար ենթարկված անձի կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնի դիմումի համաձայն: Պաշտպանական որոշումը կարող է կայացվել մինչև 6 ամիս ժամկետով՝ երկու անգամ 3 ամիս ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Դեռևս առկա են հարցեր այն տուժողների նկատմամբ կիրառվելիք պաշտպանության վերաբերյալ, որոնց համար բռնության սպառնալիքը մեկ տարուց ավելի է ձգվում:

Համաձայն 8-րդ հոդվածի 5-րդ մասի՝ պաշտպանական որոշման շրջանակը ներառում է՝

- ▶ բռնություն գործադրած անձին կամ տուժողին տանից անհապաղ հեռացնելը,
- ▶ տուժողի տուն, աշխատավայր, դպրոց, հանգստավայրեր եւ տուժողի կողմից հաճախ այցելվող այլ վայրեր այցելելն արգելելը,
- ▶ շփումն արգելելը (հեռավորություն եւ հաղորդակցություն),
- ▶ հրազենի բռնագրավումը,
- ▶ ալիմենտը եւ երեխայի խնամքի ծախսերը,
- ▶ տեսակցությունը կամ խնամակալությունն արգելելը,
- ▶ պարտադիր վերականգնողական ծրագրերը:

Ինչպես անհետաձգելի միջամտության որոշումների դեպքում կարող է կիրառվել այդ պաշտպանության միջոցների ցանկացած համադրություն՝ տարբեր ժամկետներով: Բռնություն գործադրած անձն իրավասու է պաշտպանական որոշման գործողության ընթացքում երկու ամիսը մեկ, ոստիկանության ուղեկցությամբ իր անձնական իրերը հեռացնել համատեղ բնակարանից:

Թեև 7-րդ եւ 8-րդ հոդվածներով թույլատրվում է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ բռնություն գործադրած անձից բռնագրավել հրազենը, այն նրան է վերադարձվում որոշման գործողության ժամկետի ավարտից հետո՝ այդպիսով վերստեղծելով տուժողի համար մահացու բռնության վտանգի սպառնալիքը: Հրազեն կամ դրա մատչելիություն ունենալը տուժողի համար էական վտանգ է համարվում:¹⁸² ԵՄ-ի անդամ բազմաթիվ երկրներում բռնություն գործադրած անձինքզրկվում են հրազեն ունենալու իրավունքից: Օրինակ՝ Իսպանիայում ընտանեկան բռնության համար քրեական պատասխանատվության ենթարկվելուց հետո բռնություն գործադրած անձին երկուսից հինգ տարի ժամկետով արգելվում է զենք ունենալ:¹⁸³

Առաջին միջոցի մասով 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշվում է. «Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել հետեւյալ սահմանափակումները՝

հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից եւ արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Այս սահմանափակման ժամկետը սահմանելիս դատարանը հաշվի է առնում ընտանիքում բռնության ենթարկված անձին եւ նրա խնամքի տակ եղող անձանց ապաստարան տեղափոխելու

182 Ստամբուլի կոնվենցիա, 5 1-րդ հոդված:

183 Իսպանիայի քրեական օրենսգիրք, 148.4-րդ հոդված:

հնարավորությունը եւ նպատակահարմարությունը, ընտանիքում բռնություն գործադրած անձի համար բնակության այլ վայրերի մատչելիությունը:

Թեեւ ցանկացած գործով կոնկրետ փաստերը գնահատելու համար դատավորը լավագույն դիրքում է, սակայն տուժողին տանից հեռացնելը կանխատեսելով՝ 8-րդ հոդվածի 5-րդ մասը «հարացույցի փոփոխություն» չի ապահովում, ինչպես պահանջվում է Ստամբուլի կոնվենցիայով: Ինչպես վերը նշվել է՝

փոխարենը տուժողներին խնդրելու, որ բռնությունից անվտանգ վայր փնտրեն, այն այդ պարտականությունը դնում է բռնություն գործադրած անձի վրա, որին կարգադրվում է հեռանալ տուժողի կամ ռիսկի տակ գտնվող անձի բնակարանից եւ չշփվել նրա հետ:¹⁸⁴

Ընտանեկան բռնության մասին օրենքում մանրամասներ չեն պարունակվում ոստիկանության կողմից այդ միջոցների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնելու եղանակների վերաբերյալ: Դա խիստ լուրջ բացթողում է, որը խաթարում է Օրենքի գործնական արդյունավետությունը: Իհարկե, որոշումների իրականացման նկատմամբ հսկողության վերաբերյալ մանրամասներին անդրադարձ է արվում ոստիկանության արձանագրությամբ, որը շարունակում է մնալ անհասանելի հասարակության համար: Անհրաժեշտ է ընդգծել, որ միջգերատեսչական համագործակցությունը ենթադրում է թափանցիկություն եւ պարբերական կամ եւ համագործակցություն արդարադատության ոլորտի իրավասու մարմինների եւ այլ գորատեսչությունների միջեւ:

3.1.4.2. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ/ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն Ընտանեկան բռնության մասին օրենքի՝ ոստիկանությունը հսկողություն է իրականացնում բռնություն գործադրած անձի կողմից անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների կատարման նկատմամբ:¹⁸⁵ Օրենքն ինքնին հստակ չէ ղչ որոշումների կատարման նկատմամբ հսկողության իրականացման, ղչ բռնություն գործադրած անձի համար անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումը խախտելու հետեւանքների մասով:

Արդյունավետ *փաստացի* կատարումն ապահովելու համար ոստիկանությունը, քննիչները, դատախազները եւ դատավորները պետք է ունենան թարմ տեղեկություններ պաշտպանության բոլոր երեք ձեւերի կայացման, բողոքարկման եւ խախտումների վերաբերյալ: Թեեւ դեռեւս հստակ չէ, թե արդյոք Հայաստանում նախազգուշացումները, անհետաձգելի միջամտության որոշումները եւ պաշտպանական որոշումները գրանցվում են տվյալների մատչելի շտեմարանում, սակայն նախատեսված է բռնություն գործադրած անձի հաշվառումը՝ մոնիթորինգի, խորհրդատվություն եւ օժանդակության այլ ձեւեր ստանալու համար՝ եւս մեկ անգամ ցույց տալով բռնություն գործադրած անձնակեցություն մոտեցում: Համաձայն Ընտանեկան բռնության մասին օրենքի 11-րդ հոդվածի՝ բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվում է նախազգուշացում, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաեւ ընտանեկան բռնության հետ կապված դատվածություն ունեցող

184 Եվրոպայի խորհուրդ, *Արգելող անհետաձգելի որոշումներն ընտանեկան բռնության իրավիճակներում. Ստամբուլի կոնվենցիայի 52-րդ հոդված*, 2017 թվական, էջ 43:

185 Ընտանեկան բռնության մասին օրենք, 7-րդ հոդվածի 11-րդ մաս, 8-րդ հոդվածի 9-րդ մաս:

չափահաս անձը ոստիկանության կողմից վերցվում են կանխարգելիչ հաշվառման: Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սոցիալական աշխատողը կանխարգելիչ հաշվառման շրջանակներում իրականացնում է մոնիթորինգ՝ չափահաս անձանց կողմից ընտանիքում բռնարարքները կանխարգելելու համար՝ համաձայն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Անչափահասների դեպքում մոնիթորինգն իրականացվում է Լիազոր մարմնի կամ ոստիկանության պետի սահմանած կարգով:

Ավելին, 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ոստիկանության ծառայողը եւ տարածքային մարմնի սոցիալական աշխատողը կանխարգելիչ հաշվառման շրջանակում ամսական առնվազն մեկ հանդիպում են ունենում հաշվառման վերցված եւ ընտանիքում բռնության ենթարկված տուժողի հետ՝ իրազեկության մակարդակը բարձրացնելու համար¹⁸⁶: Դրանով չի սահմանվում, թե արդյոք այդ ամենամյա հանդիպումներն անցկացվում են տուժողի եւ բռնություն գործադրած անձի հետ միասին, թե՛ առանձին: Ամեն դեպքում, այդ դրույթը, կարծես թե, կախված չէ կողմերի համաձայնությունից եւ, այդպիսով, կարծես թե գործում է որպես *փաստացի* պարտադիր ջանք՝ ուղղված հաշտեցմանը: Տարածքային մարմնի սոցիալական աշխատողը մոնիթորինգի ընթացքում բռնության կրկնման վտանգ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է ոստիկանությանը: Բռնություն գործադրած անձինք հաշվառվում են մեկ տարով, եթե այդ ընթացքում չի կայացվում անհետաձգելի միջամտության, պաշտպանական նոր որոշում կամ նոր մեղադրական դատավճիռ չի կայացվում: Եթե տարվա ընթացքում լրացուցիչ պաշտպանական որոշում կամ մեղադրական դատավճիռ չի կայացվում, ապա բռնություն գործադրած անձը հաշվառումից հանվում է:

Ամփոփելով, ի հակադրություն Ստամբուլի կոնվենցիայով պահանջվող «հարացույցի փոփոխության», որն անհրաժեշտ է համարում տուժողի պաշտպանության ապահովումը, այստեղ նկարագրված Ընտանեկան բռնության մասին օրենքը կարող է բնութագրվել դրա գրեթե բացառիկ ուշադրությամբ՝ բռնություն գործադրած անձի նկատմամբ՝ տուժողի իրավունքների եւ կարիքների հաշվառման փոխարեն: Իրականում, Հայաստանի կողմից Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման նկատմամբ ցուցաբերվող գենդերային հարցերով չեզոք մոտեցումն արտացոլում է բռնություն գործադրած անձանց վրա արտոնյալ կենտրոնացվածությունը, որոնք մեծ մասամբ տղամարդիկ են:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Իսպանիան պաշտպանական որոշումների կատարման լավագույն փորձի օրինակ է: Այն սահմանել է աշխարհում ամենաառաջադեմ նորմատիվ դաշտերից մեկը՝ գենդերային հիմքով բռնության դեմ միջոցներ ձեռնարկելու համար, ինչը անընդհատ մեջբերվում է միջազգայնորեն: 2004 թվականին Իսպանիան սահմանեց համապարփակ, գենդերային խնդիրներով պայմանավորված իրավական դաշտ՝ զուգընկերոջ կողմից բռնությանն անդրադառնալու համար,¹⁸⁷ որը հանգեցրեց, *inter alia* (ի թիվս այլոց), գենդերային հիմքով բռնության հարցում մասնագիտացված դատարանների ստեղծմանը: Այդ մասնագիտացված դատարանները գտնվում են Իսպանիայի բոլոր շրջաններում, գործում են շուրջօրյա (24/7) ռեժիմով եւ դատավորին հնարավորություն են տալիս նշանակելու պաշտպանության միջոցների լայն շրջանակ՝ քրեաիրավական մասով, քաղաքացիաիրավական (այդ թվում՝ ընտանեկան իրավունքի) մասով եւ սոցիալական պաշտպանության մասով:

Պաշտպանության միջոցներ տրամադրելու համար դիմումները ներկայացվում են ոստիկանության եւ դատախազության մարմինների կողմից՝ ի պաշտոնե: Դրանք ինքնաբերաբար տրամադրվում են գենդերային հիմքով քրեական իրավախախտում հանդիսացող բռնության համար դատապարտում ներառող գործերով: Որոշման կայացումը գտնվում է բացառապես հատուկ դատարանի դատավորի իրավասության շրջանակներում, որը կարող է նաեւ որոշում կայացնել *sua sponte*, այսինքն՝ իր սեփական նախաձեռնությամբ՝ առանց պահանջ ներկայացվելու: Տուժողները, տուժողների ընտանիքի անդամները, ոստիկանությունը, սոցիալական օժանդակություն տրամադրող կազմակերպությունները (հանրային եւ մասնավոր) եւ դատախազության մասնագիտացված դատախազները բոլորն էլ կարող են պահանջել պաշտպանական որոշում:¹⁸⁸ Սոցիալական ապահովության, առողջապահության եւ այլ ոլորտների մասնագետներն ունեն ոստիկանությանը կամ դատախազության մարմիններին բռնության դեպքերի մասին հաղորդելու պարտականություն:

Պաշտպանական որոշումները¹⁸⁹ պետք է կայացվեն պահանջ

187 «Գենդերային հիմքով բռնության դեմ ուղղված պաշտպանության համապարփակ միջոցների մասին» թիվ 1/2004 օրենք: 1-ին հոդվածում նշվում է, որ՝ «Սույն Օրենքի նպատակն է՝ գործել բռնության դեմ, որը, որպես խտրականության, անհավասարության իրավիճակի, կանանց նկատմամբ տղամարդկանց իշխանության հետ կապված հարաբերությունների դրսևորում, կատարվում է նրանց դեմ իրենց ամուսինների կամ նախկին ամուսինների կամ նրանց կողմից, ովքեր նրանց զուգընկերներն են կամ եղել են զուգընկերները՝ նմանատիպ զգայական հարաբերության միջոցով՝ նույնիսկ եթե նրանք միասին չեն ապրել»: Ընտանեկան բռնության բոլոր ձևերը 1989 թվականին քրեականացվել են Քրեական օրենսգրքով:

188 Գործնականում, գործերի ամենաբարձր տոկոսի՝ 72.9%-ի մասին հաղորդում են հենց տուժողները. 13.8%-ը հարուցվում է ոստիկանության կողմից: Բողոքների ամենացածր տոկոսը (2%) հարուցվում է առողջապահության ոլորտի մասնագետների կողմից:

189 Յուլիի 31-ի թիվ 27/2003 օրենք:

ներկայացվելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում: Դատավորը 72 ժամվա ընթացքում կողմերին կանչում է դատախազի մասնակցությամբ լսման: Որպես տուժողներին դատարանում տրամադրվող պաշտպանության միջոց՝ լսումները բռնություն գործադրած անձի եւ տուժողի (տուժողների) հետ անցկացվում են առանձին: Տուժած երեխաներին նույնպես լսում են առանձին:¹⁹⁰

Թեեւ բռնություն գործադրած անձը պետք է ներկա լինի պաշտպանական որոշման վերաբերյալ լսմանը, վարույթը կարող է իրականացվել նրա բացակայությամբ, եթե նրան չեն կարողանում գտնել:¹⁹¹ Եթե բռնություն գործադրած անձը չի ներկայանում, դատավորը ծանուցագիրը կարող է վերածել ձերբակալության մասին որոշման: Տուժողին սպառնացող անմիջական վտանգի հետ կապված իրավիճակներում ոստիկանությունը պարտավոր է ձերբակալել բռնություն գործադրած անձին եւ նրան պահել արգելանքի տակ՝ մինչեւ որոշման կայացումը (72-ժամյա ժամկետում):

Ի հակադրություն Ավստրիայի գենդերային հարցերով չեզոք դաշտի՝ որոշումները կայացվում են կանանց պաշտպանելու համար զուգընկերների, այսինքն՝ ամուսինների, նախկին ամուսինների կամ այն տղամարդկանց կողմից բռնությունից, որոնց հետ նրանք ունեցել են զգայական հարաբերություններ՝ անկախ համատեղ բնակվել-չբնակվելուց: Պաշտպանական որոշումներն արձակվում են՝ առանց տուժողի կամ բռնություն գործադրած անձի կողմից որեւէ ծախս կրելու անհրաժեշտության:

Օրենքով սահմանվում է պաշտպանական որոշումների երկու տեսակ՝ քրեական գործերով եւ քաղաքացիական գործերով: Քրեական վարույթներին առնչվող պաշտպանական որոշումները կարող են ներառել՝

- ▶ բանտ.
- ▶ սահմանափակող կարգադրություններ.
- ▶ հաղորդակցվելու արգելք.
- ▶ դեպքի վայր կամ տուժողի բնակարան վերադառնալու արգելք.
- ▶ զենքի կամ այլ վտանգավոր իրերի առգրավում:¹⁹²

Քաղաքացիական գործերով պաշտպանական որոշումներով նախատեսվում է՝

- ▶ բնակարանի օգտագործման եւ դրանից օգտվելու թույլտվության տրամադրում.
- ▶ երեխաների խնամակալության, տեսակցությունների եւ նրանց հետ

190 Քրեական դատավարության օրենսգիրք, 544 հոդվածի 4-րդ մաս: Քրեական դատավարության օրենսգրքով որպես դատարանում տրամադրվող պաշտպանության միջոց նախատեսվում է նաեւ խմբային տեսակոնֆերանս:

191 Անձի բացակայությամբ պաշտպանական որոշում կայացնելու համար պետք է բավարարել երեք պայման՝ ա) հարցի իրատարությունն արդարացված է. բ) ենթադրյալ բռնություն գործադրած անձը կարող է որոշումը վիճարկել կամ բողոքարկել, հետագա լսմանը. եւ գ) հետագա լսումն անցկացվում է կարճ ժամանակ անց:

192 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 6-րդ մաս:

հաղորդակցության մասով սահմանափակումներ.

▶ ապրուստը հոգալու միջոցների տրամադրում.¹⁹³

▶ երեխայի պաշտպանության միջոցներ՝ ուղղված վտանգից կամ վնասվածքից խուսափելուն:¹⁹⁴

Այդպիսով, պաշտպանական որոշումները կարող են, ի թիվս այլ որոշումների, ներառել շփման ընդհանուր արգելքը, բռնություն գործադրած անձի մուտքը տուժողի տուն արգելելը, բռնություն գործադրած անձին կանխարգելիչ նպատակներով արգելանքի տակ պահելը, տուժողին երեխաների նախնական խնամակալություն շնորհելը, ենթադրյալ բռնություն գործադրած անձի ծնողական իրավունքները, խնամակալության, հոգաբարձության եւ տեսակցության իրավունքները կասեցնելը եւ ապրուստի համար վճարներ կատարել կարգադրել՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար: Ընդհանուր առմամբ, քրեական գործերով միջոցները կիրառվում են ավելի հաճախ, քան քաղաքացիական գործերով միջոցները:

Որոշման աշխարհագրական շրջանակը մնում է դատավորի հայեցողությանը եւ, ի հակադրություն Ավստրիայի, կարող է ներառել տուժողի աշխատավայրը:¹⁹⁵ Առաջարկվում է առնվազն 500 մետր հեռավորություն պահելու արգելք՝ ոստիկանության արագ արձագանքին նպաստելու, ինչպես նաեւ կողմերի միջեւ տեսողական շփումից խուսափելու նպատակով: Էլեկտրոնային հսկողությունը բռնության մասին անհապաղ ծանուցելու հնարավորություն է տալիս եւ հաճախ է օգտագործվում բռնություն գործադրած այն անձանց դեպքում, որոնք որոշում են խախտել: Իսպանիայում պաշտպանական որոշումների խախտումները համարվում են քրեական իրավախախտում: Կարելու է, որ քրեական օրենսգրքով պատժվում է պաշտպանական որոշման խախտումն ագրեսորի, այլ ոչ տուժողի կողմից:¹⁹⁶ Միեւնույն ժամանակ, դատավորը կարող է ձեռնարկել նոր միջոցներ, որոնցով ագրեսորի նկատմամբ կիրառվում են ավելի շատ սահմանափակումներ: Պաշտպանական նախկին որոշումները հաշվի են առնվում բոլոր համապատասխան քրեական կամ քաղաքացիական վարույթներում:¹⁹⁷

193 Այն դեպքերում, երբ պնդում են, որ գործադրվել է զենդերային հիմքով բռնություն, եւ կայացվել է երեխայի ապրուստը հոգալու մասին որոշում, սակայն վճարումներ չեն կատարվում, կառավարությունը նպաստների վճարումը երաշխավորում է սոցիալական նպաստների երաշխիքային ֆոնդից: Թիվ 1/2004 օրգանական օրենք, 19-րդ հոդված:

194 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 7-րդ մաս:

195 *Ընտանեկան բռնության եւ զենդերային հիմքով բռնությունից տուժած անձանց պաշտպանությանն ուղղված՝ անվտանգության ուժերի եւ դատական մարմինների գործողությունների եւ դրանց համակարգման արձանագրություն* [Protocolo de Actuación de las Fuerzas y Cuerpos de Seguridad y de Coordinación con los Órganos Judiciales para la protección de las víctimas de violencia doméstica y de género]:

196 Իսպանիայի քրեական օրենսգրքի 468-րդ հոդվածով պաշտպանական որոշման խախտումը քրեականացվում է պատժվում է 6 ամսից մինչեւ մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ: Կոնկրետ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով օրենքով նախատեսվում է ազատազրկում 3 ամսից մինչեւ մեկ տարի ժամկետով կամ ուղղիչ աշխատանքներ՝ 90-ից մինչեւ 180 օր ժամկետով: Խախտման համար պատժամիջոցը որոշելիս տուժողի համաձայնությունն էական չէ:

197 Թիվ 1/2004 օրգանական օրենք, 61-րդ հոդված:

Պաշտպանության ժամանակավոր միջոցներն ուժի մեջ են մտնում մինչև 30 օր, մինչև դատավորը կայացնում է որոշումը հաստատելու, փոփոխելու կամ վերացնելու մասին վերջնական որոշում:¹⁹⁸ Պաշտպանական որոշումները կարող են պահպանվել գործով վերջնական դատական ակտ կայացվելուց հետո եւ որեւէ բողոք ներկայացնելու գործընթացի ընթացքում:¹⁹⁹ Զրեական գործերով պաշտպանության միջոցները կարող են տեւել մինչև հինգ տարի՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, տասը տարի՝ ծանր հանցագործությունների դեպքում եւ վեց ամիս՝ ոչ մեծ ծանրության իրավախախտումների դեպքում:

Տեղական հաստատություններում եւ սոցիալական ծառայություններ տրամադրող գրասենյակներում, ոստիկանության բաժիններում, հատուկ դատարաններում եւ հասարակական կազմակերպություններում հասանելի է դիմումի պարզեցված օրինակելի ձեւ: Այն հասանելի է իսպաներենով եւ իսպանիայի այլ պետական լեզուներով (բասկերենով, կատալոներենով եւ այլն), անգլերենով եւ ֆրանսերենով: Ինչպես նշվել է վերը, իսպանիան թույլատրում է երրորդ կողմի ներկայացրած սահմանափակ դիմումներ (տուժողի ընտանիքի կողմից), որոնք, ոստիկանությունից կամ մասնագիտացված դատարանից բացի, կարող են ներկայացվել սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ կամ կառավարման մարմիններ՝ խթանելով ընթացակարգի մատչելիությունը: Ինչպես նշվել է վերը, օրենքով պահանջվում է, որ բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկություններ ունեցող՝ սոցիալական պաշտպանություն տրամադրող գերատեսչությունները եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները դրանց մասին հաղորդեն ոստիկանությանը կամ մասնագիտացված դատարանին, որն այնուհետեւ պարտավորվում է ի պաշտոնե կայացնել պաշտպանական որոշում:

Տուժողն ունի դատարանի կողմից լավելու իրավունք, որը կաշկանդված չէ նրա պահանջներով: Յուրաքանչյուր տարի մերժվում է տուժողների՝ պաշտպանական որոշում ստանալու դիմումների զգալի տոկոսը (մոտավորապես 30%): Բռնություն գործադրած անձինք ունեն որոշումը բողոքարկելու իրավունք եւ դատարանի կողմից հարցի վերաբերյալ լավելու իրավունք: Բողոքարկումը չունի կասեցնող ուժ²⁰⁰:

Տուժողին պաշտպանական որոշման արձակման եւ այն պայմանների մասին, որոնք դրանով սահմանվում են, ծանուցում է դատավորը, որը նաեւ ծանուցում է բռնություն գործադրած անձին եւ համապատասխան կատարող մարմին:²⁰¹ Ծանուցումը, որոշում արձակվելուց հետո 24 ժամվա ընթացքում, փոխանցվում է էլեկտրոնային եղանակով, ֆաքսով կամ

198 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 7-րդ մաս: Տուժողի պահանջով պաշտպանության ժամանակավոր միջոցների ժամկետը կարող է երկարաձգվել:

199 «Գենդերային հիմքով բռնության դեմ ուղղված պաշտպանության համապարփակ միջոցների մասին» թիվ 1/2004 օրգանական օրենք, 69-րդ հոդված (այդպիսի երկարաձգված ժամկետով միջոցները պետք է վճռում հստակորեն սահմանվեն):

200 «Գենդերային հիմքով բռնության դեմ ուղղված պաշտպանության համապարփակ միջոցների մասին» թիվ 1/2004 օրգանական օրենք, 44-րդ հոդված:

201 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 1-ին հոդվածի 8-րդ մաս:

Էքսպրես նամակով: Անվտանգության մարմիններից բացի՝ ծանուցվում են նաեւ սոցիալական աջակցություն տրամադրող, իրավաբանական, առողջապահության եւ հոգեբանական օժանդակություն տրամադրող մարմինները՝ կախված կոնկրետ գործով տուժողների կարիքներից: Այդպիսով, ստեղծվել է վարչական համակարգման համապարփակ համակարգ՝ այդ հաղորդակցությունները խթանելու նպատակով: (Միջգերատեսչական համակարգումն ավելի մանրամասն նկարագրված է ստորել):

Տուժողի՝ համապարփակ աջակցություն²⁰² (հոգեբանական-սոցիալական օժանդակություն, իրավաբանական աջակցություն ու ներկայացուցչություն եւ վկաներին տրամադրվող փորձագիտական օժանդակություն, ֆինանսական օգնություն²⁰³, կրթական եւ մասնագիտական հմտությունների մասով վերապատրաստումներ եւ կացարան) ստանալը պայմանավորված է իր կողմից բռնության մասին իշխանություններին հաղորդում ներկայացնելուց:²⁰⁴ Դատարանն է, որ համապատասխան ծառայություն տրամադրողներին տեղեկացնում է պաշտպանական որոշման եւ տուժողի՝ այդ ծառայություններին մատչելիության իրավունքի մասին: Չուղղնկերոջ կողմից բռնության ենթարկված անձանց առաջարկվող ծառայությունները համապատասխանում են սեռական բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայություններին՝ Ստամբուլի կոնվենցիայով սահմանված չափանիշներին համապատասխան²⁰⁵:

Պաշտպանական որոշումն արձանագրվում է Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության կենտրոնական գրանցամատյանում, որը կառավարում է Արդարադատության նախարարությունը: Այն հասանելի է ընտանիքի եւ քրեական դատարաններին, դատախազությանը, ոստիկանությանը, կառավարության պատվիրակություններին եւ ենթապատվիրակություններին ու ինքնավար համայնքներին՝ կապի ապահովման համար ստեղծված կենտրոնների միջոցով՝ պետության ամբողջ տարածքում եւ՝ ժամանակավոր, եւ՝ վերջնական որոշումների

202 Դեկտեմբերի 28-ի թիվ 1/2004 օրգանական օրենք, 19-րդ հոդվածի 2-րդ մաս:

203 «Անվճար իրավաբանական օգնության մասին» թիվ 1/1996 օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով՝ տուժողներն ազատվում են իրավաբանական վճարներ վճարելուց, եթե նրանք այլ կերպ ենթակա չեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու: Հրատապ հարցերով նրանց կարելի է ի սկզբանե անվճար աջակցել եւ եթե նրանք ենթակա չեն անվճար աջակցության, ապա նրանք պետք է հետագայում վճարեն փաստաբանի ծառայությունների համար վճարները: *Ընտանեկան բռնության եւ գենդերային հիմքով բռնության տուժողների պաշտպանությանն ուղղված՝ անվտանգության ուժերի եւ դատական մարմինների գործողությունների եւ դրանց համակարգման արձանագրությամբ* փաստաբանների միավորումներից պահանջվում է սահմանել կանչով հերթափոխային ծառայություն՝ ապահովելու համար, որ իրավաբանները հասանելի լինեն շուրջօրյա (24/7) ռեժիմով՝ ներկայացված լինելու հրատապ անհրաժեշտության դեպքում:

204 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 2-րդ հոդվածի 5-րդ մաս: Իսպանիայում աջակցության պայմանական մատչելիությունը բանավեճի առարկա է եղել, եւ որոշ շրջաններում օրենքները փոփոխվել են՝ այդ իրավունքների մատչելիությունն ապահովելու համար՝ առանց քրեական վարույթի հարուցում պահանջելու:

205 «Բռնությամբ կատարվող հանցագործությունների եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններից տուժած անձանց տրամադրվող օգնության եւ աջակցության մասին» դեկտեմբերի 11-ի թիվ 35/1995 օրենք:

արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով²⁰⁶: Կենտրոնական գրանցամատյանն օգտագործվում է նաեւ մոնիթորինգի նպատակներով:

Ստեղծվել է Պաշտպանական որոշումները կարգավորող օրենքի կիրառման մոնիթորինգի Կոմիտե²⁰⁷, որը պատրաստել է բազմաթիվ արձանագրություններ՝ պաշտպանական որոշումների կատարումը, ինչպես նաեւ միջգերատեսչական համագործակցության մեխանիզմներն ուղղորդելու եւ դիմումի ձեւը սահմանելու համար:

Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության իրականացման վերաբերյալ արձանագրությամբ սահմանվում են դատական իշխանության, իրավապահ եւ կառավարման այլ մարմինների միջեւ համակարգման չափանիշներն՝ անվտանգության, իրավական, հոգեբանության, առողջապահության եւ սոցիալական ոլորտներում կախված տուժողի պահանջից:

Անվտանգության ուժերի գործողությունների, այդ թվում՝ դատական մարմինների հետ համաձայնեցման արձանագրությամբ կարգավորվում են ոստիկանության եւ դատական մարմինների միջեւ հաղորդակցությունը եւ համակարգումը՝ տուժողների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար: Արձանագրությամբ ոստիկանությունից պահանջվում է միջամտել այնպիսի փաստերի մասին տեղեկանալու դեպքում, որոնք կարող են համարվել ընտանեկան բռնություն: Դրանով պահանջվում է, որ այն՝

- ▶ տուժողին տեղեկացնի իրավաբանական օժանդակություն ստանալու իր իրավունքի մասին՝ Արձանագրության 1-ին հավելվածին համապատասխան.
- ▶ անմիջապես եւ սպառնիչ կերպով ցուցմունք վերցնի տուժողից, իսկ համապատասխան դեպքերում՝ վկաներից.
- ▶ քրեական իրավախախտման հատկանիշներ լինելու դեպքում հարեւաններից, ընտանիքի անդամներից, գործընկերներից, դասընկերներից, սոցիալական ծառայություններից, տուժողների խնամքի գրասենյակներից եւ այլն, հրատապ կերպով տեղեկություններ հավաքի կասկածյալի կողմից նախկինում վատ վերաբերմունքի առկայության,

206 «Պաշտպանական որոշումների մասին» թիվ 27/2003 օրենք, 1-ին հոդվածի 10-րդ մաս: Թիվ 5 13/2005 թագավորական հրամանագրով ապահովվում է մատչելիություն ինքնավար համայնքների, կառավարության պատվիրակությունների եւ ենթապատվիրակությունների համար: Դատական իշխանության ընդհանուր խորհուրդը վարում է համակարգման համար ստեղծված կենտրոնների թարմացված ցանկ եւ Արդարադատության նախարարությանը, Չբաղվածության եւ սոցիալական հարցերի նախարարությանն ու Ներքին գործերի նախարարությանը, ինչպես նաեւ Դատախազությանը եւ Արդարադատության բարձրագույն դատարանին, Կենտրոնական ռեգիստրին եւ համապատասխան ինքնավար համայնքի՝ քննություն իրականացնող դատարաններին է տրամադրում ամբողջական տեղեկություններ՝ դրանց փոփոխություններով կամ թարմացումներով: 207 Մոնիթորինգի կոմիտեն ներառում է Դատական իշխանության ընդհանուր խորհրդի, Արդարադատության նախարարության, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Ներքին գործերի նախարարության, արդարադատության բնագավառում իրավասություն ունեցող ինքնավար համայնքների, Դատախազության, Իրավաբանների ընդհանուր խորհրդի, Իրավաբանների ազգային ասոցիացիայի եւ Մոնիցիցիայի տեսնների եւ նահանգների դաշնության ներկայացուցիչների մասնակցությունը:

ինչպես նաև նրա անձի եւ հնարավոր կախվածությունների մասին.

- ▶ ստուգի ոստիկանության կողմից նախկին միջամտությունների եւ (կամ) տուժողի կամ կասկածյալների հետ կապված բողոքների, վերջինիս ավելի վաղ դեպքերի եւ տուժողի այն հնարավոր վնասվածքների ամկայությունը, որոնց մասին հաղորդել են բժշկական ծառայություններ մատուցող հաստատությունները.

- ▶ ստուգի ներգրավված անձանց ամնչությամբ դատական մարմինների կողմից նախկինում կարգադրված պաշտպանության միջոցների

- ▶ ամկայությունը: Այդ նպատակով եւ բոլոր դեպքերում պետք է դիմել Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության կենտրոնական ռեգիստր:

Փաստերը եւ ռիսկերը գնահատելուց հետո կայացվում է տուժողի (տուժողների) եւ նրանց ազգականների կյանքի, ֆիզիկական անձեռնմխելիության եւ իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ուղղված կոնկրետ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին որոշում: Ծայրահեղ հրատապության դեպքերում ոստիկանությունը կարող է այդ ամնչությամբ ձեռնարկել հետեւյալ միջոցները՝

- ▶ անձնական պաշտպանություն, որը, կախված ռիսկի մակարդակից, կարող է ներառել ոստիկանության կողմից մշտական պաշտպանություն՝ օրը 24 ժամ.

- ▶ տեղեկություններ / վերապատրաստում ինքնապաշտպանության միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ.

- ▶ ապահովում, որ տուժողը հստակ եւ մատչելի կերպով տեղեկացվի պաշտպանական որոշման բովանդակության, կատարման եւ հետեւանքների, ինչպես նաև այն սոցիալական ծառայությունների, տուժողների խնամքի գրասենյակների եւ համակարգման համար ստեղծված կենտրոնների մասին, որոնք նա կարող է ունենալ իր տրամադրության տակ:

Գործողությունների արձանագրությամբ այնուհետեւ նախատեսվում է տուժողի (տուժողների) եւ անվտանգության համապատասխան մարմինների միջեւ մատչելի եւ շարունակական հաղորդակցություն, ինչպես նաև նրանց համար անհրաժեշտ բոլոր տվյալների անմիջական հասանելիությունը՝ ռիսկը ցանկացած պահը գնահատելու համար: Այդ նպատակով եւ հնարավորության դեպքում՝

- ▶ պաշտպանական որոշումների կատարումը կհանձնարարվի ընտանեկան բռնությունից տուժած անձանց աջակցության եւ պաշտպանության վերաբերյալ հատուկ վերապատրաստում անցած անձնակազմին.

- ▶ տուժողի համար հասանելի կլինի ուղիղ եւ մշտական հեռախոսահամար՝ հանձնարարություն ստացած անձնակազմի հետ կապի հաստատելու նպատակով՝ անհատականացված ուշադրություն ստանալու համար.

- ▶ տուժողը կօգտվի տեխնիկական այնպիսի մեխանիզմներից, որոնք հնարավոր են դարձնում անվտանգության համապատասխան ուժերի

Եւ մարմինների հետ արագ, սահուն եւ մշտական հաղորդակցությունը, երբ գործի եւ տուժողի հետ կապված հանգամանքներն այդպես են պահանջում:

Դրանով նաեւ կարգավորվում է այն, թե ինչպես են մոնիթորինգ իրականացնում պաշտպանական որոշումների նկատմամբ: Ոստիկանությունը եւ դատական մարմիններն ակտիվ մոնիթորինգ են իրականացնում պաշտպանական որոշումների նկատմամբ: Գործնականում, Ազգային ոստիկանությունում, Քաղաքացիական պահպանության ծառայությունում եւ Կատալոնիայի, Բասկերի երկրի եւ Նավառայի ինքնավար մարզերի ոստիկանությունում²⁰⁸ գործող ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներն իրականացնում են պաշտպանական որոշումների արդյունավետության նկատմամբ մոնիթորինգ: Այնուամենայնիվ, այդ մասնագիտացված ստորաբաժանումները հասանելի են միայն մեծ քաղաքներում: Համակարգի բաղադրիչներից որեւէ մեկի վրա ազդող ցանկացած դեպք, ինչպիսիք են ազդեցության մուտքն արգելված գոտի կամ տուժողին եւ արգելվող գոտուն նրա մոտենալը՝ ազդանշանի կորստի ուղեկցությամբ, համարվում են լուրջ դեպքեր: Ոստիկանության պաշտպանության մեխանիզմն ակտիվանում է թեւևոցը կոտրվելու, հանվելու կամ դրա Գլոբալ տեղորոշման համակարգից առանձնացվելու, ինչպես նաեւ մարտկոցը լիցքաթափվելու դեպքում: Տուժողին տեղեկացնում են ցանկացած դեպքի մասին, որը կարող է առաջանալ պաշտպանական որոշման վավերականության ընթացքում: Նա միշտ կարող է սեղմել «խուճապ» կոճակը, եթե կարծում է, որ ազդեցորն անօրինական է գործում: Այդ դեպքերում Հսկողության կենտրոնն անհապաղ կապ է հաստատում տուժողի հետ՝ իրավիճակը գնահատելու եւ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:²⁰⁹

«Ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանության նպատակով քաղաքացիական եւ քրեական իրավագործության մարմինների միջեւ համակարգման մասին» արձանագրությամբ սահմանվում են երկու իրավագործությունների միջեւ արդյունավետ համակարգումը, որի նպատակն է՝

- ▶ տուժողին տրամադրել պաշտպանության ամբողջական շրջանակ՝ կանխելով հակասող որոշումների առկայությունը.
- ▶ ընտանեկան գործերով դատարաններին ապահովել ընտանեկան բռնությանն առնչվող հարցերով մինչդատական քննություն իրականացնող դատարանների կողմից ձեռնարկված գործողությունների մասին պատշաճ գիտելիքներով.
- ▶ ընտանեկան գործերով դատարանին տալ պաշտպանական որոշման մեջ համաձայնեցված քաղաքացիական միջոցների վավերացման, փոփոխման կամ չեղարկման մասին օրինական ժամկետներում որոշում կայացնելու հնարավորություն:

208 Ինքնավար համայնքները ոստիկանությունը համակարգում են բոլոր մակարդակներում, այդ թվում՝ տեղական ոստիկանությունը փոքր քաղաքներում եւ գյուղերում:

209 Հսկողության կենտրոնները գործում են օրը 24 ժամ, տարին՝ 365 օր:

3.1.4.3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

7-րդ հոդվածով նախատեսվում է, որ պաշտպանության անհետաձգելի որոշումը կարող է չեղարկվել, եթե այն խախտվում է, սակայն չեն տրամադրվում ցուցումներ այն ավելի խիստ կարգադրությամբ փոխարինելու, ոչ էլ կատարողին ձերբակալելու եւ կալանավորելու վերաբերյալ: Նույն կերպ՝ 8-րդ հոդվածով նախատեսվում է խախտման համար «պատասխանատվություն»՝ հղում չկատարելով քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվությանը: Այնուամենայնիվ, Զրեական օրենսգրքի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2017 թվականի փոփոխություններով այդ բացը լրացվում է՝ պաշտպանական որոշումները խախտելու համար նախատեսելով ազատազրկում եւ տուգանքներ: Այնուամենայնիվ, այդ փոփոխությունները չեն կիրառվում 7-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված պաշտպանության բոլոր ձեւերի նկատմամբ՝ ինչպես նշված է ստորեւ:

Զրեական օրենսգրքի փոփոխությամբ անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների՝ բռնություն գործադրած անձին տուժողի բնակարանից հեռացնելու հետ կապված խախտման համար սահմանվում են հետեւյալ պատժամիջոցները՝ տուժողին՝ դպրոց, հանգստավայրեր եւ տուն այցելելու արգելք. կատարողին կոնկրետ հեռավորությունից տուժողին մոտենալ չթույլատրող արգելք. եւ հրագնի հանձնում²¹⁰: Ըստ այդմ, պատասխանատվության միջոցներն են՝

- ▶ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով²¹¹,
- ▶ ձերբակալում եւ կալանք՝ մեկից երեք ամիս ժամկետով,
- ▶ ազատազրկում՝ մինչեւ վեց ամիս ժամկետով:²¹²

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը նույնպես փոփոխվել է 2017 թվականին՝ անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների խախտման համար նախատեսելով պատժամիջոցներ: Մասնավորապես, շփումն արգելելու մասին որոշումները, երեխայի հետ տեսակցության արգելքը խախտելու եւ վերականգնողական ծրագրերի չհաճախելու համար դրանով նախատեսվում են տուգանքներ՝ նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով²¹³: Ինչպես նշվել է վերը, տուգանքները չեն համարվում արդյունավետ պատժող կամ կանխող միջոց, եւ դրանք հիմնականում վերցվում են ընտանեկան բյուջեից: Չնայած դրան՝ տուգանքները պաշտպանական միջոցների խախտումների ժամանակ կիրառվող հիմնական միջոցն են:

Այդպիսով, դեռեւս հստակ չէ, թե արդյո՞ք որոշումների երկու տեսակների խախտումներին անդրադարձ կարվի Զրեական օրենսգրքով, որով որոշման խախտման համար նախատեսված են կանխարգելիչ այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ ձերբակալումը, կալանքը եւ ազատազրկումը, թե՛ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, որով նախատեսվում է միայն տուգանք, եւ որը չի գործում ընդ

210 Այդ սահմանափակումները նախատեսվում են եւ՝ անհետաձգելի միջամտությունների, եւ՝ պաշտպանական որոշումների համար՝ համաձայն, համապատասխանաբար, Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերի եւ 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերի:

211 Մեկ նվազագույն աշխատավարձը կազմում է 1000 ՀՀ դրամ:

212 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, 353.1-ին հոդված:

213 Այդ սահմանափակումները նախատեսվում են եւ՝ անհետաձգելի միջամտությունների, եւ՝ պաշտպանական որոշումների համար՝ համաձայն, համապատասխանաբար, Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի եւ 8-րդ հոդվածի 5-րդ մասի 6-8-րդ կետերի:

որպես կանխարգելիչ միջոց, ոչ որպես զսպող միջոց: Կարելու է, որ ԿՆԽՎԿ կոմիտեն *Յիլդիրիմսն ընդդեմ Ավստրիայի* գործով գտել է, որ պետության կողմից բռնություն գործադրած անձին չկալանավորելը՝ նրան տուժողի տուն, աշխատավայր այցելելն ու տուժողի հետ շփվելն արգելող պաշտպանության ժամանակավոր միջոցները երկու անգամ խախտելով՝ խախտվել են պետության պատշաճ զգուշավորության պարտականությունները:²¹⁴

Որոշիչ է այն, որ ալիմենտ տրամադրելու եւ երեխայի ապրուստը հոգալու մասին որոշումները խախտելու համար պատժամիջոցներ նախատեսված չեն՝ ապահովելու համար, որ բռնություն գործադրած անձը հոգա ապրուստի ծախսերի իր բաժինը՝ ինչպես սահմանված է 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով: Այդպիսով, այդ բացը բռնություն գործադրած անձանց իրավունք է տալիս գործադրելու տնտեսական բռնություն եւ խախտելու այդպիսի բռնությունը կանխելու համար կայացված պաշտպանական որոշումը՝ լիակատար անպատժելիությամբ:

Եվ անհետաձգելի միջամտության, եւ՛ պաշտպանական որոշումը կարող են կասեցվել, եթե բռնություն գործադրած անձը կալանավորվում է կամ տեղափոխվում բժշկական հաստատություն, կամ եթե տուժողը փոխել է բնակության վայրը, կամ ենթարկվում է ինքնության փոփոխության:

3.1.5. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.5.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՄԻԵԴ-ը պետությունների համար սահմանել է ոչ պետության ներկայացուցիչների կողմից, այդ թվում՝ մասնավոր հատվածում կատարվող մարդու իրավունքների խախտումներից քաղաքացիներին պաշտպանելու պոզիտիվ պարտականություն: Մասնավորապես, Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով, որոնցով, համապատասխանաբար, պաշտպանվում են կյանքի իրավունքը եւ վատ վերաբերմունքի արգելքը, «պետության համար սահմանվում է իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկելու» պարտականություն եւ «կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու [պարտականություն]՝ ուղղված այն անհատին պաշտպանելուն, որի կյանքը վտանգված է մեկ այլ անհատի քրեական բնույթի գործողությունների հետեւանքով»:²¹⁵ Դատարանը, մասնավորապես, վճռել է, որ՝

Պոզիտիվ պարտականություն կառաջանա, եթե հաստատվել է, որ իշխանությունները գիտեին կամ պետք է տեղեկացված լինեին նույնականացված անհատի կյանքին երրորդ կողմի քրեական բնույթի գործողությունների հետեւանքով այդ պահին սպառնացող իրական եւ անմիջական վտանգի առկայության մասին, եւ որ նրանք իրենց լիազորությունների շրջանակներում այնպիսի միջոցներ չեն ձեռնարկել, որոնք, եթե խելամիտ դատենք, կարող էր ակնկալվել, որ կօգնեին խուսափելու այդ վտանգից»:²¹⁶ (Ընդգծումն ավելացված է):

214 Հաղորդագրություն թիվ 06/2005, ԿՆԽՎԿ/C/39/D/6/2005, 12.1.5-րդ պարբերություն:

215 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [Branko Tomašić and Others v. Croatia], գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, 49-րդ, 50-րդ պարբերություններ. տե՛ս նաեւ *Մուդրիկն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [Mudric v. The Republic of Moldova], գանգատ թիվ 74839/10, 2013 թվական, 40-րդ պարբերություն:

216 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի գործը*, գանգատ թիվ 46598/06, 2009 թվական,

Այդ առնչությամբ, Ստամբուլի կոնվենցիայով պահանջվում է, որ պետությունները, «[...] ապահովելու համար, որ մահ պատճառելու վտանգի, իրավիճակի լրջության եւ բռնության կրկնվելու ռիսկի գնահատումն իրականացվի համապատասխան բոլոր մարմինների կողմից՝ ռիսկը կառավարելու եւ, անհրաժեշտության դեպքում, համակարգված անվտանգություն ու օժանդակություն ապահովելու նպատակով»՝ հաշվի առնելով քննության բոլոր փուլերը, պաշտպանության միջոցները եւ բռնություն գործադրած անձի կողմից հրազեն կամ դրան մատչելիություն ունենալը:²¹⁷

Միեւեռ մշակել է երկակի չափանիշ՝ գնահատելու համար, թե արդյոք պետությունները կատարել են 2-րդ եւ 3-րդ հոդվածներով սահմանված իրենց պոզիտիվ պարտականությունները. ա) արդյոք իշխանությունները գիտեին կամ պետք է իմացած լինեին այն բռնության մասին, որին ենթարկվել է տուժողը, եւ «հետագա բռնության ռիսկի» մասին,²¹⁸ եւ բ) «եթե այո, ապա արդյոք ձեռնարկվել են բոլոր ողջամիտ միջոցները՝ նրան պաշտպանելու եւ ոտնձգողին պատժելու համար»:²¹⁹ Այդ առնչությամբ, ռիսկերի գնահատումները գործնական գործիք են՝ «իրական եւ անմիջական վտանգի գոյությունը» որոշելու համար:

Օփուկն ընդդեմ Թուրքիայի գործով Դատարանը նշել է, որ՝

չնայած մահացածի այն բողոքների, որ Հ.Օ.-ն [ոտնձգողը] իրեն հետապնդել է՝ ներխուժելով իր անձնական կյանք՝ իր գույքի շուրջ շրջելու եւ դանակներ ու հրացաններ կրելու միջոցով (տես վերելում 47-րդ պարբերությունը), ոստիկանությունը եւ քրեական հետապնդում իրականացնող մարմինները ոչ Հ.Օ.-ին կալանքի տակ են առել, ոչ՝ ձեռնարկել պատշաճ այլ գործողություն այն պնդման առնչությամբ, որ նա ուներ ատրճանակ եւ դրանով բռնի սպառնալիքներ էր հնչեցրել:

Դատարանը նշել է, որ փաստացի ակնհայտ չէ, որ իշխանությունները Հ.Օ.-ի կողմից ներկայացված վտանգը գնահատել են եւ եկել այն եզրակացության, որ նրա կալանավորումն անհամաչափ քայլ էր տվյալ հանգամանքներում. ավելի շուտ, իշխանությունները խնդրին ընդհանրապես չեն անդրադարձել:²²⁰

Բ.-ն ընդդեմ Մոլդովայի գործով Դատարանը գտել է, որ «իշխանությունները վերլուծության չեն ենթարկել այն, թե արդյոք այն հարձակումների ծանրությունը եւ թիվը, որոնց ենթարկվել էր առաջին դիմումատուն Վ.Բ.-ի [ոտնձգողի] կողմից, եւ բռնաբարության վերաբերյալ առաջին պնդման լրջությունը պահանջում էին իրականացնել քրեական գործով քննություն»:²²¹ Դատարանն այնուհետեւ նշել է պետության կողմից հետագա դեպքերը եւ բռնության շարունակական դեպքերը հաշվի չառնվելու փաստը: Այն գտել է, որ «ներպետական դատարանները պետք է հաշվի առնեին այն փաստական զարգացումները, որոնք տեղի էին ունեցել [դատարանի համապատասխան որոշում] կայացնելուց հետո, այսինքն՝ Վ.Բ.-ի կողմից եւս երկու հարձակումները»:²²² Այն եզրահանգումների հիման վրա, որ իշխանությունները չէին գնահատել զարգացող ռիսկերը, Դատարանը վճռել է, որ Մոլդովան խախտել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածը:

51-րդ պարբերություն:

217 Ստամբուլի կոնվենցիա, 51-րդ հոդված:

218 *Բ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [B. v. The Republic of Moldova], գանգատ թիվ 61382/09, 2013 թվական, 51-րդ պարբերություն:

219 *Բ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության գործը*, գանգատ թիվ 61382/09, 2013 թվական, 51-րդ պարբերություն:

220 *Օփուկն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 147-րդ պարբերություն:

221 *Բ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության*, գանգատ թիվ 61382/09, 2013 թվական, 54-րդ պարբերություն:

222 *Բ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության*, գանգատ թիվ 61382/09, 2013 թվական, 56-րդ պարբերություն:

Պաշտպանական որոշման եւ անվտանգության այլ միջոցների անհրաժեշտությունը պետք է, այդպիսով, գնահատվի կանոնավոր կերպով: Կարելու է հիշել, որ կան բազմաթիվ իրավիճակներ, որոնք կարող են բարձրացնել ռիսկի մակարդակը, ինչպես օրինակ, ի թիվս այլնի՝ բաժանումը կամ ամուսնալուծությունը, դատական լսումը եւ երեխայի հետ շփումը:

Ռիսկերի գնահատման գործիքների օգտագործման նպատակն է՝ կանխել հետագա բռնությունը: Ռիսկի գնահատումը եւ անվտանգության միջոցների ընտրությունը պետք է իրականացվեն շարունակաբար՝ տուժողի հետ առաջին հանդիպումից մինչեւ հնարավոր դատապարտումը, իսկ երբեմն նաեւ՝ կատարողին բանտից ազատ արձակելու կապակցությամբ: Ռիսկի գնահատումը պետք է իրականացվի տուժողի հետ սերտ համագործակցությամբ: Կարելու է նաեւ նախնական եւ դատական քննության բոլոր փուլերում ապահովել ընտանեկան բռնության դեպքերում ներգրավված երեխաների անվտանգությունը եւ նրանց պաշտպանության միջոցների անհրաժեշտությունը:

Ստամբուլի կոնվենցիայով ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը թողնվում է պետությունների հայեցողությանը: Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում, որ առաջին արձագանքողները հատուկ կենտրոնանան ռիսկի այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- ▶ բռնությունը.
- ▶ սպառնալիքները.
- ▶ սրացումը.
- ▶ պաշտպանական որոշումների խախտումը.
- ▶ ավլոհողի եւ (կամ) թմրանյութերի չարաշահումը.
- ▶ հոգեբանական խնդիրները:²²³

Կարելու է նշել, որ ԱՄՆ-ի խախտումները պետք է համարվեն ավելի խիստ միջոցներ պահանջող ռիսկի գործոն:

Ռիսկերի գնահատման մասին արձանագրությունները գործում են ոչ միայն որպես կյանքը փրկող գործիք, այլեւ՝ որպես ռիսկերի մակարդակները տարբերակելու միջոցով սահմանափակ ռեսուրսների գործունե եւ արդյունավետ օգտագործման ապահովման միջոց: Երբ ոստիկանությունը կապ է հաստատում ընտանեկան բռնության ենթարկված տուժողի հետ, դրա հիմնական խնդիրը տուժողի անվտանգությունն ապահովելն է: Այն ունի մի շարք այնպիսի միջոցներ, որոնք կարող է օգտագործել ոչ հրատապ իրավիճակներում՝ տուժողին խորհրդատվություն տրամադրելով անվտանգության այնպիսի գործնական միջոցների վերաբերյալ, որոնք նա կարող է ինքնուրույն իրականացնել, ինչպիսիք են, ի թիվս այլնի, դրան վրայից անվանատախտակը հեռացնելը, դրան վրա դիտանցք տեղադրելը, անվտանգության կողպեքներ տեղադրելը, աշխատանքի գնալիս եւ աշխատանքից վերադառնալիս տարբեր երթուղիներից օգտվելը, վարելիս ավտոմեքենայի դռները կողպելը՝ ի հավելումն այնպիսի ավելի համապարփակ միջոցների, ինչպիսիք են պաշտպանական որոշումները:

Ռիսկի մասին վկայող այլ գործոնները ներառում են՝

223 Տե՛ս, Եվրոպայի խորհուրդ, *Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը. Իրավապահ մարմինների եւ արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման ուսումնական ռեսուրս*, 2016 թվական, էջ 40:

- ▶ տուժողի տանը կամ տարածքում բռնություն գործադրած անձի ներկայությունը
- ▶ վերջերս տեղի ունեցած բռնության դեպքը
- ▶ բռնության սաստկացումը
- ▶ ինքնասպանության սպառնալիքները
- ▶ բռնությունն այլոց նկատմամբ
- ▶ զենք կամ դրան մատչելիություն ունենալը
- ▶ երեխաների նկատմամբ բռնության կամ ոտնձգություն կատարելու սպառնալիքներ հնչելը
- ▶ խանդը
- ▶ հղիության ընթացքում հարձակումները
- ▶ թմրադեղերի չարաշահումը

Կանայք գտնվում են բռնության, մասնավորապես՝ մահացու հարձակումների բարձր ռիսկի տակ, երբ նրանք ոտնձգություն կատարող անձի հետ են, որն ունի քրեական անցյալ եւ (կամ) ոտնձգություն է կատարել մյուս զուգընկերների նկատմամբ: Իրականությունն այն է, որ հարաբերություններին վերջ տալը հաճախ վերջին բռնարարքի տեղիք է տալիս, որը հանգեցնում է տուժողի մահվան: Պատճառն այն է, որ ֆիզիկական բռնություն գործադրողներն իրենց ջանքերն ուղղում են տուժողի դեմ ուժ եւ հսկողություն կիրառելուն, երբ նրանք սպառնում կամ փորձում են հեռանալ: Երբ տղամարդը զգում է, որ նա իր զուգընկերոջ նկատմամբ սեփականություն զգացում ունի, ինչն ավանդական հասարակություններում հաճախ այդպես է, նա կարող է խելացնորության աստիճան տիրող դառնալ, հատկապես՝ երբ նա վախենում է նրան կորցնելուց: Տուժողին սպանելու նախկին սպառնալիքները մահ պատճառելու ռիսկի ամենաուժեղ գործոններից են: Մահ պատճառելու ռիսկի ցուցիչները ներառում են՝

- ▶ բռնության պատմությունը (նախկինում կատարած ոտնձգությունները)
- ▶ բաժանումը
- ▶ սեւեռուն/տիրող վարքագիծը
- ▶ սպանելու սպառնալիքները
- ▶ ընտանեկան բռնությունը մշակութային մակարդակով ընդունելը:

3.1.5.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ / ԻՍՊԱՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունումից հետո Ոստիկանության գեներալ-գնդապետն արձակել է ընտանեկան բռնության գործերով ոստիկանության միջամտությունը կարգավորող հինգ հրաման: Այդ հրամանները ներառում են ռիսկերի գնահատումներ իրականացնելու մի քանի տարրեր եւ գործիքներ: Այունամենայնիվ, դրանք հասարակությանը հասանելի չեն: Հայաստանում անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումներ կայացնելու հարցը դիտարկելիս կարելու է հիշել, որ Ստամբուլի կոնվենցիայի համաձայն՝ որպես պաշտպանության միջոցներ՝ անհետաձգելի միջամտության որոշումներ եւ պաշտպանական որոշումներ կայացնելը չպետք է պայմանավորված լինի իրավախախտման կատարմամբ, ոչ էլ կապված լինի քրեական պատասխանատվությունն ապացուցելու հետ:

Բերենք լավագույն փորձի օրինակ.

Իսպանիայի ոստիկանությունը պարտավոր է տարբեր իրավիճակներում կիրառվող պաշտպանության ցանկացած միջոցի ընտրությունն ուղղորդելու համար կիրառել ռիսկերի գնահատման երկու գործիք՝ թիվ 1/2004 օրգանական օրենքով կարգավորվող դեպքերում կանանց նկատմամբ բռնության ռիսկի մակարդակը գնահատելու վերաբերյալ ոստիկանության արձանագրության համաձայն: Առաջին ձեւաթղթով որոշվում է կրկին բռնության ենթարկվելու հավանականությունը: Դրանում թվարկվում են բռնության հետեւյալ ցուցիչները՝

- ▶ ֆիզիկական բռնություն՝ տեսանելի վնասվածքով կամ առանց դրա.
- ▶ սեռական բռնություն.
- ▶ տուժողի (տուժողների) վրա հարձակվելիս հրազենի, վտանգավոր գործիքների կամ այլ առարկաների օգտագործում.
- ▶ ահաբեկում, ֆիզիկական/հոգեկան վնաս հասցնելու սպառնալիքներ՝ ուղղված տուժողներին.
- ▶ բռնության դեպքերի կամ սպառնալիքների ավելացում, խորացում եւ (կամ) կրկնություն.
- ▶ ոտնձգողի կողմից տուժողների նկատմամբ գործադրված հոգեբանական բռնություն. բնակության վայրում պատճառված վնաս, գույքի վնասում.
- ▶ դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումների չկատարում.
- ▶ դատարանի կողմից նշանակված պատժի կրման սկզբունքների խախտում.
- ▶ իշխանությունների, ոստիկանության աշխատակիցների կամ ոստիկանության ծառայությունը ներկայացնող այլ անձանց կամ արդարադատության մարմինների նկատմամբ, ինչպես նաեւ վերոնշյալ անձանց ներկայությամբ տուժողի նկատմամբ բռնություն գործադրած անձի կողմից ցուցաբերված սադրիչ եւ (կամ) արհամարհական վերաբերմունք.
- ▶ օրենքի նախկին խախտումներ, մասնավորապես՝ բռնության

կիրառմամբ.

- ▶ բռնություն գործադրած անձի կողմից ակտիվ, թմրանյութերի կամ այլ հոգեկործան նյութերի օգտագործում.
- ▶ բռնություն գործադրած անձը տուժողին խանդում է եւ (կամ) նրան հանգիստ չի տալիս.
- ▶ զույգերի հարաբերություններում կան հստակ խնդիրներ, հրահրման հետ կապված հարցեր.
- ▶ բռնություն գործադրած անձի աշխատանքի հետ կապված եւ (կամ) ֆինանսական խնդիրներ.
- ▶ նախկինում արված փորձեր եւ (կամ) ինքնասպանություն գործելու հակումներ:

Լրացուցիչ ցուցիչներ, որոնք ցանկում առկա չեն, կարող են ավելացվել ձեւաթուղթը լրացնող աշխատակցի կողմից:

Ձեւաթղթով նաեւ պահանջվում է, որ ոստիկանությունը նշի տեղեկատվության աղբյուրը եւ այն գնահատի ռիսկերի չորս մակարդակներում՝ ծայրահեղ բարձր, բարձր, միջին եւ ցածր: Եթե ձեւաթուղթը լրացնող աշխատակիցը կարծում է, որ ռիսկը տարբերվում է ձեւաթղթի մեջ ավտոմատ նշված ռիսկից, ապա ռիսկի աստիճանը կարող է բարձրացվել: Աշխատակցի համար ձեւաթղթի մեջ ավտոմատ նշված ռիսկի մակարդակը նվազեցնելու որեւէ տարբերակ չկա:

Ռիսկի յուրաքանչյուր աստիճանի համար գոյություն ունի համապատասխան ժամկետ, որի ընթացքում իրավիճակը կարող է վերագնահատվել, դրանք են՝

- ▶ ծայրահեղ բարձր = 72 ժամ,
- ▶ բարձր = 7 օր,
- ▶ միջին = 30 օր,
- ▶ ցածր = 60 օր:

Դատարանի կողմից նշանակված պաշտպանության միջոցները կիրառելուց հետո երկրորդ ձեւաթուղթն օգտագործվում է ըստ հայտնաբերված ռիսկի մակարդակի սահմանված վերջնաժամկետներում ռիսկի շարունակական փոփոխությունը վերահսկելու համար (տե՛ս վերը): Այն նաեւ գնահատում է կիրառված՝ դատարանի կողմից նշանակված պաշտպանության միջոցների արդյունավետությունը: Այն պետք է, ըստ անհրաժեշտության, պարբերաբար օգտագործվի:

Այս ձեռագրի ջուրհիչները ներառում են՝

- ▶ բռնություն գործադրած անձը տուժողին վնասելու որևէ հնարավորություն չունի. նա գտնվում է բանտում կամ այլ բնույթի փակ կենտրոնում, հեռացել է երկրից կամ առողջության վիճակի պատճառով ի վիճակի չէ բռնություն գործադրել.
- ▶ բռնություն գործադրած անձը հեռացել է տուժողից. նա չի հետապնդում տուժողին, փոխել է բնակության վայրը՝ հեռու տուժողից, ենթարկվում է դատարանի կողմից սահմանված կանխարգելիչ միջոցներին, ինչպես նաև էլեկտրոնային վերահսկողության միջոցներին (կրելով համապատասխան թելնոց).
- ▶ վարույթն սկսելու պահից բռնություն գործադրած անձը դրսևորել է հանգիստ, կառավարելի վարքագիծ. նա ընդունում է իրավիճակը. նա չի ցանկանում վրեժխնդիր լինել տուժողից կամ նրա սոցիալական միջավայրում գտնվող անձանցից.
- ▶ բռնություն գործադրած անձը լիարժեքորեն պահպանում է օրենքը, հարգում է ոստիկանության աշխատակիցներին կամ ոստիկանության ծառայողներին կամ արդարադատության մարմինները ներկայացնող մյուս անձանց. բռնություն գործադրած անձի սոցիալական, ֆինանսական եւ մասնագիտական կարգավիճակը կայուն է. բռնություն գործադրած անձը զղջում է, խղճի խայթ է զգում, կամավոր մասնակցում է դասերին եւ ուղղիչ թերապիային.
- ▶ տուժողը կարող է անվտանգության հարցով հույսը դնել իր սոցիալական միջավայրի աջակցության վրա.
- ▶ տուժողը փոխել է իր բնակության վայրը, որը շարունակում է անհայտ մնալ բռնություն գործադրած անձի համար.
- ▶ ռիսկերի վերջին գնահատումից հետո իրավիճակն ընթանում է առանց պատահարի.
- ▶ բռնություն գործադրած անձը փախել է, թաքնվում է կամ գտնվում է անհայտ վայրում.
- ▶ բռնություն գործադրած անձը տուժողին խանդում է եւ (կամ) նրան հանգիստ չի տալիս.
- ▶ բռնություն գործադրած անձը նախկինում փորձել է ինքնասպանություն գործել եւ (կամ) ունի ինքնասպանություն գործելու հակումներ, հոգեկան հիվանդություններ, ալկոհոլից, թմրանյութից կամ այլ հոգեներգործուն նյութերից կախվածություն.
- ▶ տուժողը չի ենթարկվում անվտանգության համաձայնեցված սկզբունքներին (օրինակ՝ բռնություն գործադրած անձի հետ կապի մեջ մտնելու արգելք), էլեկտրոնային վերահսկողության, ցանկություն է հայտնում հետ վերցնել բողոքները, փոխում է ցուցմունքները, ցանկանում է հրաժարվել կանխարգելիչ միջոցներից.
- ▶ տուժողը գտնվում է այնպիսի հարաբերության մեջ, որը չի ընդունվում բռնություն գործադրած անձի կողմից, եւ (կամ) վերջինս իսկապես ցանկանում է հարկադրել տուժողին, որ խզի այդ հարաբերությունը.
- ▶ տուժողն ունի հոգեկան խանգարում, հոգեբուժական խնդիրներ եւ (կամ) կախում ունի ալկոհոլից, թմրանյութից կամ այլ հոգեներգործուն նյութերից. տուժողի սոցիալ-ընտանեկան միջավայրում կա նրա

կամ բռնություն գործադրած անձի հետ կապ ունեցող անձ, որը նրա հոգեբանական կայունության համար իրական սպառնալիք է:

Կրկին լրացուցիչ ցուցիչներ կարող են ավելացվել գնահատող աշխատակցի կողմից:

Ընտանեկան բռնության եւ գենդերային հիմքով բռնությունից տուժած անձանց պաշտպանությանն ուղղված՝ անվտանգության ուժերի եւ մարմինների գործողությունների, այդ թվում՝ դատական մարմինների հետ համաձայնեցման արձանագրության համաձայն՝ կախված ռիսկի մակարդակից՝ պետք է ձեռնարկվեն հետեւյալ պարտադիր միջոցները՝

1-ին մակարդակ (ցածր ռիսկայնություն).

- ▶ տուժողին մոտակա ոստիկանության մարմինների մշտական գործող (24 ժամ) կապի հեռախոսահամարների տրամադրում.
- ▶ պատահական հեռախոսային կապեր տուժողի հետ.
- ▶ բռնություն գործադրած անձին տեղեկացում այն մասին, որ տուժողը իր պաշտպանության համար ունի ոստիկանության աջակցությունը.
- ▶ ինքնապաշտպանության եւ պատահարներից խուսափելու եղանակների վերաբերյալ առաջարկություններ.
- ▶ շարժական հեռավար աջակցության ծառայության վերաբերյալ պատշաճ տեղեկություններ:

2-րդ մակարդակ (միջին ռիսկայնություն).

պարտադիր միջոցների կիրառումը 1-ին մակարդակի համար՝ ավելացրած՝

- ▶ պարբերաբար իրականացվող մոնիթորինգ տանը, աշխատավայրում եւ դպրոցների մուտքերում ու ելքերում.
- ▶ պահանջվող բոլոր վարույթների ընթացքում՝ դատական, վարչական, կամ աջակցության համար տուժողին ուղեկցում.
- ▶ ինքնապաշտպանության միջոցների վերաբերյալ տուժողին վերապատրաստում.
- ▶ տուժողին շարժական տերմինալ (հեռավար աջակցության ծառայություն) տրամադրելու պահանջ:

3-րդ մակարդակ (բարձր ռիսկայնություն).

1-ին եւ 2-րդ մակարդակի համար կիրառված պարտադիր միջոցների կիրառումը՝ ավելացրած՝

- ▶ սպառնալիքի հրատապ մակարդակների դեպքում շարունակական հսկողություն տուժողի նկատմամբ այնքան ժամանակ, մինչեւ իրավախախտում կատարած անձի հետ կապված հանգամանքներն այլեւս անմիջական սպառնալիք չհամարվեն.
- ▶ տուժողի քաջալերում աջակցության կենտրոն կամ բարեկամի տուն տեղափոխվելու համար, եթե նա դեռ չի վարվել այդպես, առնվազն առաջին օրերի ընթացքում եւ հատկապես այն դեպքում, երբ

իրավախախտում կատարած անձը չի ձերբակալվել.

► բռնություն գործադրած անձի տեղաշարժի ոչ կանոնավոր վերահսկողություն:

Դատարանի կողմից համաձայնեցված եւ ոստիկանության կողմից ռիսկի գնահատման արդյունքում առաջացած՝ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների միջեւ անհամապատասխանությունների դեպքում դատարանի կողմից որոշված միջոցները միշտ կգերակայեն, ինչպես նաեւ դատական իշխանություններն անմիջապես կտեղեկացվեն առկա անհամապատասխանությունների վերաբերյալ՝ առավել համապատասխան միջոցը համաձայնեցնելու նպատակով:

3.2. ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՇՏԴԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

3.2.1. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Ընտանեկան բռնության մասին օրենքով բռնություն գործադրած անձին, այլ ոչ թե տուժողին հնարավորություն է տրվում բողոքարկելու նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը: Յետեւաբար՝ Ընտանեկան բռնության մասին օրենքով տուժողի համար չի նախատեսվում ոստիկանության՝ նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտության որոշում **չկայացնելու** մասին որոշումը բողոքարկելու որեւէ ձեւ: Այդուհանդերձ, այդպիսի դեպքերում կիրառվում են վարչական ակտերը բողոքարկելու ընդհանուր կանոնները՝ այդպիսով տուժողներին ոստիկանության որոշումները բողոքարկելու հնարավորություն տալով²²⁴:

Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախազգուշացում կիրառելու դեպքում պահանջվում է, որ բռնություն գործադրած անձը շարունակվող կամ կրկնվող բռնության դեպքում իրազեկվի պատասխանատվության կիրառելի իրավական միջոցների մասին: Արձագանքող աշխատակիցը նախազգուշացումը պետք է կիրառի դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում:

Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը **ենթակա է բողոքարկման դրա մասին իրազեկելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում**: Քանի որ ոստիկանության որոշումները վարչական ակտեր են, ապա բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով, որով նախատեսվում է կասեցնող ազդեցություն²²⁵: Նախազգուշացում կիրառելու որոշումը

224 «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենք, 69-րդ հոդված, որով կարգավորվում է պաշտոնատար անձանց գործողության եւ անգործության վերաբերյալ պահանջների հետ կապված վարչական բողոք բերելու գործընթացը:

225 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը

բողոքարկելու կասեցնող ազդեցությունն առանձնահատուկ նշանակություն ունի այն դեպքերում, երբ բռնություն գործադրած անձը խախտել է նախազգուշացումը, որի արդյունքն ավտոմատ կերպով կլինի անհետաձգելի միջամտության որոշման կայացումը, բայց դա տեղի չի ունենա, քանի որ խախտումը տեղի է ունեցել նախազգուշացման կասեցնող ազդեցության ընթացքում՝ այդպիսով նվազեցնելով տուժողին տրամադրված պաշտպանության մակարդակը:

Անհետաձգելի միջամտության որոշումը նույնպես ենթակա է բողոքարկման՝ համաձայն Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի, որով նախատեսվում է, որ անհետաձգելի միջամտության որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով (օրինակ՝ ոստիկանապետին եւ հետագայում՝ Վարչական դատարան)՝ բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Անհետաձգելի միջամտության որոշումը պարունակում է բռնություն գործադրած անձի համար նախատեսված հետեւյալ տեղեկությունները՝ այն բողոքարկելու վերջնաժամկետը, բողոքարկման մարմինը, այդ թվում՝ այն դատարանը, որտեղ կարգադրությունը կարող է վիճարկվել, ինչպես նաեւ որոշումը խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները: Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է, որ անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկումը չունի կասեցնող ազդեցություն՝ այդպիսով բողոքարկման գործընթացի ողջ ընթացքում ապահովելով տուժողի պաշտպանությունը: Այստեղ կրկին Ընտանեկան բռնության մասին օրենքը չի նախատեսում հատուկ նշում բռնության ենթարկված անձի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ, ինչը տվյալ պարագայում կարգավորվում է վարչարարության եւ վարչական վարույթի ընդհանուր կանոններով:

Վարչական դատավարության օրենսգրքի 31.1 գլխով սահմանվում են անհետաձգելի միջամտության որոշումը բողոքարկելու հատուկ ընթացակարգեր: 222.11 հոդվածի համաձայն՝ բողոքարկելուց հետո՝ 36 ժամվա ընթացքում²²⁶, իրավասու դատարանը պետք է որոշում կայացնի հետեւյալի մասին՝

- ▶ բողոքի ընդունելիության,
- ▶ բողոքը վերադարձնելու (օրինակ՝ սխալների դեպքում),
- ▶ անընդունելիության հիմքով բողոքը մերժելու,
- ▶ դիմումն այլ դատարան վերահասցեագրելու:

Ավելին, անհետաձգելի միջամտության որոշումը բողոքարկելու մասին ծանուցումը դատական նիստ նշանակվելուց անմիջապես հետո ուղարկվում է հայցվորին, պատասխանողին եւ բռնություն գործադրած անձին կամ նրա օրինական ներկայացուցչին: Հրապարակային ծանուցումները (Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելը) չեն կարող օգտագործվել այս դեպքերում կողմերին ծանուցելու համար: Նույն՝ 222.11-րդ հոդվածի համաձայն՝ վերջնական որոշումը պետք է դատարանի կողմից կայացվի ընդունելիության մասին որոշումը կայացնելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում:

ենթակա է անհապաղ կատարման, եւ այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

226 222.11 հոդվածով նախատեսվում է ավելի արագ ընթացակարգ, քան վարչական բողոքների վերաբերյալ ընդհանուր դրույթներով, որը կարող է տեւել մինչեւ մեկ տարի:

3.2.2. ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Ի տարբերություն նախազգուշացումների եւ անհետաձգելի միջամտության որոշումների՝ պաշտպանական որոշումները կարգավորվում են քաղաքացիական եւ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ: Ընտանեկան բռնության մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանական որոշման համար առաջին ատյանի քաղաքացիական դատարան կարող է հայցադիմում ներկայացնել տուժողը կամ նրա համաձայնությամբ գործող աջակցության կենտրոնը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1 գլխով նախատեսվում են պաշտպանական որոշումներ կայացնելու հատուկ ընթացակարգեր: 234.1 հոդվածի համաձայն՝ հայցադիմումը ներկայացվում է տուժողի բնակության վայրի կամ նրա անուկից դիմումը ներկայացնող աջակցության կենտրոնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Բացի քաղաքացիական վարույթում պահանջվող ընդհանուր տեղեկություններից՝ հայցադիմումը պետք է ներառի նաեւ՝

- ▶ Ընտանեկան բռնության մասին օրենքի համապատասխան իրավական դրույթներ,
- ▶ պատասխանողի եւ տուժողի միջեւ ընտանեկան կապի վերաբերյալ տեղեկություններ,
- ▶ ընտանիքում բռնության անմիջական սպառնալիքի առկայությունը հիմնավորող տեղեկություններ,
- ▶ Ընտանեկան բռնության մասին օրենքով սահմանված կոնկրետ սահմանափակումների կիրառման մասին նշում,
- ▶ պատասխանողի՝ կանխարգելիչ հաշվառման ենթարկված լինելու հանգամանքի վերաբերյալ տեղեկություն:

Առկայության դեպքում նախազգուշացումների եւ անհետաձգելի միջամտության որոշումները նույնպես պետք է կցվեն հայցադիմումին: Այն դեպքերում, երբ աջակցության կենտրոնը դիմում է տուժողի անուկից, նրա գրավոր համաձայնությունը նույնպես պետք է կցվի:

Քաղաքացիական դատավարության 234.3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Բռնություն գործադրած անձի կողմից հայցադիմումի պատասխանը ներկայացվում է նրա կողմից հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում: Դատարանը որոշում է կայացնում հայցադիմումը վարույթ ընդունելու պահից տասնօրյա ժամկետում: Պաշտպանական որոշումը կայացվում է դատավորի ընդհանուր հայեցողությամբ, ով սահմանափակված չէ վարույթի մասնակիցների կողմից ներկայացված ապացույցներով, միջնորդություններով, բացատրություններով եւ առարկություններով, եւ [դատավորն] իր միանձնյա հայեցողությամբ բավարար միջոցներ է ձեռնարկում կոնկրետ դեպքում պահանջվող փաստերի վերաբերյալ հասանելի եւ գնահատելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Պաշտպանական որոշումն ուժի մեջ է մտնում այն հրապարակելու պահից: Դատարանի որոշումն ուղարկվում է տուժողին եւ բռնություն գործադրած անձին, ինչպես նաեւ հայցադիմումի մյուս կողմերին: Անհրաժեշտության դեպքում դատական ակտի պատճենները տրամադրվում են ոստիկանությանը եւ Ընտանեկան բռնության մասին օրենքով սահմանված լիազոր մարմնին (Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն) եւ Չարկադիր կատարման ծառայությանը²²⁷:

227 Եթե դատական ակտը վերաբերում է նաեւ անչափահասի, ապա այն ուղարկվում է նաեւ

Խնդրահարույց է պաշտպանական որոշման մասին ոստիկանությանը մշտապես տեղեկացնելու վերաբերյալ կարգավորման բացակայությունը: Ինչպես նշվել է վերոգրյալում, պաշտպանական որոշման կատարման համար անհրաժեշտ է հետեւյալը՝ վերահսկողություն, տուժողի հետ պարբերական կապի հաստատում, էլեկտրոնային վերահսկողություն եւ ռիսկի գնահատման թարմացում: Ոլորտի բոլոր դերակատարները պետք է ունենան թարմացված տեղեկատվություն: Ուստի դեռեւս հստակ չէ, թե արդյոք Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը հնարավորություն կունենա՞ն ասպահովել պաշտպանական որոշումների արդյունավետ կատարումը եւ մշտադիտարկումը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կարող է համաձայնության դեպքում դրանում նշված ժամկետից շուտ վերացվել դատարանի կողմից՝ համաձայն Ընտանեկան բռնության մասին օրենքի: Դա կարող է արվել նաեւ առանց դատական նիստ հրավիրելու: Պաշտպանական որոշումը կարող է նաեւ վերացվել, եթե ապացուցվում է, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է կատարում, որոնց պատճառով բռնություն գործադրած անձը չի կատարում պաշտպանական որոշումը: Նշվածը խնդրահարույց է արդյունավետ պաշտպանության ասպահովման տեսանկյունից:

Պաշտպանական որոշումը կարող է նաեւ վերացվել ընտանիքում բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն²²⁸: Նշված կարգավորումը միջազգային չափանիշների խախտում է: Տուժողները չպետք է պատասխանատվության ենթարկվեն պաշտպանական որոշումների խախտումների համար, այդ թվում՝ պաշտպանական որոշումների կասեցման միջոցով: Բացի դրանից, 234.4-րդ հոդվածի 6-րդ մասն այնպես է ձեւակերպված, որ մեղադրում է տուժողին պաշտպանական որոշման խախտման համար, ինչը տուժողին մեղադրելու բացահայտ իրավական ձեւակերպում է:

Խնամակալության եւ հոգաբարձության մարմին
228 Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.4-րդ հոդված

3.2.3. ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊԹԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՑԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՉԱՐՑԵՐԸ

Ընտանեկան բռնության շատ դեպքեր ազդում են երեխաների վրա՝ ինչպես որպես բռնություն գործադրած անձի կողմից բռնության անմիջական տուժողներ, այնպես էլ որպես ոչ անմիջական տուժողներ, բռնության վկաներ, որոնցից երկուսն էլ չափազանց վնասակար են երեխաների համար: Ինչպես ՄԻԵԴ-ն ընդունել է, «երեխաները նույնպես հաճախ են դառնում այդ երեւույթի տուժողը՝ անմիջական կամ ոչ անմիջական»²²⁹: Հաշվի առնելով նրանց հատուկ պաշտպանության կարիքները, ինչպես սահմանված է երեխաների իրավունքների մասին կոնվենցիայով՝ երեխա տուժողների հետ աշխատելը պահանջում է պաշտպանության հատուկ նկատառումներ:

Ընտանեկան բռնության մասին օրենքով նախատեսվում է անչափահասների՝ որպես բռնության անմիջական տուժողների եւ ոչ թե ոչ անմիջական տուժողների պաշտպանության կարիքներին առնչվելու ընթացակարգեր: Ընտանեկան բռնության մասին օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ եթե անմիջականորեն սպառնացող վտանգի տակ գտնվող անչափահաս կամ անգործունակ անձ է, ապա անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության իրավասու աշխատակիցն այդ որոշման պատճենը եւ համապատասխան արձանագրությունն ուղարկում է խնամակալության եւ հոգաբարձության մարմին, որը գնահատում է իրավիճակը եւ ձեռնարկում օրենքով եւ իր կանոնադրությամբ նախատեսված միջոցներ: Եթե անհետաձգելի միջամտության որոշումը կայացվում է անչափահաս կամ անգործունակ անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա նրանց ժամանակավոր խնամքը կազմակերպում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը՝ որոշման պատճենն ստանալուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝ համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով եւ առաջնորդվելով նրանց լավագույն շահերով²³⁰:

Այդուհանդերձ, ինչպես նշված է վերը, անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու հետ կապված՝ նախատեսված ընթացակարգերով հաշվի չի առնվում անհապաղ ժամանակավոր խնամակալության կամ շփման արգելքի հետ կապված միջոցներ ձեռնարկելու կարիքը՝ ա) անչափահասին շարունակ բռնության ենթարկելը կանխելու եւ բ) ծնողական իրավունքների պաշտպանության նկատառումներով՝ տուժողի հետ շփվելու համար պատճառաբանություն կամ արդարացում չհամարելու նպատակով՝ այդպիսով թուլացնելով տուժողին եւ երեխային տրամադրված պաշտպանությունը:

Ընտանեկան բռնության մասին օրենքի 8-րդ հոդվածով պաշտպանական որոշման կայացման առնչությամբ այնուհետեւ նախատեսվում է, որ եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս է կամ դատական կարգով անգործունակ ճանաչված անձ, ապա պաշտպանական որոշման համար դիմումը կարող են ներկայացնել մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը կամ խնամակալության ու հոգաբարձության մարմինը²³¹: Եթե պաշտպանական որոշումը կայացվում է բռնություն գործադրած անձի (անձանց) հետ ապրող անչափահասի միակ

229 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 132-րդ պարբերություն:

230 Ընտանեկան բռնության մասին օրենք, 7-րդ հոդված:

231 Այսպիսով, Ընտանեկան բռնության մասին օրենքով պահանջվում է, որ թե՛ ընտանիքի անդամները եւ թե՛ օրինական ներկայացուցիչը պետք է բողոք ներկայացնեն խնամակալության մարմիններ՝ այդպիսով բարդացնելով ընթացակարգը:

օրինական ներկայացուցչի (կամ ներկայացուցիչների) նկատմամբ, ապա դատարանը ինսամակալության եւ հոգաբարձության մարմինն հանձնարարում է լուծել նրանց ժամանակավոր ինսամքի հարցը՝ ազգային օրենսդրությանը համապատասխան եւ առաջնորդվելով նրանց լավագույն շահերով:

Կառավարության թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ինսամակալության եւ հոգաբարձության մարմինը կարող է ընտրել առանց ծնողական ինսամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձեւերը. դրանք ներառում են՝ ինսամակալ կամ հոգաբարձու նշանակելը կամ ինսամատար ընտանիքում ինսամքի եւ դաստիարակության հանձնելը:

Կարելու է նշել, որ երեխաների նկատմամբ բռնությունը կարող է հանգեցնել ծնողական իրավունքներից զրկելուն: Ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ ծնողական իրավունքներից կարելի է զրկել կամ դրանք սահմանափակել միայն օրենքով, դատարանի որոշմամբ եւ երեխայի լավագույն շահերից ելնելով: Վերջերս՝ 2017 թվականին փոփոխված Ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանվում է այն դեպքերի ցանկը, երբ ծնողը դատարանով կարող է զրկվել իր իրավունքներից: Այն ամրագրում է, որ երեխայի լավագույն շահերն ապահովելու նպատակով ծնողները կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք «դաժանաբար» են վարվում երեխայի հետ:

Ընտանեկան օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ծնողին ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց կարող է ներկայացնել՝

- ▶ ծնողներից մեկը,
- ▶ ինսամակալության եւ հոգաբարձության մարմինը,
- ▶ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները, որոնք լիազորված են պաշտպանելու երեխաների իրավունքներն ու շահերը:

Դրանից բացի, Ընտանեկան օրենսգրքով նախատեսվում է ինսամակալության եւ հոգաբարձության մարմինների, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նման հայցերին առնչվելու հետ կապված հատուկ ընթացակարգեր: 60-րդ հոդվածի 1.1 կետով նախատեսվում է, որ այդ մարմինները պետք է հայց ներկայացնեն դատարան ոչ ուշ, քան ծնողական իրավունքներից զրկելու հիմքերն իրենց հայտնի դառնալու օրվանից մեկ ամիս հետո: Ինսամակալության եւ հոգաբարձության մարմինը պետք է ներկա լինի այս գործերով դատական նիստերին:

IV. ԲՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ՊԱՏՇԱՃ ՉԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿԱՆԽՈՒՄ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ԲՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ, ՊԱՏԻԺ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ, Ի ՊԱՇՏՈՆԵ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄ

Միջազգային իրավունքի համաձայն՝ պատշաճ զգուշավորություն ցուցաբերելու պարտականությունը բխել է դիվանագիտական պաշտպանության սկզբունքներից եւ *Վելասկես Ռոդրիգեսն ընդդեմ Հոնդուրասի [Velasquez Rodriguez v. Honduras]* (1989 թվական) նախադեպային գործից հետո կիրառվել է մարդու իրավունքների խախտումների համատեքստում: Այդ գործով Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը վճռել է, որ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի մարդու իրավունքների խախտումները կանխելու, ինչպես նաեւ դրանք տեղի ունենալու դեպքում քննելու, քրեական հետապնդում իրականացնելու եւ պատժելու համար: Դատարանը որոշել է, որ պետության կողմից կանխարգելիչ կամ պաշտպանիչ գործողություն չիրականացնելը կամ անգործությունն «ինքնին համարվում է պետության կողմից հիմնական իրավունքների խախտում: Սա այն պատճառով է, որ պետությունը վերահսկում է իր տարածքում տեղի ունեցող արարքները տարբերակելու միջոցները»²³²: *Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության [Osman v. United Kingdom]* (1998 թվական) նախադեպային որոշման մեջ ՄԻԵԴ-ը նաեւ ճանաչել է իշխանությունների՝ այն անհատներին պաշտպանելու պարտականությունը, որոնց կյանքը վտանգված է մեկ այլ անհատի քրեական բնույթի արարքների պատճառով: Այդ պարտականությունը հաստատվել է ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ մի շարք այլ հետազա վճիռներում²³³:

ՄԻԵԴ-ի՝ պատշաճ զգուշավորության չափանիշի վերաբերյալ դատական պրակտիկայով սահմանվում է պետության պատասխանատվությունը, «եթե պետության իշխանությունները չեն գործում պատշաճ զգուշավորությամբ» i) պաշտպանության, ii) քննության, iii) քրեական հետապնդման եւ iv) երրորդ անձանց կողմից կատարված խախտումները պատժելու, ինչպես նաեւ v) տուժողներին փոխհատուցում տրամադրելու ժամանակ²³⁴: Մարդու իրավունքների միջազգային

232 Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի հարցերով ժամանակավոր կոմիտե (CAHVIO), *Պատշաճ զգուշավորություն ցուցաբերելու պարտականություն*, 2010 թվական, որտեղ քննարկվում է Վելասկես Ռոդրիգեսն ընդդեմ Հոնդուրասի գործը (1989 թվական), էջ 2, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680593fc8>:

233 Տե՛ս, օրինակ, *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գործ թիվ 33401/02, 2009 թվական. *Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey]*, 57/1996/676/866, 1997 թվական. *Ա-ն ընդդեմ Խորվաթիայի [A. v. Croatia]*, գանգատ թիվ 55164/08, 2010 թվական, 60-րդ պարբերություն. *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի*, գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, *Բեւակուան ընդդեմ Բուլղարիայի [Bevacqua v. Bulgaria]*, գանգատ թիվ 71127/01, 2008 թվական, 65-րդ պարբերություն. *Կոնտրովանն ընդդեմ Սլովակիայի [Kontrová v. Slovakia]*, գանգատ թիվ 7510/04, 2007 թվական, 49-րդ պարբերություն:

234 *Ա-ն ընդդեմ Խորվաթիայի*, գանգատ թիվ 55164/08, 2010 թվական, *Բեւակուանն ընդդեմ Բուլղարիայի*, գանգատ թիվ 71127/01, 2008 թվական, *Կոնտրովանն ընդդեմ Սլովակիայի*, գանգատ

մարմինները, այդ թվում՝ ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները եւ հատուկ մանդատ ունեցողներն իրենց որոշումներում, առաջարկություններում եւ քաղաքականության դիսկուրսում նույնպես ճանաչում են պատշաճ զգուշավորության սկզբունքը²³⁵:

Գենդերային հիմքով բռնության դեպքում տուժողներին պաշտանություն տրամադրելու պետության պարտականությունը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված պատշաճ ջանասիրության չափանիշից²³⁶:

Ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության դեպքերի համար պատշաճ զգուշավորության չափանիշի կիրառումը սահմանվել է Ստամբուլի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետում:

Կողմերը ձեռնարկում են օրենսդրական եւ այլ անհրաժեշտ միջոցներ՝ ցուցաբերելու համար պատշաճ զգուշավորություն՝ կանխելու, քննելու, պատժելու եւ հատուցելու համար ոչ պետության ներկայացուցիչների կողմից իրականացված այն բռնարարները, որոնք սույն Կոնվենցիայի գործողության շրջանակում են:

Կանխում/պաշտպանություն. Պատշաճ զգուշավորության չափանիշին համապատասխանության հարցում պետության առաջին պարտականությունը բռնության կանխարգելումն է՝ տուժողների համար համապատասխան պաշտպանություն ապահովելու միջոցով: ՄԻԵԴ-ը գտել է, որ պետություններն այդպես վարվելու պոզիտիվ պարտականություն ունեն՝ ՄԻԵԿ-ի 2-րդ, 3-րդ եւ 8-րդ հոդվածների համաձայն, որոնք են, համապատասխանաբար, կյանքի իրավունքը պաշտպանելը, խոշտանգման եւ վատ վերաբերմունքի արգելքը եւ անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը:

Օրինակ՝ *Օփուկն ընդդեմ Թուրքիայի* գործով Դատարանը գտել է, որ 2-րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտականությունը՝

ներառում է պետության՝ կյանքի իրավունքը պաշտպանելու առաջնային պարտականությունը՝ անձի նկատմամբ հանցանքի կատարումը զսպելու համար մշակելով քրեաիրավական արդյունավետ դրույթներ, որոնց գործողությունն ամրապնդվում է այդ դրույթների խախտումների կանխարգելման, զսպման եւ պատժման համար նախատեսված

թիվ 75 10/04, 2007 թվական:

235 Տես նաեւ ԿՆԽԿԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականը. Կանանց նկատմամբ բռնություն, 9-րդ պարբերություն. Տես նաեւ՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար, *Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձեւերի խորը ուսումնասիրություն*, 73,89, Գլխավոր ասամբլեայի թիվ 48/104 բանաձեւ, 4-րդ հոդվածի «գ» եւ «դ» կետեր, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ A/RES/48/104 (Որոշում թիվ 20, 1993 թվական) եւ ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ A/61/122/Add.1 (2006 թվականի հուլիսի 6). Խոշտանգումների դեմ Միավորված ազգերի կոմիտեն նման լայն շրջանակ է սահմանում պետությունների՝ գենդերային հիմքով բռնության դեմ պայքարելու պարտավորությունների համար: Այն դեպքում, երբ պետության պաշտոնատար անձինք «գիտեն կամ հիմնավոր պատճառներ ունեն կարծելու», որ ոչ պետական կամ մասնավոր դերակատարները կատարում են խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հետ կապված արարքներ, եւ նրանք «չեն ցուցաբերում պատշաճ զգուշավորություն» այդ դերակատարներին «կանխելու, քննելու, քրեական հետապնդման ենթարկելու եւ պատժելու» հարցում, պետությունը կրում է պատասխանատվություն, իսկ դրա պաշտոնատար անձինք պետք է համարվեն հեղինակներ, հանցակիցներ կամ այլ ձեւով պատասխանատուներ. . . այդպիսի անթույլատրելի արարքների կատարմանը համաձայնություն տալու կամ դրանք ընդունելու համար»: Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեի (ԽՊԿ) 2-րդ ընդհանուր մեկնաբանություն, վերոնշյալ 9-րդ ծանոթագրություն, 18-րդ պարբերություն. «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» հռչակագիր (ԿՆԲԿՅ), 1994 թվական, 4-րդ հոդված. Եվրոպայի խորհուրդ, Բռնությունից կանանց պաշտպանության մասին Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված Rec(2002)5 հանձնարարական:

236 Տես նաեւ՝ ԿՆԽԿԿ, Ընդհանուր հանձնարարական թիվ 28:

իրավակիրառ մեխանիզմներով: Դա համապատասխան հանգամանքներում նաեւ տարածվում է իշխանությունների՝ կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականության վրա, որի նպատակն է պաշտպանել այն անհատին, որի կյանքը վտանգված է մեկ այլ անհատի հանցավոր արարքների հետեւանքով²³⁷: (Ընդգծումն ավելացված է):

Պետության՝ 2-րդ հոդվածի համաձայն կյանքի իրավունքը պաշտպանելու համար «կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու» պոզիտիվ պարտականությունն ուսումնասիրելիս Դատարանը կիրառել է հետեւյալ չափանիշը.

իշխանությունները գիտեին կամ պետք է իմացած լինեին նույնականացված անհատի կյանքին երրորդ կողմի քրեական բնույթի գործողությունների հետեւանքով այդ պահին սպառնացող իրական եւ անմիջական վտանգի առկայության մասին, եւ որ նրանք այնպիսի. . . միջոցներ չեն ձեռնարկել, որոնք, եթե խելամիտ դատենք, կարող էր ակնկալվել, որ կօգնեին խուսափել այդ ռիսկից²³⁸:

▶ ՄԻԵԴ-ի կողմից պատշաճ զգուշավորության հանգամանքի ստուգում. անձի նկատմամբ հանցանքի կատարումը զսպելու համար նախատեսված՝ քրեաիրավական արդյունավետ դրույթներ, որոնց գործողությունն ամրապնդվում է այդ դրույթների խախտումների կանխարգելման, զսպման եւ պատժման համար նախատեսված իրավակիրառ մեխանիզմներով:

▶ Դա համապատասխան հանգամանքներում նաեւ տարածվում է իշխանությունների՝ կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականության վրա, որի նպատակն է պաշտպանել այն անհատին, որի կյանքը վտանգված է մեկ այլ անհատի հանցավոր արարքների հետեւանքով:

Քննությունը. Պատշաճ զգուշավորության չափանիշով նաեւ պահանջվում է, որ պետությունները պատշաճ ձեւով եւ արդյունավետորեն քննեն հանցագործությունները, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնություն ներառող հանցագործությունները: Թեեւ Դատարանը *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* գործում 2-րդ հոդվածով սահմանված նյութաիրավական ասպեկտի համաձայն հրապարակել է իր եզրահանգումը, այն այնուհետեւ նշել է, որ 2-րդ հոդվածի դատավարական ասպեկտներով պահանջվում է, որ «առկա լինեն պաշտոնական քննության որոշ արդյունավետ ձեւեր այն դեպքում, երբ անհատներ են սպանվել ուժի գործադրման հետեւանքով կամ պետության պաշտոնատար անձանց, կամ մասնավոր անձանց կողմից»²³⁹: Դատարանը շարունակել է.

այդպիսի քննության հիմնական նպատակը ներպետական այնպիսի օրենսդրության արդյունավետ իրականացման ապահովումն է, որով պաշտպանվում է կյանքի իրավունքը: Իշխանությունները պետք է ձեռնարկեն իրենց համար հասանելի ողջամիտ քայլեր՝ միջադեպի վերաբերյալ ապացույցներն ապահովագրելու համար: Քննության ցանկացած թերություն, որը կարող է խոչընդոտել մահվան պատճառի կամ պատասխանատու անձի կամ անձանց ինքնության հաստատումը, այս չափանիշին չհամապատասխանելու ռիսկ կառաջացնի: Անկախ նրանից, թե ինչ մեթոդ է կիրառվում, «իշխանությունները պետք է գործեն իրենց սեփական նախաձեռնությամբ» անմիջապես, երբ հարցն իրենց ուշադրության կենտրոնում է հայտնվում²⁴⁰: (Ընդգծումն ավելացված է):

237 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 3340 1/02, 2009 թվական, 128-րդ պարբերություն. տե՛ս նաեւ *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի*, գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, 49-րդ պարբերություն:

238 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 3340 1/02, 2009 թվական, 130-րդ պարբերություն:

239 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի*, գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, 62-րդ պարբերություն:

240 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի*, գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, 62-րդ

Այսպիսով, պետության՝ 2-րդ հոդվածի համաձայն պոզիտիվ պարտականությամբ պահանջվում է *ի պաշտոնե* քննություններ: *Մ.Ց. -ն ընդդեմ Բուլղարիայի* [M.C. v. Bulgaria] գործում, որը ներառում էր 14 տարեկան աղջկա խմբակային բռնաբարության դեպք, Դատարանը վճել է, որ պետություններն ունեն նաեւ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի արգելում) եւ 8-րդ հոդվածի (անձնական կյանքը հարգելու իրավունք) համաձայն քննելու պոզիտիվ պարտականություն²⁴¹: Պետության՝ 3-րդ հոդվածի համաձայն քննելու պոզիտիվ պարտականության առնչությամբ Դատարանը նշել է. «Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ծագում է պաշտոնական քննություն իրականացնելու պոզիտիվ պարտականություն: Չի կարող համարվել, որ այդ պոզիտիվ պարտականությունն ընդհանուր առմամբ սահմանափակվում է միայն պետության գործակալների կողմից վատ վերաբերմունքի դեպքերով»²⁴²: 8-րդ հոդվածի համաձայն պոզիտիվ պարտականության հետ կապված՝ Դատարանը բացատրել է.

Չնայած անհատների կողմից կատարված արարքներից պաշտպանության ոլորտում 8-րդ հոդվածի հետ համապատասխանության ապահովմանն ուղղված միջոցների ընտրությունն ընդհանուր առմամբ գտնվում է պետության հայեցողության շրջանակում այնպիսի ծանր արարքները, ինչպես օրինակ՝ բռնաբարությունն է, արդյունավետորեն զսպելու համար, որոնց դեպքում անձնական կյանքի հիմնարար արժեքներն ու կարելուր ասպեկտները վտանգված են, պահանջվում են քրեաիրավական արդյունավետ դրույթներ: Երեխաները եւ այլ խոցելի անհատներ, մասնավորապես, արդյունավետ պաշտպանության իրավունք ունեն²⁴³:

ՄԻԵԴ-ն *Այդինս ընդդեմ Թուրքիայի* գործով գտել է, որ պետությունը պատշաճ քննություն չի իրականացրել, քանի որ չի փորձել գտնել տուժողի բռնաբարության եւ խոշտանգման դեպքերի ականատեսներին²⁴⁴: Դատարանը համաձայնել է տուժողի հետ այն մասով, որ եղել է «անկախ եւ խիստ քննության ու հետաքննության քաղաքականության բացակայություն», ինչպես նաեւ «բողոքողների ահաբեկման տարածվածություն ... եւ բժշկական ապացույցներ ձեռք բերելու մասնագիտական չափանիշների բացակայություն»²⁴⁵:

Հետապնդումը. պետության երրորդ պարտականությունը, պատշաճ զգուշավորության չափանիշի համաձայն, համարվում է այս հանցանքները կատարած անձանց արդար եւ արդյունավետ քրեական հետապնդումը: Այս հարցը հատուկ նշանակություն է ունենում ընտանեկան բռնության գործերով, որտեղ բռնության շրջանակը շատ հաճախ հանգեցնում է, որ տուժող ներք հետ վերցնեն իրենց բողոքները: Ինչպես նկարագրված է վերը, Դատարանը գտել է, որ *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործում «կարելուր» հարցն այն է եղել, թե արդյոք իշխանությունները ցուցաբերել են պատշաճ զգուշավորություն՝ «անկախ տուժողների կողմից բողոքները հետ վերցնելու հանգամանքից»²⁴⁶: Այդ գործում Դատարանը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փորձից եզրակացրել է, որ «որքան ծանր է հանցանքը, եւ որքան մեծ է հետագա հանցանքների վտանգը, այնքան ավելի նպատակահարմար է, որ քրեական հետապնդումը շարունակվի՝ հանրության շահերից ելնելով, նույնիսկ եթե տուժողները հետ են վերցնում իրենց բողոքները»²⁴⁷: Այս առումով այն նշել է գործի մի

պարբերություն:

241 *Մ.Ց. -ն ընդդեմ Բուլղարիայի*, գանգատ թիվ 39272/98, 2004 թվական, 150-153-րդ պարբերություններ:

242 *Մ.Ց. -ն ընդդեմ Բուլղարիայի*, գանգատ թիվ 39272/98, 2004 թվական, 151-րդ պարբերություն:

243 *Մ.Ց. -ն ընդդեմ Բուլղարիայի*, գանգատ թիվ 39272/98, 2004 թվական, 150-րդ պարբերություն:

244 *Այդինս ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 23178/94, 1997 թվական:

245 *Այդինս ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 23178/94, 1997 թվական:

246 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական:

247 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 139-րդ պարբերություն:

բանի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ընտանեկան բռնությանն առնչվող գործերին: Դատարանն ընդգծել է, որ՝

դիմումատուի եւ նրա մոր նկատմամբ նկատվում էր [ոտնձգողի] կողմից բռնության սրացում: [Ոտնձգողի] կողմից կատարված հանցանքները բավականաչափ ծանր էին՝ կանխարգելիչ միջոցների նշանակումը հիմնավորելու համար, եւ տուժողների առողջությանն ու անվտանգությանը շարունակաբար վտանգ էր սպառնում: Հարաբերությունների պատմության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոտնձգողը բազմիցս ընտանեկան բռնություն է գործադրել, եւ հետեւաբար եղել է հետագա բռնության զգալի վտանգ: (Ընդգծումն ավելացված է)²⁴⁸:

Միեւնույն ժամանակ, ինչպես *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, այնպես էլ *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* գործերում ՄԻԵԴ-ը ճանաչել է այդպիսի պրոակտիվ պատասխանատվության ենթարկելու դժվարության հարցը: Այն նշել է.

հաշվի առնելով ժամանակակից հասարակությունները վերահսկելու հետ կապված դժվարությունները, մարդու վարքագծի անկանխատեսելիությունը եւ այն գործնական ընտրությունները, որոնք պետք է կատարել առաջնահերթությունների եւ ռեսուրսների առումով՝ պոզիտիվ պարտականության շրջանակը պետք է մեկնաբանվի այնպես, որ անհնար կամ անհամաչափ բեռ չդնի իշխանությունների վրա²⁴⁹:

Թիվ 28 ընդհանուր հանձնարարականում ԿՆԽՎԿ կոմիտեն հաստատել է, որ՝

եթե կանանց նկատմամբ բռնության հետեւանքով խախտվում են նաեւ մարդու այլ իրավունքներ, ինչպես օրինակ՝ կյանքի իրավունքը կամ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, օրինակ՝ ընտանեկան բռնության եւ բռնության այլ ձեւերի դեպքում, ապա Կողմ պետությունները պարտավոր են հարուցել քրեական վարույթ՝ բռնություն գործադրած անձին (անձանց) դատական պատասխանատվության ենթարկելու եւ համապատասխան քրեական պատիժներ նշանակելու համար²⁵⁰: (Ընդգծումն ավելացված է):

Պատիժը. ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականով նախատեսվում է. «Պետությունները կարող են նաեւ պատասխանատվություն կրել մասնավոր արարքների համար, եթե նրանք չեն գործել պատշաճ զուլաճվորությամբ՝ իրավունքների խախտումները կանխելու համար կամ քննելու եւ բռնարարքները պատժելու համար, ինչպես նաեւ փոխհատուցում տրամադրելու համար»²⁵¹: Ավելին, Ստամբուլի կոնվենցիայի 45-րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունները՝

ձեռնարկեն օրենսդրական եւ այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ, սույն Կոնվենցիային համապատասխան, նախատեսվող հանցագործությունները պատժվեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցներով՝ հաշվի առնելով դրանց ծանրությունը: Այս պատժամիջոցները ներառում են, ըստ անհրաժեշտության, ազատազրկման հետ կապված պատիժներ, ինչը հանձնման հարց բարձրացնելու հնարավորություն է տալիս:

248 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 134-րդ պարբերություն:

249 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի*, գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, 50-րդ պարբերություն:

250 ԿՆԽՎԿ, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ Կողմ պետությունների ստանձնած հիմնական պարտավորությունների վերաբերյալ թիվ 28 ընդհանուր հանձնարարական, CEDAW/C/GC/28, 2010 թվական, 34-րդ պարբերություն:

251 ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր հանձնարարական, 9-րդ պարբերություն:

ՄԻԵԴ-ն Ա.-ն ընդդեմ *Խորվաթիայի* գործով գտել է 8-րդ հոդվածի խախտում՝ ընտանեկան բռնության գործով բազմաթիվ վարույթներ (երեք քրեական վարույթ, մանր իրավախտումների համար չորս վարույթ) ներառող գործում: Այդ վարույթների արդյունքը եղել է մի շարք պաշտպանական որոշումներ կայացնելը, մինչդեռ տական կալանքի վերցնելը, հոգեբուժական եւ հոգեառաջնության բուժումը եւ ազատագրված մանուկներին դատապարտելը: Թեեւ որոշ պատժամիջոցներ ի կատար են ածվել, բռնություն գործադրած անձը իր կատարած երկու իրավախախտումների համար (որոնցից մեկը ներառում էր տուժողին մահվան սպառնալիքներ հղելը) ազատագրված չի դատապարտվել:

ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը պատշաճ կերպով չի պաշտպանել դիմումատուի իրավունքներն այն դեպքում, երբ իշխանությունները հաշվի չեն առել բազմաթիվ քրեական եւ մանր իրավախախտումների գծով վարույթները, որոնք վերաբերել են նույն անձի կողմից նույն տուժողի նկատմամբ կատարված մի շարք բռնարարների՝ այդպիսով չդիտարկելով գործի նախապատմությունը որպես մեկ ամբողջություն: Այս գործում ընդգծվում է դատական համակարգում համագործակցության կարևորությունը, ինչպես նաեւ համապատասխան պատիժը եւ (կամ) պաշտպանության միջոցը որոշելիս վարույթների ամբողջ շրջանակն ուսումնասիրելու անհրաժեշտությունը: Դրանով նաեւ ուշադրություն է հրավիրվում դատավճիռների կատարման եւ պատժի կրելն ապահովելու նկատմամբ դատական վերահսկողության դերին²⁵²:

Փոխհատուցումը. Ունենալով նաեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք՝ Ստամբուլի կոնվենցիայի 20-րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունները «ձեռնարկեն օրենսդրական եւ այլ անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ տուժողներն ունենան սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցանքներից ցանկացածը կատարած անձից փոխհատուցում պահանջելու իրավունք: ՄԻԵԴ-ը *Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի* գործով վճռել է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք) խախտում, քանի որ դիմումատուն հնարավորություն չի ունեցել պահանջելու ոչ նյութական վնասի հատուցում ոստիկանության այն աշխատակիցների կողմից իրենց պարտականությունները թերի կատարելու համար, որոնք չեն պաշտպանել իր երեխաներին ամուսնու կողմից ատրճանակով կրակելուց²⁵³:

Պետություններն ունեն տուժողներին փոխհատուցում տրամադրելու պարտականություն, նույնիսկ եթե պետության գործակալները ուղղակիորեն պատասխանատու չեն բռնության համար: Միավորված ազգերի կազմակերպության՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների եւ հետեւանքների հարցերով հատուկ զեկուցողն արձանագրել է, որ «միջազգային հանրության կողմից վերջերս հաստատված նորմերի համատեքստում այն պետությունը, որը չի պայքարում կանանց նկատմամբ բռնության հետ կապված հանցագործությունների դեմ, համարվում է այնքան մեղավոր, որքան կատարողները»²⁵⁴:

252 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ*, 2016 թվական, էջ 85, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-final-english/16807626a4>.

253 *Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի*, գանգատ թիվ 75 10/04, 2007 թվական:

254 Միավորված ազգերի կազմակերպության՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների եւ հետեւանքների հարցերով հատուկ զեկուցող, Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների արդյունավետ իրականացումը բարելավելու համար այլընտրանքային մոտեցումներ, եղանակներ ու միջոցներ, 72-րդ պարբերություն, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ E/CN.4/1995/42 (1994 թվականի նոյեմբերի 22) (պատրաստվել է Ռեդիկա Կոմարասովիի կողմից), որտեղ նույնպես նշվում է, որ «անհրաժեշտ է, որ փոխհատուցման միջոցներով կապ հաստատվի առանձին հատուցման եւ կառուցվածքային փոխակերպման միջոցներ», որոնք ... նախապես առկա մոդելները, գենդերային աստիճանակարգությունը, սիստեմատիկ մարզինալացումը եւ կառուցվածքային

4.1. ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ. ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՉԱՎԱՔՈՒՄԸ

4.1.1. Ի ՊԱՇՏՈՆԵ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՉԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ

4.1.1.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 55-րդ հոդվածով ամրագրվում է *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործում ՄԻԵԴ-ի կողմից սահմանված՝ պատշաճ զգուշավորություն ցուցաբերելու չափանիշի համաձայն պահանջ՝ ընտանեկան բռնություն եւ կանանց նկատմամբ բռնություն ներառող գործերում *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնելու համար: Դրանով նախատեսվում է, որ՝

այս Կոնվենցիայի 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ եւ 39-րդ հոդվածներով [ֆիզիկական եւ սեռական բռնություն, հարկադիր ամուսնություն, կանանց սեռական օրգանների խեղում եւ հղիության արհեստական հարկադիր ընդհատում կամ հարկադիր ամլացում] նախատեսված իրավախախտումներն ամբողջությամբ կամ մասամբ իրենց տարածքում կատարվելու դեպքում իրավախախտումների քննությունը կամ դրանցով քրեական հետապնդում իրականացնելը լիովին կախված չլինի տուժողի կողմից հաղորդում կամ բողոք ներկայացվելու փաստից, եւ որ վարույթները հնարավոր լինի շարունակել անգամ այն դեպքում, երբ տուժողը հրաժարվում է իր ցուցմունքներից կամ հետ է վերցնում իր բողոքը:

Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ 55-րդ հոդվածի նպատակն է՝ «հնարավորություն տալ, որ քրեական գործով քննությունները եւ վարույթներն իրականացվեն առանց այդպիսի վարույթ հարուցելու եւ դատապարտումն ապահովելու պատասխանատվությունը տուժողի վրա դնելու»²⁵⁵: Այն բացատրել է.

այն փաստը, որ այս Կոնվենցիայով կարգավորվող մի շարք իրավախախտումներ կատարվել են ընտանիքի անդամների, զուգընկերների կամ տուժողի անմիջական սոցիալական միջավայրում գտնվող անձանց կողմից, եւ դրա հետեւանքով ամոթի, վախի եւ անօգնականության զգացումների առաջացումը հանգեցնում են հաղորդումների եւ հետեւաբար դատապարտումների ավելի քիչ քանակի: Այսպիսով, իրավապահ մարմինները պետք է քննությունն իրականացնեն պրոակտիվ եղանակով, որպեսզի հավաքեն այնպիսի ապացույցներ, ինչպիսիք են՝ իրեղեն ապացույցները, վկաների ցուցմունքները, բժշկական փորձաքննությունը եւ այլն՝ համոզվելու համար, որ վարույթը կարող է իրականացվել, եթե նույնիսկ տուժողը հետ է վերցնում իր ցուցմունքը կամ բողոքն առնվազն այնպիսի լուրջ իրավախախտումների առնչությամբ, ինչպիսին է, օրինակ՝ մահվան համ մարմնական վնասվածքի հանգեցնող ֆիզիկական բռնությունը²⁵⁶:

անհավասարություններն ամրապնդելու փոխարեն միտված են դրանք վերացնելուն . . . »:

255 Բացատրական զեկույց, 279-րդ պարբերություն:

256 Բացատրական զեկույց, 280-րդ պարբերություն:

Պետությունների՝ 2-րդ, 3-րդ եւ 8-րդ հոդվածների համաձայն սահմանված պոզիտիվ պարտականությունների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից դատական պրակտիկայում սահմանված չափանիշներին համանման՝ Ստամբուլի կոնվենցիայի հեղինակներն ընդգծում են ծանր մարմնական վնասվածք պատճառելու կամ կյանքից զրկելու դեպքերում իշխանությունների կողմից պահանջվող պրոակտիվ ջանքի գործադրումը:

Ինչպես նկարագրված է վերը, Դատարանը գտել է, որ *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործում «կարելու» հարցն այն է եղել, թե արդյոք պաշտպանությանն ուղղված համապատասխան կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու հարցում իշխանությունները ցուցաբերել են պատշաճ զգուշավորություն՝ «անկախ տուժողների կողմից բողոքները հետ վերցնելու հանգամանքից»²⁵⁷: Այս առնչությամբ Դատարանը հետեւել է Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետությունների փորձին՝ բացահայտելու համար այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնելու ժամանակ: Այն նշել է հետեւյալ գործոնները՝

- ▶ իրավախախտման ծանրությունը.
- ▶ տուժող ի վնասվածքները ֆիզիկական են, թե հոգեբանական.
- ▶ եթե ամբաստանյալը զենք է կիրառել.
- ▶ եթե ամբաստանյալը հարձակումից հետո որեւէ ձեւով սպառնացել է.
- ▶ եթե ամբաստանյալը պլանավորել է հարձակումը.
- ▶ ընտանիքում ապրող որեւէ երեխայի վրա ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական).
- ▶ ամբաստանյալի՝ նորից իրավախախտում կատարելու հնարավորությունները.
- ▶ տուժողի կամ ցանկացած այլ անձի, որը կարող էր ներգրավված լինել, առողջությանը եւ անվտանգությանը ներկայացվող շարունակական սպառնալիքը.
- ▶ տուժողի ներկայիս հարաբերությունը ամբաստանյալի հետ եւ տուժողի ցանկություններին հակառակ իրականացվող քրեական հետապնդման հետ մեկտեղ շարունակվող հարաբերության վրա ազդեցությունը.
- ▶ հարաբերության պատմությունը, մասնավորապես, եթե նախկինում տեղի է ունեցել բռնության այլ դեպք, ինչպես նաեւ
- ▶ ամբաստանյալի քրեական անցյալը, մասնավորապես՝ նախկինում բռնություն գործադրելը²⁵⁸:

ՄԻԵԴ-ի կողմից թվարկված այս գործոնները կարող են օգտակար լինել դատախազների համար այն հարցում, թե ընտանեկան բռնության դեպքերում երբ պետք է *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնեն: Դատարանի՝ Թուրքիայում գործող ազգային օրենսդրության վերաբերյալ մոտեցումը կարող է հետագայում մեկնաբանվել Թուրքիայում օրենսդրական դաշտի գնահատմամբ, որով *ի պաշտոնե* թույլատրվում էր իրականացնել պետական հետապնդում միայն այն դեպքերում, երբ վնասվածքների պատճառով տուժողը 10 օր չի կարողացել գնալ աշխատանքի: Դատարանը գտել է, որ՝

հետագայում գործող օրենսդրական դաշտով, մասնավորապես՝ հիվանդության պատճառով անգործունակության համար սահմանված նվազագույն տասը

257 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 131-րդ պարբերություն:

258 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 138-րդ պարբերություն:

օրվա պահանջով չեն բավարարվել պետության՝ ընտանեկան բռնության բոլոր ձևերը պատժող համակարգ ստեղծելու եւ այն արդյունավետորեն կիրառելու, ինչպես նաեւ տուժողներին բավարար երաշխիքներ տրամադրելու պոզիտիվ պարտականությունների հետ կապված պահանջները: Դատարանը համարում է, որ հաշվի առնելով [բռնություն գործադրած անձի] կողմից նախկինում կատարված հանցանքների ծանրությունը՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է կարողանային շարունակել վարույթը՝ հանրային շահից ելնելով՝ անկախ այն հանգամանքից, որ տուժողները հետ են վերցրել բողոքները²⁵⁹:

Վերջերս վերանայված Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխանությանը եւ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերով *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնելու ժամանակ Գլխավոր դատախազի կողմից օգտագործված մշակվող ուղեցույցներին անդրադարձ է կատարվել ստորել՝ ներպետական իրավական դաշտի վերաբերյալ բաժնում:

4.1.1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածով տարբերակվում են մասնավոր կարգով եւ հանրային կարգով իրականացվող քրեական հետապնդման ենթակա հանցագործությունները: Մասնավոր հետապնդման հանցագործությունները կարող են քննվել, եւ քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն տուժողի բողոքի հիման վրա, եւ դրանք կարճվում են, եթե տուժողը հետ է վերցնում բողոքը կամ ներում է ունեցողին: Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում թվարկվում են մասնավոր հետապնդում պահանջող հանցագործությունները, այդ թվում՝ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության կամ թեթեւ վնաս պատճառելը²⁶⁰, ծեծը²⁶¹ եւ սպառնալիքները²⁶²: Հայաստանում ընտանեկան բռնության հիմնական դեպքերի հետ կապված քրեական հետապնդումն իրականացվել է այս հոդվածների հիման վրա՝ մասնավոր հետապնդման կարգով:

Համապատասխանաբար, Քրեական դատավարության օրենսգրքը փոփոխվել է 2017 թվականին: Ներկայումս, համաձայն 183-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ դատախազը կարող է հարուցել քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, «եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով» չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական հետապնդումը տուժողի ու մեղադրյալի հաշտության կապակցությամբ չի դադարեցվում:

Քրեական դատավարության օրենսգրքում հստակ ձեւակերպված նոր չափանիշը գնահատելիս կարելու է հաշվի առնել այն փաստը, որ, ի տարբերություն ՄԻԵԴ-ի կողմից օգտագործված չափորոշիչների, որոնցով գնահատվում է ունեցողի վարքագիծը, Հայաստանում ուշադրության կենտրոնում գտնվում է տուժողը: Առավել կարելու է այն փաստը, որ այն հիմնված է տուժողի «անօգնականության» վրա, որով արտացոլվում են Դատարանի եւ ԿՆԽՎԿ կոմիտեի կողմից մերժված գենդերային կարծրատիպերը, ինչպես մանրամասն ներկայացված է այս վերապատրաստման ձեռնարկում:

259 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 145-րդ պարբերություն:

260 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, 113.1, 114.1, 115-րդ, 116-րդ եւ 117-րդ հոդվածներ:

261 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, 118-րդ հոդված:

262 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, 137-րդ հոդված:

Գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի կիրարկման ուղեցույց: Ուղեցույցը հղում է կատարում Ընտանեկան բռնության մասին օրենքին՝ ընտանիքում բռնության եւ դրա ձեւերի սահմանումների մասով, եւ համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դրանով պահանջվում է «անօգնական վիճակում» գտնվելու եւ ենթադրյալ հանցանք կատարած անձից կախվածության մեջ լինելու փաստի հստակեցում որպես *ի պաշտոնե* քրեական հետապնդում սկսելու համար պարտադիր պահանջ: Չնայած Ուղեցույցի լեզուն շարունակում է լինել անհասկանալի՝ տուժողի կախվածությունը կարող է լինել նյութական եւ (կամ) ոչ նյութական: Ուղեցույցով, *inter alia* (ի թիվս այլնի), «անօգնական վիճակը» սահմանվում է տուժողի «կյանքին եւ առողջությանը ներկայացվող իրական եւ անմիջական սպառնալիքով»՝ հղում կատարելով ՄԻԵԴ-ի կողմից ձեւակերպված չափանիշներին:

Ինչպես Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասը, այնպես էլ Դատախազի ուղեցույցն առաջ են բերում մի շարք հարցեր: Առաջին, այն չափորոշիչները, որոնցով որոշվում է *ի պաշտոնե* քրեական հետապնդում սկսելու հարցը, մասնավորապես՝ տուժողի անօգնականությունը եւ կախվածությունը, չեն արտացոլում Ստամբուլի կոնվենցիայի 55-րդ հոդվածով սահմանված հարցերը, մասնավորապես՝ իրավախախտման ծանրությունը: Ուղեցույցով սահմանված չափորոշիչները նույնպես չեն արտացոլում *Օփուլն ընդդեմ Թուրքիայի* գործում ՄԻԵԴ-ի կողմից սահմանված հարցերը, որոնք թվարկված են վերը²⁶³: Կարելու է վերհիշել այն հանգամանքը, որ ՄԻԵԴ-ն անարդյունավետ լինելու հիմքով անընդունելի է համարել Թուրքիայի օրենսդրությունը, որով սահմանափակվում է բռնության գործերով *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնելու շրջանակը՝ հիմք ընդունելով վնասվածքների ծանրությունը²⁶⁴: Առավել խնդրահարույց է այն, որ Քրեական դատավարության օրենսգրքում եւ Ուղեցույցի մեջ տուժողի անօգնականությունը չափորոշիչների շարքին դասելը հավանաբար հիմնված է անթույլատրելի գենդերային կարծրատիպերի վրա²⁶⁵: Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասը եւ Դատախազի ուղեցույցը կարող են խոչընդոտ հանդիսանալ Հայաստանում *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար, ինչպես նաեւ Հայաստանը դարձնել խոցելի՝ ՄԻԵԴ-ի կողմից բացասական վճիռների կայացման համար:

Բացի ՄԻԵԴ-ի կողմից սահմանված՝ *ի պաշտոնե* քրեական հետապնդում իրականացնելու անհրաժեշտությունը որոշելու գործոններից՝ կարելու է, որ դատախազները տեղյակ լինեն տուժողի բնավորությունը, վարքը եւ վստահելիությունը գնահատելիս ցանկացած հնարավոր կանխակալ վերաբերմունքի մասին: Նրանք պետք է ապահովեն, որ իրենց գնահատումը հիմնված չլինի «խկական տուժողներ» եւ «պատշաճ վարքագիծ» կարծրատիպերի վրա: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանի վրա, թե ինչպես են դատախազները գնահատում

- ▶ բռնություն գործադրած անձ-տուժող հարաբերությունը.
- ▶ տուժողի բնութագիրը.
- ▶ կասկածյալի բնութագիրը.
- ▶ գործի առանձնահատկությունները²⁶⁶:

263 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 138-րդ պարբերություն:

264 *Օփուլն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 2009 թվական, 145-րդ պարբերություն:

265 Տե՛ս՝ *Կարեն Թայագ Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների [Karen Tayag Vertido v. The Philippines]*, Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿՆԽՎԿ/ՇԿ/49/D/20/2008:

266 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը, Իրավապահ մարմինների եւ արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման*

4.1.2. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ

Ընտանեկան բռնության դեպքերի քննությունների եւ քրեական հետապնդումների ժամանակ գոյություն ունեն ծանրակշիռ ապացույցների վրա հիմնված գործ նախապատրաստելու մի քանի մարտահրավերներ: Հիմնական մարտահրավերներից մեկը տուժողի կողմից բողոքը հետ վերցնելը եւ մասնակցությունից հրաժարվելն է: Դա կարող է տեղի ունենալ սպառնալիքների, հարկադրանքի, իրավապահ մարմինների կողմից կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկվելու նկատմամբ վախի, ընտանիքի անդամների աջակցության բացակայության, տնտեսական կախվածության կամ հաշտվելու պատճառով: Անկախ պատճառից՝ իրավապահ մարմինների աշխատակիցները կանգնած են առանց տուժողների ցուցմունքների վրա հիմնվելու գործ հարուցելու մարտահրավերի առջեւ: Ավելին, այս հանցանքները հաճախ կատարվում են մեկ անձի կողմից՝ հիմնականում առանց վկաների:

Առանց տուժողների ցուցմունքների վարույթ հարուցելը պահանջում է, որ իրավապահ մարմիններն ապացույցների այլ աղբյուրներ հայտնաբերելու հարցում լինեն կառուցողական եւ պրոակտիվ: Օրինակ, **փորձաքննությամբ ձեռք բերված ապացույցը** կարող է օգնել բացատրել վնասվածքի ազդեցությունը հիշողության վրա եւ տուժողի կողմից բացահայտում կատարելու հապաղումները: Փորձագետներն ապահովում են նաեւ հոգեբանական կամ հուզական բռնության վերաբերյալ ապացույցներ:

Առաջին արձագանքողները պետք է փաստաթղթավորեն յուրաքանչյուր վերաբերելի մեկնաբանություն կամ արձագանք, որը կարող է կարեւորություն ունենալ կատարվածի համար: Օրինակ, եթե բռնություն գործադրած անձը, իր հրավունքների մասին տեղեկանալուց հետո ասում է հետեւյալ խոսքը. «Նա արժանի է եղել, որ իրեն ծեծեն: Դուք պետք է տեսնեիք, թե ինչպես էր նա ինձ սադրում», այս նշումները կարող են հետագայում օգտագործվել դատական քննության ժամանակ ներկայացված այլ ապացույցների հետ, այդ թվում՝ եթե տուժողը հրաժարվում է ցուցմունք տալ: Այդպիսի **ինքնաբուխ հայտարարությունները** կարող են նույնպես օգտագործվել որպես հաստատող լրացուցիչ ապացույցներ, եթե տուժողի վստահելիությունը հարցականի տակ է: Մյուս վկաների կողմից արված ինքնաբուխ մեկնաբանությունները նույնպես պետք է գրանցվեն²⁶⁷:

Կարեւոր է նշել, որ բժշկական արձանագրության կամ բռնության մասին վկայող այլ բնական ցուցիչների բացակայությունը չի կարող հիմք համարվել քննություն չիրականացնելու մասին որոշում կայացնելու համար: Այդպիսի ապացույցի բացակայությունը չի ենթադրում, որ տուժողի կողմից ներկայացված պահանջները հիմնավորված չեն:

Գոյություն ունեն ապացույցների մի շարք տեսակներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան բռնության գործով դատախազներին աջակցելու համար, ինչպես թվարկված է տեքստային հատվածում:

ուսումնական ռեսուրս, 2016 թվական, էջ 59, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/16805970c1.267> Տե՛ս՝ *Նաչովան եւ այլք ընդդեմ Բուլղարիայի [Nachova and Others v. Bulgaria]*, գանգատ թիվ 43577/98 եւ 43579/98, 2005 թվական, որը վերաբերում է ցերեկը Ռումինիայի հարեւանությամբ ռումինացի երկու՝ առանց զենքի զորակոչիկներին ավտոմատ զենքերով մահվան ելքով կրակելու փաստին: Սպանությունից անմիջապես հետո զինվորական ոստիկանության աշխատակիցը քաղաքի բնակիչներից մեկին, ենթադրաբար գոռալով, ասել է՝ «Դուք, անիծված գնչուներ»՝ միեւնույն ժամանակ հրացանը պահելով նրա վրա: Դատարանը գտել է, որ զինվորական ոստիկանության կողմից արված ինքնաբուխ ապացույցներով ցույց են տրվում խտրական դրդապատճառները՝ ի խախտումն 14-րդ հոդվածի:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

- ▶ Ոստիկանության աշխատակիցների հայտարարությունները դեպքի վայրից կամ տուժողի կամ մեղադրյալի հետ փոխգործակցության այլ ձևերի վերաբերյալ:
- ▶ Հարեւանների հայտարարությունները կամ այլ վկաների ցուցմունքները (օրինակ՝ ընկերների, երեխաների, ուսուցիչների, գործընկերների, կանանց ճգնաժամային կենտրոնների ու ապաստանների անձնակազմերի եւ այլոց ցուցմունքները):
- ▶ Անհետաձգելի կանչերի (ոստիկանության հերթապահ մասեր ուղղված զանգերի) ձայնագրությունները:
- ▶ Տեսահսկման CCTV համակարգի (փակ կոնտուրով տեսահսկում) ձայնագրությունները (սչենք, որ այդ ձայնագրությունները հատկապես օգտակար են հետապնդման ընթացքում հոգեբանական ահաբեկման դեպքերում):
- ▶ Վնասվածքի եւ դեպքի վայրի լուսանկարները (այդ թվում վնասված գույքի լուսանկարները):
- ▶ Հիվանդության պատմությունը (բժշկական եզրակացությունները) (այդ թվում անհետաձգելի բժշկական օգնության պատմությունը, ինչպես նաեւ ոտնձգության պատմությունը ցույց տվող այնպիսի եզրակացություններ, ինչպիսիք են ստոմատոլոգիական քարտերը, ինչպես նաեւ մասնագետների հետազոտությունների արդյունքները):
- ▶ Միջադեպի դատաբժշկական փորձաքննության արդյունքների մասին եզրակացությունը:
- ▶ Նախորդ միջադեպերի պատմությունը (օրինակ՝ հանցանք կատարած անձի դատվածության մասին տեղեկանքը, վտարման մասին նախորդ կարգադրությունները (կանխարգելիչ կարգադրությունները), վարչական տույժերը):
- ▶ Ընտանեկան բռնության վերաբերյալ նախորդ հաղորդումները, որոնց մասով քննություն չի իրականացվել:
- ▶ Բռնություն գործադրած անձի կողմից տուժողին ուղղված նամակագրությունը, մասնավորապես այն նամակագրությունը, որը կարող է օգտագործվել որպես սպառնալիքների ապացույց (գրություններ, նամակներ, էլեկտրոնային նամակներ, ԿՅԾ հաղորդագրություններ, ֆեյսբուքյան (վոթսափի) գրառումներ եւ այլն):
- ▶ Բռնություն գործադրած անձի վատ համբավի վերաբերյալ ապացույցը:
- ▶ Փորձագետի եզրակացությունը կամ ցուցմունքները, մասնավորապես այն ցուցմունքները, որոնցով պարզաբանվում են տուժողի վրա բռնության ազդեցությունը, բռնաբարության տուժողին ներհատուկ վարքագծերն ու արձագանքները, այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «բռնության պարույրը» կամ «ծեծի ենթարկված կանանց սինդրոմը» եւ այլն ¹:

Ավելին, ապացույցներ տրամադրելու համար **վկաներ հայտնաբերելու գործընթացը** չպետք է սահմանափակվի միայն ականատեսներով: Գործի փաստերի հետ կապված տեղեկություններ կարող է տրամադրել անձանց ավելի լայն շրջանակ: Օրինակ՝

հարեւանները կարող են տեղեկություններ ունենալ ընտանեկան վեճերի ընթացքում նրանց կողմից լաված աղմուկի վերաբերյալ, տուժողների բարեկամները կամ վստահելի անձինք կարող են ներկայացնել այնպիսի միջադեպեր, որոնցով նախկինում իրենց հետ կիսվել է տուժողը: Ուսուցիչները կամ դպրոցի վարչական անձնակազմը կարող են տրամադրել տեղեկություններ՝ երեխաների, ինչպես նաեւ դպրոցում նրանց հաճախումների կամ տանը բռնության ենթարկվելու հետ կապված այլ հնարավոր վարքագծային ցուցիչների վերաբերյալ:

Դատախազների համար պատշաճ գործելակերպ կարող է համարվել տուժողի կողմից տրված **հստակ եւ համապարփակ ցուցմունքը** գործի նյութերում պահելը, որը կարող է որպես ապացույց օգտագործվել այն դեպքում, երբ վկան ցուցմունք չի տալիս դատարանում: Տուժողի ցուցմունքը կարող է օգտագործվել դատական գործընթացի յուրաքանչյուր փուլում տուժողին միջադեպի վերաբերյալ ոչ անհրաժեշտ եւ կրկնվող հարցաքննությունից պաշտպանելու նպատակով՝ հատկապես սեռական բռնություն պարունակող միջադեպերի դեպքում: Տուժողի ցուցմունքը կարող է լինել գրավոր կամ տեսաձայնագրված:

Գործի նախապատրաստման կարելու կողմերից է նաեւ պաշտպանության կողմից կանխակալ, շփոթեցնող եւ վտանգավոր ապացույցների ներկայացման հավանականությունը կանխատեսելը եւ պլանավորելը, մասնավորապես այնպիսի ապացույցների, որոնք կարող են վնասել վկային, սակայն գործի համար կարելու արժեք կամ ընդհանրապես որեւէ արժեք չեն ներկայացնում (օրինակ՝ նախկինում ունեցած սեռական վարքի կամ համբավի, թմրանյութերի չարաշահման եւ այլ ապացույցներ): Շատ հաճախ կանանց նկատմամբ բռնության դեպքերում միջամտող հարցաքննությունն օգտագործվում է կանանց անձնական վարքագծի, հագուստի եւ անձնական կյանքի մասին կարծրատիպերի եւ ենթադրությունների վրա հիմնված ապացույց ներկայացնելու համար: Դատախազները պետք է պատրաստ լինեն առարկելու տուժողի **բացասական բնութագրին վերաբերող այնպիսի ցանկացած ապացույց** ներկայացնելու դեմ, որը կարող է հանգեցնել կանխակալության եւ չի առնչվում քննվող միջադեպին, եւ գերծ պահելու տուժողներին (վկաներին) դրանից: Նմանապես դատավորները նաեւ պետք է վերահսկեն վարույթները եւ միջամտեն այն դեպքում, երբ ուշադրությունն ուղղվում է տուժողի վստահելիությունը հարցականի տակ դնելուն՝ մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը հաստատելու փոխարեն: Անշուշտ, տուժողի ապացույցներից բացի՝ այլապացույցների վրա հիմնված գործն ավելի քիչ է խոցելի նրա վստահելիությանն առնչվող մարտահրավերների նկատմամբ:

Նախադեպային իրավունքի օրինակ.

Յ.-ն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia] գործը վերաբերել է սեռական բնույթի բռնի գործողություններին առնչվող գործով քրեական վարույթի ժամանակ դատավորի դերին: Հիմքում ընկած գործը վերաբերել է տուժողի կողմից X-ի [բռնություն գործադրած անձի] դեմ ներկայացված պահանջին, որում հայտարարվում է, որ վերջինս ստիպել է իրեն՝ այդ ժամանակ 14 տարեկան աղջկան, սեռական հարաբերություն ունենալ իր հետ: Քրեական վարույթի ընթացքում պաշտպանն անձամբ է խաչաձեւ հարցաքննել տուժողին՝ յոթ ամսվա ընդմիջումներով անցկացված չորս դատական նիստերի ընթացքում նրան տալով 100-ից ավելի հարց: ՄԻԵԴ-ն ուսումնասիրել է, թե արդյոք X-ի դեմ քրեական վարույթի ժամանակ պետությունը բավարար չափով պաշտպանել է Y-ի՝ մասնավոր կյանքի՝ մասնավորապես անձնական անձեռնմխելիության նկատմամբ հարգանքը: Դատարանը գտել է, որ

խաչաձեւ հարցաքննության ժամանակ X-ի հարցերից շատերն ուղղված են եղել Y-ի վստահելիությունը վիճարկելուն եւ նրան վարկաբեկելու նպատակ են հետապնդել: Ճանաչելով ամբաստանյալի՝ խաչաձեւ հարցաքննություն անցկացնելու իրավունքը՝ Դատարանը վճռել է, որ պետությունը չի պահպանել համապատասխան հավասարակշռություն ամբաստանյալի իրավունքների եւ դիմումատուի՝ մասնավոր կյանքի իրավունքի միջեւ: Նշելով այն հանգամանքը, որ պաշտպանության կողմն ունի վկայի (տուժողի) հուսալիությունն ու վստահելիությունը վիճարկելու եւ նրա ցուցմունքներում հնարավոր անհամապատասխանությունները մատնանշելու առումով գործողությունների հարաբերական ազատություն՝ Դատարանը նաեւ հստակ նշել է, որ «խաչաձեւ հարցաքննությունը չպետք է օգտագործվի որպես վկաներին ահաբեկելու կամ ստորացնելու միջոց»²⁶⁸:

4.1.3. ՆԱԽԿԻՆՈՒՄ ԴՐՍԵՎՈՐԱԾ ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

4.1.3.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ստամբուլի կոնվենցիայի 54-րդ հոդվածի համաձայն՝

Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ քաղաքացիական կամ քրեական ցանկացած վարույթի շրջանակներում տուժողի սեռական կյանքի պատմության եւ սեռական վարքագծի վերաբերյալ ապացույցները թույլատրելի համարվեն միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերելի են եւ անհրաժեշտ:

Բացատրական զեկույցի համաձայն՝

Դատական վարույթում տուժողի սեռական պատմությանն ու սեռական վարքագծին առնչվող ապացույցները երբեմն չարաշահվում են՝ կասկածի տակ դնելու համար տուժողի կողմից ներկայացված ապացույցները: Պաշտպանության կողմը երբեմն օգտագործում է նախկինում դրսեւորած սեռական վարքագծի պատմության վերաբերյալ ապացույցները՝ վիճարկելու համար տուժողի ազնվությունը, արժանահավատությունն ու համաձայնության բացակայությունը: Սա մասնավորապես վերաբերում է սեռական բռնության, այդ թվում բռնաբարության դեպքերին: Նման ապացույցներ ներկայացնելը կարող է նպաստել վնաս հասցնող այնպիսի կարծրատիպերի ամրապնդմանը, որ տուժողներն այլասերված են, ուստի եւ՝ անբարոյական եւ արժանի չեն քաղաքացիական ու քրեական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանությանը: Սա կարող է հանգեցնել փաստացի անհավասարության, քանի որ տուժողները, որոնք գլխավորապես կանայք են, առավել հավանական է, որ կստանան այսպիսի պաշտպանություն, եթե համարվեն հարգանքի արժանի:²⁶⁸

Ավելին, Բացատրական զեկույցով ընդգծվում է այն հանգամանքը, որ տուժողի՝ նախկինում դրսեւորած սեռական վարքագիծը չպետք է համարվի կանանց նկատմամբ բռնարարների եւ ընտանեկան բռնության արդարացում հանգեցնելով

268 Բացատրական զեկույց, 277-րդ կետ:

բռնություն գործադրած անձին պատասխանատվությունից ազատելուն կամ նրա պատասխանատվությունը մեղմացնելուն: Ուստի, ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական վարույթներում նման ապացույցների ընդունելիությունը 54-րդ հոդվածի ուժով սահմանափակվում է այն դեպքերով, **երբ դրանք վերաբերել են դատաքննության ընթացքում որեւէ կոնկրետ խնդրի առնչությամբ եւ ունեն եական ապացուցողական ուժ:** Չեռեւաբար, այն չի բացառում նման ապացույցների ընդունելիությունը: Եթե դատավորներն ընդունում են նախկին սեռական կյանքի պատմության վերաբերյալ ապացույցներ, ապա դրանք պետք է ներկայացվեն միայն այնպես, որ չհանգեցնեն երկրորդային վիկտիմիզացիայի:²⁶⁹

Ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել դատաբժշկական ապացույցների հավաքմանը: Գենդերագալայուն եւ զոհակենտրոն մոտեցում ապահովելու համար դատաբժշկական ապացույցների հավաքումը պետք է կատարվի մասնավոր վայրում բժշկական հաստատությունում:²⁷⁰ Քննիչներին ապացույցների հավաքման գործում օգնություն ցուցաբերող բուժանձնակազմը պետք է վերապատրաստվի գենդերային զգայունության հարցերով՝ գենդերային հիմքով բռնությունից տուժած անձանց հետ առնչվելու համար, իսկ հետազոտությունները, հնարավորության դեպքում, պետք է կատարվեն կանանց կողմից: Բոլոր այն բժշկական հետազոտություններում, որոնցում հավաքվում են դատաբժշկական ապացույցներ, տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն ու գաղտնիությունը պետք է ապահովված լինեն, եւ միակ տեղեկատվությունը, որը պետք է փոխանցվի քննիչներին, պետք է ուղղակիորեն վերաբերի դատաբժշկական ապացույցներին:²⁷¹ Դատաբժշկական ապացույցների հավաքումը պետք է տուժողներին հասանելի լինի բոլոր աշխարհագրական տարածաշրջաններում:

Դատաբժշկական ապացույցները պետք է հավաքվեն միայն ըստ անհրաժեշտության: *Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey]* գործում դատախազը պահանջել է, որ տուժողը ենթարկվի թվով չորս դատաբժշկական հետազոտությունների, ինչի միակ նպատակն է եղել համոզվելը՝ արդյոք նա կրկյս է եղել նախքան ենթադրյալ բռնաբարությունը:²⁷² *Իգրեթն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia]* գործում ՄԻԵԴ-ը գինեկոլոգիական գծով փորձագետի վկայությունների առնչությամբ նշել է.

Նա [փորձագետը] առերես հանդիպել է դիմումատուի հետ՝ ոստիկանության եզրահանգումները եւ օրթոպեդիկ զեկույցները քննարկելու համար, եւ հարցրել նրան, թե ինչու վերջինս ինքն իրեն ավելի վճռականորեն չի պաշտպանել, ուստի անդրադարձել է այնպիսի խնդիրների, որոնք իրականում չեն առնչվել այն հարցին, որն իրենից պահանջվել է հետազոտել: Դատարանի տեսանկյունից [փորձագետն] իր հարցերով ու դիտողություններով, ինչպես նաեւ իր փորձագիտական եզրակացության մեջ կատարած իրավական եզրահանգումներով սահմանազանցել է իր հանձնարարության, ինչպես նաեւ բժշկական փորձաքննության շրջանակները: Ավելին, ինչպես երեւում է, [փորձագետը] վերապատրաստված չի եղել սեռական չարաշահումից տուժած անձանց հարցաքննության մասով, ուստի դժվար է հասկանալ, թե ինչ նպատակ է հետապնդել նրա միջամտությունն այն հարցերին, որոնք գտնվել են քրեական հետապնդում իրականացնող եւ դատական մարմինների իրավասության ներքո: Առավել կարելու է այն հանգամանքը, որ դիմումատուի

269 Բացատրական զեկույց, 278-րդ կետ:

270 ՄԱԿ-ի Թմրանյութերի եւ հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNDOC), Կանանց նկատմամբ բռնության մասով ոստիկանության արդյունավետ արձագանքի վերաբերյալ ձեռնարկ, Զրեական արդարադատության ձեռնարկների լրակազմ, էջ 57:

271 ՄԱԿ-ի Թմրանյութերի եւ հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNDOC), Կանանց նկատմամբ բռնության մասով ոստիկանության արդյունավետ արձագանքի վերաբերյալ ձեռնարկ, Զրեական արդարադատության ձեռնարկների լրակազմ, էջ 58:

272 *Այդինն ընդդեմ Թուրքիայի [Aydin v. Turkey]*, Գանգատ թիվ 23178/94, 1997 թվական:

փաստարկներով վերջինս հայտնվել է պաշտպանության վիճակում, ինչը, Դատարանի կարծիքով, անտեղի ավելացրել է քրեական դատավարության սթրեսը:²⁷³

Հատկապես կարելու է այն հանգամանքը, որ Դատարանը գտել է, որ «Պետությունը կարող է պատասխանատվություն կրել [փորձագետի] դրսեւորած վարքագծի համար: Դատարանը որեւէ այլ բան վճռելու հիմքեր չի տեսնում Նշելով, որ փորձագետը եւ վիճարկվող հետազոտությունը նշանակվել են գործը քննող դատավորի կողմից՝ ի կատարումն նրա դատավարական լիազորությունների»:²⁷⁴

4.1.3.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում չի գործում որեւէ հատուկ իրավական դրույթ՝ նախկինում դրսեւորած սեռական վարքագծի վերաբերյալ ապացույցները ներկայացնելու ու օգտագործման հարցերը կարգավորելու վերաբերյալ, ինչը դրանց ընդունելիության հանգամանքը կախվածության մեջ է դնում դատավորի հայեցողությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ եւ 127-րդ հոդվածների համաձայն՝ դատավորը, ինչպես նաեւ հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ: Այս չափորոշիչները կիրառվում են նախկինում դրսեւորած սեռական վարքագծի վերաբերյալ ապացույցների նկատմամբ:

ԳՐԾԻ ԶՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.-ին մեղադրանք է առաջադրվել մահվան սպառնալիքներ հնչեցնելու, Բ.-ի՝ իր կնոջ նկատմամբ ֆիզիկական եւ սեռական բռնություն գործադրելու համար, ինչը նա հերքում է: Բ.-ն ամուսնալուծվել է Ա.-ից եւ այժմ երեխաների հետ ապրում է առանձին: Նախկինում եղել են ընտանեկան բռնության մասին հայտարարություններ, սակայն դրանցից ոչ մեկն այնքան լուրջ չի եղել, որքան սույն գործում առաջադրված մեղադրանքները: Նախկինում Ա.-ն մեկ անգամ տուգանվել է, եւ բոլոր մեղադրանքները հանվել են: Նախկինում Բ.-ն միշտ վերադարձել է Ա.-ի մոտ:

Դատարանում Բ.-ի տված վկայության համաձայն՝ Ա.-ի եւ Բ.-ի միջեւ առկա է կրկնվող տեսակցական կապ: Նրա կողմից տրված վկայությունների եւ իրավապահ մարմինների կողմից ստացված հայտարարությունների միջեւ առկա են որոշ հակասություններ, եւ պաշտպանության կողմի փաստաբանը նրան ուղղում է ստուգիչ եւ հետախուզիչ հարցեր: Ի վերջո, նա արցունքների ներքո հայտնում է, որ ցանկանում է օգտվել իր ամուսնու դեմ ցուցմունք չտալու իրավունքից: Քանի որ առկա չի եղել որեւէ այլ ապացույց, կարճ քննարկումից հետո դատարանը արդարացնում է Ա.-ին:

Ի՞նչը կարող էր այլ կերպ արվել այս գործում:

273 *Իգրեթն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia]*, Գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 113-րդ պարբերություն:

274 *Իգրեթն ընդդեմ Սլովենիայի [Y. v. Slovenia]*, Գանգատ թիվ 41107/10, 2015 թվական, 112-րդ պարբերություն:

խորհուրդներ վերապատրաստողների համար. ծավալէք քննարկում ստորել նշված հարցերի վերաբերյալ.

- ▶ Արդյո՞ք գործի քննության ժամանակ հավաքվել են բավարար ապացույցներ:
- ▶ Փաստերը հաստատող այլ վկաներ իսկապես առկա չէն եղել:
- ▶ Ոստիկանության հետ Բ.-ի հարցաքննության ընթացքում ինչ-որ բան սխալ ընթացել է, թե ոչ:
- ▶ Արդյո՞ք իրավիճակն այլ կլիներ, եթե Բ.-ին ներկայացներ փաստաբանը, կամ եթե նրան աջակցեր խորհրդատվական որեւէ կենտրոն:
- ▶ Նախքան դատաքննությունը Ա.-ն ճնշում գործադրել է Բ.-ի վրա, թե ոչ:
- ▶ Ինչպէս կարելի էր դա կանխել:
- ▶ Արդյո՞ք որդեգրվել է զոհակենտրոն եւ գենդերային մոտեցում:
- ▶ Դատարանի դահլիճի կահավորանքի դասավորվածությունը որեւէ կերպ հաշվի առնվել է, թե ոչ:
 - ▶ Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեպքերում միևնույն կալանքի եւ (կամ) գրավով ազատման պայմաններից զատ կարելի՞ էր դիտարկել արգելող (սահմանափակող) եւ պաշտպանիչ կարգադրությունները:
 - ▶ Արդյո՞ք Բ.-ն ստացել է պատշաճ օժանդակություն եւ աջակցություն:

4.2. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ. ԿԻՐԱՌԵԼԻ ՉԱՆՑԱԿԱԶՄԵՐՆ ՈՒ [ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ] ԲԱՅԵՐԸ ՉԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Ստամբուլի կոնվենցիայով պահանջվում է քրեականացնել կանանց նկատմամբ բռնություն եւ ընտանեկան բռնություն համարվող հատուկ գործողությունները, այդ հանցագործությունների մասով սահմանել դատական իրավագործություն եւ քրեական հետապնդում ներպետական մակարդակում: Ընտանեկան բռնությունը կանանց դեմ բռնության ձեւ է, որը ներառում է հավանական ապօրինի գործողությունների լայն շրջանակ, որոնց մեծ մասը կարող են ընդգրկվել ընդհանուր բնույթի այնպիսի հանցագործությունների շրջանակներում, ինչպես օրինակ, ի թիվս այլնի, սպանությունը, ոտնձգությունը, մարմնական վնասվածքը, բռնաբարությունը եւ այլն:

Չնայած ընտանեկան բռնության ձեւերի մեծ մասը դասվում է քրեական օրենսգրքով նախատեսված ընդհանուր բնույթի իրավախախտումների շարքին՝ օրենսգրքը չի ներառում ո՛չ ընտանեկան բռնությունը քրեականացնող հատուկ դրույթ, ո՛չ էլ այս եզրույթի սահմանում: Դրանում նաեւ բացակայում է որեւէ հատուկ մեխանիզմ, որը հաշվի կառնի այս հանցագործություններում արտահայտված գենդերային բնույթն ու հատուկ գենդերային զարգացումը, ինչպես նաեւ՝ ազգակցական կապը տուժողի եւ հանցանք կատարողի միջեւ (բացառությամբ բռնաբարության հանցագործության):

Կանանց նկատմամբ բռնության այլ ձեւերի մասով Չայաստանի քրեական օրենսգրքը չի ներառում Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված եւ ստորել մանրամասն ներկայացված բռնության բոլոր ձեւերը, որպիսիք են՝ կանանց սեռական օրգանների խեղումը (ԿՍՕԽ), հղիության հարկադիր արհեստական ընդհատումը, հետամտումը եւ վաղ ու հարկադիր ամուսնությունը:

4.2.1. ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.2.1.1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ

Սպանությունը ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով պաշտպանվող կյանքի իրավունքի խախտում է: Վերը քննարկված պատշաճ զգուշավորության չափանիշները կիրառելի են նման դեպքերում: Բացատրական զեկույցի համաձայն՝ անհրաժեշտ է ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ կանխելու համար բռնության ամենակոպիտ ձեւերը, որպիսիք են՝ սպանությունը կամ սպանության փորձը: Յուրաքանչյուր նման դեպք պետք է մանրակրկիտ վերլուծվի՝ որոշելու համար պաշտպանության ցանկացած հավանական անհաջող դեպք՝ հետագա կանխարգելիչ միջոցները բարելավելու եւ զարգացնելու նպատակով:²⁷⁵

4.2.1.2. ԶԱՅԱՍԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2012 թվականին սպանությունների 10.5%-ը (մահվան 12 դեպք) կատարվել է կանանց դեմ իրենց զուգընկերների կամ ընտանիքի անդամների կողմից: Ընդհանուր առմամբ 2010-2015 թվականներին մոտ 30 կին մահացել է ընտանեկան բռնության համատեքստում ուժգին ծեծի եւ մարմնական վնասվածքների հետեւանքով:²⁷⁶

Քրեական օրենսգիրքը ներառում է սպանությանն առնչվող մինչեւ վեց դրույթ: 104-րդ հոդվածի 1-ին մասով սպանությունն արգելվում է: 2-րդ մասում սահմանվում են սպանության ծանրացնող հանգամանքները, որում թվարկված են մինչեւ 16 ծանրացնող հանգամանք, այդ թվում՝ հղի կնոջ սպանությունը կամ խտրականության շարժառիթով սպանությունը: Նշանակալիորեն, 104-րդ հոդվածի 2-րդ մասում հղում չի կատարվում սեռով պայմանավորված խտրականության շարժառիթին. դրանում ներառված են միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթները: Ավելին, Քրեական օրենսգիրքը նախատեսում է կյանքից զրկելու առնչվող, մեղմացնող հանգամանքներում կատարված հանցագործությունների չորս տեսակ՝ 105-րդ հոդվածը (հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը),²⁷⁷ 106-րդ հոդվածը (մոր կողմից նորածին երեխայի սպանությունը), 107-րդ հոդվածը (հանցանք կատարած անձի սպանությունը՝ նրան բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ) եւ 108-րդ հոդվածը (անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանությունը):

105-րդ հոդվածով մեղմացվում է քրեական պատասխանատվությունը՝ ի թիվս այլնի, տուժողի հակաբարոյական վարքագծի հիման վրա: Արդյունքում, կնոջ սեռական կյանքի պատմությունը կամ ամուսնական դավաճանության մեջ մեղադրանքները որոշ դեպքերում ծառայում են որպես արդարացում տղամարդու «հոգեկան խիստ

275 Բացատրական զեկույց, 259-րդ կետ:

276 Տե՛ս, Կանանց նկատմամբ բռնության վերացման կոալիցիա, *Կանանց սպանություն. լուր փոխանակում*, 2016, էջ 14, հասանելի է հետեւյալ հղումով՝ http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2016/05/Femicide_Report_ENG.pdf?be05b6:

277 Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ «Տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակաիրավական կամ հակաբարոյական գործողությունների (անգործության), ինչպես նաեւ տուժողի՝ պարբերաբար դրսեւորած հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի կապակցությամբ առաջ եկած երկարատեւ հոգեճնշող իրավիճակի հետեւանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարած սպանությունը»:

հուզմունքի վիճակում» գտնվելու համար, ինչը հանգեցրել է մահվան: Սրա լավագույն օրինակն է Դիանա Նահապետյանի՝ 2012թ. դանակի բազմաթիվ հարվածներով սպանությանն առնչվող գործը, որում առաջին ատյանի դատարանը Նրա ամուսնուն դատապարտել էր 3 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման՝ 105-րդ հոդվածով նախատեսված մեղմացնող հանգամանքի ուժով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ենթադրյալ անհավատարմությունը Նրա ամուսնու մոտ առաջացրել է «հոգեկան խիստ հուզմունքի վիճակ»: «Հակաբարոյական» վարքագծի՝ կարծրատիպային եւ գենդերային գաղափարների վրա հիմնված լինելուց բացի՝ դրույթը պարունակում է շատ անորոշ հասկացություններ, որոնք կասկածի տակ են դնում դրա կիրառմանն առնչվող իրավական որոշակիությունը:²⁷⁸ Նահապետյանի գործում դրա կիրառումը հանգեցրել էր իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու իրավունքի խախտման, ինչը պահանջում է համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցներ:

4.2.2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ

4.2.2.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ստամբուլի կոնվենցիայի 35-րդ հոդվածով պահանջվում է, որ պետություններն ապահովեն «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնարարքների քրեականացումը»: «Ֆիզիկական բռնություն» եզրույթը վերաբերում է մարմնական այն վնասվածքին, որը պատճառվել է անմիջական եւ անօրինական ֆիզիկական ուժի կիրառման արդյունքում: Այն նաեւ ընդգրկում է տուժողի մահվան հանգեցնող բռնությունը:²⁷⁹

4.2.2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական օրենսգրքով սահմանվում է ֆիզիկական բռնության տարբեր տեսակներ պարունակող հանցանքների լայն շրջանակ: 16-րդ գլխով նախատեսվում է համապարփակ քրեաիրավական արձագանք «կյանքի եւ առողջության դեմ ուղղված հանցագործություններին»՝ սկսած սպանությունից մինչեւ թեթեւ մարմնական վնասվածքները: Ընտանեկան բռնության կոնկրետ հանցատեսակի բացակայության դեպքում սպանությանն ու մարմնական վնասվածքներին առնչվող դրույթները ենթադրում են այն հիմնական քրեական իրավախախտումները, որոնց համար ընտանեկան բռնություն գործադրողները կարող են ենթարկվել պատասխանատվության: Մի շարք մասնագետներ առաջարկում են, որ ընտանեկան բռնության գործերի մեծ մասով քրեական հետապնդումն իրականացվի 118-րդ հոդվածի համաձայն՝ ծեծի հանցակազմով:²⁸⁰

Ծեծը սահմանվում է որպես այնպիսի բռնի գործողությունների կատարում, որոնք

278 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ*, Հայաստանին վերաբերող գլուխ, էջ 12, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-for-judges-and-prosecutors-on-ensuring-women-s-access-/1680764286>:

279 Բացատրական զեկույց, 188-րդ կետ:

280 Եվրոպայի խորհուրդ, Հայաստանի քրեական օրենսդրության բացերի վերլուծություն՝ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լույսի ներքո, էջ 3, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/gap-analysis-armenian-law-eng/168075bac2>:

չեն առաջացրել 117-րդ հոդվածով նախատեսված թեթև վնասը: Վճռաբեկ դատարանը նշել է, որ «**ծեծը տուժողին բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է, ինչն առաջացրել է ֆիզիկական ցավ**»:²⁸¹ (Ընդգծումն ավելացվել է):

Բռնության բազմաթիվ ձեւեր, այդ թվում՝ ի թիվս այլնի, ծեծի շեմից ներքեւ գտնվող ֆիզիկական բռնարարքներն ու տնտեսական բռնության բոլոր ձեւերը, Հայաստանյան օրենսդրության համաձայն, չեն համարվում քրեական իրավախախտումներ, եւ ուստի իրավապահ մարմինների կողմից չեն ստանա պատշաճ արձագանք: Ընտանեկան բռնության առանձին հանցագործությունն նախատեսելը կամ ծանրացնող հանգամանքներ սահմանելը՝ (i) ընտանիքում կամ զուգընկերոջ կողմից բռնության գործադրման մասով եւ (ii) բռնության տեսող կամ շարունակվող բնույթի մասով, քրեական արդարադատության համակարգին հնարավորություն կտային առավել պատշաճ սահմանել հանցագործության բնույթը եւ ապահովել արդարադատության մատչելիությունը տուժողի համար:

Հանցավոր արարքի (*actus reus*) նման մեկնաբանությունը չի ներառում մի շարք բռնարարքներ, որոնք տեղի են ունենում ընտանեկան բռնության դեպքերում՝ որպես կանոն ներառելով տեսական ժամանակահատվածում կատարվող այնպիսի գործողությունների շարք, որոնցից յուրաքանչյուրը, որպես այդպիսին, կարող է քրեականացված չլինել (օրինակ՝ մեկ ապտակը, մազերը քաշելը): Այլ կերպ ասած, ծեծը ենթադրում է այնպիսի հանցագործության շեմ, որից ներքեւ որեւէ հանցավոր գործողություն լինել չի կարող: Այս առումով կարելու է հիշատակել *Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի* [*V.K. v. Bulgaria*] գործը, որում ԿՆԽՎԿ կոմիտեն հայտնաբերել է խախտում, քանի որ ստորին ատյանի ներպետական դատարանը մերժել էր տուժողի՝ պաշտպանիչ կարգադրության համար ներկայացված դիմումը, քանի որ ներպետական օրենսդրության համաձայն՝ հանցանք կատարողի կողմից հարված ստանալը չէր բավարարում բռնության շեմը: Կոմիտեն հիշեցրել է, որ գենդերային հիմքով բռնությունը «ոչ թե սահմանափակվում է այնպիսի արարքներով, որոնցով պատճառվում է ֆիզիկական վնաս, այլ նաեւ ներառում է այնպիսի արարքներ, որոնցով պատճառվում է հոգեկան կամ սեռական վնաս կամ տառապանք, ցանկացած այդպիսի արարքների սպառնալիք, հարկադրանք կամ ազատությունից զրկելու այլ տեսակներ» եւ գտել է, որ «[ե]րկու դատարաններն էլ ուշադրությունը բացառապես կենտրոնացրել են դիմումատուի կյանքին կամ առողջությանն ուղղակիորեն եւ անմիջականորեն սպառնացող վտանգի ու նրա ֆիզիկական անձեռնմխելիության վրա՝ անտեսելով նրա հուզական եւ հոգեբանական տառապանքը»:²⁸²

4.2.3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

4.2.3.1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ հոդվածով կողմերից պահանջվում է քրեականացնել հոգեբանական բռնությունը, որը բնութագրվում է որպես հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով անձի հոգեբանական անձեռնմխելիությանը լրջորեն վնասելու դիտավորյալ արարք: Բացատրական զեկույցի համաձայն՝ «Սույն դրույթն ավելի շատ վերաբերում է վարքագծի դրսեւորման ընթացքին, այլ ոչ թե՝ մեկ դեպքի: Այն նպատակ ունի սահմանելու որոշակի ժամանակի ընթացքում դրսեւորվող վարքագծի չարաշահման տեսակների քրեաիրավական բնույթը՝ ընտանիքում կամ

281 Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱԸԴ/0176/01/11 որոշումը, Արեւիկ եւ Ծովինար Սահակյանների գործը, 2012 թվականի նոյեմբերի 1, 18-րդ պարբերություն:

282 Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿՆԽՎԿ/Կ/49/D/20/2008, 9.8-րդ, 9.9-րդ պարբերություններ:

դրանից դուրս»:²⁸³

Հոգեբանական բռնության մասով քրեական հետապնդում իրականացնելու պարտականությունը բխում է նաեւ միջազգային իրավունքի այլ աղբյուրներից: Օրինակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմերն ունեն ընտանեկան բռնության դեպքերն արդյունավետորեն քննելու պոզիտիվ պարտականություն, նույնիսկ եթե տուժողին ֆիզիկական վնաս չի պատճառվել:²⁸⁴ ԿՆԽՎԿ կոմիտեն ընդունել է համանման եզրակացություն *Վ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [V.K. v. Bulgaria]* (2011) գործում նշելով, որ «գենդերային հիմքով բռնությունը չի սահմանափակվում ֆիզիկական վնաս պատճառելով, այլ նաեւ ներառում է այնպիսի արարքներ, որոնք պատճառում են հոգեկան տառապանք»:²⁸⁵

Հոգեբանական բռնությունն արտացոլում է այնպիսի վերահսկող վարքագիծ, որն ունի արտահայտման ձևերի լայն շրջանակ՝ վիրավորանքների միջոցով ահաբեկում, նվաստացում, ցանկացած տեսակի սպառնալիքներ, մեկուսացում տուժողի նեղ շրջապատից (անմիջական ընտանիքից) եւ այլն: Հոգեբանական բռնությունը կարող է նաեւ կապված լինել տնտեսական բռնության այնպիսի ձևերի հետ, ինչպիսիք են՝ ֆինանսական ռեսուրսներից զրկելը կամ դրանք սահմանափակելը:

Հոգեբանական բռնության քրեականացումն ու դրա առնչությամբ քրեական հետապնդումը հեշտ առաջադրանք չէ: ՄԱԿ-ի կանայք առաջարկում են «հարկադիր հսկողություն» եզրույթը՝ որպես հետեւանք հասցվող վնասի վրայից ուշադրությունը կենտրոնացնելով անօրինական վարքագծով հետապնդվող նպատակի վրա:²⁸⁶ «Բռնի հսկողությունը» ներառում է հոգեբանական եւ տնտեսական բռնությունը, սակայն այնպես, որ այդ հասկացությունները կապվում են գերիշխանության ձևի հետ: Այն ենթադրում է ահաբեկման միջոցով ծայրահեղ հսկողություն, մեկուսացում կամ հետզարգացում եւ ուղղորդում է համապատասխան իրավական միջոցները՝ թիրախավորելու համար տուժողի ինքնուրույնության ու արժանապատվության վրա ազդող իսկապես վնասակար վարքագիծը:

Այս ոլորտում վերջին լավագույն փորձը ՄԹ Մեծ Բրիտանիայինն է, որը 2015թ. մարտի 3-ին²⁸⁷ ընդունել է Ծանր հանցագործությունների մասին նոր ակտ, որով սահմանվում է սեռական կամ ընտանեկան հարաբերություններում վերահսկող կամ հարկադիր բնույթի վարքագծի նոր հանցատեսակ (Բաժին 76): Նոր հանցատեսակով քրեականացվում է այլ անձի հանդեպ այնպիսի վարքագիծ պարբերաբար կամ շարունակաբար դրսևորելը, որն ունի վերահսկող կամ հարկադիր բնույթ եւ լուրջ ազդեցություն է գործում տուժողի վրա:

Այս դրույթի համաձայն՝ վերահսկող կամ հարկադիր բնույթի վարքագիծը լուրջ ազդեցություն է թողնում այն դեպքում, երբ այն առնվազն երկու առիթով ստիպում է վախ ապրել տուժողին այն առումով, որ նրա նկատմամբ կգործադրվի բռնություն, կամ եթե այն տուժողի մոտ առաջացնում է լուրջ տազնապ կամ անհանգստություն՝ ազդելով նրա առօրյա գործունեության վրա: Հանցանքը պատժվում է առավելագույնը հինգ տարի ազատազրկմամբ, տուգանքով կամ երկուսը միասին:

283 Բացատրական գեկույց, 181-րդ կետ:

284 Տեն, օրինակ, *Օփուզն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey]*, Գանգատ թիվ 33401/02 2009, *Հայրուովան ընդդեմ Սլովակիայի [Hajduová v. Slovakia]*, Գանգատ թիվ 2660/03, 2010:

285 Հաղորդագրություն թիվ 20/2008, ԿՆԽՎԿ/C/49/D/20/2008, 9.8-րդ պարբերություն:

286 Կանանց եւ աղջիկների նկատմամբ բռնությունը վերացնելու համար նախատեսված վիրտուալ գիտելիքների կենտրոն, հասանելի է հետեւյալ հղումով՝ www.endvawnow.org/en/articles/398-definition-of-domestic-violence.html?next=399.

287 2015 թվականի մարտի 3-ի Ծանր հանցագործությունների մասին ակտ, հասանելի է հետեւյալ հղումով՝ www.legislation.gov.uk/ukpga/2015/9/section/76/enacted:

4.2.3.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քրեական օրենսդրությունը դրույթներ չի նախատեսում ոտնձգող եւ վերահսկող վարքագծի վերաբերյալ, որոնք առկա են հոգեբանական բռնության դեպքում:

Մինչեւ 2015 թվականը Քրեական օրենսգրքում ներառված չի եղել որեւէ հատուկ հանցատեսակ՝ հոգեբանական բռնության կամ դրան առնչվող այնպիսի վարքագծի մասով, ինչպես օրինակ՝ հարկադրանք կամ ճնշումը: Խոչտանգման վերաբերյալ՝ վերջերս փոփոխված 119-րդ հոդվածում «հոգեկան տառապանքը» ներառված է որպես բաղկացուցիչ տարր, իսկ հանցանքը վերանվանվել է «ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանքի պատճառում»: 119-րդ հոդվածը կարող է ծառայել որպես օգտակար դրույթ՝ ընտանեկան բռնության դեպքերի հոգեբանական տարրի մասով քրեական հետապնդում իրականացնելու համար: Դրա արդյունավետ գործածման խոչընդոտներից է այն փաստը, որ Քրեական օրենսգրքում չի սահմանվում հոգեկան տառապանքը, ինչպես նաեւ այդ խոչընդոտներից է այն հանգամանքը, որ 119-րդ հոդվածում որեւէ հղում չի կատարվում այն միջոցներին կամ գործողություններին, որոնք ոտնձգողը կարող է գործադրել՝ որպես հետեւանք պատճառվող տառապանքին հասնելու համար: Նման անորոշությունը խոչընդոտում է այդ դրույթի արդյունավետ կիրառումը եւ ավելի դժվարացնում այս հանցատեսակի փորձի դեմ պայքարը:²⁸⁸

Հարկ է նշել, որ Քրեական օրենսգրքով չի նախատեսվում հարկադրանքի քրեականացում, ինչը քրեական իրավունքում սովորաբար շրջանառվում է որպես համընդգրկուն հանցանք: Ավելին, 119-րդ հոդվածն ընդգրկում է այնպիսի ծանրացնող ձեւեր, որոնք, ի թիվս այլնի, ներառում են խտրականության այնպիսի շարժառիթներ, ինչպիսիք են՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելությունը կամ կրոնական մոլեռանդությունը: Սեռի հիմքով խտրականությունը՝ որպես հանցագործությունը ծանրացնող հանգամանք, ներառված չէ դրանում:

Քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով արգելվում է սպառնալիքը, սակայն միայն սահմանափակ թվով հանցագործությունների՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու եւ գույք ոչնչացնելու դեպքում: Դրա նեղ կիրառությունը չի ընդգրկում շորթումը կամ անձնական գաղտնիքներ բացահայտելու սպառնալիքները: Ավելին, 137-րդ հոդվածով պահանջվում է սպառնալիքի գործադրման իրական վտանգի առկայության ապացույց: Այս պահանջը կարող է չափազանց բարձր շեմ սահմանել սպառնացող վարքագծից բխող հոգեբանական բռնության առնչությամբ արդյունավետ քրեական հետապնդում ապահովելու համար:

Ի վերջո, 110-րդ հոդվածով քրեականացվում է որեւէ մեկին ինքնասպանության հասցնելը, իսկ 111-րդ հոդվածն ընդգրկում է ինքնասպանության հակելը:

288 Քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածը ներառում է հանցափորձը:

4.2.4. ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅՈՒՆԸ

4.2.4.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ստամբուլի կոնվենցիայի 36-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է քրեականացնել առանց համաձայնության կատարված սեռական բնույթի բոլոր գործողությունների ձեւերը, այդ թվում՝ բռնաբարությունը: Այս երկար, համապարփակ դրույթը Կոնվենցիայի ամենամանրակրկիտ նկարագրված հանցատեսակն է, որով նախատեսվում է սեռական բռնության «համընդգրկուն» սահմանումը: Սեռական բռնության համար պատիժ սահմանելիս պետությունները պետք է հաշվի առնեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Բացատրական զեկույցը, մասնավորապես, հղում է կատարում *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [M.C. v. Bulgaria]* (2003) գործին, որում Դատարանը եզրակացրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ «պետությունների պոզիտիվ պարտականությունները պետք է դիտարկվեն որպես այնպիսի պարտականություններ, որոնցով պահանջվում է առանց համաձայնության կատարված ցանկացած սեռական գործողության քրեականացում եւ դրանց մասով արդյունավետ քրեական հետապնդում, այդ թվում՝ տուժողի կողմից ֆիզիկական դիմադրության բացակայության պարագայում»:²⁸⁹

Սեռական բռնության հանցագործությունները պետք է ընդգրկեն ընտանիքում տեղի ունեցող սեռական չարաշահումը: Պատմականորեն շատ երկրների օրենքներ ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատժելի չեն համարել ամուսնական բռնաբարությունը: Ստամբուլի կոնվենցիայի 43-րդ հոդվածի համաձայն՝ սեքսուալ բնույթի իրավախախտումների քրեականացումը կիրառվում է անկախ իրավախախտի եւ տուժողի միջեւ առկա հարաբերություններից:

Կոնվենցիայում սահմանվում են սեռական բռնության բոլոր ձեւերը մեկ գլխավոր բաղկացուցիչ տարրի, այն է՝ համաձայնության մասով: 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանման համաձայն՝ համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որը գնահատվում է հարակից հանգամանքների համատեքստում: Ըստ այդմ, օրենսդրությամբ կարող են դիտարկվել հանգամանքների այնպիսի լայն շրջանակ, որոնց դեպքում համաձայնությունն էական չէ, օրինակ՝ պաշտոնական դիրք ունեցող անհատի կողմից սեռական ոտնձգության պարագայում:²⁹⁰

Ինչպես սահմանվել է ՄԻԵԴ-ի կողմից, բոլոր հանգամանքներում ֆիզիկական դիմադրության ապացույց պահանջելը բռնաբարության որոշ տեսակներ անպատիժ թողնելու վտանգ է ստեղծում եւ ուստի՝ վտանգում անհատի սեռական անկախության պաշտպանության արդյունավետությունը:²⁹¹ *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [M.C. v. Bulgaria]* գործում Դատարանը գտել է, որ համապատասխան մարմինները բավարար կերպով չեն քննել բռնաբարության հարակից եւ համատեքստային հանգամանքները՝ «շեշտն անհարկի դնելով բռնաբարության «ուղղակի» ապացույցի», այն է՝ ուժի եւ սպառնալիքի տարրերի վրա, ինչպես պահանջվում էր ազգային օրենսդրությամբ՝ եւ «ըստ Էուլթյան [տուժողի] «դիմադրությունը» վերածելով հանցանքը հատկորոշող տարրի»:²⁹² Դատարանն ամենամեծ շեշտը դրել է համաձայնության բացակայության վրա՝ որպես բռնաբարության դեպքերում հանցանքը հատկորոշող տարր՝ մեջբերելով

289 *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի [M.C. v. Bulgaria]*, Գանգատ թիվ 39272/98 2003, 166-րդ պարբերություն:

290 Բացատրական զեկույց, 193-րդ կետ:

291 *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի*, Գանգատ թիվ 39272/98, 2003, 166-րդ պարբերություն:

292 *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի*, Գանգատ թիվ 39272/98, 2004, 182-րդ պարբերություն:

բազմաթիվ եվրոպական պետությունների քրեական օրենսդրությունը, ինչպես նաև Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (ՆՀՄԲՏ) դատական պրակտիկան: Դատարանը նշել է.

«[...] չնայած բռնաբարության այնպիսի «ուղղակի» ապացույցների բացակայության պայմաններում, ինչպիսիք են բռնության հետքերը կամ ականատես վկաները՝ համաձայնության բացակայությունն ապացուցելը երբեմն կարող է գործնականում բարդ լինել, այնուամենայնիվ, համապատասխան մարմինները պետք է վեր հանեն բոլոր փաստերը եւ որոշում կայացնեն հարակից բոլոր հանգամանքների գնահատման հիման վրա»: Քննությունը եւ դրա եզրակացությունները պետք է կենտրոնանան համաձայնության բացակայության խնդրի վրա:²⁹³ (Ընդգծումը ավելացվել է):

Կարեն Թայագ Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների [Karen Tayag Vertido v. The Philippines] գործում, որտեղ ավագ գործընկերը բռնաբարել էր տուժողին, ԿՆԽԿԿ կոմիտեն վճռել է, որ եթե տուժողը ֆիզիկական դիմադրություն ցույց չի տալիս անցանկալի սեռական վարքագծին, չի նշանակում, որ պետք է գործի տուժողի կողմից համաձայնություն տված լինելու կանխավարկածը՝ «անկախ այն հանգամանքից՝ հանցանք կատարողը գործադրել է բռնություն, թե բռնություն գործադրելու սպառնալիք»:²⁹⁴ Կոմիտեն վճռել է, որ փոխարենը մեղադրյալը պետք է ցուցմունք տա ձեռնարկված քայլերի մասին՝ համոզվելու համար, որ տուժողը տվել է համաձայնություն: ²⁹⁵

Կանադայի քրեական օրենսգիրքը²⁹⁶ համաձայնության վրա հիմնված մոտեցման եւ դրա գնահատման լավ օրինակ է, որով հաշվի են առնվում հարակից հանգամանքները: 273-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է համաձայնությունը որպես «բողոքատուհի՝ տվյալ սեռական հարաբերության մեջ մտնելու կամավոր համաձայնություն»: 2-րդ ենթակետում նկարագրվում են այն հանգամանքները, որոնց դեպքում համաձայնություն չի ստացվել.

ա) համաձայնությունն արտահայտվում է բողոքատուհից տարբեր այլ անձի բառերով կամ վարքագծով. բ) բողոքատուն ի վիճակի չէ համաձայնություն տալ համապատասխան գործողությանը. գ) մեղադրյալը ստիպում է բողոքատուին մտնել հարաբերության մեջ՝ չարաշահելով վստահությունը, լիազորությունները կամ պաշտոնական դիրքը. դ) բողոքատուն բառերով կամ վարքագծով արտահայտում է հարաբերության մեջ մտնելու համաձայնության բացակայություն, կամ ե) բողոքատուն, համաձայնելով մտնել սեռական հարաբերության մեջ, բառերով կամ վարքագծով արտահայտում է համաձայնության բացակայություն՝ տվյալ հարաբերության մեջ գտնվելու շարունակության վերաբերյալ:

Ավելին, Կանադայի քրեական օրենսգրքի 273.2-րդ հոդվածով սահմանվում է, որ սեռական ոտնձգության համար առաջադրված մեղադրանքին որպես պաշտպանություն չի կարող ծառայել մեղադրյալի ենթադրությունն այն մասին, որ

293 *Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի*, Գանգատ թիվ 39272/98, 2004, 18 1-րդ պարբերություն:

294 ԿՆԽԿԿ, Հաղորդագրություն թիվ 18/2008, 2010 թվական, 8.5 կետ:

295 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿՆԽԿԿ/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.9 կետ, որի համապատասխան մասով պետություններից պահանջվում է «օրենսդրությունից հանել ցանկացած պահանջ այն մասին, որ սեռական ոտնձգությունը համարվում է տեղի ունեցած՝ ուժի կամ բռնության գործադրմամբ կատարված լինելու դեպքում, ինչպես նաև ներթափանցման ապացույցի ցանկացած պահանջ, եւ նվազագույնի հասցնել բողոքատուհի (վերապրածի) երկրորդային վիկտիմիզացիան վարույթների ընթացքում՝ ավելացնելով սեռական ոտնձգության սահմանումը, որով պահանջվում է «աներկբա եւ կամավոր համաձայնություն» կամ մեղադրյալի կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ ապացույցներ՝ համոզվելու համար, որ բողոքատուն (վերապրածը) տվել է համաձայնություն»:

296 Հասանելի է հետեւյալ հղումով՝ <http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/>:

բողոքատուն համաձայնություն է տվել հետեւյալ դեպքերի պարագայում. «ինքն իրեն ինքնակամ հարբածության վիճակի հասցնելը», «անզուգուշությունը կամ միտումնավոր անփութությունը» կամ «մեղադրյալն, իրեն տվյալ պահին հայտնի հանգամանքներում, ողջամիտ քայլեր չի ձեռնարկել՝ համոզվելու համար, որ բողոքատուն տալիս է իր համաձայնությունը»:

4.2.4.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քրեական օրենսգրքի 18-րդ գլուխը նվիրված է սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններին: Քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանում բռնաբարությունը համարվում է հանցանք: Այն թեւ ոչ ուղղակիորեն, սակայն ներառում է նաեւ ամուսնական բռնաբարությունը: Բռնաբարության սահմանումը միայն ներառում է սեռական հարաբերությունը՝ պահանջելով «տղամարդու եւ կնոջ միջեւ» ներթափանցման վերաբերյալ ապացույց: Երկրորդ, այն պահանջում է, որ հարաբերությունը կատարված լինի տուժողի կամքին հակառակ, այսինքն՝ առանց նրա համաձայնության: Հանցանքը ներառում է երրորդ բաղկացուցիչ տարրը, այն է՝ կատարողը պետք է գործադրած լինի բռնություն, դրա գործադրման սպառնալիք կամ օգտված լինի կնոջ անօգնական վիճակից: 139-րդ հոդվածը ներառում է սեռական ոտնձգության այլ ձեւեր, այդ թվում՝ միեւնույն սեռի անձանց միջեւ, եւ ներառում է նույն բաղկացուցիչ տարրերն ու պատասխանատվության միջոցը, ինչ բռնաբարության դեպքում առանց ներթափանցման պահանջի:

Ստամբուլի կոնվենցիայով սահմանված չափորոշիչների խախտմամբ՝ 138-րդ հոդվածով պահանջվում է ներթափանցման ապացույց: Հատկանշական է, որ եւ՝ 138-րդ, եւ՝ 139-րդ հոդվածները պարունակում են հանցակազմի տարրեր՝ հիմնված ուժի գործադրման վրա. դրանք սահմանված չեն միայն համաձայնության բացակայության հիման վրա: Ըստ այդմ, զուգորդվող բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը, կամ տուժողի անօգնական վիճակը պետք է ապացուցվեն: Չնայած Քրեական օրենսգրքը չի պարունակում պահանջների ապացուցողական կողմի վերաբերյալ ուղենիշներ՝ այնուամենայնիվ, դիմադրություն ցույց տված լինելու ապացույցն այս հանցագործությունների քննության փաստացի բաղկացուցիչ տարրն է:²⁹⁷ Ինչպես բացատրվել է վերը, ոչ թե համաձայնության բացակայությունն, այլ ուժի գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքն ապացուցելու պայմանն այժմ միջազգային չափորոշիչների խախտում է՝ Ստամբուլի կոնվենցիայի, ինչպես նաեւ ՄԻԵԴ-ի եւ ԿՆՆՎԿ կոմիտեի երկարամյա դատական պրակտիկայի համաձայն:

138-րդ եւ 139-րդ հոդվածներով միաժամանակ սահմանվում են նաեւ սեռական ոտնձգության ծանրացնող հանգամանքներ: Ուստի երկու հոդվածների երկրորդ մասը ներառում է ութ ծանրացնող հանգամանքների նույն լրակազմը, այն է՝ բռնաբարություն՝ կատարված մի խումբ անձանց կողմից, անչափահասի նկատմամբ, առանձին դաժանությամբ, անզուգուշությամբ առաջացրել է մահ կամ այլ ծանր հետեւանքներ, ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով, եւ ազատությունից զրկման կամ այլ փակ հաստատություններում(ուղղիչ հիմնարկ, կալանավայր, զորամաս, բժշկական հաստատություն եւ այլն) գտնվող անձանց նկատմամբ՝ հաստատության աշխատակցի կողմից:

140-րդ հոդվածով քրեականացվում են հարկադրված սեքսուալ բնույթի

297 Եվրոպայի խորհրդի փաստահավաք առաքելության ընթացքում հավաքագրված տեղեկատվություն, 17-18.07.2018:

գործողությունները: Չնայած վերնագրին՝ այս դրույթը 138-րդ եւ 139-րդ հոդվածներից տարբերվում է նրանով, որ չի պարունակում բռնության առկայությունը հիմնավորելու պահանջ: Փոխարենը, հարկադրանքի ճանաչված ձեւերը, որոնք պետք է հաստատվեն, ներառում են՝ շանտաժ, գույքին առնչվող սպառնալիքներ կամ դիրքի չարաշահում: Ուստի Քրեական օրենսգիրքը չի պարունակում այն սեռական բռնությունը քրեականացնող որեւէ հանցանք, որի բաղկացուցիչ տարրը միայն համաձայնության բացակայությունն է:

Հայաստանի քրեական օրենսգրքի 141-րդ եւ 142-րդ հոդվածներում անդրադարձ է կատարվում երեխաների նկատմամբ սեռական բռնությանը:²⁹⁸

Մեկ այլ էական օրենսդրական բաց է համարվում այն հանգամանքը, որ Քրեական օրենսգրքով ուղղակիորեն չի քրեականացվում անձին հարկադրելը՝ ներգրավվելու երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի չհամաձայնեցված գործողություններում: Չնայած կարող է կիրառվել դրոշխության եւ օժանդակության վերաբերյալ ընդհանուր դրույթը (37-րդ եւ 38-րդ հոդվածներ)՝ այնուամենայնիվ, Ստամբուլի կոնվենցիայով պահանջվում է հատուկ քրեականացում:

Ինչպես մանրամասն ներկայացվել է վերը, սեռական բռնությանն առնչվող քրեափրավական դրույթները չեն համապատասխանում Ստամբուլի կոնվենցիայով եւ միջազգային դատական պրակտիկայով սահմանված չափանիշներին:

4.2.5. ՀԵՏԱՄՏԵԼԸ

4.2.5.1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 34-րդ հոդվածով պահանջվում է, որ «քրեականացվի մեկ այլ անձի նկատմամբ դիտավորությամբ շարունակաբար սպառնալից վարքագիծ դրսևորելը, որն այդ անձի մոտ վախ է առաջացնում սեփական անվտանգության համար», որը նաեւ հայտնի է որպես հետամտում: Այստեղ հանցագործությունը սահմանվում է երկու բաղկացուցիչ տարրերով. «ա) ոտնձգողի կողմից դիտավորության դրսևորմամբ, եւ բ) մյուս անձին վախ ներշնչելով: Չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունի թիրախային սպառնալից վարքագծի լայն շրջանակ»²⁹⁹

298 Հոդված 141. Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ. Տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ՝ սույն օրենսգրքի 138-րդ, 139-րդ կամ 140-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի բացակայության դեպքում՝ պատժվում է ուղղիչ աշխատանքներով՝ միչեւ երկու տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մինչեւ երկու տարի ժամկետով:

Հոդված 142. Անառակաբար գործողությունները 1. Ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբար գործողություններ կատարելը՝ 140-րդ կամ 141-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի բացակայության դեպքում պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչեւ մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մինչեւ երկու տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ մինչեւ երեք տարի ժամկետով:

299 Սպառնալից վարքագիծը կարող է դրսևորվել հետեւյալ կերպ. մեկ այլ անձին շարունակաբար հետապնդելը, մեկ այլ անձի անցանկալի հաղորդակցության մեջ ներթաշելը կամ մեկ այլ անձին տեղեկացնելը, որ իրեն հետեւում են, տուժողին ֆիզիկապես հետեւելը, նրա աշխատավայրում, սպորտային կամ կրթական հաստատություններում հայտնվելը, ինչպես նաեւ վիտուալ աշխարհում տուժողին հետապնդելը (չաթերի համար նախատեսված հարթակներ, սոցիալական ցանցեր

իրավախախտման հիմնական բաղկացուցիչ տարրը տուժողին վախ ներշնչելն է կամ այդպիսի դիտավորությունը: Դա ենթադրում է, որ ոտնձգողի նպատակը պետք է լինի դիտավորությամբ որոշակի արդյունքի հասնելը կամ անվազն դա գիտակցելը, կամ որ ոտնձգողը պետք է իմանար, որ տուժողի համար կարող են ի հայտ գալ որոշակի բացասական հետեւանքներ: Ոտնձգողի դիտավորության կապակցությամբ նախատեսված իրավական միջոցների առկայությունն ընձեռում է հետամտող անձի վարքագծի դրսեւորումների լայն շրջանակ դիտարկելու հնարավորություն:

Ավելին, հետամտելու արդունքում ձեւավորվում է կրկնվող եւ կարելու միջադեպեր ներառող արարքների շարք: Այլ կերպ ասած՝ առանձին արարքները չեն որակվում որպես հետամտում: Ինչպես պարզաբանվում է Բացատրական զեկույցում, այս դրույթի նպատակն է՝ «սահմանել վարքագծի այն դրսեւորումների քրեածին բնույթը, որին բնորոշ տարրերն առանձին դիտարկելու դեպքում չեն համարվում քրեորեն պատժելի արարքներ»³⁰⁰:

Կոնվենցիայով պետություններին է վերապահվում հետամտում համարվող սպառնալից վարքագիծը հստակ սահմանելու իրավասությունը: Բացատրական զեկույցում բերվում են հետեւյալ օրինակները.

«մեկ այլ անձին շարունակաբար հետապնդելը, մեկ այլ անձի անցանկալի հաղորդակցության մեջ ներթաշելը կամ մեկ այլ անձին տեղեկացնելը, որ իրեն հետեւում են: Սրանց թվին են դասվում տուժողին ֆիզիկապես հետեւելը, նրա աշխատավայրում, սպորտային կամ կրթական հաստատություններում հայտնվելը, ինչպես նաեւ վիրտուալ աշխարհում տուժողին հետապնդելը ... մեկ այլ անձի գույքը փչացնելը, անձի անձնական օգտագործման իրերի վրա աննկատելի հետքեր թողնելը, անձի ընտանի կենդանուն թիրախ դարձնելը կամ կեղծ անվամբ հանդես գալը կամ առցանց կեղծ տեղեկություններ տարածելը»³⁰¹:

Չհետամտումը հստակ սահմանելու լավ օրինակ կարելի է գտնել Գերմանիայի քրեական օրենսգրքում (238-րդ հոդված)³⁰², որում հանգամանալից ներկայացվում են այն գործողությունները, որոնք համարվում են հետամտում.

- ▶ ֆիզիկական մոտիկության ձգտելը.
- ▶ կապ հաստատելու նպատակով հեռահաղորդակցության միջոցներ կամ հաղորդակցության այլ միջոցներ կամ երրորդ կողմին օգտագործելը.
- ▶ նրա անվամբ ապրանքներ կամ ծառայություններ պատվիրելու նպատակով նրա անձնական տվյալները ոչ պատշաճ ձեւով օգտագործելը կամ երրորդ կողմին պարտադրելը, որ նրա հետ կապ հաստատի.
- ▶ նրա կամ նրան մտերիմ անձանց կյանքին, ֆիզիկական անձեռնմխելիությանը, ֆիզիկական առողջությանը կամ ազատությանն ուղղված սպառնալիքներ հնչեցնելը,
- ▶ համանման գործողություններ կատարելը եւ նրա անձնական ազատության վրա լուրջ ներգործություն ունենալը:

Եւ այլն): Անցանկալի հաղորդակցության մեջ ներթաշելը ենթադրում է ցանկացած հասանելի հաղորդակցության միջոցով, այդ թվում՝ ժամանակակից հաղորդակցության միջոցներով տուժողի հետ ակտիվ կապ հաստատելու ձգտում:

300 Բացատրական զեկույց, 185-րդ պարբերություն:

301 Բացատրական զեկույց, 182-րդ, 183-րդ պարբերություններ:

302 Գերմանիայի քրեական օրենսգրքը հասանելի է հետեւյալ հղումով՝ www.gesetze-im-internet.de/englisch_stgb/.

Ակնհայտ է, որ վերջին արարքի դեպքում սահմանման հիմքում ընկած է ոչ թե վարքագիծը, այլ արդյունքը՝ այսպիսով էականորեն ընդլայնելով դրա կիրառության շրջանակը:

Այլ քրեական օրենսդրության շրջանակներում հետամտման մասին դրույթը մշակվում է՝ հաշվի առնելով ոտնձգողի դիտավորությունը: Օրինակ՝ Բելգիան եղել է ԵՄ-ի առաջին անդամ պետություններից մեկը, որտեղ հետամտումը սահմանվել է որպես հանցագործություն, եւ նախապատվությունը տրվել է լայն սահմանմանը՝ հիմք ընդունելով ոտնձգողի դիտավորությունը: Բելգիայի քրեական օրենսգրքի 442. bis հոդվածի³⁰³ ներկայիս ձեւակերպման համաձայն՝ այն անձը, «որը հետապնդել (անհանգստացրել) է մեկ այլ անձի այն դեպքում, երբ գիտեր կամ պետք է իմանար, որ այդպիսի վարքագիծ դրսեւորելով՝ նա լրջորեն կիսաթարի այդ անձի անդորրը», մեղավոր է ճանաչվում հետամտելու համար:

Ի վերջո, Դանիան ընդունել է հետամտման վերաբերյալ հետաքրքիր քրեական կարգավորում, համաձայն որի՝ ոստիկանությունն անձին պատասխանատվության ենթարկվելուց առաջ անում է նախազգուշացում կամ արձակում է սահմանափակող կարգադրություն: Դանիայի քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածում³⁰⁴ նշվում է.

«Ցանկացած անձ, որը, անտեսելով ոստիկանության կողմից արված նախազգուշացումները, խախտում է մեկ այլ անձի անդորրը՝ ներխուժելով նրա կյանք, նրան նամակներով հետապնդելով կամ համանման ձեւով անհանգստություն պատճառելով, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Սույն դրույթով նախատեսված նախազգուշացումը գործում է 5 տարի ժամկետով»:

4.2.5.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քրեական օրենսդրության մեջ առկա չէ հետամտման վերաբերյալ որեւէ կոնկրետ դրույթ, ինչը Ստամբուլի կոնվենցիայի պահանջների խախտում է: Ընդհանուր բնույթի որոշ իրավախախտումների դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (119-րդ հոդված), շորթումը (182-րդ հոդված) կամ սպառնալիքները (137-րդ հոդված), կարող են թիրախավորվել վարքագծի որոշ դրսեւորումներ, որոնք մտնում են հետամտման հասկացության մեջ: Այնուամենայնիվ, դրանք չեն փոխանցում այս հանցագործության բուն էությունը: Չի ներկայացվում հետամտում համարվող այնպիսի արարքների շարք, ինչպիսիք են՝ տուժողին շարունակաբար հետապնդելը կամ անցանկալի հաղորդակցության մեջ ներթաշելը: Փաստորեն, Հայաստանի Օրենսգրքում բացակայող բաղադրիչը ոչ թե առանձին վերցրած միջադեպերը, այլ արարքների շարքը թիրախավորելու հնարավորությունն է:

303 Բելգիայի քրեական օրենսգիրքը հասանելի է հետեւյալ հղումով՝ www.legislationline.org/documents/section/criminal-codes.

304 Դանիայի քրեական օրենսգիրքը հասանելի է հետեւյալ հղումով՝ www.legislationline.org/documents/section/criminal-codes.

4.2.6. ՀԱՐԿԱԴԻՐ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

4.2.6.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կոնվենցիայի 37-րդ հոդվածով պահանջվում է քրեականացնել վարքագծի երկու դրսեւորում. 1) չափահաս անձին կամ երեխային դիտավորությամբ ամուսնանալու հարկադրելը, եւ 2) չափահաս անձին կամ երեխային այդ մտադրությամբ երրորդ երկիր տանելու նպատակով մոլորության մեջ զգելը (նույնիսկ այն դեպքում, երբ նրանք չեն ամուսնացել): Ինչ վերաբերում է ուժի գործադրման տարրին, Բացատրական զեկույցում նշվում է, որ «հարկադրել» եզրույթը ենթադրում է ֆիզիկական կամ հոգեբանական ազդեցություն՝ հարկադրանք կամ ճնշում գործադրելու միջոցով³⁰⁵: Համապատասխանաբար, ուժի գործադրման պահանջը պետք է մեկնաբանել լայն իմաստով՝ հաշվի առնելով հարակից հանգամանքները:

Տարբերակներից մեկն այն է, որ հարկադիր ամուսնությունը դիտարկվի որպես հարկադրանքի կամ ահաբեկման տեսակ: Այդպես է Գերմանիայում, որտեղ գործող քրեական իրավունքի դրույթների համաձայն՝ «ցանկացած անձ, որը անօրինակա-նորեն, ուժի գործադրմամբ կամ լուրջ վնաս հասցնելու սպառնալիքով ստիպում է անձին կատարել որեւէ արարք, ենթարկվել որեւէ արարքի կամ հրաժարվել այն կատարելուց, ենթարկվում է պատասխանատվության»³⁰⁶:

Նորվեգիայի քրեական օրենսգրքով հարկադիր ամուսնությունը սահմանվում է որպես անձնական ազատության նկատմամբ առանձնապես ծանր հանցագործություն (222-րդ հոդվածի 2-րդ մաս): «Ցանկացած անձ, որը ուժի գործադրման, ազատությունից զրկման, անհարկի ճնշման միջոցով կամ ոչ իրավաչափ վարքագծի որեւէ այլ դրսեւորմամբ կամ այդպիսի վարքագիծ դրսեւորելու սպառնալիքներով հարկադրում է որեւէ մեկին ամուսնանալ, մեղավոր է ճանաչվում ամուսնանալ հարկադրելու համար»³⁰⁷:

4.2.6.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածով ամուսնական տարիքի հասած (18 տարեկան) կնոջ եւ տղամարդու միջեւ ամուսնության ազատությունը ճանաչվում է որպես հիմնարար իրավունք: Քրեական օրենսգրքով չի քրեականացվում հարկադիր ամուսնությունը, ինչը Ստամբուլի կոնվենցիայի պահանջների խախտում է: Հարկադիր ամուսնության համար քրեական հետապնդում հարուցելու համար հնարավոր տարբերակներից են մարդուն առեւանգելը (131-րդ հոդված) կամ ազատությունից ապօրինի զրկելը (133-րդ հոդված): Դրանցից եւ ոչ մեկը չի արտացոլում հարկադիր ամուսնությունը՝ Ստամբուլի կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն:

305 Բացատրական զեկույց, 196-րդ պարբերություն:

306¹⁴³ Գերմանիայի քրեական օրենսգրքի 238-րդ հոդված, հասանելի է հետեւյալ հղումով՝ www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html.

307 Նորվեգիայի քրեական օրենսգրքի հասանելի է հետեւյալ հղումով՝ <http://app.uio.no/ub/ujur/oversatte-lover/data/lov-19020522-010-eng.pdf>.

4.2.7. ՀՂԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՍԼԱՑՈՒՄԸ

4.2.7.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 39-րդ հոդվածով պահանջվում է արարքի երկու տեսակի քրեականացում. 1) ցանկացած եղանակով կնոջ հղիության արհեստական ընդհատումը՝ առանց նրա կողմից նախապես եւ տեղեկացված կերպով տրված համաձայնության, եւ 2) ցանկացած գործընթացի իրականացում, որի նպատակն է զրկել կնոջը կամ աղջկան բնական վերարտադրության կարողությունից՝ առանց նրա կողմից նախապես տրված համաձայնության: Բացատրական զեկույցում սահմանվում է, որ հղիության հարկադիր արհեստական ընդհատմամբ ենթադրվում է ցանկացած գործընթաց, որը հանգեցնում է պտղի արտամղման³⁰⁸: Այնուհետեւ, ամլացումը ներառում է ցանկացած գործընթաց, որը հանգեցնում է բնական վերարտադրության կարողության կորստին³⁰⁹:

Իսպանիայի քրեական օրենսգրքով քրեականացվում է առանց համաձայնության կատարված ամլացումը³¹⁰: Այն նաեւ պարունակում է առանձին հոդված՝ հղիության հարկադիր արհեստական ընդհատում կատարելու մասին, որում նշվում է.

«Ցանկացած անձ, որը կատարում է կնոջ հղիության արհեստական ընդհատում առանց նրա համաձայնության, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով եւ առողջապահության ոլորտում որպես մասնագետ աշխատելու կամ պետական կամ մասնավոր մանկաբարձական կլինիկայում, հաստատությունում կամ հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում որեւէ ծառայություն մատուցելու նկատմամբ սահմանվում է հատուկ արգելք՝ երեքից տասը տարի ժամկետով»³¹¹:

4.2.7.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածով քրեականացվում է ապօրինի արորտ կատարելը, որի դեպքում սահմանվում են տարբեր պատիժներ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե հղիության արհեստական ընդհատում կատարողն ունի բժշկական բարձրագույն կրթություն, թե՛ ոչ: Սակայն այս դրույթով տարբերակում չի դրվում համաձայնությամբ եւ առանց համաձայնության կատարվող հղիության արհեստական ընդհատման միջեւ (առանց կնոջ համաձայնության հղիության ընդհատումը կարող է որակվել Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով՝ որպես առողջությանը ծանր վնասի պատճառում): Ի խախտումն Ստամբուլի կոնվենցիայի պահանջների՝ Հայաստանի քրեական օրենսգրքում որեւէ կոնկրետ նշում չկա հարկադիր ամլացման վերաբերյալ, երբ ընտանիքի անդամները կնոջը ստիպում են կատարել հղիության արհեստական ընդհատում: Կարելի է ասել, որ հղիության արհեստական հարկադիր ընդհատումը կամ հարկադիր ամլացումը կարող է դասվել դիտավորությամբ առողջությանը պատճառված վնասների շարքին: Ակնհայտ է, որ Հայաստանում վաղուց առկա է երեխայի սեռով պայմանավորված հղիության ընդհատման խնդիրը, որը գենդերային հիմքով բռնության մեկ այլ դրսեւորում է:

308 Բացատրական զեկույց, 204-րդ պարբերություն:

309 Բացատրական զեկույց, 205-րդ պարբերություն:

310 Իսպանիայի քրեական օրենսգրք, 149-րդ հոդված:

311 Իսպանիայի քրեական օրենսգրք, 144-րդ հոդված:

4.2.8. ՍԵՌԱԿԱՆ ՀԵՏԱԴՆԴՈՒՄ

4.2.8.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 40-րդ հոդվածով արգելվում է սեռական հետապնդումը, որը դրանում սահմանվում է «որպես սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսեւորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճշող, թշնամական, նվաստացուցիչ, ստորացուցիչ կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը»: Սեռական հետապնդում հանցագործությունը ներառում է հետեւյալը. սեռական բնույթի անցանկալի վարքագծի դրսեւորում, որի հետեւանքով ոտնահարվում է կամ կարող է ոտնահարվել անձի արժանապատվությունը: Կարելու է նշել, որ սեռական հետապնդման դեպքում սովորաբար ենթադրվում է արարքների շարք, որոնց բնորոշ տարրերն առանձին դիտարկելու դեպքում քրեորեն պատժելի չեն: ԵՄ-ի հակախտրականության դիրեկտիվները նույնպես նաժառենում են կարգավորումների, որոնք ձեւակերպում են արգելուն են սեռական հետապնդումը³¹²:

Սեռական հետապնդումը հաճախ տեղի է ունենում աշխատավայրում եւ ուսումնական հաստատություններում, սակայն կարող է տեղի ունենալ ամենուր: Համապատասխանաբար, համատեքստը կամ միջավայրը չի համարվում հանցանքի տարր: Մի շարք իրավական համակարգերում սեռական հետապնդումը կարգավորվում է քաղաքացիական իրավունքով, խտրականության բացառման, աշխատանքային եւ կրթության վերաբերյալ օրենսդրությամբ. այլպետություններում այդպիսի վարքագիծը քրեականացվել է:

Այժմ Ֆրանսիայում սեռական հետապնդումը նախատեսված է Քրեական օրենսգրքի 222-33 հոդվածում «որպես որեւէ անձի նկատմամբ պարբերաբար այնպիսի բառերի գործածում կամ գործողությունների կատարում, որոնք ունեն սեքսուալ ենթատեքստ» եւ «նվաստացուցիչ, ստորացուցիչ բնույթով պայմանավորված՝ անձի արժանապատվության ոտնահարում» կամ նրա շուրջ «ճշող, թշնամական կամ վիրավորական միջավայրի» ստեղծում³¹³:

4.2.8.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քրեական օրենսգրքով չի կարգավորվում սեռական հետապնդումը: Սեռական հետապնդումը սահմանված է «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքում³¹⁴: Այնուամենայնիվ, որեւէ տեսակի պատասխանատվություն չի սահմանվում քաղաքացիական կամ քրեական օրենսդրությամբ, ինչը Ստամբուլի կոնվենցիայի պահանջների խախտում է: Օրենքում ավելի շուտ հղում է կատարվում ինստիտուցիոնալ մարմիններին, որոնք ունեն ենթադրյալ խախտումների մասին հաղորդում ստանալու եւ այդ խախտումները վերացնելու լիազորություն: Այնուամենայնիվ, այս ներքին մեխանիզմներն ու ընթացակարգերը, սակայն, պետք է կիրառվեն օրենքի ընդունումից երեք տարի հետո: Հետեւաբար «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը ներկա պահին ամուր հիմք չի ապահովում բռնության այդ ձեւի դեպքում տուժողների կողմից հատուցում պահանջելու համար: Ավելին, Հայաստանը դեռեւս պետք է ընդունի խտրականության բացառման մասին համապարփակ օրենք, որը,

312 Տե՛ս օրինակ, հոդված 2(2) թիվ 2002/73/EC դիրեկտիվ, 23 սեպտեմբեր 2002.

313 Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը հասանելի է հետեւյալ հղումով՝ www.legifrance.gouv.fr/.

314 «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» 2013 թվականի օրենք, 2-րդ հոդվածի 21-րդ կետ, 6-րդ հոդված:

ամենայն հավանականությամբ, կներառի խտրականության ձեւ համարվող սեռական հետապնդման նկատմամբ արգելքը՝ ԵՄ-ի խտրականության բացառման վերաբերյալ հրահանգներին համապատասխան³¹⁵: Ամփոփելով կարող ենք ասել, որ ի խախտումն Ստամբուլի կոնվենցիայի՝ Հայաստանի ազգային օրենսդրական դաշտում առկա են բազմաթիվ բացթողումներ՝ կապված կանանց նկատմամբ բռնության մի քանի դրսեւորումների, մասնավորապես՝ սեռական հետապնդման, հղիության հարկադիր արհեստական ընդհատման, հարկադիր ամլացման, հարկադիր ամուսնության եւ հետամտման քրեականացման եւ դրանց համար տարհամոզիչ ու համաչափ պատժամիջոցների սահմանման հետ: Մասնավորապես, ազգային օրենսդրական դաշտով խախտվում է Կոնվենցիայի 51-րդ հոդվածը, որով պահանջվում է կանանց նկատմամբ բռնության համար համապատասխան պատժամիջոցների սահմանում, ինչպես նաեւ ԿՆԽՎԿ-ի 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածի «բ» կետը եւ 11-րդ հոդվածը:

Գործի քննարկում

Գործի օրինակը ներկայացված է մասնակիցներին բաժանվող 4-րդ նյութում: Ներկայացված են նաեւ այն հարցերի օրինակները, որոնք կարող են օգնել վերապատրաստողին ի պաշտոնե գործը քննելիս հանրային շահի, ապացույցի, ոտնձգողին առաջադրվող մեղադրանքների վերաբերյալ քննարկումները կազմակերպելու հարցում: Մասնակիցներին բաժանեք երկու խմբի եւ ներկայացրեք գործը: Մասնակիցներից այնուհետեւ պահանջվում է առաջարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնել:

4.3. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆԸ

Ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության դեպքերի քննության արդյունավետությունն ապահովելու եւ միջազգային չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ է դրսեւորել գոհակենտրոն եւ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում, որը պետք է լինի քննությունների եւ բոլոր իրավական ընթացակարգերի հիմնական չափանիշը: Չոհակենտրոն եւ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման գործնական կիրառումը ենթադրում է, որ ընտանեկան բռնությունից տուժած անձանց պետք է ցուցաբերվի հարգալից, արժանապատիվ եւ ուշադիր վերաբերմունք: Բոլոր հաղորդակցությունները պետք է ուղղված լինեն նրանց սատարմանը, որպեսզի նրանք կարողանան հաղթահարել իրենց տրավմատիկ ապրումները, որոնք պատճառվել են բռնության կամ բռնության սպառնալիքների հետեւանքով, ինչպես նաեւ դատական ընթացակարգերի միջոցով նրանց աջակցմանն ու սատարմանը:

315 Օրինակ, տե՛ս Խորհրդի «Աշխատանքի, մասնագիտական վերապատրաստման եւ առաջխաղացման, ինչպես նաեւ աշխատանքային պայմանների մատչելիության մասով տղամարդկանց եւ կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրարկման մասին» հրահանգը, Խորհրդի հրահանգ 2002/73/ԵՀ, 2002 թվականի սեպտեմբերի 23:

4.3.1 ՎԿԱՆԵՐԻ ԵՎ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության դեպքերում տուժողի եւ վկաների հայտարարությունները հաճախ ամենակարեւոր ապացույցներն են: Ոտնձգության ենթարկվելուց հետո տուժողները հաճախ գտնվում են ֆիզիկական եւ հոգեբանական ծանր վիճակում: Սակայն նրանք սովորաբար ավելի պատրաստակամ են հայտարարություններ անելու հարձակումից անմիջապես հետո, քան այն դեպքում, երբ նրանց հետ հարցազրույց են անցկացնում մի քանի օր անց: Տուժողի հայտարարությունը ոչ միայն կարող է օգնել քրեական հետապնդման գործընթացին, այլև կարող է պարունակել անմիջական ռիսկի գնահատման կամ անվտանգության ծրագրման առումով կարեւոր տեղեկություններ: Այսպիսով, հնարավորության դեպքում եւ ողջամտության սահմաններում պետք է ջանքեր գործադրել տուժողի հետ անմիջապես հարցազրույց անցկացնելու համար:

Ընտանեկան բռնությունը եւ կանանց նկատմամբ բռնությունը հուզական ազդեցություն են ունենում տուժողների վրա:

- ▶ Տուժողները կարող են լինել ցրված կամ հոգեպես անհավասարակշիռ:
- ▶ Տուժողները կարող են լիովին հերքել կատարվածը:
- ▶ Տուժողները կարող են վախեցած լինել:
- ▶ Տուժողները կարող են անհանգստացած լինել:
- ▶ Տուժողները կարող են բարկացած լինել:
- ▶ Տուժողները կարող են պասիվ լինել:

Հետեւաբար տուժողների հետ աշխատանքի ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ մարտահրավերներ: Տուժողները կարող են ունենալ այլ մտահոգություններ, կարիքներ եւ առաջնահերթություններ կամ կարող են զայրանալ: Նրանք կարող են հրաժարվել բռնության դեպքն ընդունելուց, նվազեցնել բռնության մակարդակը կամ ավելի ուշ հերքել իրենց իսկ պատմությունը: Նրանք կարող են պաշտպանել բռնություն գործադրած անձին եւ ագրեսիվ վերաբերմունք ցուցաբերել ոստիկանության նկատմամբ: Նրանք կարող են վախենալ ոստիկանություն զանգահարելու դեպքում բռնություն գործադրած անձի հաշվեհարդարից: Նրանք նաեւ կարող են վախենալ, որ ոստիկանությունը միջոցներ չի ձեռնարկի բռնությանը վերջ դնելու համար, որ ոստիկանությունը կհավատա ոչ թե իրենց, այլ բռնություն գործադրած անձին, կարող են վախենալ, որ նրանք կգրկվեն իրենց երեխաների հետ շփվելու հնարավորությունից, քանի որ բռնություն գործադրած անձը կարող է այդպիսի սպառնալիք հնչեցրած լինի: Նրանք կարող են անհանգստանալ, որ իրենք ֆինանսապես չեն գոյատևի, եթե հարաբերությանը վերջ դրվի, կամ եթե բռնություն գործադրած անձին բանտ ուղարկեն: Նրանց կարող է անհանգստացնել իրենց՝ ներգաղթյալի կարգավիճակը: Նրանք կարող են զայրացած լինել, քանի որ բռնության վերաբերյալ նախորդ հաղորդումների արդյունքում բռնություն գործադրած անձը չի ենթարկվել որեւէ պատժի, կամ քանի որ չի ապահովվել իրենց պաշտպանությունը՝ բռնություն գործադրած անձի կողմից շարունակաբար գործադրվող բռնությունից: Նրանք կարող են լինել հանգիստ ու զուսպ եւ դեպրեսիայի կամ տրավմայի պատճառով կարող են ցանկություն չունենալ պատասխանելու բռնության հետ կապված հարցերին:

Երկրորդային վիկտիմիզացիայից³¹⁶ խուսափելու համար տուժողի հետ հարցազրույց անցկացնող իրավասու մարմինները պետք է որդեգրեն նրբանկատ եւ ըմբռնող մոտեցում: Նախնական եւ դատական քննության տարբեր փուլերում իրավասու մարմինների կողմից տուժողի հետ հարցազրույց անցկացնելու ձեւով կարող է պայմանավորված լինել տուժողի՝ համագործակցելու պատրաստակամությունը: Եթե նա իրեն զգում է ապահով եւ վստահված, ավելի մեծ է հավանականությունը, որ նա կտրամադրի գործ հարուցելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Խուսափել երկրորդային վիկտիմիզացիայից նաեւ նշանակում է ապահովել, որ տուժողը զգա՝ իր ձայնը լսելի է: Հետեւաբար անհրաժեշտ է մշտապես կապ պահպանել տուժողների հետ, ապահովել նրանց անվտանգությունը եւ գործընթացի վերաբերյալ նրանց իրազեկվածությունը:

Միջազգային եւ եվրոպական չափանիշները նախատեսված են, որպեսզի աջակցեն արդարադատության համակարգի ներկայացուցիչներին՝ աջակցելու բռնությունից տուժած անձանց քրեական դատավարության ընթացքում³¹⁷:

Ստամբուլի Կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է՝

ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ նախնական եւ դատական քննության բոլոր փուլերում տուժողների իրավունքները եւ շահերը, այդ թվում՝ որպես վկաներ՝ նրանց ունեցած հատուկ կարիքները պաշտպանելու նպատակով, մասնավորապես՝

- ▶ հնարավորություն տալով տուժողներին, ներպետական օրենքով սահմանված դատավարական կանոնների համաձայն, ուղղակիորեն կամ միջնորդավորված ձեւով լավելու, ապացույցներ, ինչպես նաեւ իրենց տեսակետները, կարիքներն ու մտահոգությունները ներկայացնելու, եւ որպեսզի դրանք հաշվի առնվեն.
- ▶ ապահովելով, որ հնարավորության դեպքում դատարանում կամ իրավապահ մարմիններում գտնվելու ընթացքում տուժողների եւ բռնություն գործադրած անձանց միջեւ շփումը բացառվի.
- ▶ տուժողների համար ապահովելով անկախ եւ ձեռնհաս թարգմանչական ծառայություններ այն դեպքերում, երբ տուժողը դատավարության կողմ է, կամ երբ նրանք ապացույցներ են ներկայացնում.
- ▶ հնարավորություն տալով տուժողներին ներպետական օրենքով սահմանված կանոնների համաձայն ցուցմունքներ տալու՝ առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ենթադրյալ բռնություն գործադրած անձի բացակայության պայմաններում, մասնավորապես՝ հասանելիության դեպքում հաղորդակցման համապատասխան տեխնոլոգիաների կիրառմամբ:

Տուժողները, որոնք զգում են, որ իրենց սատարում են եւ իրենց նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, եւ որոնք օգտվում են հոգեւորական աջակցության անհրաժեշտ ծառայություններից, ամենայն հավանականությամբ, կշարունակեն համագործակցել արդարադատության մարմինների հետ եւ տալ որակական ու քանակական առումով հնարավորինս լավ ցուցմունքներ: Կարելի է տուժողին նախապարտրաստել դատական քննությանը՝ խուսափելու համար այն

316 «Երկրորդային տրավմատիզացիա» եզրույթը նշանակում է լրացուցիչ տրավմա, որը պատճառվել է տուժողին մեղադրող եւ աննրբանկատ մոտեցումների, իշխանությունների եւ ծառայություն մատուցողների կողմից դրսեւորած վարքագծի կամ գործելակերպերի հետեւանքով:

317 Տես նաեւ Եվրոպական դատարանի դիրեկտիվ թիվ 2012/29/EU, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 2001/220/JHA որոշում եւ ՄԱԿ-ի թիվ UNGA 40/34, 1985 հայտարարություն:

իրավիճակից, երբ տուժողը չի ցանկանում ցուցմունք տալ: Վարույթի, դրա ընթացքի եւ հնարավոր արդյունքների վերաբերյալ տուժողի տեղեկացվածության ապահովումը, ինչպես նաեւ վարույթում տուժողի դերի պարզաբանումը կարող է օգնել ռիսկի նվազեցման գործում, երբ տուժողը որոշում է աջակցություն ցույց չտալ մեղադրող կողմին:

Ստուգաթերթերը կարող են օգնել իրավապահ մարմիններին այն հարցում, որ նրանք նախապատրաստվեն տուժողի հետ հանդիպմանը, վերհիշեն, թե կոնկրետ ինչ տեղեկություն պետք է տրամադրվի ընտանեկան բռնությունից տուժած անձին, եւ հարցաքննությունը վարեն այնպես, որ հաշվի առնվեն տուժողի կարիքներն ու մտահոգությունները: Ստորև ներկայացվում են այն ցուցիչների օրինակները, որոնք պետք է հաշվի առնել տուժողի հետ հանդիպման ընթացքում.

- ▶ տուժողի հոգեկան վիճակը, քանի որ նա կարող է լինել անհանգիստ կամ ճնշված,
- ▶ տուժողի վախը հնարավոր արձագանքներից,
- ▶ բռնություն գործադրած անձի համար տուժողի մտահոգվելը,
- ▶ տուժողի մտահոգությունը՝ կապված երեխայի/ընտանիքի անդամի հետ,
- ▶ տուժողի վախը՝ կապված իր ֆինանսական դրության հետ,
- ▶ տուժողի վախը՝ կապված գործի հնարավոր արդյունքի հետ. արդյոք սոցիալական ապահովության մարմինների կամ ՀԿ-ների կողմից տուժողին ցուցաբերվում է որեւէ աջակցություն, թե՛ ոչ:

Տուժողների՝ իրավապահ մարմինների հետ համագործակցելու պատրաստակամությունն ապահովելու համար կարելու է ապահովել, որ տուժողները չզգան, որ իրենց քննադատում են կամ չեն հասկանում:

Ինչպես անցկացնել հարցաքննությունը

- ▶ Ցանկալի է, որ տուժողն ընտրի հարցաքննություն անցկացնող անձի սեռը:
- ▶ Տուժողին ուղեկցում են (օրինակ՝ աջակցություն ցուցաբերող աշխատակիցը):
- ▶ Հանդիպումն անցկացվում է հարցաքննության համար նախատեսված հանգիստ սենյակում՝ առանց ընդհատումների:
- ▶ Տրամադրվում են թարգմանչական ծառայություններ, եթե տուժողի մայրենի լեզուն պետական լեզուն չէ:
- ▶ Ցուցաբերեք նրբանկատություն եւ կարեկցանք:
- ▶ Տեղակացրեք տուժողին իր իրավունքների մասին:
- ▶ Մինչեւ անձնական հարցեր տալը կարող է ի հայտ գալ այդպիսի հարցերի կարելուությունը պարզաբանելու անհրաժեշտություն:
- ▶ Հերքեք տուժողի՝ ինքն իրեն կարեկցելու եւ (կամ) ինքն իրեն կասկածելու վերաբերյալ արտահայտությունները :
- ▶ Խուսափեք գնահատողական դատողություններից:
- ▶ Խուսափեք մասնագիտական եզրույթներից:
- ▶ Իր պատմությունը ներկայացնելու համար տուժողին տրամադրեք բավականաչափ ժամանակ եւ լսեք նրան:
- ▶ Օգտագործեք որոշակի պատասխան չենթադրող հարցեր:

Տուժողները կարող են վախենալ բռնություն գործադրած անձից, եւ քրեական վարույթի ընթացքում նրա հետ ցանկացած շփում կարող է վնաս հասցնել տուժողին: Հետեւաբար բռնության եւ դատական վարույթի բոլոր փուլերում **պետք է խուսափել տուժողի եւ բռնություն գործադրած անձի միջեւ ցանկացած շփումից:** Դատավորը եւ դատարանի աշխատակիցները պետք է հետեւեն, որ դատական բռնության ընթացքում կիրառվեն դատարանում եւ դատարանից դուրս գործադրվող իրավական եւ գործնական պաշտպանության միջոցները՝ հետագա տրավմայից խուսափելու եւ ահաբեկումը բացառելու համար: Այսպիսով, պետք է գնահատել նաեւ **պաշտպանության միջոցների** կիրառման անհրաժեշտությունը, ինչպես օրինակ՝ **առանձին սենյակում ցուցմունք** տալը, **տուժողի ցուցմունքը նախապես ձայնագրելը** կամ տեսակոնֆերանսի միջոցով տուժողի ցուցմունքն ապահովելը: Այնպիսի իրավիճակներում, երբ տուժողը համաձայնել է վկայություն տալ դատական նիստերի դահլիճում, կարող է ապահովվել շփման բացակայության սկզբունքը՝ թույլ տալով տուժողին ցուցմունք տալ բռնություն գործադրած անձի բացակայությամբ: Կարելու է ըմբռնել, որ չնայած այն հանգամանքին, որ դատարանում քննվող գործի հիմքում կարող է ընկած լինել մեկ կոնկրետ միջադեպ՝ տուժողը կարող է շարունակաբար ենթարկված լինել վիրավորական եւ բռնի հսկողության, հետեւաբար բռնություն գործադրած անձի հետ ցանկացած կապ կարող է տրավմատիկ լինել³¹⁸:

Քրեական դատավարության օրենսգրքի 98.13 հոդվածով նախատեսվում է տեսաձայնային եւ տեխնիկական այլ միջոցների օգտագործում, դատական նիստերի դահլիճում անձանց ներկայության սահմանափակում, մասնակիցների շրջանում գաղտնիության պահպանման պահանջներ եւ դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի բացակայություն:

Քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածով քննիչին հնարավորություն է տրվում կատարել նախօրոք հարցաքննված այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի եւ մեկ այլ անձի ցուցմունքներում: Այնուամենայնիվ, միջազգային չափանիշների համաձայն՝ **ընտանեկան բռնության եւ սեռական բռնության դեպքերում ցանկացած առերեսում պետք է հասցնել նվազագույնի եւ տուժողի համար ապահովել պաշտպանության հստակ երաշխիքներ:**

Յ.-ն ընդդեմ Խորվաթիայի [Y. v. Croatia] գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ Ստամբուլի կոնվենցիայով պետություններից պահանջվում է ընդունել օրենսդրական միջոցներ՝ տուժողի իրավունքները պաշտպանելու համար: Դատարանը նշել է, որ՝

Այս միջոցառումների թվին են դասվում, *inter alia* (ի թիվս այլնի), ահաբեկումից եւ կրկնակի վիկտիմիզացիայից պաշտպանությունը, տուժողներին լսելի դարձնելու, նրանց կարծիքները, կարիքներն ու մտահոգությունները ներկայացնելու եւ պատշաճ ձեւով դիտարկելու, գործող ներպետական օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում ենթադրյալ բռնություն գործադրած անձի բացակայությամբ ցուցմունք տալու հնարավորության ընձեռումը: Բացի այդ, ԵՄ-ի՝ հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, աջակցության եւ պաշտպանության նվազագույն չափանիշները սահմանող հրահանգով նախատեսվում է, *inter alia*, որ տուժողների հետ հարց ու պատասխանն անցկացվի առանց անհիմն ձգձգումների, իսկ բժշկական գննությունները հասցվեն նվազագույնի:

318 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելումը եւ դրա դեմ պայքարը. Իրավապահ մարմինների եւ արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման ուսումնական ռեսուրս*, էջ 78:

Ընդունելով տուժողի ցուցմունքի՝ գործով միակ ուղղակի ապացույցը լինելու փաստը, հետեւաբար պաշտպանության համար խաչաձեւ հարցաքննության կարեւորությունը՝ Դատարանը վճռել է, որ «անձի՝ իրեն պաշտպանելու իրավունքը չի ենթադրում պաշտպանության ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք (տե՛ս, mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով))»³¹⁹: Այսպիսով, այն վճռել է՝

բանի որ «սեռական բռնություն» քրեական իրավախախտման համար մեղադրվող ամբաստանյալների եւ նրանց ենթադրյալ տուժողների ուղղակի առերեսումը ենթադրում է տուժողներին հոգեբանական ճնշման ենթարկելու վտանգ, Դատարանը գտնում է, որ անմիջապես պատասխանող կողմից արվող խաչաձեւ հարցաքննությունը պետք է ամենայն զգուշությամբ գնահատվի ներպետական դատարանների կողմից, եւ այդ զգուշավորությունը դրսեւորվի էլ ավելի խիստ՝ ինտիմ բնույթ ունեցող հարցերի դեպքում³²⁰:

Դատարանն այնուհետեւ եզրակացրել է, որ խաչաձեւ հարցաքննությունը չպետք է օգտագործվի որպես տուժողի ահաբեկման կամ նվաստացման միջոց:

Դատավորները կարեւոր դերակատարություն ունեն տուժողի դերը՝ որպես ականատես, կասկածի տակ չդնելու կամ ծաղրի առարկա չդարձնելու, ինչպես նաեւ դատարանի կողմից նրա ցուցմունքի համար ապահով միջավայր ապահովելու հարցում: Դատավորները պետք է հաշվի առնեն այն մարտավարությունները, որոնք բռնություն գործադրած անձն օգտագործում է իրավական համակարգը շրջանցելու համար, եւ թույլ չտան բռնություն գործադրած անձին ոչ պատշաճ վարքագիծ դրսեւորել կամ դատական նիստերի դահլիճում ահաբեկող մեկնաբանություններ անել: Ընտանեկան բռնության հետ կապված այն վարույթների ժամանակ, որոնք կարող են ներառել անհետաձգելի միջամտություն եւ պաշտպանական միջոցներ կիրառելու մասին որոշումներ ներառող լուսմներ, քրեական գործերով դատաքննության կամ ամուսնալուծության եւ երեխայի խնամակալության հետ կապված լուսմներ, դատավորները պետք է հատկապես հաշվի առնեն այն բանի հավանականությունը, որ ենթադրյալ բռնություն գործադրած անձը կօգտագործի տուժողին ահաբեկելու կամ դատական գործընթացում մաներելու մարտավարություններ (ինչպիսիք են՝ կատաղի, ակնդետ հայացք նետելը, հուզական ելույթով հանդես գալը եւ այլն): Այդպիսի վարքագծին վերջ դնելու նպատակով դատավորները պետք է վճռական գործողությունների դիմեն՝ նախազգուշացում տալու, դատարանում վարույթի կողմերի նստելու տեղերը փոխելու կամ անհրաժեշտության դեպքում բռնություն գործադրած անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելու միջոցով:

Ավելի մեծ է հավանականությունը, որ բռնություն գործադրած անձինք կհերքեն փաստերը, քան իրենց՝ բռնություն պարունակող վարքագծի համար կստանձնեն պատասխանատվություն: Նրանք կարող են ստել, մեղմ ներկայացնել բռնությունը կամ այն մեկնաբանել արտաքին հանգամանքներով պայմանավորված՝ ոտնձգությունների պատճառը ակոհիոլն է, սթրեսը կամ տուժողը: Նրանց պաշտպանության հիմքում, հետեւաբար, ընկած կլինի ապացույցներ ներկայացնելու պահանջները (դատաբժշկական փորձաքննություն, վկայություններ եւ այլն): Բռնություն գործադրած անձը կարող է նույնիսկ պահանջել կեղծ մեղադրանքների մասով գործի հարուցում ցանկացած հետեւանքից խուսափելու համար: Բռնություն գործադրած անձի կողմից դատարանում օգտագործվող մեկ այլ տակտիկա է ինքնախոստովանությունը կամ առերեւոյթ ընդունելը, որ վնասն ինքն է հասցրել տուժողին՝ մեղմացուցիչ հանգամանքից օգտվելու համար: Այսպիսի դեպքերում դատավորը, հետեւաբար,

319 *Յ.-ն ընդդեմ Խորվաթիայի* [Y. v. Croatia], Գործ թիվ 41107/10, 2015 թվական, 106-րդ պարբերություն:

320 *Յ.-ն ընդդեմ Խորվաթիայի* [Y. v. Croatia], Գործ թիվ 41107/10, 2015 թվական, 106-րդ պարբերություն:

վճռորոշ դեր է կատարում ընտանեկան բռնության նկատմամբ «գրոյական հանդուրժողականություն» մոտեցումը խրախուսելու գործում:

- ▶ Դատավորները պետք է նաեւ խուսափեն ոչ պատշաճ մեկնաբանություններ անելուց: Օրինակ՝ նախորդ գործով արվել են հետեւյալ խտրական արտահայտությունները.
- ▶ «Դուք այնտեղ [բռնություն գործադրած անձի ընտանիքում] բնակվել եք հանուն մի կտոր հացի»:
- ▶ «Պատմե՛ք ճշմարտությունը: Ի՞նչ եք թաքցնում»:
- ▶ «Ես այստեղ մայր չեմ տեսնում»:
- ▶ «Ինչպե՞ս կարող էիր դու, հայ տղամարդ լինելով [դիմում է ֆիմիցիդի տուժողի դեռահաս որդուն], հանդուրժել, որ քո մայրը խոսեր թուրք տղամարդու հետ»:

Ստուգաթերթը կարող է օգնել դատարանում տուժողի կողմից վկայություն տալու գործընթացը նյութացնելու հարցում.

- ▶ Կիրառե՛ք հասանելի միջոցներ, որոնք կարող են նյութացնել դատաբնության ընթացքում տուժողի կողմից վկայություն տալու գործընթացը. այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն են ընձեռում տուժողին խուսափելու մեղադրյալին տեսնելուց. շղարշներ, դռնփակ դատավարություն, նախապես արված ձայնագրություն :
- ▶ Կարգավորե՛ք նշանակալից բացահայտումների, ժամանակացույցի կազմման եւ դատավարության հետ կապված ցանկացած այլ հարց մինչեւ տուժողի ներկայանալը՝ դատարանում անցկացրած նրա ժամանակը սահմանափակելու համար:
- ▶ Որդեգրե՛ք մոտեցումներ եւ եղանակներ՝ տուժողին քիչ սթրեսի ենթարկելու համար:
- ▶ Ցուցմունք տալու գործընթացը սահմանափակե՛ք միայն ամենավերաբերելի հարցերի շրջանակով :
- ▶ Ընձեռե՛ք կարճ ընդմիջման հնարավորություն, եթե տուժողը չափազանց ճնշված է շարունակելու համար:
- ▶ Թույլ մի տվե՛ք, որ իրավաբանի կողմից չներկայացված որեւէ ամբաստանյալ խաչաձեւ հարցաքննի տուժողին:
- ▶ Թույլատրված լինելու դեպքում որպես գլխավոր ապացույց օգտագործե՛ք ձայնագրված հարց ու պատասխանը:
- ▶ Հեռացրե՛ք բոլոր այն անձանց, որոնց ներկայությունն անհրաժեշտ չէ, այդ թվում՝ բռնություն գործադրած անձին, քանի դեռ տուժողը ցուցմունք է տալիս:

Դերախաղ.

- ▶ Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է 3-րդ կյուբը, որը ներկայացնում է բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու տերմինաբանություն/արտահայտություններ, որոնց օգտագործումը վտանգում է բռնության ենթարկված անձին: Անհրաժեշտ է սկսել քննարկում այն մասին, թե ինչ պետք է անեն քրեական հետապնդում իրականացնող մարմինների ներկայացուցիչները կրկնակի զոհացումից խուսափելու համար:
- ▶ Դատական նիստերի դահլիճում տուժողների և վկաների հարցաքննության դերախաղ կազմակերպելու համար մասնակիցների երկու խմբին կարող է տրվել մեկ սցենար:

4.3.2. ՏՈՒԺՈՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.3.2.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության գործերը քննելիս շատ կարեւոր է ապահովել տուժողների պաշտպանությունը: Քրեական վարույթների ընթացքում նրանք սովորաբար կրկին ենթարկվում են տրավմայի, եւ մեծ է ռիսկը, որ գործի քննության ընթացքում նրանք բռնություն գործադրած անձի կողմից ենթարկվեն խիստ ահաբեկման եւ բռնության: Տուժողի անվտանգությունն ապահովելը պետության պարտականությունն է. հակառակ դեպքում կարող են խախտվել տուժողի հիմնական իրավունքները, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը:

Իրավապահ մարմինների եւ դատավորների դերն է հավաստիանալ, որ տուժողին տեղեկացրել են իր իրավունքների եւ իրավաբանական ծառայությունների հասանելիության մասին: Տուժողներին պետք է նաեւ տեղեկացնել վարույթի ընթացքի եւ գործի ելքի մասին: Տուժողին իր իրավունքների եւ քրեական արդարադատության համակարգում իր դերի մասին տեղեկությունների տրամադրմամբ նաեւ հնարավոր է բարձրացնել նրա վստահության եւ համակարգում նրա մասնակցության պատրաստակամության մակարդակը, ինչպես նաեւ նպաստել քրեական վարույթների արդիականության ապահովմանը:

Ստամբուլի կոնվենցիայով պետություններից պահանջվում է ապահովել «նախնական եւ դատական վարույթի բոլոր փուլերում» տուժողի իրավունքների եւ շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ «որպես ականատես՝ նրա հատուկ կարիքները»³²¹:

Դա ենթադրում է հետեւյալը.

- ▶ Պաշտպանել տուժողներին, ինչպես նաեւ նրանց ընտանիքի անդամներին եւ վկաներին ճշումներից, վրեժխնդրությունից եւ կրկնակի վիկտիմիզացիայից:
- ▶ Ապահովել, որ տուժողները տեղեկացվեն բռնություն գործադրած անձի փախուստի կամ ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակվելու մասին առնվազն այն դեպքերում, երբ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին կարող է սպառնալ վտանգ:
- ▶ Նրանց տեղեկացնել ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններում իրենց իրավունքների եւ իրենց տրամադրության տակ եղած

321 Ստամբուլի կոնվենցիա, 56-րդ հոդված:

ծառայությունների, իրենց բողոքների քննության ընթացքի, առաջադրված մեղադրանքների, քննության կամ վարույթի ընթացքի, դրանցում իրենց դերի, ինչպես նաև իրենց գործի ելքի մասին:

- ▶ Տուժողներին տրամադրել աջակցության համապատասխան ծառայություններ այնպես, որ նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն եւ հաշվի առնվեն պատշաճ կերպով:
- ▶ Ապահովել տուժողի մասնավոր կյանքը եւ հեղինակությունը պաշտպանելուն ուղղված միջոցառումներ նախատեսելու հնարավորությունը:

Կոնվենցիայով սահմանվում է տուժողների (նրանց ընտանիքների կամ երեխա տուժողների դեպքում՝ օրինական ներկայացուցիչների)՝ քննության եւ այն վարույթի շրջանակներում զարգացումների մասին տեղեկանալու իրավունքները, որոնցում նրանք ներգրավված են որպես տուժողներ: Այս առումով տուժողները պետք է տեղեկանան իրենց իրավունքների, իրենց տրամադրության տակ եղած ծառայությունների, իրենց բողոքներին տրված ընթացքի, առաջադրված մեղադրանքների, քննության կամ վարույթի ընթացքի, դրանցում իրենց դերի, ինչպես նաև իրենց գործի ելքի մասին³²²:

Իրավապահ մարմինները եւ դատավորները պետք է զրուցեն դատավարության իգական սեռի մասնակիցների, հատկապես բռնությունից տուժած անձանց հետ՝ իրենց եւ իրենց ընտանիքի ցանկացած անդամի անվտանգությանը վերաբերող ծրագրերի մասին: Նախնական հարցաքննությունների ժամանակ իրավապահ մարմինները պետք է բացատրեն դատական գործընթացի փուլերը եւ հարցնեն, թե արդյոք տուժողը (վկան) դիտարկել է պաշտպանության միջոցներ կիրառելու մասին որոշման համար դիմելու հնարավորությունը: Այս քննարկումը պետք է ներառի այն քայլերի վերանայումը, որոնք կարող է ձեռնարկել տուժողը դատական գործընթացի ընթացքում իր անվտանգությունն ապահովելու, դնքաց նիստում իր անձնական անվտանգությանն առնչվող ծրագրերի մասին տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ՝ հաշվի առնելով իրավախախտում կատարողի՝ արգելանքի տակ չգտնվելու կամ երաշխավորությամբ/զրավով ազատ արձակվելու հավանականությունը: Այդպիսի տեղեկատվությունը լավագույնս փոխանցվում է իրավական խորհրդատուի կամ փաստաբանի կողմից կամ դռնփակ լսումների միջոցով:

Կալանքից բռնություն գործադրած անձին ազատելիս տուժողին պետք է տեղեկացնել այդ մասին: Հիշեք, որ *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [Branko Tomašić and Others v. Croatia]* գործով Դատարանը գտել է, որ բռնություն գործադրած անձին բանտից ազատ արձակելիս իշխանությունները չեն գնահատել նրա վիճակը, ինչպես նաև այն հավանականությունը, որ նա ի կատար կածի իր սպառնալիքները: Այսպիսով, նրանք չեն ձեռնարկել «պատշաճ միջոցառումներ [...] վերացնելու Մ.Մ.-ի կողմից հնչեցրած սպառնալիքները բանտից ազատ արձակվելուց հետո ի կատար ածելու հավանականությունը»³²³:

Արդարադատության ոլորտի դերակատարները պետք է տեղյակ լինեն բռնությունից տուժած անձանց համար համայնքում հասանելի այնպիսի սոցիալական ծառայությունների եւ աջակցություն տրամադրող կազմակերպությունների մասին, ինչպիսիք են՝ ճգնաժամային կենտրոններն ու ապաստանները՝ տուժողներին համապատասխան տեղեր ուղեգրելու համար: Կազմակերպությունների այս տեսակները կարող են ավելի սերտորեն աշխատել տուժողների հետ եւ օգնել նրանց անձնական անվտանգության ծրագրեր մշակելու գործում:

322 Բացատրական գեկույց, 286-րդ պարբերություն:

323 *Բրանկո Տոմաշիչը եւ այլք ընդդեմ Խորվաթիայի*, Գանգատ թիվ 46598/06, 2009 թվական, 60-րդ պարբերություն:

Ինչպես ցանկացած ռիսկի գնահատման դեպքում, իրավապահ մարմինները պետք է տեղյակ լինեն, որ առկա ռիսկերը չունեն կայուն բնույթ եւ կարող են շատ արագ փոփոխվել: Գոյություն ունեն մի շարք գործոններ կամ կոնկրետ հանգամանքներ, որոնց դեպքում կարող է բարձրանալ ռիսկի մակարդակը, ինչպես օրինակ՝ ի թիվս այլնի, բաժանում, դատական լսում, երեխայի հետ շփում³²⁴: Ռիսկի գնահատումները պետք է շարունակաբար թարմացվեն ոստիկանության կողմից, որպեսզի դատախազները կարողանան կրկին գնահատել փոփոխվող իրադրությունը եւ ի պատասխան կիրառեն ցանկացած անհրաժեշտ միջոց: **Այսպիսով, անհրաժեշտ է, որ ոստիկանությունը եւ դատախազները մշտապես հաղորդակցվեն միմյանց հետ:**

Օրինակ՝ դատախազները եւ քննիչները պետք է տեղեկացվեն, թե արդյոք տուժողը պահանջել է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական միջոցներ կիրառելու մասին որոշման կայացում, արդյոք որոշումը կայացվել է, եւ արդյոք այն խախտել է բռնություն գործադրած անձը: Սա հատկապես կարեւոր է այն դեպքում, երբ պաշտպանության միջոցներ կիրառելու մասին որոշման խախտումը համարվում է քրեական իրավախախտում եւ պետք է ընդգրկվի մեղսագրվող հանցանքների կազմում: Այսպիսով, հատկապես կարեւոր է ապահովել ընթացիկ քրեական եւ քաղաքացիական գործերի համակարգումը³²⁵:

Տուժողի անվտանգության մակարդակը բարձրացնելու համար դատավորները կարող են կիրառել երկու միջոց՝ մինչդատական կալանք եւ ազատ արձակման համար ավելի խիստ պայմանների սահմանում: Բռնություն գործադրած անձի՝ գրավի դիմաց ազատ արձակվելու իրավունքի եւ տուժողի՝ անվտանգության իրավունքի միջեւ հավասարակշռություն հաստատելիս դատավորները պետք է շահերի բախման հարցը լուծեն՝ նախապատվությունը տալով տուժողի անվտանգությանը: Անվտանգության միջոցառումները պետք է մշտապես դիտարկվեն ռիսկի գնահատման համատեքստում՝ օգտագործելով այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ ստուգաթերթերը կամ այլ ընդունված ընթացակարգեր՝ սերտորեն համագործակցելով ոստիկանության եւ այն ՀԿ-ների հետ, որոնք բռնությունից տուժած անձանց տրամադրում են օժանդակություն եւ աջակցություն: Բարձր ռիսկի գործոն պարունակող գործերում առանձնակի կարեւորություն ունեն մահ պատճառելու ռիսկի գնահատումները, մասնավորապես այն դեպքում, երբ նախկինում չի կատարվել ռիսկի գնահատում: Կարեւոր է նշել, որ դատարանին պետք է հասանելի լինեն գործում ներգրավված տարբեր գերատեսչություններում առկա բոլոր համապատասխան տեղեկությունները՝ տուժողի պաշտպանության վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Դատավորները պետք է հաշվի առնեն ցանկացած մտահոգություն, որ տուժողը բարձրաձայնում է՝ իր անվտանգության հետ կապված:

4.3.2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսվում է պաշտպանություն՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց համար: 98-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող (վկաներ, փորձագետներ, տուժողներ եւ այլն) կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու եւ այն կատարողին հայտնաբերելու համար, ինչի

324 Ռիսկերի գնահատման վերաբերյալ ավելի մանրամասն կարելի է տեսնել Պաշտպանությանն առնչվող բաժնում:

325 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելումը եւ դրա դեմ պայքարը, Իրավապահ մարմինների եւ արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման ուսումնական ռեսուրս*, 2016 թվական, էջ 54:

հետեւանքով կարող են վտանգվել պաշտպանվող անձի կամ նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: Համապատասխանաբար, քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող անձը, ինչպես նաեւ նրա ընտանիքի անդամները, մերձավոր ազգականները եւ ընկերներն ունեն պաշտպանության իրավունք:

Ավելին, իրավապահ մարմինները պետք է ձեռնարկեն տուժողների եւ վկաների պաշտպանության այդպիսի միջոցներ՝ ի պաշտոնե, ինչպես նաեւ տվյալ անձանց դիմումի հիման վրա: Պաշտպանության միջոցները պարտադիր են, եթե քրեական դատավարությանը մասնակցող անձին կամ նրա մերձավոր ազգականներին սպառնացել են ֆիզիկական վնաս հասցնել, ինչը պայմանավորված է դատավարությունում նրանց մասնակցությամբ³²⁶:

Համապատասխանաբար, 98¹-րդ հոդվածով նախատեսվում են պաշտպանության միջոցներ, այդ թվում՝

- ▶ դատարանի կամ դատախազի կողմից անձին պաշտոնապես նախազգուշացնելը, որը ինչեցնում է հնարավոր քրեական պատասխանատվություն ենթադրող սպառնալիքներ.
- ▶ պաշտպանվող անձի անձնական տվյալները պաշտպանելը.
- ▶ պաշտպանվող անձի անվտանգությունն ապահովելը, բնակարանը եւ այլ գույք պահպանելը.
- ▶ պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը, վտանգի մասին հայտնելը.
- ▶ վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը եւ հեռախոսային ու այլ հաղորդումներ գաղտնալսելը.
- ▶ պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը.
- ▶ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի նկատմամբ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը.
- ▶ պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը.
- ▶ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը.
- ▶ պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը.
- ▶ դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը.
- ▶ դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

98²-98¹³-րդ հոդվածներում ավելի մանրամասն ներկայացվում են պաշտպանության միջոցները եւ սահմանված յուրաքանչյուր պաշտպանության միջոցի գործողության շրջանակը:

326 Զրեական դատավարության օրենսգիրք, 98-րդ հոդվածի 1-ին մաս:

V. ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մարդու իրավունքների մասին միջազգային կոնվենցիաներով, այդ թվում՝ ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածով նախատեսվում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք այն անձանց համար, որոնց իրավունքները խախտվել են: Իրավական պաշտպանության միջոցի իրավունքը նաեւ համարվում է Դատարանի՝ 2-րդ եւ 3-րդ հոդվածի վերաբերյալ դատական պրակտիկայում ձեւավորված պատշաճ զգուշավորության չափանիշի տարր՝ վերելում ներկայացված կարգով: Իրավական պաշտպանության միջոցի իրավունքը ներառում է թե՛ համաչափ եւ զսպող պատժամիջոցներ, թե՛ փոխհատուցման հասանելիություն: Այս բաժնում ներկայացվում են այս կետերի առնչությամբ միջազգային չափանիշները եւ ազգային օրենսդրությունն ու պրակտիկան:

Կանանց նկատմամբ բռնության գործերով դատախազները եւ դատավորները պետք է ապահովեն, որ պատիժն արտացոլի հանցագործության բնույթի ծանրությունը³²⁷: Նման դեպքերում պատիժ նշանակելը պետք է լինի արդար, ոչ խտրական, համաչափ, միասնական եւ հետեւողական: Նշենք, որ պատիժ սահմանելու առաջնային նպատակը պետք է լինի բռնության կրկին կատարումը կանխելը, տուժողին պաշտպանելը եւ կատարողին պատասխանատվության ենթարկելը³²⁸:

5.1. ՀԱՄԱԶԱՓ, ԶՄՊՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

327 ՄԻԳՅԳ, Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների եւ հետեւանքների հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, Ռաշիդա Մանջու (A/HRC/14/22, 2010 թվականի ապրիլի 19), 31-րդ, 85-րդ պարբերություններ: Տե՛ս նաեւ ԿՆԽՎԿ-ի 2-րդ հոդվածով նախատեսված՝ Կողմ պետությունների հիմնական պարտավորությունների մասին թիվ 28 ընդհանուր հանձնարարականը, որտեղ նշվում է, որ «իրավական պաշտպանության միջոցները պետք է ներառեն փոխհատուցման տարբեր ձեւեր, ինչպիսիք են դրամական փոխհատուցումը, հատուցումը, ռեաբիլիտացիան եւ վերականգնումը. տուժած կողմի բավարարման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հրապարակավ ներողություն խնդրելը, հրապարակային արարողությունները եւ չկրկնվելու երաշխիքները, համապատասխան օրենքներում եւ գործելակերպերում փոփոխություններ մցնելը եւ կանանց իրավունքների խախտում կատարողներին դատական պատասխանատվության ենթարկելը»:

328 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ*, 2016 թվական, էջ 84, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-final-english/16807626a4>.

(ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՁԵՎՈՎ ՊԱՏԻԺՆԵՐ, ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿՈՒՄ)

5.1.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 45-րդ հոդվածի համաձայն՝

Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսվող հանցագործությունները պատժվեն արդյունավետ, համաչափ եւ զսպող սանկցիաներով՝ հաշվի առնելով դրանց ծանրությունը:

Բացատրական զեկույցի համաձայն՝ 45-րդ հոդվածը սերտորեն կապված է 33-41-րդ հոդվածների հետ, որոնցում սահմանվում են տարբեր իրավախախտումներ, որոնք պետք է պատժվեն քրեական օրենսդրությամբ³²⁹: Այնուամենայնիվ, սա վերաբերում է պատժամիջոցների բոլոր տեսակներին՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք ունեն քրեական բնույթ, թե՛ ոչ: Այսպիսով, 45-րդ հոդվածով այս հանցագործությունների համար պահանջվում է «արդյունավետ, համաչափ եւ զսպող պատժամիջոցների» սահմանում: Սա ենթադրում է այնպիսի ազատագրկման ժամկետների սահմանում, որոնք կարող են անհրաժեշտության դեպքում հանգեցնել հանձնման³³⁰: Նախագիծը մշակողները որոշել են պետություններին վերապահել Կոնվենցիային համապատասխան սահմանված իրավախախտման տեսակը, որի համար պետք է սահմանվի ազատագրկման ձեւով պատիժ: Յետեւաբար պատժամիջոցները պետք է համապատասխանեն ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածին, որով սահմանվում է, որ «ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որեւէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական իրավախախտում չի համարվել»:

Տուժողների համար արդյունավետ պաշտպանության ապահովման, իսկ բռնություն գործադրած անձանց համար պատժամիջոցների սահմանման գործում քրեական արդարադատության ոլորտի մարտահրավերներից մեկը կապված է շարունակական համարվող խախտման ընթացքում ներկայացված բազմաթիվ հայցերի, ինչպես նաեւ այն փաստի հետ, որ վարչական շրջանի դատարանների (քաղաքացիական, վարչական եւ քրեական) կողմից կարող են քննվել տարբեր մեղադրանքներ, եւ կիրառվել տարբեր պաշտպանության մեխանիզմներ: Տարբեր դատարաններում բազմաթիվ հայցեր հարուցելը կարող է դժվարացնել բռնության շարունակական բնույթը եւ ծանրությունը հասկանալը, քանի որ դատավորը որոշակի պայմաններում կարող է չզննահատել այլ դատարաններ ներկայացված՝ միեւնույն կողմերին վերաբերող տարբեր հայցերի հիմքում ընկած փաստերը: Մյուս մարտահրավերը կապված է դատարանի՝ բռնության շարունակական բնույթը հաշվի առնելու կարողության հետ նույնիսկ այն դեպքում, երբ գործերը քննվում են մեկ դատական կոլեգիայի կամ ընդդատության շրջանակներում (օրինակ՝ քրեական դատարաններ): Սա հաճախ պայմանավորված է այն հանգամանքով, որ մեղադրանքներն առաջադրվում են բռնության մեկ դեպքով՝ հաշվի առնելով վերելում ներկայացված կարգով շարունակական բռնությունը հաստատող հայցերի համար ապացույցների ձեռքբերման դժվարությունները:

329 Բացատրական զեկույց, 232-րդ պարբերություն:

330 Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի (ԵՊԾ թիվ 24) 2-րդ հոդվածի համաձայն՝ հանձնումը պետք է կատարվի այնպիսի հանցագործությունների դեպքում, որոնք հայցող եւ հայցվող Կողմերի իրավունքներով պատժվում են ազատագրկմամբ կամ կալանքով՝ նվազագույնը մեկ տարի կամ ավելի ժամկետով կամ ավելի խիստ պատժով:

Նախադեպային իրավունքի օրինակ

Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի [A. v. Croatia] գործով ՄԻԵԴ-ը 8-րդ հոդվածի խախտում է հայտնաբերել ընտանեկան բռնություն պարունակող գործում, որի համաձայն՝ իր ամուսնու կողմից ընտանեկան բռնության ենթարկվելուց հետո տուժողը հարուցել է մի շարք դատական վարույթներ (երեք քրեական վարույթ եւ չորս վարույթ՝ մանր իրավախախտումների համար): Այդ տարբեր վարույթների արդյունքը եղել է մի շարք պաշտպանիչ կարգադրություններ արձակելը, նախնական կալանքի վերցնելը, հոգեբուժական եւ հոգեսոցիալական բուժումը եւ ազատագրկման դատապարտելը: Թեեւ որոշ պատժամիջոցներ ի կատար են ածվել, բռնություն գործադրած անձն իր կատարած երկու իրավախախտումների համար (որոնցից մեկը ներառում էր Ա.-ին մահվան սպառնալիքներ հղելը) ազատագրկման չի դատապարտվել:

ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը պատշաճ կերպով չի պաշտպանել տուժողի իրավունքները՝ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ իշխանությունները հաշվի չեն առել տարբեր քրեական եւ մանր իրավախախտումների գործերով վարույթները, որոնք վերաբերել են նույն անձի կողմից նույն տուժողի նկատմամբ կատարված մի շարք բռնարարքների, այսպիսով չեն դիտարկել գործի պատմությունը որպես մեկ ամբողջություն: Այս գործով հատկապես կարեւորվում է համապատասխան պատժամիջոց սահմանելիս իրավական համակարգի ներսում համակարգում անցկացնելը եւ ոտնձգության ամբողջ պատմությանը եւ քրեական անցյալին պատշաճ ուշադրություն դարձնելը: Դրանով նաեւ ուշադրություն է հրավիրվում դատավճիռների կատարման եւ պատժի կրելն ապահովելու նկատմամբ դատական վերահսկողությանը³³¹:

Պետությունները քննարկել են տարբեր եղանակներով դատական ընդդատության եւ մարմինների համակարգման անհրաժեշտության հարցը: Իսպանիայում ստեղծվել են գենդերային հիմքով բռնության հարցերով մասնագիտացված դատարաններ: Այդ մասնագիտացված դատարանները գտնվում են Իսպանիայի բոլոր շրջաններում, գործում են շուրջօրյա (24/7) ռեժիմով եւ դատավորին հնարավորություն են տալիս նշանակել պաշտպանության միջոցների լայն շրջանակ՝ քրեաիրավական բնույթի, քաղաքացիաիրավական բնույթի (այդ թվում՝ ընտանեկան իրավունքի) եւ սոցիալական պաշտպանության մասով: Արդյունքում մեկ դատավորն ընդհանուր պատկերացում է կազմում ամբողջ գործի վերաբերյալ:

331 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ*, 2016 թվական, էջ 85, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-final-english/16807626a4>.

5.1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում «Ընտանեկան բռնության մասին» օրենքով ընտանեկան բռնության համար չեն նախատեսվում պատժամիջոցներ: Փոխարենը, քրեական իրավախախտումներ պարունակող ընտանեկան բռնության գործերը քննվում են քրեական-դատավարական օրենսդրության համաձայն: Ինչպես նշվել է վերը, բռնության բոլոր ձևերը չեն դիտարկվում որպես քրեական իրավախախտումներ, իսկ որոշ դեպքերում պատժվում են Ընտանեկան օրենսգրքով՝ զրկելով ծնողական իրավունքից:

Պատժի տեսակները սահմանված են Հայաստանի քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում, որոնք ներառում են թե՛ տուգանքներ, թե՛ ցմահ ազատազրկում: Հայաստանում պատժի նշանակման հարցում դատավորներին վերապահված է հայեցողական լիազորությունների լայն շրջանակ: Օրինակ՝ 70-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը կարող է որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Հաշվի առնելով Հայաստանի դատական համակարգում գենդերային զգայունության բացակայությունը՝ պատժի նշանակման գործում հայեցողական լիազորությունների այս լայն շրջանակը պոտենցիալ բացասական ազդեցություն է ունեցել ընտանեկան բռնությունից տուժած անձանց՝ արդյունավետ հատուցում ստանալու իրավունքի վրա:

Հայաստանում քննված մի շարք հայտնի գործերում արտացոլվում են այս խնդիրները: Բռնության շարունակական բնույթը հաշվի առնելու դժվարությունն արտացոլված է Հասմիկ Խաչատրյանի գործում, որի ամուսինը 9 տարի շարունակ նրա ֆիզիկական եւ հոգեկան առողջությանը հասցրել է ծանր վնաս, մեղադրվել է խոշտանգման մեջ եւ դատապարտվել է միայն 1.5 տարվա ազատազրկման, համաներմամբ ազատ է արձակվել դատական նիստերի դահլիճից, քանի որ անտեսվել է բռնության նախկին պատմությունը³³²: Բռնության շարունակական բնույթը հաշվի չառնելու հետեւանքով այս գործով սահմանվել է պատժի չափազանց կարճ ժամկետ, ինչը չի համարվում համաչափ եւ զսպող պատիժ:

Թագուհու գործով տուժողը եւ նրա ծնողները տուժողի ամուսնու կողմից ենթարկվել են ֆիզիկական եւ հոգեբանական բռնության: Այդ դեպքերից մի քանիսը հաղորդվել են ոստիկանություն: Սակայն ոստիկանությունը եւ դատական իշխանությունը չեն պաշտպանել նրանց բռնությունից: 2016 թվականի հունվարին հարուցվել է քրեական գործ, եւ Վ.-ին [բռնություն գործադրած անձին] մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով՝ ֆիզիկական ուժեղ ցավ եւ ֆիզիկական ուժեղ տառապանք պատճառելու համար: Դատավորը, Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն, նշանակել է 6-ամսյա ազատազրկման ձեռով պայմանական պատիժ՝ հաշվի չառնելով բռնության տեսականության հանգամանքը եւ տուժողի կյանքին ու առողջությանը մշտապես սպառնացող անմիջական վտանգը: Ամուսինը շարունակել է հետամտել եւ հետապնդել տուժողին ու նրա ծնողներին: 2016 թվականի հուլիսին նա կացնահարել է ծանր վնասվածք է հասցրել տուժողին եւ նրա մորը. տուժողի մայրը կացնի հարվածից մահացել է³³³:

Հայաստանում այս խնդրով զբաղվող ՀԿ-ների արտահայտած կարծիքի համաձայն՝ ընտանեկան բռնության գործերով սահմանված պատժամիջոցներն ունեն չափազանց կարճ ժամկետ՝ դատական կանխակալության եւ ծանրացուցիչ հանգամանք-

332 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ*, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍ, 2016 թվական, էջ 19, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-for-judges-and-prosecutors-on-ensuring-women-s-access-/1680764286>.

333 Տե՛ս «ԿՆԽՎԿ աշխատանքային խումբ», Հայաստանի հասարակական կազմակերպությունների կողմից ԿՆԽՎԿ ներկայացված անկախ զեկույցը, 2016 թ., էջ 46, հասանելի է հետեւյալ հղումով՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/ARM/INT_CEDAW_NGO_ARM_25449_E.pdf.

ների ոչ պատշաճ կիրառման պատճառով, ինչն ավելի մանրամասն ներկայացվում է ստորև:

Ավելին, գոյություն չունի որևէ միջդատական կամ միջգերատեսչական համագործակցության հետ կապված ընթացակարգ կամ հատուկ փաստաթուղթ:

Խորհուրդներ վերապատրաստողներին

Հաշվի առնելով վերոնշյալը՝ վերապատրաստողները կարող են դասընթացի մասնակիցներին խնդրել, որ քննարկեն հետևյալ հարցերը.

- ▶ Ինչպիսի՞ համագործակցություն պետք է ծավալվի գերատեսչությունների միջև:
- ▶ Ո՞ր գերատեսչությունները համագործակցության հատուկ ուղեցույցների կարիք ունեն՝ արդյունավետ քննություն, պաշտպանություն և պատժի նշանակում ապահովելու նպատակով:

5.1.3. ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

5.1.4. ԵՐԵՒԱՅԻ ՀԵՏ ՇՓՈՒՄԸ, ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՉՐԿԵԼԸ

Ինչպես նշվում է Ստամբուլի կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ մասում, բռնություն գործադրած անձանց նկատմամբ կարող են այլ միջոցներ ձեռնարկվել, որոնցից են ծնողական իրավունքներից զրկելը, եթե երեխայի լավագույն շահերը, որոնց թվում կարող է լինել տուժողի անվտանգությունը, չեն կարող երաշխավորվել այլ կերպ:

Մասնավորապես, ծնողներից մեկի նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի պարագայում, որի ականատեսն է դառնում երեխան, բռնություն գործադրող ծնողի հետ շփումը շարունակելը կարող է չբխել երեխայի լավագույն շահերից:³³⁴ Բռնություն գործադրող ծնողի հետ շփումն ապահովելը ոչ միայն կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխայի վրա, այլև կարող է լրջորեն վտանգել տուժողի անվտանգությունը, որովհետև դա հաճախ ոտնձգողի համար տուժողի հետ շփվելու կամ նրան տեսնելու առիթ է: Բռնություն գործադրած անձի շփումը երեխայի հետ կարող է անհնար լինել առանց արգելող անհետաձգելի միջամտության որոշման կամ պաշտպանական որոշման խախտում առաջացնելու: Այդ պատճառով երկու տեսակի որոշումներ կայացնելու դեպքում էլ պահանջվում են երեխաների հետ շփվելու և նրանց ինամակալության վերաբերյալ ժամանակավոր որոշումներ:

Հայաստանում երեխայի հետ շփման վերաբերյալ ժամանակավոր որոշումներ կայացնելու անհրաժեշտությունը հաշվի է առնվել Ընտանեկան բռնության մասին օրենքի 8-րդ հոդվածում պաշտպանական որոշում կայացնելու մասով, սակայն այդ որոշումները չեն դիտարկվում անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու

334Բացատրական գեկույց, 233-րդ կետ

մասով: Այդ բացը կարող է ճակատագրական հետեւանքներ ունենալ ընտանեկան բռնությունից տուժած անձանց եւ նրանց ինամբի տակ գտնվող անձանց համար:

Հայաստանում երեխաների նկատմամբ բռնությունը կարող է հանգեցնել ծնողական իրավունքներից զրկելուն: ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն՝ ծնողական իրավունքներից զրկելը կամ իրավունքների սահմանափակումը նախատեսվում է միայն օրենքով, դատարանի որոշմամբ եւ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով: Վերջերս փոփոխված Ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսվում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատարանը կարող է [ծնողին] զրկել ծնողական իրավունքներից: Հոդվածով առաջին հերթին ամրագրվում է, որ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք դաժանաբար են վարվում երեխայի հետ, մասնավորապես՝

- ▶ պարբերաբար այնպիսի ֆիզիկական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, որը չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ,
- ▶ պարբերաբար հոգեբանական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, այն է՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական բռնություն գործադրելու սպառնալիքը, արժանապատվության պարբերական նվաստացումը:

Ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ ծնողը զրկվում է ծնողական իրավունքներից, եթե դատապարտվել է իր երեխայի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործության համար: Այլ կերպ ասած՝ հանցագործություն չհամարվող բռնության դեպքում դատարանը ծնողական իրավունքներից զրկելու հայեցողական իրավունք ունի, իսկ հանցագործություն ներառող բռնության դեպքում ծնողական իրավունքներից զրկելու իրավունքը հայեցողական չէ:

60-րդ հոդվածի համաձայն՝ ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց կարող է ներկայացնել՝

- ▶ ծնողներից մեկը,
- ▶ ինսամակալության եւ հոգաբարձության մարմինը,
- ▶ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն [ու կազմակերպությունները], որոնց վրա [օրենքով] դրված են երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության պարտականություններ:

Դրանից բացի, օրենքով նախատեսվում են ինսամակալության եւ հոգաբարձության մարմինների, ինչպես նաեւ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նման հայց ներկայացնելու հատուկ ընթացակարգեր: 60-րդ հոդվածի 1.1 կետով ամրագրվում է, որ այդ մարմինները պարտավոր են հայց ներկայացնել դատարան ոչ ուշ, քան ծնողական իրավունքներից զրկելու հիմքերն իրենց հայտնի դառնալու օրվանից մեկ ամիս հետո: Այդպիսի գործերը քննվում են ինսամակալության եւ հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

5.2. ՄԵՂՄԱՑՆՈՂ ԵՎ ԾԱՆՐԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ, ԿԱՐԾՐԱՏԻՊԱԿՈՐՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

5.2.1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն՝ Կողմ պետությունները պետք է ապահովեն, որ սույն Կոնվենցիայում ներկայացված որևէ բռնարարքի դեպքում մշակույթը, կրոնը, ավանդույթները կամ այսպես կոչված «պատիվը» չդիտվեն որպես նման արարքների հիմնավորումներ: Մասնավորապես, քրեական իրավունքով եւ քրեական դատավարության իրավունքով չպետք է [իրավաչափ] ճանաչվեն հանցավոր արարքների հիմնավորումները՝ ելնելով այն պնդումներից, որ դրանք կատարվել են տուժողի կողմից պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդույթային նորմերի կամ սովորույթների ենթադրյալ, որպես այդպիսին ընկալվող կամ փաստացի խախտումը կանխելու կամ դրա համար նրան պատժելու նպատակով: Տուժողների ենթադրյալ անբարո վարքագծի վրա հիմնված արդարացումներով խախտվում է 42-րդ հոդվածը:³³⁵

5.2.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած նրան, որ միջազգային դիտորդները, ինչպիսին է Մարդու իրավունքների հանձնակատարը (2015 թվական), մտահոգություն են հայտնել անմեղության կանխավարկածի պարբերական խախտումների եւ Հայաստանում գործող խիստ քրեական պատժամիջոցների մասին՝ կանանց նկատմամբ բռնության դեպքերով դատապարտումների թիվը փոքր է, իսկ պատժամիջոցները՝ չափազանց մեղմ:³³⁶

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում են մեղմացնող հանգամանքներ՝ կապված տուժողի սադրիչ վարքագծի հետ: Քրեական օրենսգրքի 105-րդ եւ 114-րդ հոդվածները մեղմացնում են, համապատասխանաբար, սպանության եւ առողջությանը վնաս պատճառելու հանցագործությունները, երբ դրանք կատարվել են, ի թիվս այլնի, տուժողի հակաբարոյական վարքագծի, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակաբարոյական գործողությունների կապակցությամբ առաջ եկած երկարատեւ հոգեճնշող իրավիճակի հետեւանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում: Հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի դեպքում պատիժը կեսից ավելի նվազեցվում է: Չնայած «պատիվ» բառն այստեղ ուղղակիորեն նշված չէ, բայց հակաբարոյական արարքի հիման վրա պատասխանատվությունը մեղմացնելը նախատեսում է նույն կոնցեպտը, ինչը հակասում է կոնվենցիայի 42-րդ հոդվածին:

335 Տե՛ս նաեւ «ՄԱԿ Կանայք», «Կանանց նկատմամբ բռնության ձեռնարկի լրացումները», 2011 թվական, էջ 5, որտեղ նշվում է, որ տուժողի վարքագիծը որպես մեղմացնող հանգամանք դիտող ցանկացած իրավական դրույթ իրավակիրառողների շրջանում կարծրատիպերի առաջացման տեղիք է տալիս:

336Եվրոպայի խորհուրդը, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ*, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-for-judges-and-prosecutors-on-ensuring-women-s-access-/1680764286>.

Որոշ դիտորդներ այդ դրույթների մասով նշել են, որ «ծանր վիրավորանք» կամ «բռնություն» հասկացությունները տարակարծությունների տեղիք են տալիս, եւ դրանց մեկնաբանությունը լիովին կախված է իրավակիրառողի հայեցողությունից:³³⁷ Արդյունքում՝ ընտանեկան բռնության դեպքերը, նույն հանցագործությունները ներառող այլ՝ ոչ ընտանեկան բռնության դեպքերի հետ համեմատած, կարող են հանգեցնել ավելի մեղմ պատիժների:

Լրատվամիջոցներն ու հասարակական կազմակերպությունները բացահայտել են այնպիսի դեպքեր, երբ կիրառվել են նման մեղմացնող հանգամանքներ: Դիանա Նահապետյանի գործը հասարակական լայն հնչեղություն է ստացել: Այդ գործով տուժողի ամուսինը՝ Նրան ոտքով հարվածներ է հասցրել, հարվածել է ապակե ծաղկամանով, մազերից քարշ տալով տարել է խոհանոց եւ խոհանոցային դանակով 21 հարված հասցրել, ինչի հետեւանքով տուժողը թոքերի եւ լյարդի շրջանում վնասվածքներ է ստացել, վերջինիս մոտ ուժեղ ներքին արյունահոսություն է սկսվել, ինչը հանգեցրել է մահվան: Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը տուժողի ամուսնուն դատապարտել է 3.6 տարի ժամկետով ազատազրկման՝ Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածով նախատեսված մեղմացնող հանգամանքի հիմքով, ըստ որի՝ վերջինս եղել է «հոգեկան խիստ հուզմունքի վիճակում», քանի որ տուժողը ենթադրաբար դավաճանել էր իրեն:³³⁸ Նույն դատարանը ընդամենը 50.000 դրամով տուգանել էր Վարդան Չամալյանին, ով իր կնոջը՝ Նահիրա Չոհրաբյանին, 11 տարի շարունակ ծեծի էր ենթարկել, քանի որ ըստ նրա՝ «կինը շփվելիս է եղել անբարոյական կանանց հետ» կամ «ճաշը պատրաստ չէր, երբ ես տուն էի վերադառնում»:³³⁹

Հետեւաբար, ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության գործերով չպետք է հղումներ արվեն տուժողի հակաբարոյական վարքագծին, գործադրած ծաղրուծանակին կամ ծանր վիրավորանքին: Հայաստանում դեռեւս տարածված գենդերային կարծրատիպերի համաձայն՝ բարոյականությունից զուրկ կանայք արժանի են բռնության,³⁴⁰ ուստի Քրեական օրենսգրքի 105-րդ եւ 114-րդ հոդվածները համահունչ չեն Ստամբուլի կոնվենցիային: Նման անհամաչափ պատիժների դրսեւորումները կարող են գենդերային խտրականություն համարվել, քանի որ դրանք ոչ միայն խոչընդոտում են կանանց համար կոնկրետ գործերով արդարադատության մատչելիությունը, այլեւ խորացնում են անվստահությունը արդարադատության համակարգի հանդեպ:³⁴¹

337 Պրոակտիվ հասարակություն եւ ԵԱՀԿ, «Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ», 2011 թվական, էջ 8: <https://www.osce.org/yerevan/88229?download=true>.

338 Տե՛ս «ԿՆԽՎԿ աշխատանքային խումբ», Հայաստան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՈՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆԽՎԿ ՆԵՐԿԱՅՄՑՎԱԾ ԱՆԿԱԽ ՉԵԿՈՒՅՑԸ, 2016 թվական, էջ 46, հասանելի է հետեւյալ հղումով՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/ARM/INT_CEDAW_NGO_ARM_25449_E.pdf.

339 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազաների վերապատրաստման ձեռնարկ*, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍ, էջ 27, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-for-judges-and-prosecutors-on-ensuring-women-s-access-/1680764286>:

340 Նման դեպքերում կնոջ սեռական կյանքի պատմությունը կամ ամուսնական դավաճանության մեջ մեղադրանքները ծառայում են որպես հիմնավորում տղամարդու՝ «հոգեկան խիստ հուզմունքի վիճակում» գտնվելու համար:

341 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազաների վերապատրաստման ձեռնարկ*. Հայաստան, 2016 թվական, էջ 16, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-for-judges-and-prosecutors-on-ensuring-women-s-access-/1680764286>.

Քննարկում

- ▶ Որո՞նք են «հակաբարոյական վարքագիծը կամ գործողությունները», որոնք կարող են հանգեցնել հոգեկան խիստ հուզմունքի:
- ▶ Որն է կապը խանութի, գեղեցիկ կարծրատիպավորման եւ անուղղակի խտրականության հիմքով բռնությունը:
- ▶ Վերապատրաստողը պետք է ապահովի, որ ամբողջ քննարկման ընթացքում ընդգծվի «հակաբարոյական վարքագծի կամ գործողությունների» հիմքով մեղմացնող հանգամանքների բացասական ազդեցությունը, եւ դասընթացի մասնակիցների ուշադրությունը մեկ անգամ եւս հրավիրվի այդ ոչ հստակ կարգավորումների հետ կապված վտանգների վրա:

5.2.3. ԾԱՆՐԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5.2.3.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ հոդվածով Կողմերին կոչ է արվում ապահովել, որ պատիժ սահմանելիս որոշ հանգամանքներ դիտվեն որպես ծանրացնող հանգամանքներ: Դրանք ներառում են հետևյալ դեպքերը.

- ▶ եթե իրավախախտումը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ (ներպետական իրավունքում դրան տրված իմաստով), ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իր իշխանությունը չարաշահած անձի կողմից.
- ▶ եթե իրավախախտումը կամ դրա հետ կապված իրավախախտումները կատարվել են մի քանի անգամ.
- ▶ եթե իրավախախտումը կատարվել է որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակում հայտնված անձի նկատմամբ.
- ▶ եթե իրավախախտումը կատարվել է երեխայի նկատմամբ կամ երեխայի ներկայությամբ.
- ▶ եթե իրավախախտումը կատարվել է միասին գործող երկու կամ ավելի անձանց կողմից.
- ▶ եթե իրավախախտմանը նախորդել է ծայրահեղ բռնության գործադրում կամ այն զուգորդվել է նման բռնության գործադրմամբ.
- ▶ եթե իրավախախտումը կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով.
- ▶ եթե իրավախախտմամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս.
- ▶ եթե բռնություն գործադրած անձը նախկինում դատապարտվել է նմանատիպ բնույթի իրավախախտումներ կատարելու համար:

Այսպիսով, 46-րդ հոդվածով Կողմերից պահանջվում է ապահովել, որ ընտանիքում գործադրված բռնությունը որպես ծանրացուցիչ հանգամանք դիտվի Կոնվենցիայով սահմանված իրավախախտումների համար պատիժ նշանակելիս, եթե այն արդեն իսկ

ազգային օրենսդրությամբ չի դիտարկվում որպես իրավախախտման հատկանիշ:³⁴² Այսպիսով, այդ ծանրացնող հանգամանքները ներպետական օրենսդրության մեջ ներառելը դատավորներին հնարավորություն է տալիս դրանք հաշվի առնելու ընտանեկան բռնություն գործադրողների համար պատիժներ նշանակելիս, չնայած դատավորները կոնկրետ դեպքերում դրանք կիրառելու պարտականություն չունեն:³⁴³

5.2.3.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսվում է ծանրացնող հանգամանքների ցանկ, որը կարելի է կիրառել պատիժ նշանակելիս: Այնուամենայնիվ, այն ուղղակիորեն չի ներառում ծանրացնող հանգամանքներ հետեւյալ դեպքերի համար.

- ▶ ամուսնու, զուգընկերոջ, ընտանիքի այլ անդամի կամ համատեղ բնակվող անձի նկատմամբ կատարված հանցանքներ (Կոնվենցիայի 46-րդ հոդվածի «ա» կետ).
- ▶ երեխայի ներկայությամբ կատարված հանցանքներ (Կոնվենցիայի 46-րդ հոդվածի «դ» կետ).
- ▶ զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված հանցանքներ (Կոնվենցիայի 46-րդ հոդվածի «ե» կետ):

Վերոնշյալ ծանրացնող հանգամանքների բացակայությունը մեծ բաց է Հայաստանում ընտանեկան բռնությունից տուժած անձանց համար՝ համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցների ձեռով ձեռնարկվող կարեւոր իրավական պաշտպանության միջոցների առկայության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է երեխայի ներկայությամբ կատարված բռնությանը, ապա այն երբեմն կարելի է որակել որպես առանձին դաժանության դրսեւորում՝ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (սպանություն), 112-րդ հոդվածով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 113-րդ հոդվածով (Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 119-րդ հոդվածով (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) նախատեսված հանցագործությունների դեպքերի համար պատիժը ծանրացնելու նպատակով: Այնուամենայնիվ, այս մոտեցումը միշտ չէ, որ հետեւողականորեն կիրառվում է, ուստի Քրեական օրենսգրքում դրան հատուկ անդրադառնալով իրավական որոշակիություն կապահովելը:³⁴⁴ Ի վերջո, զենքի գործադրումը Քրեական օրենսգրքով նախատեսված որոշ իրավախախտումների, ինչպիսին է՝ մարդուն առեւանգելը (131-րդ հոդված), բռնաբարությունը (138-րդ հոդվածի 2-րդ մաս) կամ ավազակությունը (175-րդ հոդված), սահմանման մեջ նախատեսվում է որպես հանցագործության հատկանիշ: Որպեսզի դատավորները կարողանան այդ հատկանիշը հաշվի առնել ընտանեկան բռնության եւ կանանց նկատմամբ բռնության դեպքերում, այն պետք է որպես ծանրացնող հանգամանք ներկայացվի նաեւ, օրինակ՝ ծեծի վերաբերյալ 118-րդ հոդվածում: Քրեական օրենսգրքով նախատեսվել են Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ

342 Բացատրական գեկույց, 234-րդ կետ:

343 Բացատրական գեկույց, 235-րդ, 236-րդ կետեր:

344 Եվրոպայի Խորհուրդ, «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն, 2016 թ., էջ 31, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/gap-analysis-armenian-law-eng/168075bac2>.

հողվածով նախատեսված բոլոր մյուս ծանրացնող հանգամանքները:

Ընտանիքում կատարված բռնության դեպքում ծանրացնող հանգամանքներ սահմանելու շնորհիվ այդպիսի իրավախախտումները, Կոնվենցիայի 46-րդ հոդվածին համապատասխան, որակվում են որպես ֆիզիկական կամ սեռական ոտնձգություն: Դրա արդյունքում նաեւ իրավակիրառողին եւ լայն հանրությանն ուղերձ է հղվում առ այն, որ ընտանեկան բռնությունն այլեւս հանդուրժելի չէ: Պետք է նշել, որ ընտանեկան բռնությունն պարունակող հանցագործությունների դեպքերում ծանրացնող հանգամանքներ սահմանելը չի խոչընդոտում կամ չի հակասում նրան, որ սահմանվեն ընտանեկան բռնությանն առնչվող կոնկրետ իրավախախտումներ, քանի որ Զրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ծանրացնող հանգամանքները չեն վերաբերում այնպիսի իրավախախտումներին, որոնց դեպքում դրանք արդեն իսկ հաշվի են առնվել որպես հանցագործության հատկանիշներ:

Ներպետական իրավական դաշտը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Հայաստանը պետք է իր Զրեական օրենսգրքում ներառի ծանրացնող հանգամանքներ համապատասխան Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ հոդվածի: Վերջինս կրթացներ այն ծանրացնող հանգամանքների շարքը, որոնց շնորհիվ պաշտպանվում են երեխաները, հղի կանայք եւ կախյալ վիճակում գտնվող անձինք:³⁴⁵

5.2.3.3. ԿԱՐԾՐԱՏԻՊԱԿՈՐՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՈՂՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ

Դատավորները որոշիչ դեր ունեն արդարադատության համակարգի՝ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությանը արձագանքելու հարցում: Նրանք հիմնականում քաղաքացիական եւ քրեական գործերով բարձրագույն մարմին են, եւ նրանց որոշումները մեծ ազդեցություն են ունենում տուժողի, բռնություն գործադրած անձի, երեխաների եւ ընտանիքի մյուս անդամների վրա: Ամենակարեւորն այն է, որ արդարադատության համակարգում եւ իրենց համայնքներում զբաղեցրած բացառիկ դիրքի պատճառով դատավորները տուժողներին, բռնություն գործադրած անձանց եւ, առհասարակ, հասարակությանը կարեւոր ուղերձ են հղում այն մասին, որ արդարադատության համակարգը լրջորեն է վերաբերվում ընտանեկան բռնությանն ու կանանց նկատմամբ բռնությանը: Պահպանելով անաչառությունը՝ դատավորներն իրենց պարտականությունների շրջանակներում կարող են կարեւոր դեր խաղալ ընտանիքներին եւ համայնքներին կրթելու հարցում³⁴⁶:

Դատական համակարգում կարծրատիպավորում տեղի է ունենում այն ժամանակ, երբ դատավորների՝ առանձին գործերով հիմնավորումներն ու վերջնական որոշումները հենվում են կանխակալ համոզմունքների եւ ոչ թե գործի փաստերի ու համապարփակ քննության վրա: Դատական համակարգում կարծրատիպավորումը ոչ միայն խոչընդոտում է կանանց համար արդարադատության մատչելիությունը, այլեւ անվստահություն է առաջացնում արդարադատության համակարգի հանդեպ:

345 Զրեական օրենսգրքի, 63-րդ հոդված:

346 Եվրոպայի խորհուրդ, *Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելումը եւ դրա դեմ պայքարը. Իրավապահ մարմինների եւ արդարադատության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման ուսումնական ռեսուրս*, 2016 թվական, էջ 68, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/16805970c1>.

Դատական համակարգում գենդերային հիմքով կարծրատիպավորման օրինակներ են՝

- ▶ «իդեալական տուժող».
- ▶ կնոջ՝ բարոյականությունից զուրկ լինելը (բռնությունն արդարացնելը).
 - ▶ սեռական կյանքի պատմությունը.
 - ▶ ամուսնական դավաճանությունը.
 - ▶ պրովոկացիոն վարքագիծը.
 - ▶ հագուստը:
- ▶ կանանցից ակնկալվում է պահպանել ընտանիքը՝ անկախ ամեն ինչից.
- ▶ կանայք չափազանցում են հավանական վտանգը.
- ▶ կանայք իրականում չեն ցանկանում հեռանալ բռնություն կատարող ամուսիններից, այլ ուղղակի նախազգուշացնում են նրանց.
- ▶ կանայք ի վերջո վերամիավորվելու են իրենց ամուսինների հետ.
- ▶ պետությունը չպետք է միջամտի ընտանեկան հարցերին:

Գենդերային կարծրատիպերը հաճախ ազդեցություն են գործում դատական իշխանության վրա՝ խոչընդոտելով կանանց համար արդարադատության մատչելիությունը: Երբ ընտանիքում եւ հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ գենդերացված նախապաշարմունքները դատական նիստերի դահլիճում փոխարինում են ապացույցներին եւ օրենքին, այդ ամենը հանգեցնում է կանխակալ արդյունքների: Ջենց դա է տեղի ունեցել *Քարեն Թայյագ Վերթիդոն ընդդեմ Ֆիլիպինների [Karen Tayag Vertido v. The Philippines]* գործում, որտեղ կոմիտեն հայտնաբերեց փոխհատուցում ստանալու իրավունքի խախտում³⁴⁷:

Կարծրատիպավորումը դատական համակարգում. դեպքի ուսումնասիրություն

Քարեն Թայյագ Վերթիդոն ընդդեմ Ֆիլիպինների գործով³⁴⁸ ԿՆԽՎԿ կոմիտեն կայացրել է որոշում այն մասին, որ Ֆիլիպինները չի կատարել տիկին Թայյագ Վերթիդոյի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու իրավունքն ապահովելու իր պարտականությունը, ինչը ենթադրվում էր ԿՆԽՎԿ-ի 2-րդ հոդվածի «գ» կետով: 2-րդ հոդվածի «գ» կետով Կողմ պետություններից պահանջվում է «սահմանել տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքների իրավական պաշտպանություն եւ իրավասու ներպետական ատյանների ու պետական այլ հաստատությունների օգնությամբ ապահովել կանանց պաշտպանությունն ընդդեմ ցանկացած խտրական գործողության»:

Կոմիտեն գտել է, որ տուժողին՝ Դավառ քաղաքում գտնվող՝ Դավառ քաղաքի առեւտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրենին,

347 ԿՆԽՎԿ, Հաղորդագրություն թիվ 18/2008, 2010 թվական:

348 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿՆԽՎԿ/C/46/D/18/2008, 2010 թվականի սեպտեմբերի 22:

որը բռնաբարվել էր ավագ գործընկերոջ՝ Պալատի 60-ամյա նախագահի կողմից, պետությունը հրաժարվել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրել՝ գործընթացում բազմաթիվ ձգձգումների պատճառով, ինչպես նաև դատավարության ամբողջ ընթացքում բազմաթիվ գենդերային կարծրատիպերի եւ առասպելների վրա հիմնվելու արդյունքում դատարանի կողմից մեղադրյալին արդարացնող որոշում կայացնելով: ԿՆԽՎԿ կոմիտեն նշել է, որ մեղադրյալին արդարացնող որոշման հիմքում ընկած են եղել մի քանի սկզբունք, որոնցից մեկը՝ «հեշտությամբ կարելի է բռնաբարության մեղադրանք ներկայացնել» պնդումը, արդեն իսկ գենդերային կանխակալություն է:³⁴⁹

Գործով դատավորն արդարացրել է մեղադրյալին՝ գտնելով, որ տուժողը պետք է դիմադրություն ցույց տար մեղադրյալին, երբ տուժողի գիտակցությունը վերականգնվել էր, եւ նա բռնաբարում էր իրեն: Նա նաև թերահավատությամբ է վերաբերվել տուժողի ներկայացրած պատմությանը՝ կասկածի տակ դնելով այն հանգամանքը, որ մեղադրյալը կարող էր ունակ լինել սերմնաժայթքման, քանի որ նա վաթսուներեք էր: Տուժողը պնդել է, որ ինքը բռնաբարվելուց հետո պետության կողմից կրկին ենթարկվել է վիկտիմիզացիայի: Ընդհանուր առմամբ, իր որոշման մեջ Կոմիտեն ընդգծել է հետեւյալը.

կարծրատիպավորումը բացասաբար է անդրադառնում կանանց արդար եւ անկողմնակալ դատաքննության իրավունքի վրա, իսկ դատական իշխանությունը պետք է զգուշություն ցուցաբերի, որպեսզի բռնաբարության տուժողի կամ գենդերային հիմքով բռնության տուժողի վերաբերյալ զուտ կանխակալ գաղափարների հիման վրա բռնաբարության երեւույթին բախվելիս կանանց կամ աղջիկների կամ նրանց վարքագծի հետ կապված չձեւավորվեն ոչ ճկուն չափանիշներ³⁵⁰:

Կոմիտեն գնահատել է գործի «բռնության ժամանակ կիրառված գենդերային զգայունության մակարդակը»³⁵¹: Այն գտել է, որ տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ տուժողի ներկայացրած տարբերակի արժանահավատությունը գնահատելիս ներպետական դատարանների որոշման վրա ազդել են մի շարք կարծրատիպեր, իսկ դիմումատուն այդ իրավիճակում չի համապատասխանել տրամաբանական եւ «իդեալական տուժողի» հետ կապված ակնկալիքներին, կամ այն, ինչը դատավորը համարել է կնոջ տրամաբանական կամ իդեալական արձագանք բռնաբարության իրավիճակում, ինչը պարզ է դառնում վճռից մեջբերելով հետեւյալ հատվածը.

«Այդ դեպքում ինչո՞ւ նա չի փորձել դուրս գալ մեքենայից, երբ նա խլել է ղեկանիվը, իսկ մեղադրյալը փորձել է արգելակել պատին բախվելուց

349 ԿՆԽՎԿ, Հաղորդագրություն թիվ 18/2008, 2010 թվական, 8.5 կետ:

350 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿՆԽՎԿ/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.4 կետ:

351 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿՆԽՎԿ/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.4 կետ:

խուսափելու համար: Ինչո՞ւ նա դուրս չի եկել կամ օգնություն չի կանչել, երբ նախքան մոթելի ավտոտնակ մտնելը մեքենայի ընթացքը դանդաղեցվել է: Ինչո՞ւ նա չի մնացել լոգասենյակում այն բանից հետո, երբ նա, սենյակ մտնելով, գնացել է լոգասենյակ եւ փակվել այնտեղ: Ինչո՞ւ նա օգնություն չի կանչել, երբ լսել է, որ մեղադրյալը խոսում է ինչ-որ մեկի հետ: Ինչու՞ նա չի փախել մոթելի ավտոտնակից այն դեպքում, երբ պնդում է, որ ինքը կարողացել է փախչել հյուրանոցի համարից, քանի որ մեղադրյալը դեռ ՄԵՐԿ ԷՐ ԵՎ մահճակալի վրա ՁԵՌՆԱՇԱՐԺՈՒԹՅԱՄԲ ԷՐ ՉԲԱՂՎՈՒՄ: Ինչո՞ւ է տուժողը համաձայնել գնալ մեղադրյալի մեքենայով այն բանից ՉԵՏՈՒ, երբ³⁵² նա ենթադրաբար բռնաբարել էր իրեն, այն դեպքում, երբ նա իրեն չի սպառնացել կամ ուժ չի գործադրել, որ ստիպի իրեն դա անել³⁵³:

Կոմիտեն գտել է, որ`

արական եւ իգական սեռականության վերաբերյալ կարծրատիպերին արված մի քանի հղումներ ավելի հիմնավոր են դարձնում ենթադրյալ բռնություն գործադրած անձի, այլ ոչ թե տուժողի արժանահավատությունը: Այս առումով Կոմիտեն մտահոգություն է հայտնում դատավորների եզրահանգումների անչուլությամբ, որոնց համաձայն անհավատալի է, որ վաթսուներե անց տղամարդն ունակ կլիներ սերմնաժայթքման այն դեպքում, երբ դիմումատուն դիմադրեր սեռական բնույթի հարձակմանը: Մյուս գործոնները, որոնք հաշվի են առնվել վճռում, ինչպես օրինակ` դիմումատուի եւ մեղադրյալի` միմյանց ճանաչելու հանգամանքին տրված նշանակությունը, «գենդերային հիմքով առասպելների եւ սխալ ընկալումների» եւս մեկ օրինակ է³⁵⁴:

Կոմիտեն վճռել է, որ եթե տուժողը ֆիզիկական դիմադրություն ցույց չի տալիս անցանկալի սեռական վարքին, ապա չպետք է ենթադրել, որ դրան համաձայնություն է տվել` «անկախ այն հանգամանքից, թե ոտնձգողը սպառնացել է ֆիզիկական բռնություն գործադրել կամ գործադրել է այդպիսի բռնություն»³⁵⁵: Բացի դրանից, Կոմիտեն գտել է թե՛ իգական, թե՛ արական սեռականության վերաբերյալ «գենդերային հիմքով այլ առասպելներ եւ սխալ ընկալումներ» ու կարծրատիպեր:

Այն եզրակացրել է, որ տիկին Թայագ Վերթիդոն «վճռում հիմք ընդունված կարծրատիպերի եւ գենդերային հիմքով առասպելների հետեւանքով կրկին ենթարկվել է վիկտիմիզացիայի»³⁵⁶: Այսպիսով, Կոմիտեն վճռել է, որ Ֆիլիպիններում տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետի եւ 5-րդ հոդվածի «ա» կետի, որով ապահովվում է սխալ կարծրատիպավորումից խուսափում, խախտում:

352 ԿՆԽՎԿ, Հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.5 կետ:

353 ԿՆԽՎԿ, Հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.5 կետ:

354 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿՆԽՎԿ/C/46/D/18/2008 (2010 թվականի սեպտեմբերի 22), 8.6 կետ:

355 ԿՆԽՎԿ, Հաղորդագրություն թիվ 18/2008 , 2010 թվական, 8.5 կետ:

356 Հաղորդագրություն թիվ 18/2008, ՄԱԿ-ի փաստաթուղթ ԿՆԽՎԿ/C/46/D/18/2008, 2010 թվականի սեպտեմբերի 22, 8.8 կետ:

Հայաստանի գործող օրենսդրությունում առկա եւ՝ դատաիրավական հիմնավորումները, եւ՝ զենդերային կարծրատիպերի գոյությունը հանգեցնում են կանխակալ որոշումների, որոնք խոչընդոտում են կանանց համար արդարադատության մատչելիությունը: Հայաստանում դատական կանխակալության ամենավառ օրինակը 2012 թվականին Դիանա Նահապետյանի՝ դանակի բազմաթիվ հարվածների հետեւանքով սպանության գործն է, որով Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը նրա զուգընկերոջը դատապարտել էր 3 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման, որովհետեւ նշվել էր, որ սպանությունը կատարվել էր հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, քանի որ տուժողը դավաճանել էր ամուսնուն³⁵⁷:

5.2.3.4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պետք է նշել, որ որպես պատիժ տուգանքների նշանակումը եւ կատարումը չի ապահովում պետության՝ ընտանիքի սոցիալական բնույթի խնդիրները կամ ընտանեկան բռնության հոգեբանական ազդեցությունը նվազեցնելուն կամ վերացնելուն ուղղված արդյունավետ միջամտությունը: Այն դեպքերում, երբ տուգանքն ընտրվում է որպես պատժամիջոց, այդպիսի վճիռները ֆինանսական պարտավորություններ են առաջացնում արդեն իսկ խոցելի վիճակում գտնվող ընտանիքների համար՝ էլ ավելի սրելով գոյություն ունեցող լարվածությունն ու ճգնաժամը:

Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով, օրինակ՝ բռնություն գործադրած անձը դանակահարել է տուժողին յոթ անգամ, ինչի հետեւանքով հասցվել են կյանքի համար վտանգավոր վնասվածքներ, և տուժողը հոսպիտալացվել է: Մեկ այլ դեպքով բռնություն գործադրող անձը մեքենայի տակ է գցել կնոջը եւ նրա մորը: Յուրաքանչյուր դեպքեից հետո միայն որոշակի ժամանակահատվածով կալանավորել են բռնություն գործադրող անձին եւ ապա նրան ազատ արձակել:

2016 թվականին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը ընդամենը 150.000 ՀՀ դրամի տուգանք էր սահմանել մի մարդու նկատմամբ, ով մշտապես ծեծի էր ենթարկել իր կնոջն ու երեխաներին, իսկ 6-ամյա դստերը գոմում կապված էր պահել³⁵⁸:

357 Զրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն:

358 Եվրոպայի Խորհուրդ, *Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների եւ դատախազաների վերապատրաստման ձեռնարկ*, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍ. ՀԱՅԱՍՏԱՆ, էջ 19, հասանելի է հետեւյալ հղումով՝ <https://rm.coe.int/training-manual-for-judges-and-prosecutors-on-ensuring-women-s-access-/1680764286>

5.3. ՓՈԽՅԱՏՈՒՑՈՒՄ

5.3.1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝

«Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բռնություն գործադրած անձի դեմ տուժողներին իրավունքի վերականգնման քաղաքացիաիրավական միջոցներ տրամադրելու համար: Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների համաձայն տուժողներին իրավունքի վերականգնման միջոցներ տրամադրելու՝ այն պետական մարմինների դեմ, որոնք չեն կատարել իրենց լիազորությունների շրջանակներում անհրաժեշտ կանխարգելիչ կամ պաշտպանիչ միջոցառումներ կիրառելու իրենց պարտականությունը»:

29-րդ հոդվածի 1-ին կետի նպատակն է՝ ապահովել, որ սույն Կոնվենցիայում ներառված բռնության ձեւերից տուժած անձինք կարողանան պատշաճ ձեւով օգտվել բռնություն գործադրած անձի դեմ քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցներից: Մյուս կողմից՝ դա ներառում է քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցներ, ինչպիսիք են ապահովման միջոցները, որոնք թույլ են տալիս քաղաքացիական դատարանին կարգադրել անձին, որ դադարեցնի որոշակի վարքագիծը, ապագայում զերծ մնա որոշակի վարքագծից, կամ պարտավորեցնել անձին որոշակի գործողություն կատարելուն³⁵⁹: Քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները նաեւ կարող են ներառել բռնարարներին հատուկ անդրադարձ կատարող դատական կարգադրություններ, ինչպիսիք են՝ Ստամբուլի կոնվենցիայի 53-րդ հոդվածում նշված արգելող կարգադրությունները, սահմանափակող կարգադրությունները եւ ոտնձգություններից պաշտպանող կարգադրությունները³⁶⁰: Ինչպես ընդգծվում է Բացատրական զեկույցում, քաղաքացիական իրավունքի մասով կարգադրություններն արձակվում են տուժողի կամ երրորդ կողմի դիմում ներկայացնելուց հետո եւ չեն կարող արձակվել ի պաշտոնե³⁶¹:

Ստամբուլի Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն, որ՝

տուժողները սույն Կոնվենցիայի համաձայն սահմանված իրավախախտումներից ցանկացածի դեպքում բռնություն գործադրած անձից փոխհատուցում պահանջելու իրավունք ունենան: Այն անձանց, որոնց պատճառվել է ծանր մարմնական վնասվածք կամ առողջության կորուստ, տրվում է պատշաճ պետական փոխհատուցում այնքանով, որքանով պատճառված վնասը չի ծածկվում այլ աղբյուրների՝ բռնություն գործադրած անձի եւ ապահովագրական կամ պետական ֆինանսավորում ունեցող առողջապահական ու սոցիալական պաշարների հաշվին: Սա Կողմերի համար հատկացված փոխհատուցման դիմաց բռնություն գործադրած անձի դեմ հետադարձ պահանջ ներկայացնելու համար խոչընդոտ չէ՝ պայմանով, որ պատշաճորեն հաշվի է առնվում տուժողի անվտանգությունը³⁶²:

359 Բացատրական զեկույց, 157-րդ կետ:

360 Բացատրական զեկույց, 158-րդ կետ:

361 Բացատրական զեկույց, 158-րդ կետ:

362 «Մարմնական վնասվածք» եւ «առողջության կորուստ» եզրույթներն ընդգրկում են այնպիսի վնասվածքներ, որոնք կարող են հանգեցնել համապատասխանաբար տուժողի մահվան եւ հոգեբանական բռնարարի հետեւանքով ծանր հոգեբանական վնասի: Բացատրական զեկույց, 166-րդ կետ:

Չնայած պետության կողմից նախատեսված հատուցման շրջանակը սահմանափակվում է «ծանր» վնասվածքով եւ «առողջության կորուստով»՝ դա չի խոչընդոտում պետությունների կողմից ավելի առատաձեռն փոխհատուցում տրամադրելու համար միջոցներ ձեռնարկելը եւ ոչ էլ պետությունների կողմից վճարման ենթակա փոխհատուցման որեւէ կամ բոլոր տարրերի մասով առավել շատ կամ առավել քիչ սահմանափակումներ սահմանելը³⁶³: «Տուժողի անվտանգության» արված անդրադարձով կողմերից պահանջվում է ապահովել, որ փոխհատուցման դիմաց բռնություն գործադրած անձի դեմ հետադարձ պահանջ ներկայացնելու նպատակով ձեռնարկված ցանկացած միջոցառման դեպքում պատշաճորեն հաշվի առնվեն տուժողի անվտանգության առումով այդ միջոցառումների ունեցած հետեւանքները: Դա մասնավորապես վերաբերում է այն իրավիճակներին, երբ բռնություն գործադրած անձը կարող է պետությանը փոխհատուցում վճարելու պարտավորության պատճառով տուժողից վրեժխնդիր լինելու ցանկություն ունենալ³⁶⁴:

Միեւնույն ժամանակ 29-րդ հոդվածի 2-րդ մասով տուժողների համար երաշխավորվում է իրավական պաշտպանության միջոցների ապահովում այն պետական մարմինների դեմ, որոնք թերացել են իրենց լիազորությունների շրջանակներում անհրաժեշտ կանխարգելիչ կամ պաշտպանիչ միջոցառումներ ձեռնարկելու իրենց պարտականությունը կատարելու հարցում: Իրավական պաշտպանության այդ միջոցները, ի թիվս այլնի, ներառում են վնասի, այդ թվում՝ ոչ նյութական վնասի հատուցման նպատակով քաղաքացիաիրավական մասով ներկայացված հայցերը³⁶⁵, ինչը պետք է հասանելի լինի պետական դերակատարների թույլ տված անփութության կամ կոպիտ անփութության դեպքերում³⁶⁶:

5.3.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ վերաբերում է ընտանեկան բռնության գործերով փոխհատուցմանը, կիրառվում են փոխհատուցման վերաբերյալ քաղաքացիական եւ վարչական օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր նորմերը: Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Հայաստանի քաղաքացիական եւ վարչական օրենսդրությունը նախատեսում է փոխհատուցման տրամադրում նյութական եւ ոչ նյութական վնասի համար³⁶⁷:

Անհրաժեշտ է ընդգծել, որ օրենսդրությամբ առկա չեն կարգավորումներ՝ բռնություն գործադրած անձից բարոյական վնասի փոխհատուցում ստանալու համար: Ավելին, առկա չեն նաեւ կարգավորումներ, որոնք թույլ կտան պետությանը պատասխանատվությունը դիտարկել այն դեպքում, երբ բռնություն գործադրող անձը չունի բավարար միջոցներ՝ փոխհատուցում տրամադրելու համար: Նշվածը մեծ խոչընդոտ է տուժողների կողմից հատուցում ստանալու իրավունքի իրացման հարցում եւ չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

363 Բացատրական գեկույց, 166-րդ կետ:

364 Բացատրական գեկույց, 169-րդ կետ:

365 Տե՛ս՝ *Կոնտրովյան ընդդեմ Սլովակիայի* [Kontrová v. Slovakia], Գանգատ թիվ 75 10/04, 2005 թվական, 64-րդ պարբերություն, տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածի խախտում, երբ տուժողը գրկված է եղել ոստիկանության ծառայողների՝ տուժողի նախկին ամուսնու կողմից իր երեխաների սպանությունը կանխելու հարցում պետության դեմ անփութության համար ոչ նյութական վնասի հատուցման մասով պահանջ ներկայացնելու հնարավորությունից:

366 Բացատրական գեկույց, 162-րդ կետ:

367 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդված:

Դրանից բացի, 18-րդ հոդվածի համաձայն՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետեւանքով պատճառված վնասները հատուցում է պետությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական եւ վարչական օրենսդրությամբ նախատեսվում է եւ՛ նյութական, եւ՛ բարոյական վնասի հատուցում³⁶⁸:

Դրանից բացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1. հոդվածով նախատեսվում է «ոչ նյութական վնաս» հասկացությունն ու դրա հատուցումը: Նշված հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին կամ իր ընտանիքին [ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող] նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

Նույն հոդվածով նախատեսվում է, որ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, ինսամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն [դատական կարգով] պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ [պետական կամ տեղական ինքնակառավարման] մարմնի [կամ դրա պաշտոնատար անձի] որոշման, գործողության կամ անգործության հետեւանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված [հետեւյալ հիմնարար] իրավունքները: Նախատեսված են հետեւյալ իրավունքները՝

- ▶ կյանքի իրավունքը.
- ▶ խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.
- ▶ անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը.
- ▶ արդար դատաքննության իրավունքը.
- ▶ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը.
- ▶ անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքը.
- ▶ հավաքների եւ միավորման ազատության իրավունքը.
- ▶ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.
- ▶ սեփականության իրավունքը:

Դրանից բացի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով ամրագրվում է վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը: 95-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետեւանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ 15-րդ գլխի դրույթներին համապատասխան: Օրենքով սահմանվում են պատասխանատվություն կրողը եւ պատասխանատվության հիմքերը, վնասի հատուցման նախապայմանը, վնասի հատուցման եղանակները, ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը եւ կարգը ու դրանց առնչվող այլ կարգավորումներ:

95-րդ հոդվածի համաձայն՝ հատուցում չի կարող տրամադրվել մինչեւ դատական ակտով չհաստատվի այն, որ պետական մարմնի գործողության կամ անգործության

368 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդված:

հետեւանքով է տեղի ունեցել իրավունքի խախտումը, բացառությամբ անձի մահվան դեպքում տրամադրվող հատուցման դեպքերի /հոդված 109/: 97-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետեւանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով: Օրենքը նաեւ նախատեսում է ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը եւ կարգը: Սասնավորապես 104-րդ հոդվածի համաձայն՝ Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետեւանքների վերացում պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

VI. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստամբուլի կոնվենցիայի 48-րդ հոդվածով արգելվում են կանանց նկատմամբ բռնության դեպքերի հետ կապված վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերը: Դրանով պետություններից պահանջվում է միջոցառումներ ձեռնարկել՝ «սույն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձեւերի հետ կապված վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերն արգելելու համար, ներառյալ՝ միջնորդությունը եւ հաշտարարությունը: ԿՆԽՎԿ-ի՝ կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարականն ավելի խորությամբ է անդրադառնում հարցին եւ առաջարկում է պետություններին՝ «ապահովել, որ կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերը ոչ մի պարագայում չլուծվեն վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերով»³⁶⁹:

Ինչպես նկարագրվում է Բացատրական զեկույցում, ընտանեկան բռնությունից տուժած անձինք «երբեք չեն կարող վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերին մասնակցել բռնություն գործադրած անձի հետ հավասար պայմաններով»:³⁷⁰ Իսկապես, միջնորդության եւ հաշտարարության պրակտիկան ենթադրում է, որ կողմերը գործընթացին մասնակցեն հավասար ռեսուրսներով եւ իրավունքներով: Կանանց նկատմամբ բռնության, հատկապես՝ ընտանեկան բռնության դեպքերը ներառում են ոտնձգությունների, ահաբեկումների եւ (կամ) վերահսկողության, վիրավորական կամ նվաստացուցիչ վարքագծի վրա հիմնված ուժային հարաբերությունների անհավասարություն: Այդ մտահոգությունների արդյունքում աշխարհի շատ մասերում միջնորդության պրակտիկան արգելվել է զուգընկերների կողմից կատարվող բռնության դեպքում: Արդարադատության ոչ պաշտոնական մեխանիզմները նաեւ կարող են լուրջ վտանգ ներկայացնել այն տուժողների համար, որոնք կարող են համաձայնել վերադառնալ բռնություն գործադրած անձի մոտ՝ արդյունքում ենթարկվելով բռնության ավելի սրված ձեւերի:

Դրանից բացի, ավանդական գենդերային նորմերը կարող են բացասաբար ազդել միջնորդության ընթացքում կնոջ հնարավորությունների վրա: Այդ գործընթացների ժամանակ կանայք սոցիալական խմբի ներդաշնակությունը չխաթարելու համար հաճախ իրենց անձնական իրավունքներից հրաժարվելու վտանգի տակ են հայտնվում: ԿՆԽՎԿ կոմիտեն նշում է, որ միջնորդության կիրառումը կարող է հանգեցնել տուժողի իրավունքների հետագա խախտումների «եւ բռնություն գործադրած անձանց անպատժելիության այն պատճառով, որ [հաշտարարությունը] հաճախ տեղի է ունենում նահապետական արժեքների հիման վրա՝ դրանով իսկ բացասաբար ազդելով կանանց համար դատական վերանայման եւ իրավական պաշտպանության միջոցների մատչելիության վրա»³⁷¹:

Այլ գործոններ, ինչպիսիք են կոռուպցիան, կառավարության քաղաքականությունը եւ առաջնահերթությունները, ինչպես նաեւ միջնորդների հմտությունները կարող են

369 ԿՆԽՎԿ, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարական, ԿՆԽՎԿ/C/GC/33, 58-րդ կետի «գ» ենթակետ:

370 Բացատրական զեկույց, 252-րդ կետ:

371 ԿՆԽՎԿ, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ ընդհանուր հանձնարարական, ԿՆԽՎԿ/C/GC/33, 57-րդ կետ:

ազդել հաշտարարների կամ միջնորդների կողմից իրականացվող միջնորդության արդյունավետության վրա: Միջնորդների շրջանում գենդերային զգայունության բացակայության հարցը մեծ մտահոգությունների տեղիք է տալիս: ԿՆԽՎԿ կոմիտեն մասնավորապես առաջարկում է, որ «վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերով չսահմանափակվեն կանանց համար դատական կամ այլ իրավական պաշտպանության միջոցների մատչելիությունն իրավունքի բոլոր բնագավառներում, ինչպես նաև այդ ընթացակարգերը չհանգեցնեն նրանց իրավունքների հետագա խախտումների»³⁷²:

Հաշտարարության ընթացակարգերում, որպես որակի ցուցանիշ, բարձրացված ամենակարևոր կետն այն է, թե արդյոք տուժողն իրականում այդ գործելակերպերի կենտրոնում է: Այսպիսով, առանցքային հարցը հետեւյալն է. արդյոք տուժողի կարիքները միջնորդության գործելակերպի կենտրոնում են: Լավագույն գործելակերպերով նախատեսվում է, որ միջնորդության ոչ պաշտոնական համակարգերը բարելավելու նպատակով գործող մասնագետները պետք է հիմնվեն գործող համակարգի ուժեղ կողմերի վրա և ներառեն հետեւյալը.

- ▶ մեխանիզմներում կանանց մասնակցության մակարդակի բարձրացում.
- ▶ մեխանիզմներում ընդգրկված բոլոր մասնակիցներին համապարփակ վերապատրաստման տրամադրում.
- ▶ իշխանության անարդար բաշխումը փոխելու նպատակով քաղաքացիական հասարակության ոլորտի կազմակերպությունների ներգրավվածության մակարդակի բարձրացում.
- ▶ արդարադատության պաշտոնական համակարգի հետ կապերի ամրապնդում:

6.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ հաշտատարարության հնարավորություն է նախատեսվում մասնավոր մեղադրանքի գործերով, ինչպիսիք են թեթև վնասվածքներ կամ ծեծ ներառող գործերը: Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 36-րդ հոդվածների համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, երբ տուժողը հաշտվում է մեղադրյալի հետ: Քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսվում է «ոչ մեծ ծանրության հանցանք» կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը: Անհրաժեշտ է ընդգծել, որ ազգային իրավական համակարգը ներկայացնում է տարբերվող և հակադիր հնարավորություններ քաղաքացիական, քրեական ընթացակարգերի և Ընտանեկան բռնության մասին օրենքի կարգավորումների միջև:

Չնայած ընտանեկան բռնությունն այժմ ենթակա է քրեական հետապնդման³⁷³, այդպիսի դեպքերում նաև կարող է հաշտեցում լինել երկու կողմերի գրավոր համաձայնության դեպքում³⁷⁴: Տուժողը հաշտեցման գործընթաց սկսելու կամ հաշտեցման առաջարկն ընդունելու իրավական պարտականություն չի կրում, և օրենքով աջակցության կենտրոնից պահանջվում է դադարեցնել հաշտեցման գործընթացը, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ տուժողը գործընթացին մասնակցելու որոշումը կայացրել է սպառնալիքների ազդեցությամբ:

372 ԿՆԽՎԿ, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ ընդհանուր հանձնարարական, ԿՆԽՎԿ/C/GC/33, 58-րդ կետի «բ» ենթակետ:

373 Քրեական օրենսգրքի, 183-րդ հոդված:

374 Ընտանեկան բռնության մասին օրենք, 10-րդ հոդված:

Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն՝ հաշտեցումն իրականացվում է աջակցության կենտրոնի կողմից անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների գործողության ընթացքում Լիազոր մարմնի, մասնավորապես՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սահմանած կարգով: Հետեւաբար՝ օրենքի համաձայն՝ հաշտեցումն ընտանեկան բռնության կողմերին հասանելի է սահմանափակ ժամկետով՝ հաշտեցման որոշման քսան օրվա ընթացքում, եւ մինչեւ մեկ տարի ժամկետով՝ պաշտպանական որոշման ընթացքում: 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հաշտեցում չի իրականացվում, եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ անգործունակ անձ է: Հաշտեցման գործընթացը խթանելու հստակ ընթացակարգեր դեռեւս չեն ընդունվել:

Նշանակալի է, որ հաշտեցումը կարող է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները չեղյալ համարելու հիմք հանդիսանալ: Տուժողը կամ բռնություն գործադրած անձը կարող են ոստիկանությունից կամ դատարանից պահանջել չեղյալ համարել անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումը, եթե իրականացվել է հաշտեցում:

Հաշտեցումը, ըստ համապատասխան տեղեկությունների, լայնորեն կիրառվում է Հայաստանում, այդ թվում՝ ընտանեկան բռնության գործերով: Ըստ ՀԿ-ների տրամադրած տեղեկությունների՝ իրավապահ մարմինների աշխատակիցները ճշումների են ենթարկում տուժողներին՝ բռնություն գործադրած անձանց հետ հաշտվելու համար՝ քրեական արդարադատության համակարգից օգնություն ստանալու վերջիններիս փորձերը կանխելու նպատակով տուժողին մեղադրելով եւ գեղեցիկ կարծրատիպեր կիրառելով: Այսպիսով, կան մտահոգություններ, որ Հայաստանում հաշտեցման կիրառումը խոչընդոտում է կանանց համար արդարադատության մատչելիությանը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի՝ առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանը վարույթի ցանկացած փուլում կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց համաձայնությամբ կամ միջնորդությամբ իրավունք ունի նշանակելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը մեծ է, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մեկ անգամ կարող է նշանակել մինչեւ 4 ժամ անվճար հաշտարարություն, որը հակասում է Ստամբուլի կոնվենցիայի 48-րդ հոդվածին:

Ընտանեկան բռնության մասին օրենքով տուժողների համար ներկայումս նախատեսված հաշտեցման գործընթացը հակասում է ԿՆԽՎԿ-ի հանձնարարականներին: Դեռեւս պարզ չէ, թե արդյոք Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված ընթացակարգերը կլինեն գեղեցիկագայուն եւ զոհակենտրոն՝ Ստամբուլի կոնվենցիային համահունչ:

VII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ 1

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՆ ՈՒ ՓԱՍՏԵՐԸ

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ.

1. Ընտանեկան բռնության գլխավոր պատճառներից մեկն ալկոհոլից եւ թմրամիջոցներից կախվածությունն է: Եթե բռնություն գործադրած անձը բուժում ստանա ալկոհոլային կախվածությունից, նա կդադարեցնի բռնություն կատարելը:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

2. Տղամարդիկ ընտանեկան բռնության են ենթարկվում նույնքան հաճախ, որքան կանայք:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

3. Բռնություն գործադրող տղամարդիկ բռնություն են գործադրում, որովհետեւ նրանք չեն կարողանում կառավարել իրենց զայրույթը եւ հիասթափությունը:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

4. Միջնորդությունը/հաշտարարությունը «ընտանեկան բռնություն» խնդրի լուծումն են:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

5. Այն մարդիկ, որոնք հավատացյալ են, ընտանեկան բռնություն չեն գործադրում եւ տուժողներ չեն դառնում:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

6. Ընտանեկան բռնությունն ազդեցություն չի ունենում ընտանիքում ապրող երեխաների վրա, այդ խնդիրը վերաբերում է միայն մեծերին:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

7. Տուժողները բռնությանը հանգեցնող որեւէ բան են արել:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

8. Միայն որոշակի կենսագրություն ունեցող կանայք են ընտանեկան բռնության ենթարկվում:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

9. Իշխանությունները պետք է ամեն ինչ անեն ընտանիքը պահպանելու համար:

Պատասխան. Ե՛հ չէ Սի՛ալ է

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ 2

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՆ ՈՒ ՓԱՍՏԵՐԸ

1. Ընտանեկան բռնության գլխավոր պատճառներից մեկն ավրոհողից եւ թմրամիջոցներից կախվածությունն է: Եթե բռնություն գործադրած անձը բուժում ստանա ավրոհողային կախվածությունից, նա կդադարեցնի բռնություն կատարելը:

Պատասխան. Սխալ է: Չնայած ավրոհողից եւ թմրամիջոցներից կախվածությունը հաճախ կապում են ընտանեկան բռնության հետ՝ բռնության պատճառները դրանք չեն: Բռնություն գործադրող շատ անձինք ավրոհող կամ թմրամիջոցներ չեն օգտագործում, եւ նրանք, ովքեր օգտագործում են, սովորաբար անծանոթ մարդկանց, գործընկերների կամ ղեկավարների նկատմամբ ագրեսիվ պահվածք չեն ցուցաբերում, այլ բռնության են ենթարկում իրենց զուգընկերներին: Բռնություն գործադրող անձինք հաճախ հարբած վիճակում գտնվելը ներկայացնում են որպես արդարացում կամ հիմնավորում իրենց գործողությունների համար պատասխանատվություն կրելուց խուսափելու նպատակով: Կարելու է գիտակցել, որ ընտանեկան բռնությունն ու ավրոհողից (թմրանյութերից) կախվածությունը տարբեր խնդիրներ են, եւ դրանց անհրաժեշտ է առանձին անդրադարձնալ:

2. Տղամարդիկ ընտանեկան բռնության են ենթարկվում նույնքան հաճախ, որքան՝ կանայք:

Պատասխան. Սխալ է: ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված պաշտոնական վիճակագրությունը փաստում է, որ կանայք առավել հաճախ են բռնության ենթարկվում³⁷⁵: Հաշվի առնելով այն, որ կանանց նկատմամբ բռնությունը, ինչպես նաեւ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը հայտնի երեւույթներ են, ամեն դեպքում անհրաժեշտ է ընդգծել, որ տղամարդիկ եւ տղաները նույնպես կարող են ենթարկվել բռնության³⁷⁶:

3. Բռնություն գործադրող տղամարդիկ բռնություն են գործադրում, որովհետեւ նրանք չեն կարողանում կառավարել իրենց զայրույթը եւ հիասթափությունը:

Պատասխան. Սխալ է: Ընտանեկան բռնությունը գործադրվում է դիտավորությամբ, եւ բռնություն գործադրողները «անկառավարելի վիճակում» չեն գտնվում: Նրանց կողմից գործադրվող բռնությունը հատուկ ուղղված է որոշ մարդկանց, կատարվում է որոշակի պահերի, որոշակի վայրերում: Բռնություն գործադրող անձինք հիմնականում իրենց ղեկավարների կամ փողոցում գտնվող անձանց վրա չեն հարձակվում անկախ իրենց զայրույթի աստիճանից: Բռնություն գործադրող անձինք նաեւ հետեւում են իրենց՝ բռնություն պարունակող վարքագծի ներքին կանոններին: Նրանք հաճախ բռնություն են գործադրում իրենց զուգընկերների նկատմամբ, երբ միայնակ են, կամ քայլեր են ձեռնարկում բռնության ակնհայտ ապացույցներ

375 Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներ 2016, 2017, էջեր 242 եւ 305, <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf>, <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf>

376 Բացատրական զեկույց, պարբերություն 27

չթողնելու ուղղությամբ: Բռնություն գործադրող անձինք նաեւ զգուշությամբ ընտրում են իրենց մարտավարությունը. ոմանք ոչնչացնում են գույքը կամ բռնություն գործադրելու սպառնալիքներ հնչեցնում, մյուսները սպառնում են երեխաներին: Ուսումնասիրությունները, փաստորեն, ցույց են տալիս, որ բռնություն գործադրող որոշ անձինք իրենց ագրեսիվության աճին զուգահեռ ավելի վերահսկելի ու հանգիստ են դառնում:

4. Միջնորդությունը/հաշտարարությունը «ընտանեկան բռնություն» խնդրի լուծումն են:

Պատասխան. Սխալ է: Հաշվի առնելով ուժի եւ վերահսկողության դինամիկան՝ հաշտարարությունը ընտանեկան բռնության դեպքերի լուծման լավագույն տարբերակը չէ³⁷⁷: Լավագույն գործելակերպերը ցույց են տալիս, որ բռնություն գործադրած անձինք պետք է ներառվեն մասնագիտացված ծրագրերում, որոնց ընթացքում ընտանեկան բռնություն գործադրողներին սովորեցվում է միջանձնային հարաբերություններում որդեգրել ոչ բռնի վարքագիծ, իսկ տուժողներին պետք է աջակցություն ցուցաբերվի մասնագիտացված կենտրոնների եւ ընտանեկան բռնության գործերով զբաղվող փաստաբանի կողմից: Բաժանության դեպքերում միջնորդությունը կամ ընտանեկան թերապիան խորհուրդ ՉԻ տրվում զույգին երկկողմ հաղորդակցություն «սովորեցնելու» եւ (կամ) երեխաների խնամքի կամ ամուսնալուծության վերաբերյալ համաձայնության գալու նպատակով:

5. Այն մարդիկ, որոնք հավատացյալ են, ընտանեկան բռնություն չեն գործադրում եւ տուժողներ չեն դառնում:

Պատասխան. Սխալ է: Բռնություն գործադրող անձինք կարող են հավատացյալ լինել, այդ թվում՝ հոգեւորականներ եւ քահանաներ: Շատ տուժողներ խորը կրոնական համոզմունքներ ունեն, որոնք կարող են նրանց դրդել ընտանիքը ցանկացած գնով պահպանելուն:

Պնդում Բռնություն գործադրող անձինք այնպիսի անձինք են, որոնք սովորաբար բռնություն են գործադրում: Պատասխան. Սխալ է: Բռնություն գործադրող անձանց մեծ մասը տարածայնությունները լուծելու նպատակով բռնություն չի գործադրում այլ՝ ոչ ինտիմ հարաբերություններում: «Բռնություն գործադրող անձինք սովորաբար դրսում եւ տանը իրարից տարբերվող անձնական հատկանիշներ են դրսեւորում, ինչը դժվարացնում է կնոջ կողմից իր փորձառությունը հարաբերությունից անտեղյակ անձանց բնութագրելը:

6. Ընտանեկան բռնությունն ազդեցություն չի ունենում ընտանիքում ապրող երեխաների վրա, այդ խնդիրը վերաբերում է միայն մեծերին:

Պատասխան. Սխալ է: Ընտանեկան բռնությունը զգալի ազդեցություն է ունենում տանը բնակվող երեխաների վրա: Բռնություն պարունակող ընտանիքներում մեծացած երեխաներն ընտանեկան բռնության հետեւանքով լուրջ հուզական եւ հոգեբանական խնդիրներ են ունենում: Որպես հաղթահարման ռազմավարություն՝ որոշ երեխաներ կարող են հակված լինել բռնություն գործադրած անձի հետ համամիտ լինելուն եւ տուժողի նկատմամբ հարգանքը կորցնելուն, ինչը կարող է հանգեցնել բռնության անդրսերնդային (տրանսգեներացիոն) ցիկլի:

7. Տուժողները բռնությանը հանգեցնող որեւէ բան են արել:

Պատասխան. Սխալ է: Բռնություն գործադրած անձինք պատասխանատվություն են կրում իրենց վարքագծի համար, եւ իրենք են որոշում կայացնում

ինչ գործողություն կատարել: Բռնությունը ԵՐԲԵԹ տուժողի մեղավորությունը չէ:

8. Միայն որոշակի կենսագրություն ունեցող կանայք են ընտանեկան բռնության ենթարկվում:

Պատասխան. Միայլ է: Չնայած նրան, որ կանանց որոշակի խմբեր հատկապես խոցելի են բռնության որոշակի ձևերի առումով կամ որոշակի խոչընդոտների են բախվում արդարադատության մատչելիությունից օգտվելիս՝ ընտանեկան բռնության դեպքում որեւէ հիմքով խտրականություն չի դրվում: Դրան կարող են ենթարկվել կանայք՝ հասարակության բոլոր մակարդակներից՝ հարուստ, թե աղքատ, կրթություն ունեցող (չունեցող)՝ անկախ ներգաղթյալի կարգավիճակից, կրոնից, սեռական կողմնորոշումից եւ էթնիկ պատկանելությունից: Հատկանշական է, որ հայտնաբերվել է ուղիղ կապ Հայաստանում կրթության մակարդակի եւ բռնության ենթարկվելու միջեւ: Այսպես, պարզվել է, որ որքան ցածր է կրթության մակարդակը, այնքան ավելի մեծ է բռնության ենթարկվելու հավանականությունը: Հայաստանում բռնության ենթարկված անձանց 26.3% չի ավարտել 8-ամյա կրթությունը, 19.5% է միայն ստացել 8ամյա կրթություն, 18% ստացել է միջնակարգ կրթություն, 13.6% միջին մասնագիտական կրթություն եւ 13.6%՝ բարձրագույն կրթություն: Խնդիրն այն է, որ ցածր կրթություն ունեցող կանայք հիմնականում չեն կարողանում գտնել բարձր վարձատրվող աշխատանք, ինչը նրանց առավել կախվածության մեջ է պահում տղամարդկանցից: Բացի այդ, նման կանայք առավել քիչ են հարցականի տակ դնում առկա կարծրատիպերը եւ տվյալներ չեն ունենում իրենց իրավունքների պաշտպանության միջոցների մասին³⁷⁸:

9. Իշխանությունները պետք է ամեն ինչ անեն ընտանիքը պահպանելու համար:

Պատասխան. Միայլ է: Տուժողի անվտանգությունն ու կարիքներն առաջնային են եւ պետք է նախորդեն բոլոր այլ նկատառումների: Տուժողին ստիպելը, որ վերադառնա բռնություն պարունակող հարաբերություններին, կամ այդ նպատակով նրա վրա ազդեցություն գործելը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ, այդ թվում՝ մահ: Եթե բռնություն գործադրած անձն իր գործողությունների համար պատասխանատվության չի ենթարկվել, կամ եթե բռնության հիմքում ընկած պատճառներին անդրադարձ չի կատարվել, ապա բռնությունը, ամենայն հավանականությամբ, շարունակվելու է:

378 Եվրոպայի խորհրդի Դատավորների եւ դատախազների վերապատրաստման ձեռնարկ, Կանանց՝ արդարադատության մատչելիություն, Հայաստանի բաժին, էջ 6

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՆՅՈՒԹ 3

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

- ▶ Բռնությունն ավելի հաճախ կամ բիրտ է դարձել վերջին 6 ամիսների ընթացքում:
- ▶ Բռնարարն օգտագործում է թմրանյութ կամ չարաշահում է ակոհոլային խմիչքներ:
- ▶ Նա երբևէ զենք կիրառել է կամ վախեցրել է զենքով:
- ▶ Նա երբևէ փորձել է խեղդել տուժածին:
- ▶ Բռնարարը երբևէ բռնության դիմել է տուժածի՝ հղի եղած ժամանակ:
- ▶ Արդյո՞ք բռնարարը միշտ խանդում է:
- ▶ Տուժածի կարծիքով՝ բռնարարն այլ բռնություն կգործադրի:
- ▶ Բռնարարը վերահսկում է տուժողի ֆինանսները:
- ▶ Բռնարարը վերահսկում է տուժողի գործողությունները:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԿՈՂ ՆՅՈՒԹ 4

ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅՈՒՆ` Ա

Այս դեպքին նախորդող 3 տարվա ընթացքում Ա.-ն եւ Բ.-ն հարաբերություններ են ունեցել: Հարաբերությունների ընթացքում բռնության դեպքեր են եղել, բայց Բ.-ն դրանցից որեւէ մեկի վերաբերյալ երբեք ոստիկանություն հաղորդում չի ներկայացրել: Նա դրանց վերաբերյալ հաղորդում չի ներկայացրել, որովհետեւ իրեն միշտ թվացել է, թե Ա.-ն յուրաքանչյուր դեպքից հետո զղջում է: Ա.-ն բռնությունը կապում էր իր աշխատանքային գերլարվածության եւ այն փաստի հետ, որ Բ.-ն միշտ «փնթփնթում է» իր՝ ակոհով եւ թմրամիջոցներ օգտագործելու մասին: Դեպքի օրը Բ.-ն Ա.-ին հրավիրել է երեկոն դրսում որեւէ տեղանցկացնելու, որովհետեւ այդ շաբաթ Ա.-ի ծննդյան օրն է եղել: Նրանք որոշել են հանգստյան օրերը հյուրանոցում անցկացնել: Ճանապարհին Բ.-ն հանգստյան օրերի համար հաշվից կանխիկ գումար հանելու նպատակով իր բանկային քարտն ու սոցիալական ապահովության համարը տվել է Ա.-ին: Երբ նրանք հյուրանոց են հասել, Ա.-ն սկսել է կանեփ ծխել: Երբ Բ.-ն դժգոհել է, Ա.-ն սկսել է գոռալ Բ.-ի վրա՝ ասելով, որ իր ծննդյան օրն է, եւ ինքը կարող է անել այն, ինչ ցանկանում է: Բ.-ն շարունակել է վիճել նրա հետ, եւ Ա.-ն բռունցքով հարվածել է նրա դեմքին՝ կոտրելով վերջինիս քիթը: Հյուրանոցի մենեջերը, աղմուկ լսելով, եկել է նրանց սենյակ: Նա տեսել է, որ Բ.-ն անտրամադիր է, եւ որ նրա քթից արնահոսում է: Մենեջերը Բ.-ին հարցրել է, թե ինչ է պատահել, եւ Բ.-ն նրան ասել է, որ Ա.-ն բռունցքով հարվածել է իր դեմքին եւ կոտրել քիթը: Մենեջերն Ա.-ին ասել է, որ պատրաստվում է ոստիկանություն կանչել, եւ Ա.-ն բռունցքով հարվածել է նաեւ նրա դեմքին՝ կոտրելով նրա ակնոցը եւ վնասվածք հասցնելով նրա ձախ աջքի վերելի հատվածում: Մինչ մենեջերը ոստիկանություն է զանգահարել, Ա.-ն դուրս է վազել սենյակից: Երբ ոստիկանությունը ժամանել է, նրանք Ա.-ին գտնելու նպատակով խուզարկել են հյուրանոցը եւ վերջինիս գտել հյուրանոցի նախասրահում բանկոմատի մոտ: Նրա մոտ Բ.-ի բանկային քարտն էր, եւ նա Բ.-ի հաշվից որոշ գումար էր հանել: Ոստիկանությունն Ա.-ին ասել է այն, ինչ Բ.-ն եւ մենեջերը պատմել են իրենց: Նա ընդունել է, որ հարվածել է Բ.-ին եւ մենեջերին: Նա նաեւ ընդունել է, որ Բ.-ի, հաշվից գումար է հանել: Ոստիկանությունը ձերբակալել է Ա.-ին, եւ նրան Բ.-ի ու մենեջերի վրա հարձակում գործելու մեղադրանք է առաջադրվել: Բ.-ն Ա.-ի հետ դատարան է ներկայացել եւ ասել, որ ցանկանում է հետ վերցնել իր ցուցմունքը եւ այլեւս չի ցանկանում հետամուտ լինել գործի քննությանը:

ԴԱՏԱԽԱՉՆԵՐԸ/ՔՆՆԻՉՆԵՐԸ

Դուք սույն գործով դատախազը/քննիչն եք եւ պետք է պատասխանեք հետևյալ հարցերին.

- ▶ Հանրային շահերից է ելնում, որ այս գործը քննության առնվի:
- ▶ Դուք ունե՞ք բավարար ապացույցներ գործը քննության առնելու համար:
- ▶ Դուք համաձայն եք Ա.-ին ներկայացված մեղադրանքներին: Եթե՝ ոչ, ի՞նչ մեղադրանքներ դուք կներկայացնեիք:
- ▶ Դուք ինչպե՞ս կվարվեիք Բ.-ի հետ այն իրավիճակում, երբ նա ասում է, որ ցանկանում է հետ վերցնել իր ցուցմունքը:

Դուք սույն գործով դատավորն եք.

- 1 ▶ Ո՞ր պաշտպանական միջոցները կկիրառեք Բ.-ի պաշտպանության համար.
 - ▶ Կալանք
 - ▶ Չամատեղ բնակության վայրից հեռացում
 - ▶ Կապ հաստատելու արգելք

- 2 ▶ Բ.-ի եւ Ա.-ի գործն այժմ նշանակվել է դատական քննության: Կա քրեական հետապնդման ենթակա 5 վկա՝ Բ.-ն՝ հյուրանոցի մենեջերը, ոստիկանության երկու ծառայողներ եւ մեկ բժիշկ: Պաշտպանության կողմի միակ վկան Ա.-ն է: Այնուամենայնիվ, վերջին պահին, Բ.-ն հրաժարվում է մասնակցել դատական վարույթին կամ ցուցմունք տալ:
 - ▶ Ինչպե՞ս կարձագանքեք տուժողի բերած այն հիմքին, որ հրաժարվում է մասնակցել դատական վարույթին:
 - ▶ Ի՞նչ կարող եք անել դատական քննության ընթացքում Բ.-ի ցուցմունքն ապահովելու համար:

- 3 ▶ Վերջապես, Բ.-ն փոխում է իր միտքը, եւ մինչ դատական քննությունն սկսելը մեղադրող կողմը դիմում է ներկայացնում, որպեսզի Բ.-ն ցուցմունք տա մեկ այլ վայրից:
 - ▶ Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ Ձեզ՝ որոշում կայացնելու հարցում օգնության համար:
 - ▶ Ո՞ր ցուցմունքն է հատկապես կարեւոր Ձեզ համար:

- 4 ▶ Դուք լսել եք բոլոր վկաների ցուցմունքները, որոնք բավարար էին՝ համոզվելու համար, որ Ա.-ն կատարել է իրեն մեղսագրվող հանցանքները: Դուք հետաձգել եք դատական գործը՝ պատիժը նշանակելու համար:
 - ▶ Ի՞նչ տեղեկատվություն անհրաժեշտ կլինի ստանալ դատախազից՝ համապատասխան պատիժ նշանակելու հարցում օգնության համար:
 - ▶ Ի՞նչ գործոններ հաշվի կառնեք՝ Ա.-ի նկատմամբ պատիժ նշանակելիս:
 - ▶ Կարո՞ղ եք որեւէ այլ բան կատարել, բացի Ա.-ի նկատմամբ պատիժ կիրառելուց:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԿՈՂ ՆՅՈՒԹ 5

ԴԵՂՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ` Բ

Ա.-ն 58 տարեկան էր, ապրում էր Փ քաղաքում, ամուսնացած էր Ն.Ս.-ի հետ, եւ նրանք ունեին չորս երեխա: 2016 թվականի հունիսի 24-ին եւ սեպտեմբերի 3-ին Ա. -ն ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել Ն.Ս.-ի կողմից:

Հերթապահության մեջ գտնվող ոստիկանության ծառայողը 2016 թվականի հունիսի 24-ին կազմված զեկուցագրում նշել է, որ երբ ինքը ժամանել է դեպքի վայր, պարզել է, որ Ն.Ս.-ն չի թողնում, որպեսզի Ա.-ն մուտք գործի իրենց համատեղ կացարան:

Հունիսի 28-ին տրամադրված դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հայտնաբերվել են կապտուկներ Ա.-ի դեմքին, բազուկներին, մեջքին եւ կրծքավանդակին, որոնց համար պահանջվել է հիսգից վեցօրյա բուժօգնություն:

2016 թվականի սեպտեմբերի 6-ին տրամադրված դատաբժշկական փորձաքննության երկրորդ եզրակացության մեջ նշվել է, որ դիմումատուն բազուկների եւ ազդրերի վրա ունեցել է մի քանի կապտուկներ: Հնարավոր է, որ վնասվածքները պատճառվել են սեպտեմբերի 3-ին: Դրանց համար պահանջվել է երկուսից երեքօրյա բուժօգնություն:

Սեպտեմբերի 8-ին դիմումատուն կրկին ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել իր ամուսնու կողմից: Ոստիկանության ժամանումից հետո Ա.-ն շտապօգնության մեքենայով տարվել է հիվանդանոց: Ախտորոշվել է դեմքի շրջանի բաց տրավմա եւ քթի բուրգի սալջարդ: Համաձայն 2016 թվականի սեպտեմբերի 13-ին տրամադրված դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ վնասվածքները կարող էին պատճառված լինել պինդ առարկայով կամ դրա գործադրմամբ ստացված հարվածից, որոնց համար պահանջվել է իննից տասնօրյա բուժօգնություն:

Վերը նշված ամսաթվերին հերթապահության մասին իրենց զեկուցագրերում ոստիկանության այն ծառայողները, որոնց զանգահարել էր Ա.-ն, նշել են, որ նա վնասվել է ընտանեկան վեճի արդյունքում, եւ որ նրանք կնոջը տեղեկացրել են, որ կարող է պաշտոնական բողոք ներկայացնել Ն.Ս.-ի դեմ:

Օգոստոսի 3-ին եւ հոկտեմբերի 2-ին Ա.-ն բողոք է ներկայացրել Փ քաղաքի շրջանային դատարանին կից դատախազություն՝ պնդելով, որ հունիսի 24-ին եւ սեպտեմբերի 3-ին ու 8-ին ինքն իր ամուսնու կողմից ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել իրենց տանը՝ իրենց երեխաների ներկայությամբ: Նա կցել է պատահարներից հետո կազմված բժշկական եզրակացությունների պատճենները:

Օգոստոսի 28-ին Ա.-ն նաեւ Հ շրջանի ոստիկանության պետին է գրություն ուղարկել, որում պնդել է, որ նա իր ամուսնու կողմից կրկնվող բնույթի բռնության գործողություններից տուժել է, հաճախ բռնության է ենթարկվել իրենց երեխաների ներկայությամբ: Նա նշել է, որ մի քանի դեպքեր են գրանցվել, երբ Ն.Ս.-ն իրեն չի թողել մուտք գործել տուն, եւ ինքն այս խնդիրները լուծելու համար ոստիկանության օգնությանն է դիմել:

Սեպտեմբերի 11-ին Ա.-ն քննությամբ զբաղվող ոստիկանին մանրամասն ցուցմունք է տվել՝ նկարագրելով երեք բռնի գործողությունները: Նա նշել է, որ հունիսի 24-ին իր ամուսինը տուն է եկել մոտավորապես կեսօրին եւ սկսել է բռնուցքով հարվածել նրա դեմքին, գլխին եւ սպառնացել է սպանել նրան: Նրան հաջողվել է փախչել, սակայն երբ մեկ ժամ հետո վերադարձել է, ամուսինը հրաժարվել է նրան ներս թողնել բնակարան: Ա.-ն նաեւ նշել է, որ Ն.Ս.-ն ասել էր, որ երեխաներն այդ մասին չխոսեն:

Սեպտեմբերի 12-ին տրված ցուցմունքներում, Ա.-ի մայրը եւ եղբայրը ոստիկանությունում ասել են, որ ամբողջ 2016 թվականի ընթացքում Ա.-ն շատ հաճախ եկել է իրենց

տուն՝ բողոքելով, որ Ն.Ս.-ն ծեծել է իրեն, սպառնացել է սպանել կամ չի թողել բնակարան մուտք գործել:

Նոյեմբերի 15-ին Ա.-ի եւ Ն.Ս.-ի չափահաս դուստրերը՝ Ս.Բ.-ն եւ Ս.Ս.-ն, ոստիկանությունում պատմել են, որ Ա.-ն խմելու սովորություն է ունեցել եւ հարբելուց հետո ագրեսիվ վարք է դրսևորել: Նրանք նաեւ նշել են, որ իրենց հայրը չի հարվածել իրենց մորը: Ս.Ս.-ն նշել է, որ չնայած ինքն է իր ապրուստը վաստակել, սակայն հայրն իրեն միշտ գումար է տվել: Մայրը, մյուս կողմից, մշտապես գումար չի ունեցել եւ բանկերին պարտքեր է ունեցել:

Նոյեմբերի 19-ին Ն.Ս.-ն հարցաքննվել է ոստիկանության կողմից: Նա նշել է, որ դիմումատուի հետ վիճել է իրենց ամուսնալուծության հարցի շուրջ, սակայն ձեռք չի բարձրացրել նրա վրա: Նա ավելացրել է, որ Ա.-ն տունը պատշաճորեն չէր մաքրում եւ խմելու խնդիր է ունեցել: Նա նաեւ նշել է. «Ես նրան այնքան ուժգին չեմ հարվածել, որ վնասվածք պատճառեմ» եւ «նա կարող է ընկած լինել լոգարանում»: Ն.Ս.-ն պնդել է, որ դիմումատուի կողմից ներկայացված բժշկական եզրակացությունները կեղծված են եղել:

Դեկտեմբերի 13-ին եւ 19-ին Ա.-ն գրել է Փ. քաղաքի շրջանային դատարանին կից դատախազության գլխավոր դատախազին՝ բողոքելով, որ Ն.Ս.-ն, որը դուրս էր եկել բնակարանից եւ իր հետ վերցրել էր երկու երեխաներին, սպառնացել է սպանել նրան, երբ նրանք մեկ շաբաթ առաջ պատահաբար հանդիպել են փողոցում: Ա.-ն նշել է, որ վախենում է իր կյանքի համար եւ խնդրել է դատական քննությունն արագացված կարգով անցկացնել, ինչպես նաեւ պաշտպանել իրեն Ն.Ս.-ից:

Դեկտեմբերի 19-ին Փ քաղաքի շրջանային դատարանին կից դատախազությունը որոշել է քրեական գործով մեղադրանք չներկայացնել Ն.Ս.-ի դեմ եւ նրա նկատմամբ 50 Եվրոյի չափով վարչական տուգանք է կիրառել: Դատախազը որոշել է, որ ալկոհոլ խմելուց հետո դիմումատուն վեճ է սադրել եւ հղում է կատարել Ն.Ս.-ի եւ դիմումատուի երկու չափահաս դուստրերի ցուցմունքներին: Ինչ վերաբերում է ենթադրյալ սպառնալիքներին, ապա համարվում է, որ Ա.-ին չի հաջողվել ապացուցել իր մեղադրանքները:

Դատախազը եզրակացրել է, որ չնայած Ն.Ս.-ն կատարել է մարմնական վնասվածքի պատճառմամբ գուգորդված հանցանք, նրա գործողությունները հասարակության համար վտանգ չեն ներկայացրել, քանի որ նրան սադրել է տուժողը, ինչպես նաեւ նախկինում նա չի ունեցել դատվածություն եւ թռչակառու է եղել:

Սույն որոշման դեմ Ա.-ի բողոքն անհիմն լինելու հիմքով մերժվել է 2017 թվականի մարտի 25-ին:

2017 թվականի ապրիլի 21-ին Ա.-ն Փ քաղաքի շրջանային դատարան բողոք է ներկայացրել 2016 թվականի դեկտեմբերի 19-ի եւ 2017 թվականի մարտի 25-ի որոշումների դեմ պահանջելով, որ Ն.Ս.-ին մեղադրանք առաջադրվի մարմնական վնասվածք պատճառելու համար, եւ որ նա դատապարտվի ու ստիպված լինի վճարել ոչ նյութական վնասների եւ կրած տառապանքների համար: Նա պնդել է, որ վարչական տուգանքը, որը Ն.Ս.-ն հրաժարվել է վճարել, նրա վրա կանխարգելիչ ազդեցություն չի ունեցել, քանի որ դատախազի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումից հետո նա շարունակել է բռնի գործողությունների ենթարկել իրեն: Նա դատարանին նաեւ խնդրել է քրեական պատժամիջոցներ կիրառել նրա նկատմամբ եւ թույլտվություն է խնդրել ներկայացնելու Ն.Ս.-ի հետ երկխոսության ձայնագրությունը, որպեսզի ապացուցի, որ ինքը 2016 թվականի սեպտեմբերին բռնի գործողությունների է ենթարկվել, ինչպես նաեւ նրա կողմից հնչեցվել են սպառնալիքներ:

Ա.-ն իր ցուցմունքի վերջին պարբերությունում նշել է, որ վախենում է իր կյանքի համար եւ դատարանին խնդրել է «օրենքով նախատեսված կարգով պատժել Ն.Ս.-ին

... արգելել նրան մտնել բնակարան ... արգելել նրան մտնելալ իրեն»:

Փ քաղաքի շրջանային դատարանում երկրորդ լսման ժամանակ Ա.-ն պահանջել է դատարանի կողմից նշանակված փաստաբան, քանի որ ֆինանսական միջոցներ չի ունեցել փաստաբան վարձելու համար: Դատարանը մերժել է դիմումը՝ գտնելով, որ գործի ելությունն այնպիսին է, որ փաստաբանի կողմից ներկայացնել չի պահանջվում:

Փ քաղաքի շրջանային դատարանը 2017 թվականի հունիսի 23-ի միջանկյալ դատական որոշմամբ մարմնական վնասվածքի պատճառմամբ կատարված հանցագործության, ինչպես նաև դրա համար նշանակված տույժի մասով՝ դատախազի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը մասամբ բեկանելու եւ գործն այդ մասով ըստ ելության քննելու որոշում է կայացրել: Դատախազի՝ սպառնալիքների մասով եզրահանգումները հաստատվել են: Ձայնագրությունը չի ընդունվել որպես ապացույց, քանի որ դատարանը համարել է, որ այն գործին չի վերաբերում:

Ա.-ն եւ Ն.Ս.-ն ցուցմունք են տվել դատարանում: Ն.Ս.-ն բացատրել է, որ 2016 թվականի սեպտեմբերի 8-ին Ա.-ն հարբած է եղել եւ իրեն դանակով սպառնացել է: Իրեն պաշտպանելու համար նա հրել է նրան, սակայն ժխտել է, որ երբեւէ հարվածել է Ա.-ին:

2018 թվականի փետրվարի 10-ին դատարանը լսել է նրանց դատեր՝ Ս.Բ.-ի ցուցմունքը, ով տվել է հետեւյալ վկայությունը.

Իմ հայրը սովորություն ուներ հարվածել մորս [դիմումատուին] եւ մեզ՝ երեխաներիս, բազմիցս: Նա այդպես վարվելու սովորություն ուներ, երբ գիշերը տուն չէր գալիս եւ մայրս հարցնում էր, թե որտե՞ղ է եղել: Հետո հայրս բարկանում էր եւ հարվածում նրան: Նրա բարկանալու միակ պատճառը գումար չունենալն էր ... Նույնիսկ 2017 թվականի հուլիսից հետո, երբ ես տեղափոխվեցի ծնողներիս բնակարանից, մայրս շարունակում էր հարվածներ ստանալ հորս կողմից. ես անձամբ ականատես եմ եղել նման դեպքերից մի քանիսին: Մինչ 2016 թվականը մայրս ալկոհոլ խմելու սովորություն ուներ, սակայն չափավոր, իսկ 2016 թվականին նա դադարեց խմել: Ես հետ եմ վերցնում քրեական վարույթի ընթացքում տված իմ ցուցմունքը, քանի որ այն տվել եմ հորս սպառնալիքների արդյունքում:

2018 թվականի փետրվարի 17-ին Փ քաղաքի շրջանային դատարանը որոշել է Ն.Ս.-ին անմեղ ճանաչել մարմնական վնասվածք պատճառելու մասով: Դատարանը համարել է, որ Ս.Բ.-ի ցուցմունքը չի կարելի հաշվի առնել, առանց այդ որոշման համար որեւէ հիմնավորում նշելու:

Դատարանը եզրակացրել է հետեւյալը.

Ա.-ն չի ապացուցել իր այն պնդումները, որ հունիսի 24-ին, սեպտեմբերի 3-ին եւ սեպտեմբերի 8-ին ... նա ֆիզիկական բնույթի բռնի գործողության է ենթարկվել մեղադրյալի կողմից: Դատարանը, հաշվի առնելով նաև քրեական գործով քննության ընթացքում հավաքված ապացույցները, համարում է, որ մեղադրյալը հիմնականում այդպիսի բռնություն է գործադրել տուժող կողմի ալկոհոլ օգտագործելու, ինչպես նաև այն պատճառով, որ նա պատշաճ կերպով հոգ չէր տանում իր չորս երեխաներին: Մեղադրյալի արարքներն այնքան վտանգավոր չեն հասարակության համար, որպեսզի համարվեն հանցագործություն եւ, հետեւաբար, նա կազատվի մարմնական վնասվածքի մասով երեք կետերով առաջադրված մեղադրանքից եւ կվճարի 120 եվրո վարչական տուգանք:

Դատարանն այնուհետեւ, առանց հիմնավորումներ ներկայացնելու, անհիմն լինելու հիմնավորմամբ մերժել է Ա.-ի պահանջը: Վճռում որեւէ հիշատակություն չի եղել

Ա.-ի՝ 2017 թվականի ապրիլի 21-ին կատարված բողոքում իրեն պաշտպանության միջոց տրամադրելու պահանջի վերաբերյալ:

Դիմումատուն վճարեկ բողոք է բերել սույն վճռի դեմ: Նա պնդել է, որ Ն.Ս.-ն բռնության հակված անձ է, որը շարունակել է բռնության ենթարկել իրեն նույնիսկ 2016 թվականի դեկտեմբերի 19-ին դատախազի կողմից նշանակված վարչական տուգանքով պատժվելուց հետո:

2018 թվականի մայիսի 12-ին Հ շրջանի դատարանը անհիմն լինելու հիմնավորմամբ մերժել է Ա.-ի վճարեկ բողոքը: Դատարանը վճռել է, որ Ն.Ս.-ի կողմից կատարված բռնի գործողությունները եղել են Ա.-ի կողմից սադրանքի արդյունքում եւ չեն հասել վտանգավորության այն աստիճանի, որպեսզի մարմնական վնասվածքի պատճառմամբ կատարված հանցագործության շրջանակներում դիտվեն: Նույն պատճառով վնասվածքների համար հատուցումը նույնպես չի հաստատվել:

2018 թվականի փետրվարի 19-ին եւ ապրիլի 21-ին Ա.-ն Ն.Ս.-ի կողմից բռնության եւ սպառնալիքների նոր դեպքերի հետ կապված հինգ բողոք է ներկայացրել Փ քաղաքի ոստիկանություն, որոնց նա կցել է բժշկական եզրակացություններ:

Միեւնույն ժամանակ, մարտի 27-ին Ա.-ն Հ շրջանի ոստիկանությունից պահանջել է օրենքով նախատեսված միջոցներ կիրառել՝ Ն.Ս.-ի կողմից մշտական բռնությունը դադարեցնելու նպատակով: Նա շեշտել է, որ զգում է, թե իր կյանքը վտանգված է: Այս նամակը հաշվի չի առնվել: Դատախազը գտել է, որ այն չի կարող պաշտոնական բողոք համարվել քանի որ, ի տարբերություն մյուս բողոքների, այն չի վերաբերել կոնկրետ բռնության: Ա.-ն նմանատիպ պահանջ է ներկայացրել ոստիկանություն ապրիլի 11-ին:

Սեպտեմբերի 29-ին Փ քաղաքի շրջանային դատարանին կից դատախազությունը որոշել է Ա.-ի կողմից նկարագրված հինգ դեպքերի կապակցությամբ մեղադրանք չներկայացնել Ն.Ս.-ի դեմ, այնուամենայնիվ, Ն.Ս.-ն պատժվել է 25 եվրո վարչական տուգանքով:

Դիմումատուն վերը նշված որոշման դեմ հետագայում որեւէ բողոք չի ներկայացրել:

ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 91

Վարչական պատասխանատվության միջոցները

Այն դեպքերում, երբ առկա չէ քրեական պատասխանատվություն, կարող է կիրառվել հետեւյալ վարչական պատասխանատվության միջոցներից մեկը.

- ▶ 3-ից մինչեւ 500 եվրոյի չափով տուգանք:

Հոդված 180

ՍԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾԸ

1 ▶ Ֆիզիկական ցավ պատճառող վնասվածքները կամ որեւէ այլ բռնի գործողություններ ենթակա են մեկից երեք ամիս ժամկետով ազատազրկման կամ տուգանքի:

1.1 ▶ Եթե 1-ին պարբերությամբ նախատեսված գործողությունները կատարվում են ընտանիքի անդամների նկատմամբ, ապա պատիժը վեցից մեկ տարի ժամկետով ազատազրկումն է կամ տուգանքը:

2 ▶ Այն բռնի գործողությունները, որոնք պատճառել են այնպիսի վնասվածքներ, որոնց ապաքինման համար պահանջվում է մինչև 20 օր տևողությամբ բուժօգնություն, ապա պատիժը երեքից երկու տարի ժամկետով ազատազրկումն է կամ տուգանքը:

2.1 Եթե 2-րդ պարբերությամբ նախատեսված գործողությունները կատարվում են ընտանիքի անդամների նկատմամբ, ապա պատիժը մեկից երկու տարի ժամկետով ազատազրկումն է կամ տուգանքը:

3 ▶ Քրեական գործ է հարուցվում տուժող կողմի բողոքի հիման վրա 1-ին եւ 2-րդ պարբերություններով նախատեսված դեպքերում, քրեական գործ կարող է հարուցվել մարմինների միջնորդագրի հիման վրա:

Հոդ. 193

ՍՊԱՌՆԱԼԻԻՔՆԵՐԸ

«Անձի կամ անձի ամուսնու (կնոջ) կամ մերձավոր ազգականի նկատմամբ քրեական իրավախախտում կատարելու ցանկացած սպառնալիք, եթե այն այդ անձի մոտ առաջացրել է տեսանելի պաթոլոգիա, պատժելի է երեք ամսից մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ կամ տուգանքով: Կիրառվող տույժը չի գերազանցում օրենքով նախատեսված՝ սպառնալիքի առարկա հանդիսացող իրավախախտման համար պատասխանատվության միջոցը:

Ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված է ընտանեկան բռնությունից տուժած անձանց պաշտպանելու միջոցներ: Միջոցներից մեկով առաջարկվում են ապաստարաններ հատուկ կենտրոններում, մինչդեռ դատարաններն ունեն նաեւ ագրեսորներին հոգեբուժական հաստատություններում պահելու կամ բուժելու կամ տոհմական(ընտանեկան) տուն մուտք գործելու արգելքի որոշում կայացնելու իրավասություն: Պաշտպանության միջոցներ կարող են ձեռնարկվել տուժողի պահանջով կամ համապատասխան մարմինների, կամ դատարանների միջնորդությամբ: Օրենքով նաեւ նախատեսված է, որ ընտանեկան բռնության դեպքերի քննության մեջ մասնագիտացված անձնակազմը պետք է նշանակվի տեղական մակարդակով նախարարների եւ այլ պետական կառավարման մարմինների կողմից:

Հոդված 2

1 ▶ Ընտանեկան բռնությունը ընտանիքի անդամի կողմից դիտավորյալ կատարված ցանկացած ֆիզիկական կամ բանավոր գործողություն է, որը նույն ընտանիքի մեկ այլ անդամի պատճառում է ֆիզիկական, հոգեբանական, սեքսուալ կամ ոչ նյութական բնույթի վնաս:

2 ▶ Ընտանեկան բռնությունը ներառում է կնոջ իրավունքների եւ հիմնարար ազատությունների սահմանափակումը:

Հոդված 16

1 ▶ Ընտանեկան բռնության դեպքերի քննության համար պատասխանատու մարմինների առջև դրված են հետեւյալ հիմնական խնդիրները.

▶ դիտանցել ընտանեկան բռնության դեպքերը ..., հավաքել եւ պահել այդ դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը, ապահովել դատական մարմիններին այս նյութերի հասանելիությունը ...

▶ հայտնաբերել ռիսկային իրավիճակները եւ հակամարտության մեջ ներգրավված կողմերին ուղղորդել դեպի մասնագիտացված ծառայություններ,

- ▶ կողմերին ուղղորդել օգտվելու հաշտարար մեդիացիոն ընթացակարգից.
- ▶ Ընտանեկան բռնության դեպքերում ոստիկանությունը միջամտում է տուժողի, ընտանիքի մեկ այլ անդամի, համապատասխան մարմնի պահանջով կամ սեփական միջնորդությամբ:
- ▶ Ոստիկանությունը տուժողի վիճակի մասին անմիջապես ծանուցում է իրավասու տեղական մարմիններին:

ՀԱՐՑԵՐ

- 1 ▶ Ի՞նչ էք կարծում, որո՞նք էին համապատասխան մարմինների՝ դիմումատուի բողոքներին տրված պատասխանների սխալները:
- 2 ▶ ՄԻԵԴ-ի դր հոդվածները կկիրառվեն այս դեպքում: Ի՞նչ չափանիշներ կկիրառվեն ՄԻԵԴ-ի կողմից:
- 3 ▶ Արդյո՞ք խտրական է եղել դիմումատուի նկատմամբ ազգային իշխանության մարմինների վերաբերմունքը՝ ելնելով սեռից:

ՀԱՐՑԵՐ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ▶ Արդյո՞ք բռնությունը հասել էր այն շեմին, որպեսզի կիրառվեր 3-րդ հոդվածը:
- ▶ Գտնե՞ք սույն գործում ներկայացված համապատասխան ապացույցը:
- ▶ Արդյո՞ք դատաբժշկական փորձաքննության վերաբերյալ փաստաթղթերում առկա են եղել դիմումատուի վնասվածքների մասով բավարար ապացույցներ:
- ▶ Արդյո՞ք Ն.-ն հանցագործություն է կատարել, եթե դիմումատուն սադրել է նրան:
- ▶ Արդյո՞ք ազգային իշխանության մարմինները ճիշտ են կիրառել ազգային օրենսդրությունը.
 - ▶ Տուգանքի կիրառում
 - ▶ Խստացված պատասխանատվության միջոցներ՝ ընտանիքի անդամներին մարմնական վնասվածքներ պատճառելու համար
 - ▶ Պաշտպանության միջոցներ տրամադրելու պահանջ, որով արգելվում է կատարողի մուտքը բնակության վայր
 - ▶ Ուշացումներ

Ո՞ր միջազգային չափանիշներն են խախտվել.

- ▶ Դատախիրավական հիմնավորումների բացակայություն
- ▶ Հանցագործության արդարացում սադրանքների եւ գենդերային կարծրատիպերի հիման վրա
- ▶ Հատուցման (փոխհատուցման) բացակայություն

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԿՈՂ ՆՅՈՒԹ 6

ՀԱՐՑԱՔՆՆՈՒՄ

ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՆԱԽՆՏՏՐԵԼԻ ՀԱՐՑԵՐ/ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀԱՐՑԵՐ/ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<i>Խրախուսանք</i>	Հասկանում եմ, որ դժվար է բոլոր մանրամասները պատմել, բայց կարծում եմ, որ Դուք Ձեր իրավիճակը շատ լավ եք նկարագրում:	Դուք Ձեզ հետ պատահածն այնքան էլ հստակ չեք բացատրում:
<i>Չզացմունքների ընկալում</i>	Նույնիսկ հիմա ես կարող եմ ասել, որ Ձեր գլխին եկածը շատ ցավոտ է, և ձեր աչքերում արցունքներ են հայտնվում:	Չի պատասխանում զզացմունքային փոփոխություններին:
<i>Գիտակցված կողմնակալություն</i>	- Ոչ ոք չպետք է խտրականության ենթարկվի : Դուք մեղավոր չեք պատահածի համար : Դուք պատասխանատու չեք այլոց գործողությունների համար: - Ոչ ոք արժանի չէ բռնության ենթարկվելու:	X
<i>Սեռական բռնություն</i>	Որևէ մեկը երբևէ Ձեզ ստիպել է սեքսով զբաղվել (կիրառեք մշակութայնորեն ընդունված եզրույթներ վազինալ, օրալ կամ անալ սեքսի համար):	Ձեզ երբևէ բռնաբարել են:
<i>Ֆիզիկական բռնություն</i>	Հրելը, ապտակելը, վրան առարկաներ նետելը, քացով հարվածելը, խփելը, դանակ կամ ատրճանակ կիրառելը և այլն:	Ձեր հանդեպ ֆիզիկական բռնություն կիրառել են:
<i>հոգեբանական/ հուլական բռնություն</i>	- Ի՞նչ զզացմունքներ ունեք Ձեր զուգընկերոջ մասին մտածելիս : : Ձեր զուգընկերը մարդկանց ներկայությամբ Ձեզ ստորացրել կամ ամաչեցրել է: - Ձեր զուգընկերը Ձեզ երբևէ սպառնացել կամ ծաղրել է ձեր երեխաների ներկայությամբ:	Երբևէ էմոցիոնալ կամ հոգեբանական վնաս կրել եք Ձեր զուգընկերոջից կամ ձեզ համար կարևոր այլ անձի կողմից:
<i>Ուղղորդում</i>	- Հասկանում եմ, որ Ձեր առողջական վիճակը հիմա Ձեզ վշտացնում է: Կարո՞ղ եք ասել Ձեր զզացածի մասին, երբ Ձեր առողջությունը սկսեց վատանալ:	Ես այս պահին չեմ անհանգստանա Ձեր ֆինանսների մասին. ավելի լավ է եկեք խոսենք Ձեր հանդեպ համայնքապետի դրսևորած վարքի մասին:
<i>Բաղադրյալ հարցեր</i>	- Ձեր սկեսուրը Ձեզ երբևէ հարվածել է: - Ձեր ամուսինը Ձեզ երբևէ հարվածել է:	Երբևէ բռնության ենթարկվել եք Ձեր սկեսուրի և ամուսնու կողմից:
<i>Միևնույն պահի</i>	Ինձ ավելին պատմեք Ձեր ֆինանսական խնդիրների մասին:	Ես այս պահին չեմ անհանգստանա Ձեր ֆինանսների մասին. ավելի լավ է եկեք խոսենք Ձեր հանդեպ տեղական ինքնակառավարման մարմինների դրսևորած վարքի մասին:
<i>Դատապարտող հարցեր</i>		X
<i>Ինչու՞ հարցեր</i>		X
<i>Անժամանակ խորհուրդ</i>		X
<i>Ոչ բառացի</i>	Եթե մշակութայնորեն ընդունելի է, նայեք աչքերին, հանգստացնող հպում կիրառեք, թեքվեք դեպի մասնակիցը:	Հորանջել, ստուգել ժամը, դեմքի միմիկաների ռեակցիաների բացակայություն, ծայրահեղ ռեակցիաներ-շոկ:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԿՈՂ ՆՅՈՒԹ 7

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ/ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ՊԵՏՔ Է ԽՈՒՍԱՓԵԼ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

1. «Այն միայն ընտանեկան է»:
2. «Ամեն ինչ այնքան էլ վատ չէ, եթե վատ լիներ, դու կհեռանայիր»:
3. «Ի՞նչ ես արել, որ ստիպի նրան՝ թեզ խփել»:
4. «Նա երբեւէ թեզ չի խփել, ուրեմն դա բռնություն չէ, այնպես չէ»:
5. «Ինչու՞ պարզապես չես հեռանում»:
6. «Չեմ հավատում, որ X-ը նման բան կարող էր անել, նա միշտ այնքան հմայիչ է եւ ուշադիր քո հանեղեպ»:
7. «Դրա պատճառը պետք է որ աշխատանքային գերլարվածությունը լինի»:
8. «Այդքան փնթփնթան մի եղիր»:
9. «Եթե նա թողնի խմելը (թմրամիջոցներ օգտագործելը), կդադարի բռնություն գործադրել»:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԿՈՂ ՆՅՈՒԹ 8

ԱՂՅՈՒՄԱԿ Ա.

ՏՂԱՄԱՐԴ ՉՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԵՆԹԱԴԿԵԼԸ (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԿՈՂ ՆՅՈՒԹ 9

ԱՂՅՈՒՄԱԿ Բ.

ՏՂԱՄԱՐԴ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼԸ

